Patmutʻiwn hayakakan tpagrutʻean,

Digitized by Google

OL 45350.26

Harvard College
Library

FROM THE BEQUEST OF
JOHN HARVEY TREAT
OF LAWRENCE, MASS.
CLASS OF 1862

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

HISTOIRE DE L'IMPRIMERIE ARMÉNIENNE

(1513–1895)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՉ ԱՌ ՄԵԶ



ՎԵՆԵՏԻԿ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1895

Digitized by Google

Digitized by Google

HISTOIRE DE L'IMPRIMERIE ARMÉNIENNE

(1513–1895)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՉ ԱՌ ՄԵԶ

ՎԵՆԵՏԻԿ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1895

Digitized by Google

~~OL 44902.5~~
OL 45350.26

Harvard College Library
July 6, 1923
Treat fund

Digitized by Google

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՅԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ գրոց աւելի կարգաւորեալ ոճով եւ ճոխ բովանդակութեամբ երկրորդ տպագրութեան մը ձեռք զարկած ըլլալով, ազգային եւ օտար բանասէրք փափաք յայտնեցին որ ի սկզբան հայկական տպագրութեան պատմութեան համառօտութիւն մը դրուի։

Այս է ահաւասիկ գրուածքիս նպատակը։

Աւելորդ է ըսել, ինչ որ արդէն ծանօթ է, թէ համառօտ երկասիրութիւնս չունի յինքեան նորութիւն մը կամ ուրիշ արդիւնք, բայց եթէ յայլոց՝ ու նաեւ ի մէնջ այլեւայլ անգամ այս հետաքննական նիւթին վրայ հրատարակուածներուն ամբողջութիւնը միանգամայն ընծայել։

Digitized by Google

Digitized by Google

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՉ ԱՌ ՄԵԶ

ՏՊԱԳՐԱԿԱՆ *արուեստին գիւտը՝ մեծ և ընդհանուր յեղափոխութիւն մը ընելու սահմանուած էր մարդկային ազգի քաղաքակրթութեան պատմութեան մէջ, և մեծապէս երախտապարտ է նմա ուսումնական աշխարհ։ Ուստի և զարմանք չէ, թէ ինչպէս քիչ միջոց ժամանակի բաւական եղած է գրեթէ ընդհանուր ընելու այդ օգտակար գիւտին գործածութիւնը, ոչ միայն Եւրոպիոյ այլեւայլ աշխարհաց և ազգաց, այլ եւ արեւելեան ժողովրդոց մէջ։*

Մեր ազգին նկատմամբ ալ, որչափ քաղաքական վիճակը թերեւս ոչ այնչափ նախանձելի՝ այդ գիւտին ծանօթացած և ընդհանուր եղած միջոցներուն, անով հանդերձ քիչ ատեն բաւական եղած է անոր բարերար արգասեաց մասնակցելու։ Տպագրութեան գիւտը, ինչպէս յայտնի է, 1455ին եղած է. իսկ մեր ազգին մէջ՝ ձեռուընիս եղած վաւերական յիշատակարաններէ դատելով, կը գտնենք որ

Digitized by Google

միայն 57 տարի ետքը եղած է անոր սկզբնաւորութիւնն, և հետեւաբար նաև բարգաւաճանքը։

Հետաքննական է մերազգի բանասիրութեան համար գիտելը, թէ ի՛նչ կերպով, ո՛ւր և որո՛ց ձեռքով ու ճարտարահնար ջանասիրութեամբ։

Ինչուան ներկայ դարուս կէսը՝ մեր բանասիրաց մէջ՝ ընդհանուր և ընդունելի կարծիք մ'էր, թէ Միքայէլ կաթուղիկոսին կողմանէ դեսպանութեամբ յեւրոպա ղրկուած անձ մը, Աբգար դպիր Եւդոկիացի, եղած ըլլայ առաջինն՝ տպագրութեան արուեստը մեր ազգին մէջ մտցընող. կամ զայն օրինաւոր արուեստով ու հայկական տառից վայելուչ ձեւերով մեր մէջ ներկայացընելու պարծանքն ունեցողը։ Իր ջանքով ի Վենետիկ տպագրուած հայ սաղմոսարան մը, որոյ քանի մը օրինակք հասած են մինչ առ մեզ, իրենց պատմական յիշատակարաններով կը թուէին հաստատարմացնել զայս ենթադրութիւն։ Այս կարծիքն ունեցողներուն մէջ առաջին է Չամչեան Հ. Միքայէլ վարդապետը՝ իր բազմավաստակ Հայոց պատմութեան մէջ, որուն հետեւող երեւցած են և այլք։

Սակայն վերջի տարիներուս մէջ եղած ուսումնական հետաքննութիւնք և հետազօտութիւնք և նորանոր յայտնութիւնք՝ ստիպեցին զբանասէրս փոփոխութիւն մուծանել այս կարծեաց ընդունելութեան մէջ, և ճանչնալով հանդերձ Աբգարու մեծ արդիւնքը հայկական տպագրութեան պատմութեան մէջ, ըսել թէ և յառաջ քան զինքն և իր ժամանակը՝ եղած են զանազան հայ տպագրութիւնք. և այն ատեններէ մնացած քանի մը գրքեր, ամբողջ կամ թերակատար օրինակք, թէպէտ երբեմն առանց թուականի կամ տեղւոյ տպագրութեան, հասած են մինչեւ առ մեզ, և խնամով կը պահուին՝ կա՛մ մեր և կամ օտար ազգային մատենադարանաց մէջ. զորս ուսումնասիրելով կրնանք ճշդագոյն համարուած տպագրութեան պատմութեան մը համառօտութիւնը ընծայել ընթերցողաց։

Ուստի նկատելով Հայոց տպագրութեան պատմութիւնը ըստ այլեւայլ ժամանակաց և անձանց՝ որոց ջանքով և գործով ծանօթացեր է մեր ազգին մէջ, մեզի պատշաճ կ'երեւնայ՝ թէ երեք շրջանի կամ ժամանակաց կրնանք վերածել զայն. և կը դնենք՝

Առաջին շրջան հայկական տպագրութեան, անոր մեզի ծանօթ սկզբնաւորութենէն մինչև ցԱբգար Եւդոկիացի (1513–1565)։

Երկրորդ շրջան, Աբգարու գործունէութեան սկզբնաւորութենէն՝ մինչև անցեալ դարու սկիզբը (1565–1700)։

Երրորդ շրջան, եօթնևտասներորդ դարէն մինչ ի մեր օրերը (1700–1895...)։

Պատմական առանձին աղբիւրք կը պակսին մեզ՝ մեր այս դուզնաքեայ երկասիրութիւնն կատարելագոյն կերպարանքով ներկայացնելու համար։ Բարեբաղդաբար մեր հին տպագրողք, արեւմտեայց՝ իրենց ժամանակակցաց հետևելով, սովորութիւն ըրած են՝ ինչ որ կ'երեւնայ նաև ի գրչագիրս, իրենց տպագրած գրքերուն մէջ, յաճախագոյն ի վերջն, յիշատակարաններ դնել, յորոց կը յայտնուի իրենց քաղաքը, տոհմը և տպագրական գործունէութեան պատմութիւնը։ Ասոնցմէ քաղելով, և օգտուելով նաև այլոց աշխատասիրութենէն, կազմեցինք այս գրուածքս։ Այսպէս սովոր են ընել և եւրոպացի գիտունք. անոնցմէ մէկը՝ Վենետկոյ մարկոսեան համբաւեալ գրադարանին մատենապետ Գաստելլանի՝ կ'ըսէ, քանի մի տարի յառաջ հրատարակած իր մէկ երկասիրութեանը մէջ (La stampa a Venezia). «Տպարանաց պատմութիւնը, բաց ի վաւերականներէ (եթէ գտուին), նոյն իսկ անոնցմէ հրատարակեալ գրքերէ կը կազմուի. մանաւանդ այն յիշատակարաններէ որ դրուած են գրեթէ ամեն հին տպագրութեանց մէջ. որոնք հարկաւոր տեղեկութիւններն բովանդակելով իւրաքանչիւր քաղաքաց մէջ հաստատուած տպարաններու պատմութիւն են»։

Digitized by Google

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԾԱՆՕԹ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ ՑԱԲԳԱՐ

(1513–1565)

Հայկական առաջին մասնական տպագիր, որչափ որ մեզի ծանօթ է, կը ներկայանայ ի 1472 թուականի հրատարակեալ Բազմալեզու քերականութեան մը մէջ, Գաղղիական Դպրոցի (Collége de France) ակադեմիոյ աշխատասիրութեամբ. յորում ի մէջ այլեւայլ լեզուաց կը յիշուի նաեւ մերն՝ իր այբուբենովը, և ճաշակ մը կ'ընծայուի ընթերցողաց քանի մը էջ գրութեամբ։ Այս հրատարակութիւն տեսած չըլլալով, այլ ի լրոյ եւեթ ծանօթ անոր գոյութեան և բովանդակութեան, չենք կրնար աւելի տեղեկութիւն մը տալ, կամ այդ նախաձոյլ համարուած տառից նմանահանութիւնն ներկայացընել, որ անշուշտ հետաքննական և փափաքելի կրնար ըլլալ բանասիրաց։

Ասկէ քառասուն տարի ետք D. I. Z. A. տպագրական դրոշմը կրող հաստատութեան մը կը հանդիպինք ի Վենետիկ, ուր 1512–1513 թուականներուն հետեւեալ հայերէն տառիք գրքերը հրատարակուած են, յորոց մի կամ երկու օրինակք հասած ըլլալով մինչեւ առ մեզ վերջին քսանըհինգ տարիներու մէջ, դնենք կարգաւ, նշանակելով միանգամայն թէ այսօրուան օրս՝ ո՛ւր և որո՛ւ քով կը գտնուին։

Digitized by Google

ա. Պարզատումար, տպեալ ի 1512, Վենետիկ, տըպարան D. I. Z. A: Ի Մատենադարանի Մխիթարեանց Վիեննայի (2 օր.) և Երուսաղեմի Ս. Յակոբեանց։

բ. Պատարագատետր. տպեալ ի 1513, ի նմին քաղաքի և նոյնագրոշմ տպարանի։ Ի Մատենադարանի Ս. Յակոբեանց, և Կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրդատ Վ. Պալեանի։

գ. Ուրբաթագիրք, տպեալ ի 1513, դարձեալ ի նմին քաղաքի և նոյնագրոշմ տպարանի։ Մի մի օրինակ ի Մատենադարանի Վենետկոյ եւ Վիեննայի Մխիթարեանց, Երուսաղեմի Ս. Յակոբեանց և Տ. Վ. Պալեանի։

դ. Տաղարան, տպեալ ի 1513, ի Վենետիկ՝ որպէս ի վեր անդր։ Երկու օրինակ ի Մատենադարանի Երուսաղեմի Ս. Յակոբեանց, և օրինակ մի առ Տ. Վ. Պալեանի։

ե. Աղթարք. տպեալ ի 1513, ի Վենետիկ՝ որպէս ի վեր անդր։ Ի Մատենադարանի Վենետկոյ Մխիթարեանց և Կեսարիոյ Ս. Կարապետի վանաց։

Ասոնք են ահաւասիկ բանասիրաց ծանօթ ամենահին համարուած տպագիրքն, և դրեթէ մի և նոյն տարուան մէջ՝ մէկ տպարանէ մը հրատարակեալք։

Կ՚արժէ որ վրանին արդէն տրուած ուրոյն տեղեկութիւնները ամփոփենք, ցուցակիս մէջ՝ զոր գրինք, նշանակեալ կարգաւը։

*
* *

Բայց նախ քննենք թէ ո՞վ էր այս հայ լեզուով ու տառերով նախնական տպագրութեանց հրատարակիչն, որոյ անշուշտ անունն կամ գործարանին յայտարար սկզբնատառք պէտք է նկատուին եւրոպական այդ չորս տառք, զոր ակնարկեցինք, D. I. Z. A. և որոյ նմանահանու-

թիւնն կը գտնենք մեր ընթերցողաց առջեւը։ Հա՞յ մ'էր արդեօք, եթէ իտալացի ազգաւ։

Հանդէս Ամսօրեայ՝ այս կարեւոր հարցման հետեւեալ պատասխանն կու տայ.

« Ի սկզբան անդ տպագրութեան՝ տպարանին կամ տպագրչին անունը յայտնի չէր դրոշմուեր գրքին վրայ, այլ տպագրապետին անուանը սկզբնագրերն կը դրոշմուէին այլաբանական ձեւի կամ պատկերի մը մէջ, որ այլեւայլ տեսակ էր։ Ետքէն կամաց կամաց նոյն տպագրապետին կամ տպարանին տիրոջը կամ նոյն իսկ տպարանին անունը կը գրուէր մատենին յիշատակարանին մէջ, որ հետզհետէ զանազան փոփոխութիւններէ անցնելով՝ ճակատին վրայ փոխադրուեցաւ, որ սովորութիւնը՝ մնաց մինչեւ ցայսօր։

» Այսպիսի վաղեմի ձեւ կամ նշանագրոշմ մ'ունի մեր մատեանն ալ։ Այս նշանագրոշմը, գրքին վերջին էջին վրայ կարմիր թանաքով տպուած է »։

Թէ Վենետկոյ մէջ Ռուբինեանց ատենէն և շարունակաբար եղած է միշտ՝ պատուով, ընչիւք ու թուով հայ ընտիր գաղթականութիւն մը, արդէն յայտնի է ընթերցասէր ազգայնոց, ընդարձակ և հետաքննական տեղեկութեամբք այլեւայլ գրոց մէջ հրատարակուած։ Ուստի որչափ ալ անտարակոյս է Հայոց ի Վենետիկ բնակու-

թիւնն և գործունէութիւն, մանաւանդ վաճառականական նկատմամբ, բայց թէ ազգային մ'էր այդ գրոց հրատարակութիւնն ընդ տպարանին տէրը, մեզի անհաւանելի և գրեթէ անկարելի կ'երևնայ։

Այսր պատճառը նախ՝ և գլխաւորաբար նոյն ատենուան իշխող հասարակապետութեան օրինաց խստութիւնն, որ կարգէ դուրս զգուշաւորութիւն և արթնութիւն ունէր, որ տպագրիչք երբէք կրօնից և վարչական օրինաց և կարգաց հակառակ հրատարակութիւն մը չկարենան ընել· ուստի և այդ ծանր և դժուարին գործը անոնց եւեթ կը յանձնէր՝ որ երկրին բնիկքն և իտալացիք ըլլան, իր ամեն վստահութեանն արժանաւորք։ Անոնց վրայ ալ մասնաւոր քննիչք և հսկողք սահմանուած կային, որպէս զի չըլլայ թէ իրենց շնորհուած արտօնութեամբք զեղծանին։ Հարկ չէ յաւելուլ, թէ այս վստահութեան արժանի չէին կրնար ըլլալ որոնք ոչ իրենց ազգէն և ոչ լեզուէն էին։ Եւ պիտի տեսնենք քիչ ետքը՝ որ երբ Աբգար ուզեց քանի մը հայկական գրոց տպագրութիւնն ընել ի Վենետիկ, — ինչպէս նաև իր յաջորդքն, — ո՛րչափ դժուարութիւնք և խոչընդոտներ ելան առջևնին, և ո՛րչափ և որպիսի՛ միջնորդութեանց կարօտ եղան, ինչպէս պիտի ցուցընէ մեզ պատմութեանս կարգը։

Երկրորդ, տպարան մը նոր ի նորոյ հաստատելը, որ եթէ հիմայ ալ կարծուածին չափ դիւրին գործ մը չէ, եւս առաւել այն ժամանակաց համար, յորս արուեստը դեռ անկատար վիճակի մէջ, դժուարութիւնքն ալ բազմապատիկք կ'ըլլային և ծանրագնոյ. և միայն հայերէն քանի մը տպագրութեանց համար՝ որոց ելքն և յաջողութիւն տարակուսական և անստոյգ էր, խոհական ձեռնարկ մը չէր այդչափ դժուարութեանց ենթարկուիլը։ Ժամանակ անցնելէն ետքը՝ Գուլնազարեանն և Սահրատեանք ուզեցին փորձ մը ընել, բայց ուրիշ էին ժամանակքն և անձինք, աւելի ծանօթք տեղական վարչութեան իրենց

կենաց պայմանօքը կամ ընկերական դիրքով և ազդեցութեամբ։

Այս պատճառներէն դուրս՝ տառից ձուլումն, ձև և շարուածք՝ ամենայն ինչ այս հին տպագրութեանց մէջ արուեստագիտի ձեռք և ճարտարութիւն կը յայտնէ։

Ուստի ինչպէս յիշատակարաններէն ալ կը տեսնուի, տպագրել և հրատարակել տուողք զանազան անձինք էին յազգայնոց մերոց, բայց տպագրիչն իտալացի մը։

*
* *

Հետևաբար ո՞վ էր ուրեմն այդ օտարազգին, որոյ գործարանէն ելած են յիշեալ տպագրութիւնք։

Այս հետաքննելի հարցման պատասխանը հմտագունից և տեղեկաց յանձնելով, սա միայն ըսենք, որ նոյն ատեն ի Վենետիկ քաղաքի տպարանի տէր և տպելու արտօնութիւն ունեցող անձանց ցուցակը և գործարանաց նշանագրոշմը քննելով, որ արդէն հրատարակուած են, չգըտնուեցաւ անուն մը՝ այդ սկզբնատառից մերձաւոր, կամ համանման կնիք մը։ Միայն հռչականուն Ալտոյ Մանուցիոյ տպագրապետի աներ մը կը յիշատակուի, նոյն արուեստով զբաղող Antonio Zaroto անուամբ, ուրիշ մ՚ալ I. Zanandrea Asolano, որոնք գործած են մինչև ի 1513 և անդր. երրորդ մ՚ալ D. Zuan-Matteo Asola, որոյ 1595ին ըրած տպագրութեան մը յիշատակութեան հանդիպեր ենք, որք եղած պիտի ըլլան այս գրոց տպագրիչք, և միւս չորրորդ մը՝ և աւելի Zuan Andrea կոչուած անձ մը։ Բայց ինչպէս կանխեցինք ըսել, ստուգագոյն ծանօթութիւնը և տեղեկութիւնը ի բանիբուն հմտից և ձեռնհասից սպասելով՝ անցնինք մեր նիւթին։

Digitized by Google

* * *

Վենետիկ՝ միջին դարուց մէջ բովանդակ արեւելից և արեւմտից համար վաճառականութեան մեծ շահաստան մ՚էր. և իր աննման դիրքն և քաղաքական օրինաց ընձեռած խաղաղ հանդարտութեամբն՝ արուեստք և ճար-տարութիւնք բարգաւաճ և յառաջադէմ վիճակի մէջ էին։ Հոն կը ծաղկէին արդէն տպագրութեան արուեստին հետ առնչութիւն ունեցող նմանօրինակ արուեստք, ինչ-պէս խաղի թղթերու՝ որ խորաքանդակ կը փորագրուէին փայտի վրայ. և տախտակագրոշմ տպագիրք որ անդստին ի հնգետասաներորդ դարէ կը գործածուէին ի Հոլանդա և ի Գերմանիա, և որոց տպագրական արուեստ պարտա-կան է իր սկզբնաւորութիւն, Վենետկոյ մէջ կը շինուէին։

Այս պատճառաւ և մերայինք՝ երբ ուզեցին տպագրու-թեամբ և տպագլովք օժտել իրենց ազգը, նախամեծար համարեցան ի Վենետիկ դիմել քան այլուր. և դիմողներն ալ չկրցան նոյն յաջողութիւնն ունենալ, բայց միայն յԱմստերտամ՝ ուր աւելի տեւական, բարգաւաճ և ար-դիւնական եղաւ իրենց գործը։ Թող որ այնչափ հռչակեալ էին վենետկեան տպագիրք ընդհանրապէս անդստին ի 1480 տարւոյ, մինչև յատկաբար նշանակել վենետիկեան տառիւք (caracteribus venetis), և անով ցուցընել անոնց արուեստական ճարտարութիւնը և ընտրութիւնը. և Թէոդորիկ ոմն Ռուտ՝ նոյն Թուականին ըրած տպա-գրութեան մը մէջ փափաք կը ցուցընէր որ իր տառերն կարենան մրցիլ մաքրութեամբն և արուեստիւ վենետական տառից հետ. Dii dent, կ՚ըսէր, ut venetos exsu-perare queant:

Բազմաթիւ էին հոն տպագրիչք՝ արուեստին գիւտէն մինչ ի վախճան հնգետասաներորդ դարու, գրեթէ երկու հարիւրի ելնելով անոնց թիւը. մինչ նոյն միջոց ժամա-

նակի մէջ 37 եղած են ի Հռոմ, ի Փլորենտիա 22, ի Բոլոնիա 42, ի Միլան, ի Փարիզ և ի Լիոն՝ երեք քաղաքն մէկտեղ առնելով՝ 150, ուր ի Վենետիկ տպագրողաց այս զարմանալի համրնթացութեան մէջ՝ ամեն քաղաքակիրթ ազգաց ներկայութիւնը կը գտնենք։ Առաւելագոյնքն թուով բնականաբար գերմանք էին, յորոց և նախնական գիւտ արուեստին. յետոյ գաղղիացիք, փլամանք, հոլանդացիք, զուիցերացիք, սպանիացիք. շատեր յիստրիոյ, ի Դալմատիոյ և ի Կանտիոյ, և որոց հետ կու գան կը խառնուին նաև Հայք։

*
* *

1512--13ին հրատարակուած նշանակեցինք՝ մեզի հասած հայկական տպագրութեանց հնագոյնը, որ քանի մը տարի յառաջ յայտնուեցաւ և հիմա կը գտնուի, ինչպէս ըսինք, Վիեննայի Մխիթարեանց մատենադարանին մէջ, և է

ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ

Այս կարեւոր գիւտը կը ծանուցանէ նոյն Ուխտին Հանդէս ամսօրեայ պատուական թերթը 1889 տարւոյն նոյեմբերի թուովը հրատարակուած Հայ տպագրութեանց ամենահին երախայրիք հատուածովը, և ստորագրութիւնն և նկարագիրը կը տրուի հետեւեալ կերպով.

« Մատենին վիրքն՝ փոքրադիր ութածալ է, և թուահամար չունի։ Թերթերը նշանակուած են ա, բ, գ, դ, ե, զ, է, ը տառերով, որոնք գրքին վերջին երեսին վրայ կարգաւ վերստին նշանակուած են թերթերուն թիւը ցուցընելու համար։ Իւրաքանչիւր թերթը նշանակուած է յաջորդ կերպով. ա. — ա. բ. — ա. գ. — ա. դ. — բ. — բ. բ. — բ. գ. — բ. դ. այսինքն ա

թերթին առաջին, երկրորդ, երրորդ թուղթը և այլն։ Ասոր յաջորդող չորս թուղթին վրայ բան մը նշանակուած չէ։ Նոյնէն կու գայ բ թերթն, իրեն յաջորդող բ. բ. —. բ. գ. — բ. դ թղթերովը և կը շարունակուի մինչեւ ը. որմէ կ'երեւնայ թէ գիրքն ութը թերթ է։ Սակայն վերջին թերթն ամբողջ չէ, երեք թուղթ միայն ունի։ Եւ այսպէս ամբողջ գիրքն է՝ է թերթ × 8 թուղթ = 56 թուղթ, որուն վրայ աւելցուր ը թերթին երեք թուղթն ալ, կ'ըլլայ 59 թուղթ։

« Տպագրութիւնն ըստ բաւականին մաքուր եւ կանոնաւոր է, ունի կարգաւորեալ կիտադրութիւն և գլխագիր։ Բառերն իրարմէ բաժնուած են. այնպէս որ կրնայ ըսուիլ թէ առաջիկայ գիրքն՝ իր ժամանակին պարագաներուն նայելով, իր սեռին մէջ ամենակատարեալն է։ Տպարութեան սխալներն ալ նուազ են, ուստի և տպագրութեան գիտութեան ամէն օրէնքները վրան կ'երեւան. և որ ամենէն նշանաւորն է, տպագրութիւնը երկնագոյն է՝ սեւ և կարմիր։ Սակայն ամբողջ գիրքը մէկ տեսակ գրով միայն տպուած է, որ թէպէտ մէկ կողմանէ աղքատութեան նշան է, սակայն մէկալ կողմանէ յայտնի նշան ու ապացոյց է միանգամայն հնութեան, այսինքն ժամանակի մը, երբ այլեւայլ գրեր փորագրել ու ձուլել տալ այնպէս դիւրին չէր։

« Եւ ինչպէս որ երեւելի պատկերահաններ սովոր են իրենց անունն նկարին տակ գրել, — ինչպէս որ երեւելի գործատանց արտադրութիւնքն՝ գործատան սեպհական նշանն կը կրեն, այսպէս նաև մեր տպագրութիւնը, իւր յատուկ նշանն ունի վերին երեսին վրայ՝ ...

« ... Գիրքը Պարզատումար մըն է՝ Հայոց 961 տարւոյն, և կը պարունակէ Պարզատումարէն զատ՝ Նշանացոյց մը, որուն կը յաջորդեն ստորաբաժանեալ մասունք՝ 1. Կաղանդացոյց, 2. Երազացոյց, 3. Ղընընդեան տղայոց և 4. Մարմնախաղաց։ Ոչ յառաջաբան, ոչ

յիշատակարան և ոչ ուրիշ մասնաւոր նշան մը ունի...
«Մատենին առաջին և գլխաւոր ճակատին մէջ տեղը կայ միայն «Այս է պարզայտումար հայոց»։ Իսկ երրորդ երեսն կը սկսի բուն գիրքն այսպէս. «ԻՍՆՃարիշր. ու վարքունշնուշմէկն. գիրն նոյն է. և տանոսաւերն ի վերեւն կարիճն է. եւ այլն կարգաւ երթա...»։ Ուստի տօնացոյցը կը սկսի Հայոց 961 = Քր. 1512 թուականին։

«Գրքին վրայ վերոյիշեալ 961 թուականէն զատ չկայ թուական մը, որով տպագրութեան տարին կարենայինք ճշգիւ որոշել։ Այսու ամենայնիւ զօրաւոր կռուան մըն է այս 961 թուականը, որով կրնանք քանի մը քայլ առնուլ և հետեւութեանց հասնիլ։

«Տօնացոյց կամ տումար մը շինողին առաջին գործքն է տարւոյն թիւը դնել, այն տարւոյն թիւը, որուն մէջն է, կամ որուն համար տոմարը կը շինուի։ Ուստի բոլորովին անհաւանական է թէ մատենագիրն իրմէ շատ ետքն եկող տարւոյ մը տարեթիւը դնէ իւր գրուածքին վրայ։ Բայց չունի նաև պատճառ մը մատենագիրն՝ անցեալ տարւոյ թուականն դնել գրած ու անշուշտ ժողովրդեան գործածութեան համար շինած մատենին՝ մանաւանդ տոմարին վրայ, որ նպատակին չէր կրնար ծառայել։ Եւ իրօք ինչո՞ւ ներկայ տարւոյն մէջ տպուած տօնացուցին վրայ, — օրինակի աղագաւ, դնենք ասկէ 50 տարի յառաջ անցած թուական մը, այն է 1839, և կամ նոյնչափ տարի ետքը՝ 1939 թուականը։

«Յայտնի է ուրեմն, որ առաջիկայ մատեանը տպուած է կա՛մ այն տարին, զոր կը ցուցընէ թուականը, այսինքն՝ 961 = 1512, և կամ քանի մը ամիս, և գուցէ նոյն իսկ տարի մը յառաջ սկսած է, որպէս զի նշանակուած 961 տարւոյն համար տոմարը պատրաստ ու գործածելի ըլլայ։

«Այս կը ցուցընեն տպագրութեան արտաքին որպիսութիւնը, գրերուն մեծութիւնն և տձեւութիւնը, վեր

Ջապէս այն խրական տարբերութիւնն՝ որ կայ առաջիկայ մատեանին և անկէ քիչ մը ետքը տպուած մէկ տոմա-րին կամ խրատագրքին մէջ, որ նոյնպէս վիեննայի Մխիթարեան Մատենադարանն է և կերլայի Տաղարա-նին տպարանէն ելած է »։

Այսչափ Ամսօրեայ հանդէս իւր վերոյիշեալ թուոյն մէջ։ Քիչ ետքը պիտի տեսնենք թէ ի՛նչպէս պիտի ստու-գուի յօդուածագրին ենթադրութիւնը՝ միայն տպագրու-թեան թուականին նկատմամբ և ոչ տպարանին։

* * *

Անմիջապէս այդ գիւտին յաջորդ տարւոյն առաջին ա-միսներուն Բազմավէպ վենետկոյ Մխիթարեանց խմբագ-րութիւն, Տօնացոյց ամենահին և միակ ենթադրուած տպագրական գիւտին աւետմանէն առիթ առնելով՝ յօ-դուած մը կը հրատարակէր, զոր քիչ ետքը պիտի մէջ բերենք, Աղթարք և Ուրբաթագիրք մատեանից արդէն ի-րենց Մատենադարանին մէջ պահուած օրինակներով և նմանահանութեամբք տպացուցանելով որ ոչ ի Պոլիս կամ այլուր, այլ թէ Պարզատումարն և թէ նմանատառ երկու տպագիրքն ի վենետիկ եղած են և ժամանակաւ յառաջ քան զԱբգար։

Բայց առանց նկարագիրը կամ ստորագրութիւնը չտուած՝ ուրիշ կարեւորագոյն գիւտի մը խօսքն ընենք, յերուսաղե-մեան ազգային պատրիարքարանի մէջ յայտնուած, և է

ՊԱՏԱՐԱԳԱՏԵՏՐ

Գեր. Սահակ եպիսկոպոս Խապայեան Արեւելք լրագրի մէջ կ՚աւետէր այս գիւտը։ Պատարագատետր կամ Խոր-

Digitized by Google

հրգատետր մ'էր այն, և կը կրէր այս համառօտ յիշատակարանը, կամ գէթ նոյնչափ ևւեթ մէջ կը բերուէր զայն ծանօթացընողէն. « Տպագրեցաւ սուրբ տառս'ի ՋՀԲ (= 1523–4) ի աստուածապահ քաղաքս ի Վէնէժ, որ է Վենետիկ, Ֆռանկաստան. Ձեռամբ մեղապարտ Յակոբին. որք կարդայք՝ մեղաց թողութիւն խնդրեցէք:

Բազմավէպ այս գիւտին վրայ գրելով (1892, մայիս) կը յաւելուր. « Քաղաքն յայտնուեցաւ, բայց տպագրատունն՝ դեռ ոչ. կրնար կարծուիլ թէ նոյն իսկ Հայոց տան մէջ (զոր արդէն ունէին ազգայինք մեր ի քաղաքին) ըլլայ, ինչպէս ուրիշ տպագրեալ հին գիրք մը կ'ըսէ: Այս հայ տպագրութեան կարեւոր խնդրոյն ծանօթութեան մեծ լոյս մ'է, բայց դեռ ոչ բաւական. կը մնայ փափաքելի գտնել այս մեղապարտ Յակոբէն առաջ բարեպարտ և բարեբաղդ հայ տպագրող մի, կամ թէ նոյն իսկ Յակոբն է՝ իր առաջին տպագրաքանը, և ինչ կերպով հնարելը հայկական տառերը, ինչպէս որ իրմէ քառասուն և աւելի տարի վերջ (1565) երբեմն առաջին տպագիր կարծուող Աբգարն Թոխաթեցի՝ իր ըրածը կը պատմէ, միանգամայն և յայտնելով կամ կոչելով Նոր իր տպագրութիւնը, ուսկից հարկ էր գուշակել որ իրմէ առաջ ալ կամ հնագոյն հայ տպագրութիւն կար: Այս բանիս վկայութիւն մ'ալ ըլլայ (ինչ որ ցայժմ տեղ մը յիշուած չէ), Լորէնցոյ տ'Անանիա հեղինակի մը Տիեզերագրութեան (Cosmografia) գրոց մէջ յիշածը, թէ «ինքն աչօք տեսեր է յամին 1562 վենետիկէն բերուած հայերէն տպագիր, որ՝ ըսածէն կ'երեւի թէ ըլլայ այբբենարան կամ քերական[1] »:

1. Il cui alfabeto costa, siccome io ho veduto con una breve *metodo* del loro idioma, di 39 lettere, di che già ne hanno la stampa, avendo la riportata da Venezia l'anno del *sessantadue*.

Digitized by Google

*
* *

Ազգային տպագրութեան նկատմամբ մեծ կարեւորութիւն ունէր այս գիւտ. և եթէ բանասիրաց համար աւելի ցանկալի մաս մը թերթի մնալով, կատարելապէս գոհ չէր ըներ զիրենք, կամ օրինակին պակասութենէն կամ ուրիշ ո՛ր և իցէ պատճառաւ, տրուած տեղեկութեանց անբաւական ըլլալը կը համարուէր։ Բարեբաղդաբար անցեալ տարւոյն մէջ Կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրդատ վարդապետ, կատարելագոյն և անթերի օրինակ մը նոյն գրքէն ձեռք կը բերէ իր վիճակին մէջ, ու լիուլի ամէն հանգամանօքը 1894 տարւոյ Ամսօրեայ հանդիսի դեկտեմբերի թուոյն մէջ կը ծանուցանէ։

Ահաւասիկ նոյն գրոց նկարագիրը՝ գիւտը ընողին բուն խօսքերովը, զոր կը քաղենք յիշեալ հանդիսէն.

«... Պէտք է փութով ըսեմ՝ թէ մատեանս է Պատարագամատոյց, Ուրբաթագիրք և Տաղարան, միասին կազմեալ անտարակոյս ի սկզբանէ։

« Մատենիս՝ բաց ի տախտակեայ կաշեպատ ամենահին կազմի երկու կողքերէն որոնք հինցած են, թղթերը գրեթէ մաքուր մնացած են. և ո՛ և է պակաս ալ չունի։ Դիրքն ութածալ է, 17 հարիւրորդամետր երկայն և 11 հարիւրորդամետր լայն։ Ամբողջ մատեանն միատեսակ, մեծատառ և տձեւ գրով տպուած է։ Գիրն կը նմանի ճիշդ մեր ձեռքն եղած Աղթարքի։

« Նշանակելի է որ տպագրութիւնն եղած է կրկնագոյն, սեւ և կարմիր մելանաւ։ Կարմիր գոյնն ոչ թէ միայն վերնագիրներու՝ այլ և տեղ տեղ էջերու մէջ ալ տպագրուած է։ Տպագրական սխալներն նուազ են, աչքի կը զարնէ ս տառն որ յաճախ ո տառի տեղ գործածուած է և փոխադարձաբար։ Բառերն թէ և շատ տեղեր իրարմէ անջատուած են, բայց կան երբեմն տեղեր ալ՝ ուր անբա-

Digitized by Google

ժան մնացած են. այսու ամենայնիւ պէտք է ըսենք՝ թէ իր ժամանակին համեմատ՝ տպագրութիւնն մաքուր և կանոնաւոր եղած է ։ Ունի կիտագրութիւն, գլխագիր (մեծաւ մասամբ կարմրաւ), զարդագիր, պատկերներ ։ Եւ կիսախորանք միայն վերջի մասի, Տաղարանի մէջ ։

« Թերթերն (8 թուղթ 1 թերթ) նշանակուած են ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. տառերով, որք վերջի մասի վերջին երեսի վրայ վերստին տպագրուած են ։ Իւրաքանչիւր թերթն նշանակուած է ճիշդ այնպէս՝ ինչպէս Պարզատումարն, զոր ծանօթացոյց մեզ յարգելի Հ. Գ. Գովրիկեան (Հանդէս ամսօրեայ 1889 թիւ 10)։ Առաջին թերթն՝ ա.— ա.— բ.— ա.— գ.— ա.— դ. այսպէս նշանակուած. չորս թուղթերու յաջորդող միւս չորս թուղթերուն վրայ բան մը նշանակուած չէ. ապա կու գայ երկրորդ թերթն. բ. — բ. բ. — բ. գ. — բ. դ. նոյնպէս յաջորդ չորս թղթերուն վրայ բան մը նշանակուած չիկայ. ետքէն կու գայ երրորդ թերթն. գ. — գ. ա. — գ. բ. — այսպէս յաջորդաբար նշանակուած մինչեւ վեցերորդ թերթն, վերջին զ թերթն միայն չորս թուղթ ունի, և այս մասն ամբողջ 44 թուղթ է ։ Ճիշդ առաջին մասի նման և գրութեամբ՝ կը շարունակուին երկրորդ և երրորդ մասերն » (որոց վրայ մենք առանձին պիտի խօսինք)...։

« Երեք մասին թղթերն միօրինակ են, հաստ, անողորկ և շաքարագոյն, և նոյն իսկ փոքր տարբերութիւն մը չունին ։ Ամբողջ մատենիս իւրաքանչիւր էջն կը բաղկանայ 16 տողերէ. տող մըն ալ, կրնանք ըսել, վերի լուսանցքի թղթաձեւ զարդի մը մէջ եղած կարմրագոյն վերնագիրն ։ Այս ձեւ զարդն ունի նաեւ Աղթարքը ։

« Տպագրութիւնն ունի իր յատուկ նշանագրոշմն մատենիս մէջ երկու տեղ, և յիշատակարան մը համառօտ՝ առաջին մասի վերջն, զորս ի ստորեւ յառաջ պիտի բերենք ։ Եւ անոնցմէ կը հասկնանք թէ տպագրութիւնն եղած է

անտարակոյս ի Վենետիկ և ի տպարանի D. I. Z. A/ի։

« Պատարագամատոյց գրոց առաջին թղթի առաջին երեսին վրայ, մէջ տեղը, տպուած է կարմրաւ

Պատարագս

սա է տեառ

Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ

« Երկրորդ երեսը պատկեր մը, յունաձեւ զգեստաւորեալ քահանայ մը՝ սկիհ ի ձեռին, շրջապատուած է հինգ գլխր կամ սարկաւագներով։ Քահանային երկու կողմն երկու պատկերներ եւս կան փոքրագիր, և երկու աշտանակներ վառուած մոմերով։ Պատկերի վերի մասին մէջ եռանկիւնաձեւ մը շինուած է, որուն մէջ խաչելութեան պատկեր մը կայ կիսովին։

« Երկրորդ թղթէն կը սկսի մատեանն.

Յորժամ կամեսցի Քահանայ

Ն պատարագ մատուցանել։

Պարտէ այսպէս զգեստաւորիլ

. . . . . (կարմրաւ)

Որ զգեցեալ ես զլոյս ո

րպէս հանդերձ տէր մե

ր յիսուս. քրիստոս. անճառելի խ

ա. բ.

« Այսպէս կը շարունակուի մինչեւ 44 թղթի առաջին երեսը, ուր կը վերջանայ հետեւեալ յիշատակարանաւ, ինչպէս վերն ըսինք.

Գրեցաւ սուրբ սաղոս ի. Ջ. կբ.

ի աստուած

սպան քաղաքս ի վէնէժ որ է

վէնէ

տիկ ֆռանկստեան. ձեռամբ մէ

ղապարտ յակոբին. ով որ կարդայ

ք մեղաց թողութիւն խնրեցէք

աստուծոյ։

44րդ թղթի երկրորդ երեսն դատարկ մնացած է։

« Այժմեայ ընդհանրապէս գործածուած Պատարագամատուցի և ատոր մէջ, բաւական տարբերութիւններ կը նշմարուին...

« Յիշատակարանին մէջ յիշուած Յակոբն ո՞վ է, և ի՞նչ կը նշանակէ ջկբ = 1513 թուականն։ Կրնա՞նք ըսել թէ տպագրութեան թուականն է, և Յակոբն ալ մեծ դեր ունեցած է տպագրական գործին մէջ. բայց թէ տարակուսանաց կէտ մը կայ, այն ալ գրեցաւ բառն է, փոխանակ տպեցաւ սուրբ տառս, և այլն՝ ըսելու. արդեօք ձեռագրի գրչութեան թուակա՞նն է, որ տպագրութեան ժամանակ ալ անփոփոխ թողուած է։ Ինչ որ ալ լինի, թերեւս ալ սխալինք, մեր տկար կարծիքն է՝ նա մանաւանդ համոզումն, թէ մատեանս տպուած է ի Վենետիկ, և տպագրութեան թուակա՞նն է 1513, կամ առ առաւելն՝ մէկ տարի վերջ »։

Այսչափ Գեր. Պալեան վարդապետ, և իր վերջին ենթադրութիւնն կամ կարծիք՝ ստոյգ, ինչպէս պիտի տեսնենք։

ՈՒՐԲԱԹԱԳԻՐՔ

Տառերն այս ամենահին տպագրին, մեծութիւն, զարդեր, և ի վերջ կոյս մատենին դրոշմուած՝ մի և նոյն նշանն խաչազարդ, նոյնանիշ եւրոպական տառերով, ամենևին տարակոյս չեն թողուր հաւատալու որ մի և նոյն տպագրատան արդիւնք է և արգասիք՝ որպէս նախկին յիշուածներն։

Գիրքն գլխաւոր երկու մասն բաժնուած է, ինչպէս կը ցուցընեն նաև խորագրերն որք ամէն երեսի վրայ կրկնուած են։ Առաջին մասն է յատկապէս Ուրբաթագիրք կամ Սուրբ Ուրբաթ կոչուածն, և առաջին թղթյոն

Digitized by Google

առաջին մասին մէջտեղն՝ կարմրագրով տպուած է . « Անուն գրոցս է սուրբ ուրբաթ գիրք » ։ Իսկ երկրորդ մասն՝ որ կը սկսի Աղօթք Կիպրիանոսի խորագրաւ, կը բովան-

դակէ զանազան գլուխներ, ինչպէս քիչ վերջը պիտի նշանակենք ։

« Ուրբաթագիրք կը բովանդակուին քանի չորս թղթե-

Digitized by Google

Ուրբաթ

Ուրբաթամուտ աւր. կամ չորեքշա
բթի. տանին զհիւանդն ի դուռն
եկեղեցոյն: Եւ ասեն զհարցի
ն սաղմոսն մինչև ի գործքն: Եւ
ապա ասէ նստասուն երկու տէր
ողորմեայ. և ասէ զաղաւթս.

Սարդեամ քաւրէ զհայ
րենամերոյ յի ք(րիստո)սի տէր
զաւրութեանց. որը
զգազանականպատեցեր
և զդիւացն իշխանութիւն նուաստ
ապարտեցեր: Մեծ եւ դու տէր
և անպատում յուսացելոցն ի քեզ
Ընկալ զաղաչանս ծառայից քոց.
և զաղախնայից. Ես ստորգամի

ա. բ.

րու մէջ. և ի սկզբան ունի հոս դրուած պատկերն յորում հայ աբեղայի տարազն կ'երևի հիւանդի մօտ կանգնած։ Այս պատկերն կրկնուած է նաև երկրորդ մասին սկիզբը։ Բանասիրաց հետաքննութեան համար կը ներկայացրնեմք աստ (յէջ 23) նաև նոյն պատկերին դէմ գտնուած՝ առաջին երեսին նմանահանութիւնն, որով կարող կը լինին մեր ընթերցողք ճիշդ գաղափար ունենալ հայկական ամենահին տպագրութեանց տառից ձևերուն։

Քն̄ ա̄ծէկէալի
ւրամենզաւրաւքնհալածեա
ցզդևսն։ Ս ուրբխաչնևմ̄ք
աւէտարանն. աւգնականև
պահապանլինցիծառայիսա̄յ։
ՄԱՐՏԻՐՈՍԻՆ
ևիւրտանամէնևէղեցի։

« Այս առաջին մասէն ետքը, որ բովանդակութիւն է երդմնեցուցչական ձևերու ընդդէմ սատանայից, կախարդաց և դիւթից, յ'էջ 49 կը սկսի երկրորդ մասն՝ Աղօթք Ս. Կիպրիանոսի « զոր ասացեալ է վասն դիւաց և կախարդաց և աղանդոց », հանդերձ կանխաբանով մի՝ յորում ինքն Կիպրիանոս կը պատմէ իւր կախարդական հնարքները, զորս ի գործ կը դնէր յառաջ քան զդարձն ի քրիստոնէութիւն. և կ'աւարտի այս աղօթքս յ'էջ 54 (Թուղթ դ. գ.) հետևեալ բառերով. « Եւ ամենայն կապեալք արձակումն առցեն. մեղհազար և մեղհարիւր եաւթանասուներկու աղանդս կանանց և կախարդաց և չարաչից և չարլեզուաց. և ամենայն որոգայթ արձակեալ

Digitized by Google

և հեռացեալ եղիցի ի ծառայէս Աստուծոյ Մարտիրոսին »: Այս վերջին անունս դրոշմուած է ձեռքով նօտրագիր. որ կը ցուցընէ զստացողն մատենին. որ ոչ միայն այստեղ, այլ նաև ամէն մէկ մաղթողական աղօթից վերջը գրուած է, և ուրիշ տեղ ալ՝ յատկապէս ի վերջ կոյս գրքին՝ յ'էջ 108 (թուղթ գգ. ը.) գլխագիր տառերով կը դրոշմուի, ինչպէս կ'երևայ, ի տպագրողէն, կամաւ սպիտակ թողուած տողի մէջ, (յ'էջ 25) ձևով:

« Այս պարագայս այնպէս կարծել կու տայ թէ գիրքն տպագրողին համար պիտի ծառայէր իբր սոսկ շահագիտութեան աղբիւր մը, օգտուելով ժամանակին բարեմիտ ջերմեռանդներէն, որք հաւատք կ'ընծայէին տառապելանուն դիւաց կամ հրէշից և զօրութեանց, իբրև կարող ըստ կամս ի չարչարել զմարդիկ նաև յետ փրկագործութեան Բանին Աստուծոյ:

« Ի վերջ մաղթանաց Կիպրիանոսի, յ'էջ 54 (թուղթ դ. գ.) կը դրոշմուի Պատմութիւն Յուստինեայ կուսին, որ է համառօտիւ յիշատակութիւն՝ դարձի Ս. Կիպրիանոսի, և կ'աւարտի՝ յէջ60 (թուղթ դ.գ.) ուր կը սկսի նոր խորագրով Մաղթանք առ ամենայն սուրբս Աստուծոյ, որ շարք մի է անուան ամենայն սրբոց, որոց բարեխօսութիւնն կը հայցուի ստորագրեալ գրոց ստացողին համար, որ մեր օրինակին մէջ վերոյիշեալ Մարտիրոսն է:

« Կը շարունակուի գիրքն, յ'էջ 71 (թուղթ ե. դ.) Նարեկացւոյն « Որդի Աստուծոյ » ծանօթ երեկոյին աղօթիւք, որոյ կը յաջորդեն յ'էջ 74 (թուղթ ե. ե.) հետևեալ տողերն. « Ես եւ յամենայն ժամ զայս ասեմ թէ հանապազ այս գիրքն ի գրկիս, աստուածաբան ի բերանիս, ձեռագիրն ի ճակատիս, այս սէրս սէր է իմ սրտիս, և անմոռաց ի յիմ մտիս: Մարմինս տուն է տէրունի, միտքս նման սուրբ քահանի, սիրտս տեղի սուրբ սեղանի, խորհուրդս անարատ պատարագի, աղօթքս խունկ ընդունելի:... Արդ երդումն տամ վկայութեամբ

Digitized by Google

սուրբ գրոյս այսորիկ զոր գրեցաք. ուր լինի գիրս և ուր կարդացւի, ոչ մերձենայ ի տունն այն չար և ոչ որոգայթ. ոչ ի այր մարդ և ոչ ի կին. ոչ ի ծեր և ոչ ի տղայ, ոչ երիտասարդ և ոչ ի կուսան, ոչ ի մէն կենալն և ոչ ի ճանապարհի. այլ կապած է ամենայն չար ի դէմ ծառայիս Աստուծոյ Մարտիրոսին » ։ Որով յայտնի կը տեսնուի թէ այս գիրքս իբրու յուռութուլանք մի պիտի ծառայէր ստացողին համար ։

« Այս մաղթանքէս ետքը դրոշմուած են չորս աւետարանք բժշկութեանց, մի մի յիւրաքանչիւր աւետարանաց, որ կ'աւարտին յ'էջ 86 (թուղթ գ. գ.) ։

« Ի վերջ աւետարանացն սպիտակ թողուած է մնացորդ կէս էջն. և յաջորդ թուղթն որ պիտի լինէր գ. դ. կը պակասի. որով գ. ե. թուղթն անվերնագիր շարայարութիւն է գողտրիկ զղջական աղօթքի մը, որ Աղաւրթք փոկաւոր կը մակագրի, և կը ձգի մինչև ցվերջընթեր թուղթն (գ. ե.) վեցերորդ թերթի, ուր կ'աւարտի փառաւորութեամբ սուրբ Երրորդութեան ։

« Աստ կը պակասին գ. ը. և ե. ա երկու թուղթք. վասն զի յ'էջ 105 կը գտնուի թուղթ մի նշանակեալ ե. բ. Աչձահարի այս գիր վերնագրով՝ երդմնեցուցչութեան պատառիկ մի, որոյ՝ ինչպէս սկիզբն, այսպէս ալ աւարտն կը մնայ թերի, պակասելով յաջորդ թուղթերն ։ Բայց ընդ մէջ այս վերջին թղթեկիս և նախընթացին (գ. ե.) եկամուտ ամբողջ թերթ մի կազմուած է, որ հաւանօրէն ուրիշ գրքի կը վերաբերի. և պատահական կերպով այս տեղ մուտ գտեր է. վասն զի թերթին գրանշանքն են համրուած գգ. — գգ. բ. — գգ. գ... — գգ. ը. վերջին, ուր կը գտնուի վերոյիշեալ Մարտիրոսին ստորագրութիւնը ։ պէս յինչցնատբխընթացաբար ըսինք, նոյն այս թերթին ուրիշ օրինակ մ'ալ ունինք առանձինն, ըստ ամենայնի համաձայն Ուրբաթագրոց մէջ կազմուածին, բաց ի Մարտիրոսին ստորագրութեան պակասութենէն, ուր սպիտակ մնացեր է ։

Digitized by Google

« Այս թերթիկս՝ եթէ չուզենք ուրիշ հրատարակութեան մի մասն համարել, որոյ իբր ապացոյց կրնան ծառայել կրկնանիշ տառքն գգ. — գգ. բ. և այլն, կրնանք ըսել որ առանձին տետր մի է, մի և նոյն տպագրատան և ժամանակի արդիւնք, զոր կը հաւաստեն տառից նոյնութիւնն և տպագրութեան ոճն: Վերնագիր ունի. « Վասն Գանի ». իսկ սկզբնական խորագիրն կարմրադեղով դրոշմուած է այսպէս. « Գիր ամենայն ցեղ գանի: Առ պաւղպատ դանակ, երեք բևեռե(ա)ն և տեառնագրէ ի վերայ վիրին, և ասէ զաղ(աւթս) »: Այս աղօթից, որ զդեւս և զդիւթս կապելու ձեւ մի է, կը յաջորդէ սաղմոս մը. և ապա « Մաղթանք առ աքանչելագործ սուրբ նշանսն Քրիստոսի Աստուծոյ մերոյ », յորում կը նշանակին Հայաստանի զանազան վանքերու և օտար աշխարհաց մէջ գտնուած ուխտի սուրբ նշաններն:

« Ուրբաթագրոց վերջին երկու թուղթերուն առաջին էջն կը պարունակէ « Գիր չար ակին » վերնագրով՝ պահպանութեան աննշան մաղթանք մի. իսկ երկրորդ և երրորդ էջերուն վրայ դրոշմուած են կարգաւ նոյն մատենին էջերուն սկզբան բառերն, թերթերու կարգն ցուցանելու համար: Վերջին (երրորդ) էջին վրայ կը գտնուի նաև տպագրատան խաչաձև:

ՏԱՂԱՐԱՆ

Դարձեալ նոյն տարւոյն մէջ և նոյն տպարանի հրատարակութիւն, յորմէ երկու օրինակք կը գտնուին այժմ, ինչպէս ծանուցինք. մին՝ Երուսաղեմի Մատենադարանին մէջ, և միւսն սեփականութիւն Գեր. Տրդ Վ. Պալեան, Կեսարիոյ առաջնորդին:

Խորագիր ճակատն՝ առաջին թղթի առաջին երեսին մէջ տեղը՝ այսպէս.

Digitized by Google

Տաղարան է
սայ հոգ
ոյ. և մար
մնոյ

« Պարունակութիւնն է.

1. Երեք տաղ Լուսաւորչայ և Տրդատայ: — 2. Երկու տաղ Յովհաննիսի Թուլկուրանցի ասացեալ: — 3. Տաղ մը Ղարիպի՝ Նաղաշի է ասացեալ: — 4. Մեալքն է: — 5. Տաղ Գարնան, և Տաղ մը Յովհաննիսի Թուլկուրանցի ասացեալ: — 6. Նաղաշի է ասացեալ: — 7. Տաղ Փրկանէ ասացեալ: — 8. Ողբ մը մեռելի՝ Նաղաշի ասացեալ. և Ողբ մը ի Գրիգոր վարդապետէ ասացեալ: — 9. Տաղ Յովհաննիսի Թուլկուրանցի ասացեալ: — 10. Տեառն Նասէսի Հայոց կաթուղիկոսի ասացեալ է վասն ուրախութեան մարդկան, (137 կտոր հանելուկք են): — 11. Այլ տասնևերկու տաղ Յովհաննիսի Թուլկուրանցի:

« Գրքիս մէջ 27 կիսախորան կայ, որք պլուած են տաղերու սկիզբն: Ամենէն վերջի երեսը՝ ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. տառերն, որոց կը յաջորդէ տպարանի նշանագրոշմն, զոր արդէն շատ անգամ յիշատակեցինք:

ԱՂԹԱՐՔ

Նոյն 1513 տարուան և նոյնանշան տպարանէն հրատարակուած, որոյ վրայ հետեւեալ տեղեկութիւնները կու տայ Վենետկոյ Մխիթարեանց Բազմավէպ հանդիսարան, որոց Մատենադարանին մէջ կը պահուի օրինակ մը այս գրքէն:

« Հարկ չէ, կ՚ըսէ յօդուածագիրն, բացատրել մեր ընթերցողաց թէ ի՛նչ նշանակութիւն և իմաստ ունի այդ անունը. բայց բովանդակութեանը մէջ կը գտնենք ոչ միայն լոկ գուշակական, ըսենք նաեւ աւելորդապաշտական

հատուածներէ զատ՝ նաև Բժշկարան մը։ Քսանըչորս ութածալ թերթերէ կազմուած է գիրքս. և այս թերթից թուերն նշանակուած են կանոնաւորապէս հայերէն տառերով՝ իւրաքանչիւր թղթի էջերը թուագրելով՝ այսպէս. ա. — ա. բ. — ա. գ. — ա. դ... մինչ ի գ. — գ. ա. — գ. բ. — գ. գ. այս վերջին թուագրէս ետքը կը պակասին թղթեր. որովհետև յաջորդ թուղթն կը նշանակուի ժ. գ. — ժ. դ... մինչև ժգ. ը. կանոնաւորապէս։ Իսկ յաջորդ թուղթն աւրուած է, և կամ փակցուցած նորագոյն եկամուտ թղթոյ մի հետ. որոյ վրայ նօտրաձեւ ձեռագիր տառերով ընդօրինակուած է պակասաւոր էջը։ Կանոնաւոր յաջորդութիւն ունին նաեւ ժէ. ա. — ժէ. դ. և այլն, մինչև ժէ. է։ Կը պակսի դարձեալ ժը. ը. թուղթը. բայց յաջորդքն ժը. ա. —ժը գ. մինչեւ ի. գ. ուղիղ շարուած են. իսկ ի. դ. պակասաւոր թղթոյն տեղ՝ նորա պարունակութեան ընդօրինակութիւնն ագուցած է նօտրագիր. որոյ կը հետևին ի. ե. — ի. գ. — ի. է. և այլն. մինչեւ իա. ը. — իբ. ա։ Շարունակութիւնն իբ. բ. և այլն. մինչև իդ. գ. ամբողջ կայ. կը պակսի իդ. դ. և վերջնոյս կը յաջորդեն առանց գրանշանի երկու թուղթք միայն, որովք կ'աւարտի մատեանն. վերջընթեր երեսին վրայ կարմիր թանաքով գրոշմած կրելով զնոյն նշան տպագրատան, ինչ որ նախընթացաբար յիշեալ հին տպագրութեանց մէջ։ Իսկ վերջին երեսին վրայ՝ թերթերուն տառանիշքն շարուած են չորս տողերով աէն մինչև ց'իա, յաւելուածովս. « Գիրքս բոլանդակ ամէնն իդ տետր է, և ամէն տետր ը թուխթ է »։

Գրքին երկայնութիւնն է 16 հարիւրորդամետր, իսկ լայնութիւն 10 հարիւրորդամետր։ Տպագրութեան շարքին մէջ քանի մը բառեր ձեռքով դրոշմուած են։...

« Առաջին և երկրորդ էջերը վերնագիր ունին կարմրա-

Digitized by Google

գեղով Աղբարք արանց և կանանց[1], յորում մէջ կը բերուին նախ հնոց կարծիք՝ մարդկային բնաւորութեան զանազանութեանց մասին, ըստ իւրաքանչիւր կենդանակերպի յորում ծնանին։ Այս տեսութիւնս երկուքի բաժնուած է. այս ինքն ի ձիրս և ի թերութիւնս կանանց, և ի ձիրս և ի թերութիւնս արանց, մի առ մի ըստ իւրաքանչիւր նշանակաց կենդանակամարին։

«Ցէջն 23 (թուղթ բ. ե.) անվարժ գրչագիր մը կը դրոշմէ ի լուսանցս. «Թիվին ՌԱ. բարտանք խոճայ Թովաթխանեան». որ է ամն Քրիստոսի 1552։ Այս խոճայ անձն՝ իւր կնիքը դրոշմած է գրքին մէջ յ'էջ 83 (թուղթ գ. գ.)։ Աղթարքն կ'աւարտին կիսկատար. բայց ամենամերձ յաւարտն՝ յ'էջ 83։ Իսկ 84 էջն կը սկսի ի սկզբանէն պակասաւոր վիճակաց կամ բախտից շարք մը, ի գլուխս գլուխս բաժանեալ՝ յանուն զանազան առաքելոց և աւետարանչաց, և այլն. և կը ձգի մինչեւ յ'էջ 118 (թուղթ ժբ. դ)։ Իսկ 119 երեսին վրայ դրոշմուած է կենդանակամարի խոշորագիծ պատկերն։

«Պատկերին կը յաջորդէ Տարեցոյց մի, կամ յատկապէս խորագրեալ Տանուտէրացոյց. յորում երկրիս զանազան կողմանց համար՝ բարւոյ կամ չարի գուշակութիւնք կ'աւանդին ըստ իւրաքանչիւր փոփոխման արեգական ընթացից ի կենդանակերպս։ Այս գուշակութեանց էջերէն միոյն վրայ (թուղթ ժբ. ը) լուսանցին մէջ կը

---

1. Այս Աղբարքի քանի մի թերթերու, անշուշտ յատուկ դիտաւորութեամբ, մի կողման խորագիրք և զարդագիրք կարմիր թանաքով տպուած են, և միւս կողմանն սեւ թանաքով։ Այս է պատճառն որ վերոյիշեալ տպագրական նշանն Աղբարքի մէջ կարմրագոյն տպուած է, իսկ Ուրբաթագրոց մէջ սեւագոյն։

2. Էջերու կոչումն նորագոյն ժամանակաց ձեռքով դրոշմուած թուերու համեմատ է, և ոչ թէ տպագրուած։

Digitized by Google

կարգանք ընտիր հին բոլորագրով գրուած. «Այս Աղթարքս Մուրատինն է». որ անշուշտ մատենին հին ստացողաց մին պէտք է եղած ըլլի, նման վերոյիշելոյն խոճայի:

«Տանուտէրացուցին կը յաջորդէ Ամսացոյցք ամենայն եղականաց, որք նախընթացին նման բարի ու չարի գուշակութիւնք են երկոտասան ամսոյ վրայ բաժանուած, և կը ձգի մինչև յ'էջ 167 (Թուղթ ժե. գ.) յորում կը սկսի կարմրադեղով նոր գլուխ մի՝ վերնագրով. «Ումեմն իմաստասիրի ասացեալ յաղագս լուսնին աւուրցն, որ զերազն յայտնէ»:... Նոյն այս երեսին վրայ դրոշմուած է ձեռօք ուրիշ նոր կնիք մը՝ այլ ստացողի մատենին:

«Այս երազացոյց կ'աւարտի յ'էջ 177 (Թուղթ ժզ. գ.) ուր կը սկսի նոր խորագրով. «Սրբոյն Կիւրղի հայրապետին ասացեալ է վասն կաղանդաց թէ զինչ լինիցի՝ եթէ կաղանդն ի կիրակի լինի», և այսպէս եթէ երկուշաբթի, եթէ երեքշաբթի,... մինչև ցշաբաթ:...

«Յաջորդ գլուխն՝ յ'էջ 178 (Թուղթ ժզ. զ) կը խորագրուի. «Վասն աստեղաց ցոլանալոյ» և յաւելուածն «Յաղագս շարժման» (իմա՛ գետնաշարժից), «որ են ցուցակ կամ նշանակք բարւոյ և չարի». ինչպէս և եօթնեկին ամէն մէկ աւուրց մէջ ծնած տղայոց համար գուշակութիւնքն. և «Յաղագս ամպոց և երկնից շարժման» գլուխն, որ կ'աւարտի յ'էջ 194 (Թուղթ ժե. դ):

«Մինչև ցայսվայր յիշածներս գրքին երկու երրորդ մասը կը բռնեն. մինչև 194 երես, յորում կը սկսի Բժշկարանն Ճալինոս (Գալիանոս) հաքիմի՝ խորագրաւս. «Բժշկարան և հաքիմարան ըստոյգ և զարմանալի Մեծին Ճալալիոս հաքիմին արարեալ». յէջ 296 (Թուղթ իդ. ե) կ'աւարտի և բժըշկարանն և մատեանն՝ վերոյեղեալ տպագրատան նշանաւը:

* * *

Վեշտասաներորդ դարուն առաջին կիսուն՝ երկու հռչականուն եւրոպացի արեւելագիտաց կը հանդիպինք, յորոց մին իտալացի և միւսն գաղղիացի, և իրենց թողուցած երկասիրութեանց մէջ կը տեսնենք հայկական լեզուի ուսումնասիրութեան հետ, նաև նոյն լեզուի տպագիր տառից գործածութիւն։ Ասոնց մէջ իտալացին է Թեսէոս Ամբրոսիոս՝ փաւիացի, Ալպանէզէ կոչուած ազնուատոհմ գերդաստանէ, ծնեալ ի 1469, յուխտէ լատերանեան կանոնիկոսաց, և ի Լեւոն Ժ քահանայապետէ Պոլոնիոյ համալսարանին ուսուցիչ անուանեալ ասորի և քաղդէացի լեզուաց և դպրութեանց։ Վախճանեցաւ ի 1540։

Իրեն կենսագիրք (Մացցուքելլի և այլք), հրաշալիք մը կը ստորագրեն զինք յիշողականի, և անշուշտ չափազանցութեամբ կը յաւելուն՝ թէ դեռ եւս հնգետասանամեայ՝ գրութեան ոճոյ ընտրութեամբ կը հաւասարէր իտալացի, լատին և յոյն դասական մատենագրաց։ Բայց ինքն Թեսէոս իր գրոց մէկուն մէջ, ի Ներածութեան քաղդէական, ասորի և հայ լեզուաց՝ անկեղծաբար կը խոստովանի թէ իր առաջին ուսուցիչներէն խիստ անկատար հմտութիւն մը ստացած է հին լեզուաց. և թէ անոնց ուսմամբ զբաղելու գլխաւոր առիթն եղած է՝ Յուլիոս Բ քահանայապետին հրաւիրանօք սկսած և Լեւոն Ժի ժամանակ շարունակուած ընդհանուր ժողովոյն ատեն հանդիպած դէպք մը, երբ քանի մը եթովպացի և ասորի–քաղդէացի քահանայք փափաքեցան որ հոգեւոր իշխանութենէ թոյլ տրուի որ իրենց սեպհական լեզուովն ու արարողութեամբ կարենան պատարագել։ Հռոմ ուզեց որ նախապէս իրենց պատարագամատոյցը քննուի. և թէ այդ գործ Թեսէոսի յանձնուի, իբրու տեղեկագոյնի արեւելեան իրաց և լեզուաց։ Լատերանի կանոնիկոսը ոչ

Digitized by Google

անծանօթ իր անբաւականութեան առ այդ, վրան դրուած վստահութիւնը արդարացընելու համար՝ մարոնի քահանայի մը առաջնորդութեամբ անոնց ուսման հետեւելով, քիչ ատենի մէջ կարծուածէն աւելի յառաջադիմութիւն ըրաւ։ Լեւոն քահանայապետին մահուընէն ետքը՝ Թեսէոս իր հայրենիքն դառնալով, զբաղեցաւ պատրաստուիլ քաղդէական սաղմոսարանի մի տպագրութեան, յորոյ ի սկիզբն կ՚ուզէր յառաջաբան տեղեկութեամբ ճաշակ մի ընծայել ուսումնասիրաց արեւելեան լեզուաց վրայ, որք դեռ եւս անծանօթ կամ քիչ ծանօթ էին յեւրոպա. և արդէն հարկաւոր եղած տպագրութեան տառք ձուլուած էին, երբ 1527ին բռնադատուելով երթալ ի Հռաւեննա, ի նմին ժամանակի աւարեցաւ Փաւիա, և ծանր ծախքով իր հաւաքած ձեռագիրք՝ յաղթողաց ագահութենէն չկրցան զերծանիլ. որով Թեսէոսի սիրտը կոտրած՝ չուզեց միւսանգամ դառնալ ի Փաւիա, այլ գնաց ի Ռէճճիոյ և անտի ի Ֆերրարա, ուր դիպուածով գտաւ հնավաճառի մը քով տպագրութեան համար պատրաստած իր քաղդէական սաղմոսարանը։ Միւս անգամ ձեռք առաւ զայն հրատարակելու մտածութիւնը. բայց յառաջ ուզեց ի լոյս ընծայել ներածութիւն մը, կամ արեւելեան լեզուաց, որովք զբաղեր էր՝ ուսումնասիրութիւն մի, որ նախ սկսաւ հրատարակուիլ ի Ֆերրարա, և ապա աւարտեցաւ ի Փաւիա, ուր փոխադրուեր էր եկեղեցական աւագութեամբ։ Գրքիս խորագիրն է Introductio in Chaldaicam linguam, Syriacam atque Armenicam, et decem alias linguas, և այլն. յորում աւելի իրեն ծանօթագոյն ասորի, քաղդէական և հայ լեզուներով պարապելով, երկարօրէն կը խօսի, աւելի կամ նուազ հմտութեամբ, մեր լեզուի և անոր քերականութեան նկատմամբ, և հետեւաբար մէջ կը բերէ նոյն լեզուով ու անոր տպագիր տառերով ոչ միայն այլեւայլ տողեր, այլ նա և քանի մը էջ հատուածներ, բաւական ճաշակով և ընտրու-

Digitized by Google

թեամբ յերկուրած և ձուլուած տառերով, յորոց ճաշակ մը կ'ուզենք նմանահանութեամբ մեր ընթերցողաց աչքին դիմաց դնել, իբրու մեզի ծանօթ առաջին հայկական տպագիր տառք։ Ոչ ոք յառաջ քան զնա ունեցեր էր

Երանի աղքատաց հոգով, զի նոցա է արքայու-
թիւն երկնից. երանի սգաւորաց, զի նոքա
մխիթարեսցին. երանի հեզոց, զի նոքա ժառ-
անգեսցեն զերկիր. երանի որ քաղցեալ և ծա-

իրեն նման արեւելեան տառից ճոխ հաւաքում մը. և իրեն այցելութեան եկող հետաքրքիր բանասիրաց կը բաշխէր այլևայլ լեզուաց գրուածներ։ Այս բարեկամաց թուոյն մէջ էր նաև փոսթէլ գաղղիացին։

*
* *

Բազմարկածեան կեանք ունեցող անձ մ'էր փոսթէլ, ծնեալ ի 1510 մերձ յԱւրանշ Գաղղիոյ. սիրող ուսմանց և հետաքննին հետամուտ նորութեանց. և այդ փափաքով վառուած՝ պատեհութիւն ունեցաւ 1537ին Գաղղիոյ կողմանէ ղրկուած պետական անձի մը ընկերանալով, երթալ մինչ ի Պոլիս, անտի ի Յունաստան, ի փոքրն Ասիա և Սուրիոյ մէկ մասը։ Զբաղեցաւ այն կողմերու ժողովրդոց լեզուաց ուսմամբ, և ունեցած դրամն ծախեց հին ձեռագիրք ստանալու։ Դառնալով ապա յիտալիա, ծանօթացաւ Թեսէոս Ամբրոսիոսի հետ, որ և ընծայեց նմա տէրունական աղօթքը հայ ու քաղդէական լեզուով, ու արեւելեան քանի մի ազգաց տառեր։ փարիզ հասնելով՝ ետեւէ եղաւ տպագրութեամբ ընծայել հասարակաց՝ ճա-

նապարհորդութեանցը մէջ ձեռք ձգած այբուբենից վրայ տեղեկութիւն մը. բայց որովհետեւ անոնց պատկանաւոր իւրաքանչիւր լեզուաց տառք՝ շատերը կը պակսէին, չկարենալով անոնց ձուլման համար կարեւոր հայրերն ու մայրերը շինելու բաւականութիւնն ունեցող ճարտար արուեստագէտներ գտնել, ստիպուեցաւ փոսթէլ փայտի վրայ փորագրել տալ. և այդ կերպով կրցաւ տպագրել հետեւեալ խորագիրն ունեցող երկասիրութիւնը. Linguarum duodecim characteribus differentium alphabetum, introductio ac legendi modus longè facillimus, ի 1537, ամփոփեալ յ'75 էջս: Այս երկոտասան լեզուաց մէջ է նաեւ հայերէնն: Բաւական հետաքննութեան արժանաւոր գրուած մը, որով կը ջանայ ապացուցանել թէ ամենայն լեզուք՝ նոյն իսկ յոյնն և լատինականն՝ եբրայականէն առաջ կու գան: Թեսէոսի ալ օրինակ մը այս գրքէն ընծայ ղրկած է հեղինակն, ինչպէս իրարու մէջ եղած թղթակցութիւնք կը նշանակեն: Ֆրանսուա Ա. Թագաւոր Գաղղիոյ, մեծ համարում ունենալով փոսթէլի վրայ՝ առաջարկեց իրեն դառնալ յարեւելս, խոստանալով 4000 սկուտ արեւելեան գրչագրաց ստացման համար: Ցանձնառու չեղաւ նա գրուած պայմաններուն. բայց յետոյ ուրիշ առթով կրկին դարձաւ յարեւելս, և շատ ձեռագիրներ ձեռք ձգեց. զորս յետոյ կարօտութեան պատճառաւ ստիպուեցաւ վաճառել Փարիզու և Գերմանիոյ մատենադարանաց: Թեսէոսի մահուընէն ետքը դառնալով ի Փաւիա, ուզեց գնել իրեն սեպհականութիւն արաբացի տառերը. բայց որովհետեւ պահանջուած գինը հատուցանելու կարողութիւն չունէր, առաջարկեց որ ի համալսարանի քաղաքին ուսուցչութիւն ընելով ձրի՝ վճարած համարուի. յետոյ անցնելով ի Քրէմոնա՝ ճարտար արուեստագիտի մը յանձնեց նոյն տառից հայրերը շինել, և այնպէս կը յուսար տպագրել Նոր կտակարանը:

Digitized by Google

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ԵՒԴՈԿԻԱՑԻ ԱԲԳԱՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՆՑԵԱԼ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ

Հայ տպագրութեան պատմութեան երկրորդ շրջանը կը բանան Միքայէլ կաթուղիկոս, և իր ուսումնասէր ջանիցն և փափաքին գործադիր՝ Եւդոկիացին Աբգար, իրեն աշխատակից ունենալով զորդին զՍուլթանշահ։

Միքայէլ՝ որդոյ Լուսաւորչին հայրապետական աթոռը կը գրաւէ յամս 1547–1556։ Այնպիսի դարու և ատենի մը մէջ՝ յորում ազգերնիս քաղաքական իշխանութիւնը կորուսած, եկեղեցական նուիրապետութիւնէն կը յուսար իր աղխտից և թշուառութեանց դարմանը, տարաբաղդաբար այդ հոգևորական իշխանութեան ամէն հնարաւոր ջանքովն և մտադիր խնամովքն ալ, փափաքելի բարեկեցութեան վիճակի մը մէջ չէր գտնուէր։ Անդադար պատերազմունք և աւարառութիւնք զբովանդակ երկիրն ահաբեկած և սասանեցուցած էին, և ամենուրեք տարածուած նաև նիւթական կենաց ոչ ապահով դրութիւն մը։

Այսպիսի դիրքի մը մէջ էին այն ժամանակաց Հայոց հայրապետներն, եկեղեցականութիւնն, և իրենց խնամոց յանձնուած հօտն և աշխարհ։

Չենք գիտեր թէ ի՛նչ առթիւ Միքայէլ կաթուղիկոսի սրտին մէջ յղացաւ խորհուրդ՝ տպագրութեան արուեստի բարգաւաճանաց ի մերում աշխարհի։ Հաւանականաբար արդէն նախընթաց շրջանին մէջ մեզմէ յիշատակուած քանի մը անձանց ջանքերն և արդիւնք անծանօթ չէին իրեն, և անոնց անյաջողութեամբն իսկ կամ փափաքելի և յուսալի արգասիք չտալովն ալ՝ թէ՛ իր և թէ այլոց ուսումնասիրաց մտադրութիւնն գրաւած. որոնք գիտէին

Digitized by Google

թէ շատ անգամ առաջին փորձերու անյաջողութիւնք՝ երաշխաւորութիւն մը կրնան ըլլալ բարւոյ յապագային. և թէ դժուարութեանց առջեւ՝ լքանիլն ու վհատիլը՝ մեծ մարդոց և մտաց յատուկ չէ։ Այս դասու անձանց կը պատկանէին կաթողիկոսն, և իրեն մտածութեանը հաղորդ և գործակից Եւդոկիացին Աբգար։

Անշուշտ՝ իրենցմէ հեռաւոր Եւրոպայի մէջ տպագրական արուեստին կատարելագործութեամբ յառաջ եկած բազմապատիկ և բազմապիսի արդեանց և օգտից չէին կրնար բոլորովին անտեղեակ ըլլալ. և վաճառականութեան և առուտրի համար արեւմուտք գացող և դարձող ազգայինք՝ եւրոպական վաճառուց հետ այդ լուրերն ալ կը բերէին անտարակոյս։ Օր ըստ օրէ գրչագրաց նուազութեան, և նորոգ ընդօրինակութեանց համար կարեւոր ծախուց կարօտութիւնն՝ և ազգին աղքատութեան պատճառաւ գրչաց և ընդօրինակողաց նուազութիւն աւելի զգալի էր մեր աշխարհին համար։ Տպագրութեան արուեստը ի Հայաստան մտցընելն ու զարգացընելն, մեծ դիւրութիւն մը մատուցանել էր ուսմանց և դպրութեանց յառաջադիմութեան։

Այս նպատակին հասնելու համար՝ Միքայէլ կաթողիկոս մտածեց՝ հնարագէտ ու ճարտարամիտ անձինք ղրկել յԵւրոպա, որպէս զի հմտանան այն արուեստին, և թէ ի՛նչ միջոցով կարելի էր անոր մուտքը դիւրացընել ի Հայաստան։

Իր ընտրութիւնն ինկաւ՝ Եւդոկիացի Աբգար անունով անձի մը վրայ։

⁂

Մեր պատմութիւնը ուսումնասիրողաց անծանօթ չէ՝ որ Ռուբինեան հարստութեան գրեթէ առաջին ժամանակներէն՝ սկսած էին Հայոց յարաբերութիւնք ընդ

արեւմտեայս. որոց Թագաւորք և իշխանք յաճախ խաչակիր զօրաց արշաւանաց պատճառաւ՝ իրենց զօրաց բանակներով անցեր էին ընդ Հայաստան, զինուց յաջողութեան կամ ձախողանաց միջոցներուն՝ յիշխողաց և ի ժողովրդենէ նոցա՝ սէր, բարեկամութիւն, օգնութիւն և կարեկցութիւն տեսեր էին, և փոխարէն՝ ինչուան արքունական Թագ և իշխանական գաւազան անոնց ընծայեր:

Մասնաւոր մտադրութիւն և զորով ցուցեր էին մեբաղգեաց նաև Հռովմայ քահանայապետական աթոռոյն վրայ բազմող հայրապետք:

Ջեռուընիս ունինք նամակներ, ծանրակշիռք և մեծ գնահատութեան արժանաւորք, նաև քաղաքական տեսակէտով, փոխադարձ վստահութեամբ գրուած և ընդունուած ի Լուսինեան Թագաւորաց մերոց և ի հայրապետաց առ քահանայապետս Հռովմայ, և անոնց կողմանէ տրուած պատասխանիք կամ գրաւոր յանձնարարութիւնք առ քրիստոնեայ Թագաւորս Եւրոպիոյ, խօսքով կամ միջնորդութեամբ, երբեմն նաև դրամական օրօք և հարկ տեսնուած ատենին՝ նաև զինուք, ժամանելու յօգնութիւն վերահաս մահուան վտանգի մէջ գտնուող ազգի մը եւ ժողովըրդեան:

Սակայն ամէն ջանքերով ալ կարելի չեղաւ այդ անկումը խափանել, և Միքայելի հայրապետութեան ժամանակ՝ արդէն կատարուած իրողութիւն մ'էր այն, և Հայաստան՝ ամէն իրեն դրացի և սահմանակից ազգաց համեմատ՝ ինչպէս ունեցեր էր իր փառաւոր կեանքը, պիտի ունենար նաև անոր պակասութիւնը. պատմութեան անհրաժեշտ օրէնքէն չէր կրցած զերծ մնալ: Այն վիճակին մէջ՝ գէթ գոյութիւնը պահպանելու համար ստիպուած էր ոչ լոկ իր վրան իշխողաց սէրն ու վստահութիւնը, այլ նաև քրիստոնեայ արեւմտեան ազգաց մտադրութիւնն և բարեկամութիւն հրաւիրել:

Digitized by Google

Այսպիսի փափուկ և խոհական պաշտաման և գործոյ սահմանուած կ'երևնայ Աբգար։

⁂

Ուրիշ շատ անգամ զրուցուած և կրկնուած է, թէ ի՛նչպէս Աբգարու մեծարոյ և երախտագիտութեան արժանաւոր անունը միայն կայ ազգային պատմագրաց և յիշատակագրութեանց մէջ, առանց որոշակի և փափաքելի տեղեկութիւն մը տալու իւր անձին վրայ։

Կ'ըսուի թէ նշանաւոր անձնաւորութիւն մը ըլլայ՝ իր ազնուական սերնդեամբ և տոհմիւ, և նոյն դարուն և իրեն ժամանակակից անձինք ի Հռոմ՝ կը վկայեն իրեն համար թէ յարքունի ցեղէ յառաջ եկած ըլլայ. և յանուանէ Ստեփանոս Ռոշքեան իր ժամանակագրականաց մէջ կ'ըսէ. « Պարոն Սէֆէր Աբգարեանց, ի զարմէ թագաւորացն Հայոց, եկեալ ի Հռոմ դեսպան Հայաստանեայց »։

Այս վերջին խօսքէն յայտնի կ'ըլլայ թէ որպիսի՛ պաշտամամբ կը ղրկուի նա ի Հռոմ ի Միքայէլ կաթուղիկոսէ, որոյ ձեռքը կու տայ թուղթ մը այնպիսի տառերով և լեզուով, որոց ընթերցման և իմաստից խելամտութեան՝ միայն ինքն դեսպանն, կարողութիւն և գիտութիւն ունէր։

Չենք կրնար ըսել թէ ի՛նչ էր այդչափ խնամքով Աբգարու յանձնուած թուղթ, և որպիսի՛ բովանդակութիւնն. Հռայնալդ և ոմանք յարևմտեան մատենագրաց՝ կրօնական կերպարանք կու տան անոր, և զայն ամբողջ մէջ կը բերեն։ Բայց այդ ենթադրուած գրուածին վաւերականութիւնն ստուգելու համար՝ աւելորդ է ըսել թէ լոկ խօսք և աւանդութիւն բաւական չեն կրնար համարուիլ՝ յամենայնի յիշատակարանաց ստուգութիւն փնտռուած դարուս մէջ։ Փափաքելի է պատմական ստուգութեանս համար՝ որ ինչուան հիմայ դժուար հետա֊

զօտելի, և ներկայ սրբազան քահանայապետին Լեւոնի ԺԳ լուսամիտ վեհանձնութեամբ՝ ուսմանց և ուսումնասիրաց համար բացուած Վատիկանեան դիւանաց մէջ գտնուի անոր սկզբնագիրն կամ դեսպանութեան յիշատակութիւնն և նպատակը։ Քանի որ այդ գիւտն եղած չէ, ենթադրութեամբ միայն կրնամք յառաջ բերել՝ թէ ի հակառակասիրաց ոմանց և յանխորհուրդ բարեկամաց՝ հայ ազգի և եկեղեցւոյ վրայ այլ և այլ ոչ ուղիղ, կամ թերուղիղ և երբեմն նաև իրարու հակասական տեղեկութիւնք հասած ըլլալով յարևմուտս և մինչև յաթոռն առաքելական, Միքայէլ կաթուղիկոսի դեսպանին ձեռօք՝ այնպիսի տեղեկութիւնք և վաւերականք ներկայացան, որ շատ տարակոյսներ կը փարատէին, ամբաստանութիւններ կը ցրէին, և նոր լոյս կը ծագէին մինչև նոյն ժամանակներն յուզուած խնդրոց վրայ. և սրբազան քահանայապետին կողմանէ բերնով, թերևս նաև գրով, այլ և այլ հարցումներ կ'ըլլային առ Աբգար, և որոց պատասխաններն են Աբգարու կողմանէ տրուածներն։ Ստագիր ընթերցողն պէտք չունի անդրադարձութեան, թէ ինչպէս համաձայն և համամիտ են անոնք նախընթաց նման առիթներու մէջ ուրիշ ազգային հայրապետներէ տրուածներուն։

Հայրագութ և սիրալիր ընդունելութիւն մը եղաւ կաթուղիկոսական պատգամաւորին, և կ'երևի թէ առանձինն մտադրութեան արժանաւոր սեպուեցան իր առաջարկութիւնք։ Երկին Պիոս հայրապետք, չորրորդն և հինգերորդ, ընդարձակ Հոգետուն մի տուին Հայոց՝ ուր քանի մի տարի մնաց Աբգար իր Սուլթանշահ որդւով, և զեկեղեցի սրբոյն Մարիամու Եգիպտուհւոյն, նախկին տաճար Առնաբաղդի, հնոյն և հեթանոս Հռովմայ ամբողջ մնացած սակաւաթիւ հոյակապ շինուածոց մին, ուր ցայսօր յաւիտենական քնով կը հանգչին բազմաթիւ ազգայինք, ինչպէս կը յայտնեն իրենց տապանաքարինք։

Բողոքոլին նոր չէր այս ընդունելութիւնս ի Հռոմ Հայոց համար, ուր մերքն դարերով յառաջ արդէն ծանօթ էին իրենց ունեցած վանքերովն և միանձամբք: Դեռ մեր օրերը երեւան ելած անտարակուսելի հնութեան յիշատակարաններ, դարերու՝ հաւատարմութեամբ իրարու աւանդած մահարձանք և արձանագիրք կը ցուցընեն զայն անդստին ի մետասաներորդ դարէ, առանց ուզելու անկէ ալ յառաջ վեր ելլել, և ինչուան քրիստոնէութեան առաջին դարուց գետնադամբանաց մէջ:

Թէ ո՞րչափ ատեն կեցաւ Աբգար ի Հռոմ, որոշ բան մը չենք կրնար ըսել, միայն՝ ինչպէս ետքը պիտի տեսնենք, իր Սուլթանշահ որդւոյն հետ ի Վենետիկ երթալէն ետքը, սա միւսանգամ վրան ժամանակ անցնելէն ետքը դարձաւ ի Հռոմ, և հոն հայկական տպագրութեան գործոյ զբաղեցաւ. ասանկ ալ իրենց ցեղէն տէր Բարթուղիմէոս քահանայ մի, որոյ մէկ յիշատակարանը կը գտնուի 1600 թուականաւ. թէ « Ես Տէր Բարթուղիմէոս Աբգարի ազգէն և աստուածաբան քահանայ, մտայ այս մեր ազգին տան հոլուապետ և խոստովանահայր. և էր թուին ՌՈ, հրամանաւ Կղեմենթոս Ը սուրբ փափին. բաւ է »: Նոյնպէս ի կողս գրքի մը իւր ինքնագիր ստորագրութեան հանդիպած ենք ի լատին և ի հայ. թէ Ego Bartholomeus Abagarus, nationis Armeniorum de Urbe penitentiarium ab auctore donum accepi; 1617. ի ձեռաց վարդապետին պարգեւս առեալ տէր Պետրոսին, որ էր Սուրար? սահմանողին »:

* * *

Կա՛մ Միքայէլ կաթուղիկոսի յանձնարարութեամբ, և կամ Աբգար Եւրոպա գտնուելուն պատեհաւը ուզելով օգտուիլ և օգտակար ըլլալ ազգին, ետեւէ եղաւ յուսումն և ի ծանօթութիւն արուեստի տպագրութեան, որպէս զի

Digitized by Google

յետոյ կարենայ ծաւալել յազգին ։ Այս բանիս հետամուտ եղած կ՚երևի ի Հռոմ. բայց չկրնալով այն յաջողութիւնն ու դիւրութիւն ունենալ՝ ինչ որ իրմէ ետքը իւր որդին, բռնադատուեցաւ երթալ ի Վենետիկ, թերևս աւելի ճարտար արուեստաւորք գտնելու ակնկալութեամբ, կամ ազգայնոց բազմութիւն գտնուելուն ի քաղաքին, յորոց անշուշտ նիւթական օգնութիւն ալ կ՚ակնկալէր իր այդ ձեռնարկին յաջողութեան համար ։

1565ին ի Վենետիկ տպագրուած Սաղմոսարան մի կայ դիմացնիս, պակասաւոր ի սկիզբն և ի վերջ, որ թէպէտև ինչպէս ըսինք, ի Վենետիկ դրոշմուած՝ բայց և ոչ ի մեծի մատենադարանի քաղաքին կը գտնուի անկէ օրինակ մը, ոչ ի Հայաստանն և յեկեղեցւոջ և ոչ այլ ուրեք, այլ միայն թերի և անկատար օրինակ մը ի մեր գրատան, և ամբողջն ի Միլան՝ յամբրոսեան մատենադարանի, յորում հետևեալ տեղեկութիւնները կը գտնեմք ։ Գրոց ճակտի տեղ՝ դէմ առ դէմ երկու իջից վրայ՝ կրկին պատկերք կան. ի միումն սրբազան քահանայապետն Հռոմայ բազմեալ ի գահոյս, քովը երեք ծիրանազգեաց կարդինալք և եպիսկոպոս մի. երկու ուրիշ անձինք ալ հայկական զգեստիւ. մին մօրուաւոր ծերունի, միւսն երիտասարդ ։ Այս իւրաքանչիւր անձանց անուանք նշանակուած են լատին տառիւք. Pius IV. Card. Amalius, Card. Borromeus. Epis. Alior Dibello, և տպա թուականն M.D.LXV. ի հանդիպոյ գրուած պատկերին վրայ կը տեսնուի Վենետկոյ դուքս մը խորհրդականաց ժողովոյն մէջ, և իրեն ներկայութեանը հայազգի անձ մը՝ իբրև արտօնութիւն կամ հրաման մը խնդրելու գրքի մէջ, և վրան լատին գրով մակագրութիւն. Venetia... Hieronymus Priulius. Marcanton Armeno Abaghar. և թուականն M. D. LXV. Պատկերներուն տակն գրուած է հետևեալ տեղեկութիւնն հայագիր և հայալեզու. « Ի թվականիս

Հայոց Ռ. Ժ. Դ. ամին ես Թոխատցի Աբգար դպիրս՝ խնդրեցի զայս նոր գիր. ի Հռոմ ի Պետրոս (= Պիոս) փափուն, և երետ հրաման շինելու, բարեխօսութեամբ այս կարտինալաց և այս եպիսկոպոսիս. և իմ գրայմիտ Սուլտանշայ որդւոյս: Եւ եկեալ ի գեղեցիկ նաւահանկիստ մայրաքաղաքն որ կոչի Վանատիկ, ի թագաւորութեան Ելերեմոն դուճին. և շինեցաք զայս նոր գիր. և զայս փոքր մեկնիչս սաղմոսաց »:

Այս կրկին նկարուց մէջ՝ երկու այլևայլ դիպաց յիշատակութիւն կամ պատմութիւն կ'ակնարկուի. մէկը հրամանի՝ միւսը գործադրութեան: Հրամանն կամ թոյլտուութիւն ընդունելու համար՝ հարկ մը չենք տեսներ ինչուան Հռովմայ քահանայապետի դիմել, աղաչաւոր ու միջնորդ ծիրանաւորք փնտռել, մինչ օգտակար ձեռնարկ մը կար և հաւասարապէս ամենուն փափաքելի: Հաւանական կ'երևնայ թէ մանաւանդ նիւթական նպաստի մը կարօտութիւն կար, և արուեստին հմուտ անձանց. և կ'երևնայ թէ նպաստի խնդիրն յաջող ելք ունեցած պիտի ըլլայ. հակառակ դիպուածի մէջ հարկ չկար ծախք ընել և այն պատկերը դնել ի գիրսն:

Մէկ պատկերին մէջ կ'երևնայ սրբազան հայրապետն Պիոս, որոյ ներկայացած է հայ պատգամաւորութիւնն իրեն խնդիրքով: Մենք արդէն ըսինք թէ Հայոց համար սեպհական հոգետուն և եկեղեցի տուած էր նա, և որոյ դռներէն մէկուն վրայ ցայսօր կը կարդացուի իր բարերար անունն և գործը. միւս ծիրանաւորքն և եպիսկոպոս՝ Հայոց ազգի խնամակալք և պաշտպան կը թուին. որոց միջնորդութեամբ կը յուսայ անշուշտ Աբգար՝ մինչ ի գահն քահանայապետական հասցընել իր խնդրուածոց նիւթն և աղերսին ընդունելութեան վստահութիւնը:

Հաւանականաբար հրամանն ու պաշտպանութիւնն կը տրուի. բայց Աբգար ճարտար արուեստագիտաց չկարենալով հանդիպիլ, կ'անցնի ի Վենետիկ. ժամանակին, ինչպէս

Digitized by Google

որդէն յիշեցինք, անուանի և մեծ շահաստան քաղաք մը իւր ուժովը, հարստութեամբ և արուեստից համեմատական յառաջադիմութեամբ։ Այս երկրորդ պատկերին մէջ՝ Աբգար և Սուլթանշահ յանդիման կ'երեւնան փրիուլի Հերոնիմոս տոժին, հրաման ընդունելու իրմէ Սաղմոսագրոց տպագրութեան։ Հետաքննական է որ Վենետկոյ դիւանաց մէջ, ուր ամէն հրամանագիրք և արտօնութիւնք մանր և տեղնիտեղը արձանագրուած կը պահուին, այս մեզի համար կարեւոր արտօնութեան յիշատակութեան հետքն անգամ մնացած չէ կամ կորսուած է։ Եւ սակայն, կարծես թէ առաջինն նշանակուելու արժանաւոր դէպք մ'էր այն իրենց համար բոլորովին անծանօթ՝ արեւելեան լեզուով տպագրութեան առաջին անգամ տրուած թոյլտուութեան մը՝ հասարակապետական կառավարութեան կողմանէ, որ այնչափ խղճամիտ և վախկոտ էր յայսմ մասին. մինչ դեռ կեցած են յունական լեզուով եղած տպագրութեանց համար տրուած հրամանագիրք։

Ի վերջ գրոցն հետեւեալ յիշատակարանն կը դնէ Աբգար. «... Կազմեցաւ, կ'ըսէ, սուրբ երգարանս Դաւթի լաւ և յընտիր աւրինակէ Գառնեցոյ վարդապետի, ի Թուականիս Հայոց ՌԺԶ, մայիս ԺԶ. աւրն ուրբաթ. ԺԲ ժամի... Առ ոտս Մելքիսեդեկ եպիսկոպոսին, ի մայրաքաղաքն Վանատիկ, ընդ հովանեաւ սուրբ Մարկոս Աւետարանչին, ի Հայոց հոգետունն, ի ժամանակ Սիմոնի... Յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զաշխատողքս սորա, զառաջինք և զմիջինք և զվերջինքն. և Աստուած յիշէ զձեզ իւր միւսանգամ գալուստն... Ըմէնն ԲՃԿԲ թուիտ է. ամէնն կոխած է՝ և խսկի գրչագիր չիկայ ի գիրքս. բաւ է»։

Մեր ընթերցողաց աչքին առջև դրինք էջ մը սոյն տպագրէն, գաղափար մը տալու գրոցը ձևին, ու ընդհանրապէս տպագրութեան ճաշակին, որ իրաւամբ ընտիր կրնայ համարուիլ՝ ժամանակին արուեստական յառաջա-

գիտութեան տեսակէտով. մանաւանդ ի գլուխ իշխն գը-
րուած խորանազարդին, որ իտալեան պեղարուեստական

Աղաւթք. ք. ե մովսէսի մարդոյն այ: ՃԹ
ք [illegible]

Տապաւէն եղեր մեզ յազգէ յ
ազգ. մինչ չև լերինք հաստ
ատեալ էին. ստեղծեր զերկիր և զա
մենայն տիեզերս:
Յաւիտենից մինչև յաւիտեանս
դու ես. և մի դարձուցաներ զմարդ
ի խոնարհութիւն և ասացեր դարձարու

ճաշակի նրբութիւն ունի: Տառքն երկու տեսակ են, մեծ և փոքր, ինչպէս կը նկատէ ընթերցողն: Զագագիրք կամ թաչնագիրք ալ ունի:

Աբգարեան այս առաջին տպագրութիւն, ինչպէս ըսինք, եղած է ի 1565–6։

Տպարանի անուն ուր դրոշմուած է՝ չենք գտներ. հաւանականաբար իր նշանագրոշմն է հետևեալը.

***

Երկու տարի ետքը զԱբգար և իր ընկերակիցքը փոխադրուած կը գտնենք ի Կոստանդնուպոլիս։

Ճէվահիրճեան Մաղաքիա դպիր՝ կ'աւանդէ իր ձեռագիր ժամանակագրականաց մէջ. « ՌԺԶ (=1567) ի հայրապետութեան Հայոց Տեառն Միքայէլի ԻԱ ամի կաթուղիկոսութեանն, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, յերկրորդի ամի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան Սէլիմի, և ի չորրորդ ամի պատրիարգութեան տէր Յակոբ րաբունապետի Կոստանդնուպոլսոյ, առ ոտս Յովհաննէս եպիսկոպոսին ընդ հովանեաւ. Սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն Հայոց՝ եղև ստամփայ, այսինքն պասմայգիր. և տպեցաւ փոքր Քերականութիւն տղայոց, ձեռամբ ան-

արժան կնքագիր դպրի մերս Յոգորին »։ Յաջորդ տարւոյն մէջ ալ այսպէս կը նշանակուի. « ՌԺԷ. ի Կոստանդնուպոլիս նոր սաամիտայ գիր սահմանեցին ի հայրապետութեան Տեառն Միքայելին Էջմիածնի և ի պատրիարգութեան Կոստանդնուպոլսոյ տէր Յակոբին, ընդ հովանեաւ Սուրբ Նիկողայոս եկեղեցւոյն, ձեռամբ Խորվիրապցի Առաքեալ աբեղային, արհեստագործութեամբ Աբկար դպրին և իւր Թագազարմ Անտոնինոս Սուլթան սարկաւագին, որոյ գրովքն տպեալ Տօնացոյցս յառաջ բերին »։

Կ'երևնայ թէ Մաղաքիա դպրի այս խօսքերը նոյն գրոց յիշատակարաններէն առնուած ըլլան։ Փափաքելի էր զանոնք ունենալ, որով թերևս կարելի կ'ըլլար մեզ ընդարձակագոյն և աւելի գոհացուցիչ տեղեկութիւններ տալ այս գրոց վրայ։ Փոքր քերականութիւն ըսուածը այբբենարան կամ քերական կը թուի։ Ի մեր մատենադարանի, ինչպէս ըսինք, չկան այդ գրքեր. չենք ալ կարծեր որ ուրիշներու քով գտնուին, բայց թերևս յԷջմիածին կամ յԵրուսաղէմ և կամ ի Լիվոռնոյ։ Ուրիշներէ ալ տրուած տեղեկութիւնք՝ հաւանականաբար Ջամչեան պատմագրութեան հետևողութեամբ են, որոյ հեղինակն՝ մեզի նման տեսած չէր այն գրքերը։

Բաց ի Տօնացուցէ, զոր յիշատակեց Մաղաքիա, Աբգարու և իր գործակցաց համար կ'աւանդի, թէ նոյնպէս ի Պոլիս, և անշուշտ մի և նոյն տպագրատան մէջ, ի 1568 թուականին հրատարակուած ըլլան նաև Տաղարան, Ժամագիրք, Պատարագամատոյց, և յաջորդ 1569 տարւոյն մէջ նաև Մաշտոց մը։ — Ազգային բանասիրական հանդէս մը, (Բազմավէպ, 1890 մարտ), կ'ըսէ թէ « (Աբգարեան)՝ Սաղմոսին տառերով տպուած են Աբգարու ձեռնարկութեամբ ի Կոստանդնուպոլիս՝ Մաշտոց, Ժամագիրք և Պատարագամատոյց, 1562 թուին, յորոց օրինակք կը պահուին նաև ի մեր մատենադարանի »։

Digitized by Google

ԺԱՄԱԳԻՐՔ

Աբգարեան տառից եղած այս տպագրութենէն՝ օրինակ մը միայն ունինք ի մեր մատենադարանի, և այն դժբաղդաբար ոչ անթերի. վասն զի գրոցը ճակատը պակսելուն յօրինակին՝ ոչ տպագրութեան թուականին, և ոչ ալ ուր տպագրուած ըլլալուն որոշ տեղեկութիւն մ'ունինք, ուստի և չենք կրնար հաղորդել մեր ընթերցողաց։ Միայն ի վերջ խաղաղականի՝ Շնորհատու բարեաց աղօթիցն, մանրագիր տառից տող մի յիշատակարանի կը գտնենք՝ այսպէս. « գրեցաւ Աղաւթամատուցս. թվին. ՌԺԷ. ապրիլ ԻԷ։

Տպագրին երկայնութիւնն է 19 հարիւրորդամ. լայնութիւնն՝ 13 հրդմ. ամէն մէկ երեսին վրայ՝ տասնուհինգ տողք. ու անոնց ալ ամէն մէկուն՝ քսան ու վեցէն քսանևութ տառք ընդհանրապէս։ Գլխագիրք և կարմրագիրք ունի, բայց ոչ և խորանազարդք. զուցէ ունէր ի սկզբնաւորութեան՝ առաւօտեան ժամերգութեան, որ մեր ձեռքն եղած օրինակին մէջ կը պակսի. զի առաջին թերթէն՝ թերի են առաջին և ութերորդ թուղթերն կամ չորս էջք։

Թուահամարք գրուած չեն ոչ ի ստորև և ոչ ի գլուխ էջից. այլ այբուբենի տառից իւրաքանչիւր թերթք նշանակուած ի սկիզբն և ի վերջ թերթիցն, որ ութ թղթերով և ի վեշտասան էջից կը բաղկանան, և ութերորդ թերթով կը վերջանայ ժամագիրքը։

Իններորդով կը սկսի անմիջապէս Պատարագամատոյց, առաջին երեսը ամբողջ կարմրագիր՝ սովորական սկզբնաւորութեամբ. Աւրհենք արկանելոյ սպաս եկեղեցւոյ. յորում զգեստաւորութեան և պատարագի պատրաստութեան աղօթք ի սարկաւագատան, զոր ինք հանդերձատուն և աւանդատուն կը կոչէ։ Հետեւեալ էջին վրայ՝ խորանա-

զարդ մը կարմրագոյն, խորանի առջև բազկատարած երես առ ժողովուրդն կանգնած՝ ծերունի մը, հին օրինաց քահանայապետական պատմուճանաւ և հրէական խոյր ի գլուխ, մէկ կողմը վերուստ ի վայր՝ լատին տառից՝ Aar-on-e, և ի միւսն նոյնպէս՝ sa-cerd-ote. իսկ զարդէն դուրս՝ նայողին ձախ կողմը՝ հայ տառերով կարմիր մանր բոլորգիր «ահարոն քահանան է». ու կը սկսի «Որ զգեցեալ ես» աղօթքն և զգեստաւորութեան մաղթանքն մի ըստ միոջէ.

«Խորհուրդ խորին»։ դպրաց երգն նշանակուած չէ. այլ ի մեր օրինակին հին ձեռագրով աւելցուած, ինչպէս չկան նաև ուրիշ երգերը, քահանայի գործածութեան համար միայն սեպհականուած ըլլալով պատարագամատոյցս, ուր դպրաց համար կարևորներէն մէկ քանին, ինչպէս ժամամուտքն, գրուած են ի ժամագիրս յետ ճաշուին։

Պատարագին սկզբնաւորութիւնն այսպէս կը գրուի՝ կարմրագիր՝ ծանօթաբանելով. «Եւ յետ զգենլուն սրբութեան զգեստիցն՝ գան առաջի սրբոյ սեղանոյն և խոնարհեալ պատարագիչ քահանայն այլ առաջի քահանայիցն և սարկաւագացն որ կան եկեղեցին». ապա սևագիր «Խոստովանիմ առաջի Աստուծոյ»։ Եւ յետ ընդունելոյ ի միոյ ի քահանայիցն և տալոյ նոցա զարձակումն, ապա լուացումն ձեռաց սովորական Լուացայց սաղմոսիւ և աղօթիւքս. «Սրբեայ տէր զձեռս իմ արդարութեամբ և մաքրութեամբ աւազանի շնորհաւք և մարդասիրութեամբ տեառնդ մերոյ. և այլն»։ Ապա կարմրագիր, «Եւ սարկաւագն քարոզէ սուրբ զԱստուածածինն։ Եւ քահանայն ասէ զաղաւթս զայս։ Ընկալ տէր զաղաչանս բարեխաւս։ Եւ երկրպագեալ երիցս անգամ։ Մտանէ ի խորանն։ Ապա գայ առ ընթեր սեղանոյն։ Եւ տանի սարկաւագն զնշխարն ի աւազանին կողմէն առաջի քահանային. և քահանայն բացեալ զսկին և ասէ. համբարձէք իշխանք զդրունս. և դնէ զնշխարն ի մաղզմայն և ասէ։

իսկ եթէ եպիսկոպոս իցէ՝ աւագ սարկաւագն առեալ զնըշխարն և դնէ զմաղզման ։ Նոյնպէս և զգինին »։

Դիտմամբ մեր նիւթէն շեղեցանք, ամենահին տպագրիս այժմեան սովորութիւններէ մէկ քանի տարբերութեանց օրինակ մը ուզելով տալ, որ բազմաթիւք են յընթացս գրոցն, և հետաքննական կը համարուին իրաւամբ։

Երեքտասաներորդն է վերջին թերթը, որոյ ութերորդ թուղթը կամ վերջին երկու էջք պակասին· և թէպէտ Պատարագամատոյցն ամբողջ է, և արձակման օրհնութեամբ կը վերջանայ, բայց անկատար կը մնայ անկէ ետք գրուած

« Հայր երկնաւոր է մեզ գթած,
Մեզ առաքեաց զՈրդին աստուած »

մաղթանքը կամ երգը, որոյ համար ի խորագրին կը պատուիրուի. « Ցերուշնի օրերն յետ ոչուշնին ասեք »։ Երգին ամբողջութեան հետ թերի կը մնայ նաև յիշատակարանը, եթէ ունէր. և որ անշուշտ մեզի համար շատ թանկագին պիտի ըլլար։

ՏՕՆԱՑՈՅՑ

Օրինակ մը միայն հին տպագրիս կը գտնուի ի Մխիթարեան մատենադարանի, որոյ վրայ հետևեալ տեղեկութիւնները կու տայ Հանդէս ամսօրեայ (1890, յուլիսի թերթին մէջ։

« Թէ և մատեանս, կ՚ըսէ, պակասաւոր ըլլալուն՝ տպագրութեան ժամանակին և տըպագրչի մասին՝ նոյն իսկ մատենէն վկայութիւն մը չունիմք, բայց որովհետև Մաղաքիա աբեղայ (= դպիր?) յիշէ հոն Աբգար դպիր Տօնացոյց մը տպած է, և որովհետև մեր այս Տօնացոյցն ճշդիւ Աբգարու Սաղմոսին և Տաղարանին գիրն ու նմանութիւնն ունի, ամենևին չի կրնար տարակուսուիլ մատենին յիշեալ Աբգարու Տօնացոյցն ըլլալուն »։

Տպագրին նկարագիրն ալ հետևեալն է , զոր կու տամ նոյն թերթ ։

« Մատեանս վեշտասանածալ է (թերթն 16 թուղթ), էջք 8 սանդ. երկայն ու 5½ լայն. իւրաքանչիւր էջ 10 տող ։ Մինչև Գ կը նշանակուի թերթերու թիւն տառերով. այնուհետև զանց կ'առնուի ։ Միայն առաջին թերթին մէջ նոյն գրով կարմրագոյն գրոշմեալ բազմաթիւ տողեր ունի. յաջորդ թերթերու մէջ կարմիր գունոյ հետք չիկայ ։ Ամբողջ մատեանը մի և նոյն (տեսակ) գրով գրոշմուած է. սակայն Ջամկէն ետքը՝ որ ունի փոքրիկ վերնազարդ մը և թռչնագիր, կը տեսնուին տեղ տեղ թռչուններ ։

« Մեր օրինակին սկիզբէն՝ առաջին թղթէն ետև (որ կայ), կը պակսի ութ թուղթ. իսկ վերջէն՝ ութերորդ թերթին վերջերէն սկսելով՝ կը պակսի երկու երեք թերթ ։

« Մատենին մէջ՝ տպագրողին կամ հրատարակչին վրայ տեղեկութիւն ամենևին չենք տեսներ ։ Որչափ կ'երևնայ, ի սկզբան գրուած յիշատակարանին վերջն պիտի ըլլան անշուշտ, սակայն մեր օրինակին այս մասը կը պակսի ։

« Առաջին թերթին առաջին իջին վրայ կայ միայն երկաթագիր Ա տառ մը, առաջին թերթը ցուցընելու համար ։ Երկրորդ էջն է, « Ով հանդիպի այսմ գրքիս, նա ողորմի տայ գրչիս, որ Դ աւրինակ գրի, և. Դ. վարպետի առջեւն գրեցի. հին աւրինակն. զարութեան և զապաշխարութեան հարցներն չէր գրած և մեք գրեցաք. գրած էր ի բազում տեղիք թէ կամիս զայս ասա » ։ —

« Յաջորդ երեսներն կը պակսին ։ Իսկ բուն գործոյն մէջ՝ քանի մը տեղ տպագրիչն ինքնին կը խօսի, այսպէս. « զոր եւ ի ցուցակի ». (առաջին թերթ). որմէ կ'երեւնայ թէ մատեանն ի սկիզբն կամ ի վերջն ցուցակ մը ունի ։ Դարձեալ. « խրատքն գրեալ է ի միւս կողմն ». (երկրորդ

թերթ)․ « Բայց ոմանք ի ժամատուն ասեն․ և մեք զայն եմք տեսեալ »․ (հինգերորդ թերթ)․ « զմեղապարտ յիշե֊ ցէք »․ (հինգերորդ թերթ)․ « ով տաւնասէրք գիտենաք որ ոմանք Գ․ աւր սաւնեն զհոգեգալուստն » [1]։

ՏԱՂԱՐԱՆ

Արգարեան տարիք տպագրուած Տաղարանս, որ՝ ինչպէս կ'ըսէ զայն ծանօթացընողն, « իր բարձր հնու֊ թեան պատճառաւ հայ տպագրութեանց երախայրեաց (incunables) կարգը կը դասուի », քանի մը տարի յառաջ յայտնուեցաւ Կերլայի Հայոց Ս․ Երրորդութիւն եկեղե֊ ցւոյն գրադարանին մէջ։

Այս պատուական գիւտն ընողը՝ հետեւեալ տեղեկու֊ թիւններն կուտայ նոյն մատենկան վրայ (Հանդէս ամսօ֊ րեայ, 1888 թիւ 8)։

« Փոքրիկ բան մըն է, բոլորը 16 թուղթ կամ 32 երես․ տպագրութիւնը շատ նախնական (primitif) է, գրերը խոշոր, անձեւ և անկանոն, իսկ գիրքը՝ մեծ մեղ֊ տասանածալ։ Երեսահամար չունի ամենեւին, ոչ վերն և ոչ վարը, շարքն հին ձեռագրաց պէս՝ բառերը քով քով կեցած և իրարու մէջ անցած, կիսագրութիւն շատ ցանցառ։ Գործոյն առաջին էջը՝ ոչ թէ աջէն՝ այլ ձա֊ խէն կը սկսի։ Գիրքը ճակատ չունի, և կարելի է գոր֊ ծոյն մէջէն ալ (եթէ չենք ուզեր ենթադրել որ սխալմամբ էջերն իրարու տեղ անցած ըլլան,) թղթեր պակաս են․ որովհետև մէկ էջէն միւսին անցնելով քանի մը տեղ՝ իմաստի կապակցութիւն չի տեսնուիր և ոչ իսկ մի և նոյն թղթին աջ էջէն ձախին անցնելով՝ կը գտնենք միշտ կատարեալ և ամբողջ իմաստ մը։

1. Այս ամէն ծանօթութիւնք գրչագրողին ալ կրնան ըն֊ ծայուիլ։ (Ծ․ Հ․)։

Digitized by Google

« Ո՞ւր տպուած է այս գրքոյկը։ Ասոր որոշ պատասխան մը տալու առ ժամս կարող չենք. վասն զի, ինչպէս ըսինք, գիրքն ոչ ճակատ և ոչ ալ յիշատակարան մ'ունի։ Գրքին 10երորդ թուղթը, կամ 19երորդ էջն՝ այսչափս կը բովանդակէ. « Թվին Ռ. Ժ. Է. յունիս Ա գրեցաւ. ձեռամբ Ցարմանիոյ »։ Եթէ յիշեալ թուերն ուղիղ են, (որովհետև գրքուկին մէջ տպագրութեան սխալներ շատ կան), յայտնի է թէ առաջիկայ մատեանը տպագրուած է Հայոց ՌԺ (1010) թուին, որ է Ք. Թ. 1561։

« Ուրեմն Աբգար Թոխաթեցւոյն Սաղմոսէն 5 տարի յառաջ։ Իսկ եթէ սոյն թուականն այսպէս չի կարդանք, այլ նաև Է գիրն տպագրութեան տարւոյն տանք՝ վրան պատիւ աւելցընելով, և ոչ՝ Յունիս ամսոյն, այն ատեն կ'ըլլայ ՌԺԷ, այսինքն 1568 տարւոյն Յունիս ամսոյն մէջ։ Սակայն այս երկրորդ ընթերցուածն այնչափ հաւանական չերևնար մեզի, որովհետև Ռ և Ժ գրերը համեմատութեամբ իրարու մօտիկ են. վրանին զատ զատ քաշ կամ պատիւ ունին և երկուքին սկիզբը ու վերջը կէտ կայ. ասկէ ետքը կու գայ Է գիրն առանց կէտի և քովը « Յունիս » բառը, որ կը նշանակէ — ըստ մեզ՝ 7 Յունիսի։ Յունիսէն ետքը եկող Ա գրեցաւ. մենք կը կարդանք՝ տպագրեցաւ։...

« Մատենկանս բովանդակութեան, գրից, ինչպէս նա և տպագրութեան որպիսութեան վրայ գաղափար մը ունենալու համար, մէջէն տող մը դնենք ի տես ընթերցողաց։ Տողն ամբողջ երկու էջ բռնած է ի տպագրին։ Մենք կ'առնունք միայն այն մասն՝ ուր գրուած է թուականն, և այնպիսի տառեր կը գործածենք որ քիչ շատ նման ըլլայ բնագրին »։

Հոս հատուածագիրը կը դնէ տող մը, զոր աւելորդ կը համարինք կրկնել աստէն. տպագրութեան տառերն ալ՝ Աբգարու սաղմոսարանին են, որոյ նմանահանութիւնը

արդէն դրած ենք մեր ընթերցողաց առջև. Թուականին համար ալ՝ մեզի հաւանական կ'երևնայ որ սաղմոսարանէն յետոյ ըլլայ քան յառաջ, ինչպէս նոյն հատուածը գրողն իսկ անդրադարձեր է յետոյ (Հանդէս Ամսօր. Գ. 162)։

Աբգարու՝ կամ՝ իւր տառերով եղած և առ մեզ հասած տպագրութիւն հետևեալքը կ'ըլլան.

1. Սաղմոս, տպագրեալ ի Վենետիկ ի 1567. յորմէ օրինակ մը յամբրոսեան մատենադարանի ի Միլան, և միւս անկատար օրինակ մ'ալ ի Վենետիկ, ի մատենադարանի մերում։

2. Փոքր քերականութիւն (այբբենարան) ի Պոլիս ի 1567.

3. Տօնացոյց Պոլիս 1568, ի մատենադարանի Մխիթարեանց ի Վիէննա։

4. Տաղարան Պոլիս 1568 յեկեղեցւոյ Կերլայի Հայոց։

5. Ժամագիրք Պոլիս 1568 Մխիթարեանց Վենետկոյ։

6. Պատարագամատոյց Պոլիս 1568 Մխիթարեանց Վենետկոյ։

ՍՈՒԼԹԱՆՇԱՀ

Մաղաքիա դպիր յիշատակեց մեզի արդէն ծանօթ զՍուլթանշահ՝ որդի Աբգարու, զոր ուրիշ ազգայնոյ մը հետ միաբանած կը գտնենք ի Հռոմ, յամի 1584, և տպագրութեան գործով զբաղած։

Ուսումնական յեղափոխութեան մեծ և յիշատակաց արժանի գործ մը կատարեց քահանայապետն Հռոմայ Գրիգոր ԺԳ. յուլեան հին տումարի տեղ՝ նոր կամ իր անունով կոչուածը առաջարկելով, և անոր պարտադրութիւնը նախ ուղղափառ և անմիջապէս իր հոգևոր հպա-

Digitized by Google

տակութեան տակ եղող աշխարհին և ապա արևմտեան քրիստոնեայ ուրիշ ազգաց և պետութեանց ընդունելի ընել տալով։ Հայոց ազգին մէջ ալ՝ որոյ համար մասնաւոր գութ և խնամք ունէր, մեծ դպրոցի մը հաստատութեան – Հռովմ միաձութիւնն ու փափաք ունենալով, ուզեց ծախ նօթացընել. և այս դիտմամբ տպագրեցաւ ի Հռովմ հայ լեզուով ու տառերով «Գրիգորեան տոմար» մը հետեւեալ խորագրով. «Տումար Գրիգորեան. Յաւիտենականն։ Որ եղեւ յիշխանութեան հզօր սրբոյ փափոյն և այլ Թաքաւորացն։ Կազմեցաւ ի մեծն Հռովմն. ի քաղաքն սրբոց առաքելոցն. ի Թուին ՌՇՁԴ. Romæ, ex typographia Dominici, Basæ»։

Այս գրքիս մէջ նախ գրուած է Թարգմանութիւն կոնդակի Գրիգոր ԺԳ հայրապետի վասն նորոգութեան տումարի, և ապա կանոնք կամ հրահանգք, ինչպէս ինքն տպագրիչն կ՚անուանէ, «Տումար Գրիգորեան առուգութեան ամին ՌՇՁԲ. և յորում ամի սկզբնաւորեալ է գործածութիւն նոյն տումարի»։ Եւ երբ տումարական բոլորական աղիւսակներն կը դնէ, ամենուն տակ չի մոռնար նշանակել. մերթ «Եւ զիս զմեղաւոր տպագրիչս յիշման արժանացո. ՌՇՁԲ». մերթ «Մի՛ մեղադրէք եղբարք զի առաջին արուեստն է. ՌՊՂԹ» (1). և ի հետեւեալ իջի «Զաշխատողք արուեստիս յողորմայիցն անտես չառնէք սիրելի եղբարք», և ի միւսումն ի հանդիպոյ. «Զկազմող բոլորակացս զծառայս ձեր զչտէրս մի ողորմաիւ անտես չառնէք. յառաջին իջի եօթներորդ թերթին. «Եւ զիս անտես չառնէք եղբարք ի ձեր սուրբ աղօթից»։ Եւ ի հետեւեալն. «Եւ զիս զչտէր Յովաննէս Տէրզնցիս զաշխատող ողորմայիւ արժանացո»։ Միւս իջի մը ի ստորև. «Զիս զմեղօք լցեալ ծառայս ձեր յիշեցէք ի Տէր»։ Տեղ մ՚ալ բոլորակ մը, և ի վերայ. «Զթեղադիրս զխաչիկն զորդիւակս յիշեցէք ի Տէր». և ի ստորեւ բոլորակին. «Ծառայս ձեր զչտէր

Digitized by Google

Ցուլաննէս Տէրզնցին յիշեցէք ի տէր »։ Ուրիշ տեղ մ՚ալ. « Զկազմող սորա զչաէր Ցուլաննէս Տէրզնցիս յիշեցէք ի Տէր ». ուրիշ տեղ մ՚այլ « Եւ զանհըմուտ աշխատողս զչաէր Ցուլաննէս Տէրզնցիս աղաչեմ յիշման արժանի առնէք»։ Եւ կը դնէ յետոյ ամբողջ տարուան մը՝ լատին կամ արևմտեան եկեղեցւոյ տումարը, և ապա յիշատակագիրս. « Թարքմանեցաւ տոմարս և տօնացուցըս ի լատին լեզուէ ի հայի և տըպագրեցաւ ի նոյն քաղաքն ի մեծն Հըռոմ առ ոտս գլխաւոր առաքելոց սրբոցն Պետրոսի և Պօղոսի, հրամանաւ սուրբ փափին Գժ Գրիգորի (կարմրագիր տպուած)։ Եւ ի հովւապետութեան հայոցն ի Հռոմ կարտինար Սանթա Սէւէրինին ի վերակացող տնտեսութեան սպարտն Սուլթանշահ Թուխաթցւոյն զոր ֆռանկն Մարզանտոն կոչէ՝ ձեռնատուութեամբ տէր Ցուլաննէս Տէրզընցւոյս և թեւադրութեամբ որդւ իմոյ Խաչատուրին ի վայելումն ամենայն հայկազուն ուսումնասիրաց »։

« Այլ և եղև տպագրութիւն սորա ի թւլ. Քրիստոսի ՌՇՁԳ. զոր հռովմէացիք վարին. և հայոց մեծաց ՌԼԳ. և Սարկաւագին Շ. առաջի շրջանին. և յունացն որ են հոռոմք՝ ՌՑՁԳ. և եփրայեցոյն ՌՑԺԳ և ասորւոյն ՌՃԺ. յամնոյն հռովմէացւոց հոկտեմբեր ԻԵ. հայոց մեծաց՝ հրոտից ԺԳ. Սարկաւագին՝ սահմի ԺԶ. յունաց՝ հոկտեմբեր ԺԶ. եփրանեցւոց՝ մէհրիշուան Ը. ասորւոց՝ Թշրին կտիմ ԶԺ. ի յորն շբթ. ի ԻԳ. ժամն և յայսմ աւուրս է արեգակն ի կարիճն Ը տարաճան, և ի գիր այիփ եւ բենիցն ի յոն. և զայլն իմաստնոցն յայտնի է։ Եւ յետ այսմ բանիցս երեսս արկանեմ ոտից ձերոց և մաղթելով հայցեմ զի զվերագրեալքն յամենայն յաղաւթս ձեր յիշման արժանի առնէք. և զիս զանարժանս և զփոխեալս իմ առ Քրիստոս՝ կցորդ առնել յիշեցելոցն և յիշողացդ և յիշեցելոցն տէր աստուած շընորհեսցէ զիւր արքայութիւն Ամէն »։ Ապա Քրիստոսի վերջին

Digitized by Google

ընթրեաց պատկեր մը՝ այսպիսի ստորագրութեամբ· « Քրիստոսի սեղան է Բժ. առաքելովքն առաք հինկշաբաթին ։

Գաղղիական լեզուով հրատարակուած դրացուցակի մը մէջ կը կարդանք հետեւեալը, հայկական այս հնագոյն տպագրութեանս նըկատմամբ. Calendrier romain, texte arménien, corrigé d'après le Calendrier donné sous le pontificat de Grégoire XIII. Romæ, ex typographia Dominici Basæ, 1584, in 4. Volume fort rare executé par les presses de la célèbre typographie orientale de Dom. Basa. Pour une traduction en arabe Karchoun, de ce Calendrier, voyez le N° 1327 du catalogue de S. de Sacy. Ajoutons que cette traduction arménienne est très peu connue. Collation Titre arménien, avec les armes de Grégoire XIII, au dessous de la souscription latine rapportée la dessus; texte 55, avec encadrements à chaque page, impression en rouge et en noir, avec plusieurs figures sur bois. անշուշտ մէջի աղխսակներն ակնարկելով և ընթրեաց պատկերը ։ Էջք թուահամար չունին, և երքսասան թերթք են տպագրի ի 4° ։

* * *

Այս գրոց տպագրութենէն անմիջապէս ետքը. Հայոց ՌԼԴ=1585–6 թուին ի տասն ապրիլի, Ազարիա կաթուղիկոս Սսոյ կը գրէ առ նոյն Գրիգոր ԺԳ Հռովմայ հայրապետ. « Կու ղրկենք այս գրովս զասացեալ Յովհաննէս վարդապետ և եպիսկոպոս մեզ ի փոխանորդ. եւս առաւել կու ուղարկենք ի հետն՝ զասացեալ Գրիգոր սարկաւագն քանի մի տղայով՝ վասն ուսման ի դասատունն, և աստուածաշունչ գրքով մի Հայոց, վասն զի

ի յամենայն ազգս Հայոց, որ է շատ և բազում, ճորով թէ գտուի քսան աստուածաշունչ ընդ ամենն. և կու նստի գինն ԲՃ կամ ԳՃ ֆլի (ֆլորինի) մէկի և չի գտուիլ. և յոյժ պիտանի է վարդապետաց և հայրապետաց և քահանայից: Գիտեմք հայր սուրբ, որ բազում դրամ խարճ կու լինի ի յայս պասմայս. բայց ապաւինելով ի քո առատաձեռնութիւնդ, Երանութեան քո բազում շահս հոգեւորս, որ առնիցէ Քո Սրբութիւնդ ամենայն մերազգին, և այնոցիկ որ փափաքին ուսանել զՀայոց լեզուն և զգիրն: Խնդիր ունիմ ապաւինելով ի Քո Սրբութիւն զայս շնորհս առնել. և եւս յայս պասմայս կարէ ծառայել ասացեալ Գրիգոր եպիսկոպոսն և Գրիգոր սարկաւագն և Մարգո Անդոնիո որդի Աբգարայ, որ իւր հայրն հասկացող էր. բայց զԳրիգորն՝ առաւել պասմային համար կ'ուղարկենք»:

Նոր տոմարին խօսքն ալ կ'ընէ կաթողիկոսն. «Եցոյց մեզ, կ'ըսէ, պարոն տէրն Սիգոնոյ եպիսկոպոսն զղառնալ տարւոյն և վասն նորոգման տումարից, և զպատճառից. բայց մեք միայն ոչ կարեմք խախտել յառաջ քան զայլազգիք, վասն զի առ ժամայն լինէաք ընբռնեալ ի յանօրինաց թէ միութիւն արարէք ընդ Ֆռանկաց և ոչ ունիմք գիրք որ խօսիլն վասն այսմ տումարից· արարաք մեզ վէքիլ զասացեալ Յովհաննէս վարդապետ զեպիսկոպոսն՝ որ ուսանիցի լաւ զնոցա տումարեղէնս, բայց մեր ազգին տումարեղէն ուղարկեցէք, զի ամենեքին ուսանիցիմք և մեք լինիցիմք առաջինքն, եթէ և այլք զայցեն զհետ մեր»: Բայց Յովհաննէս եպիսկոպոսի յիշատակութիւնը չկայ ամենևին Գրիգորեան տումարի տպագրի յիշատակաց մէջ, այլ Յովհաննու քահանայի Տէրզնցւոյ. հաւանականաբար, ինչպէս թուականն ալ կը ցուցանէ, Ազարիա կաթուղիկոսի պատգամաւորաց ի Հռոմ ժամանելէն յառաջ եղած է տպագրութիւնն, ուր արդէն կը գտնուէր Սուլթանշահ, և որոյ համար կը յանձնարարէր հայրապետն:

* * *

Քանի մը տարիէ նորէն կը հանդիպինք Տէրզնցւոյս և իւր որդւոյն Խաչատուրին. և այս անգամ ոչ ի Հռոմ, այլ ի վենետիկ, և հաւասարապէս տպագրական գործով զբաղած ։



Մենք հոս իւր արտագրած Սաղմոսարանով դեռ չի զբաղած, տեղեկութիւն մը տանք վարուց պատմութեան ։

Աշխարհիկ երէց մ՚էր Յովհաննէս Տէրզնցի, Ամիթ կամ Տիգրանակերտ քաղաքէն. և չենք գիտեր թէ ի՛նչ պատճառաւ Տէրզնցի աւելի անունը կը կրէ ։ Ամուսնոյն

տարաժամ մահուամբ՝ երկու աղջկունք կը մնան իրեն և եօթնամեայ մանչ զաւակ մը։ Կամ կարօտութեան և կամ ուրիշ ո՛ր և իցէ պատճառաւ մը, (որովհետև իրմէ առ մեզ հասած ինքնագիր ստանաւորին մէջ անիմանալի կը մնայ այս իմաստ), տարակուսանաց կամ մտածման վարանաց մէջ մնացած, կը բռնադատուի թողուլ որբերը և ճամբայ կ՚ելլէ դէպ ի Հռովմ երթալու դիտմամբ։ Այդ քաղաքին մէջ մնացած ատեն կը ծանօթանայ և կ՚ընկերանայ Աբգարու Սուլթանշահ որդւոյն ի տպագրութիւն Գրիգորեան տումարին։ Ամուսնոյն մահուընէն շատ տարի ետքը այդ ճանապարհորդութիւնն ըրած պիտի ըլլայ յարեմուտս. որովհետև հետն է նաև Խաչատուր որդին. չափահաս պատանեակ մը, զոր իրեն օգնական, կամ ինչպէս ինքն կոչեց ի յիշատակարանի նոյն գրոց, բեղադրիչ կը կոչէ ձեռք զարկած գործոյն։

Այս տպագրութիւնն յաջողութեամբ ի գլուխ հանելէն ետքը, միտքը կը դնէ դառնալ ի հայրենիսն. և արդէն քսանօրեայ ճանապարհորդութիւն ըրած էր, երբ յանակընկալս կը բռնեն ու կը բանտարկեն զնա։ Ինք՝ զԱստուած «ծածկատես ամէն գաղտնին» վկայ կը կոչէ, որ բանտարկուելու արժանաւոր յանցանք կամ վնաս մը ըրած չունի. և մենք ալ հաւատալով իր խօսքին՝ չենք կրնար գուշակել պատճառը. վասն զի գրութեան խօսքերը մութ մնացած են, և ուրիշ տեղէ ալ լոյս մը չունինք։ Անշուշտ ենթադրութեամբ կամ կասկածով եղած գործ մ՚էր, և կ՚երևնայ թէ անմեղութիւնն յայտնուած պիտի ըլլայ յետոյ, որով Վենետկոյ աշալուրջ հասարակապետութիւնն ոչ միայն համարձակ մուտ և բնակութիւն շնորհեց ի մայրաքաղաքին, այլ և գործելու ազատութիւն և ասպարէզ։

1587 Թուականին զՏէրզնցին կը գտնենք ի Վենետիկ։ — Նոյն տարւոյն Սաղմոսարան մը տպագրուած է ի քաղաքին, յորում գրուած է ի սկզբան մեր նոր-

կայացուցած դէմքերը՝ Յովհաննու երիցու և Խաչատուր որդւոյն, որոյ վրայ գրուած է՝ ինչպէս արդէն ընթերցողք տեսան և կարդացին. «Յիշա զմեզ տէր յորժամ գաս արքայութեամբ քո և ողորմեա մեզ. Տ. Յովաննէս Տէրգընցին և որդին Խաչատուրն ծառայք Աստուծոյ և յիշողաց. ՌՆԵ։ Ապա «Յիշատակարան է սակաւիկ. փառք ամենասուրբ Երրորսէ թէ (= Երրորդութեան) Հօր և... Աւարտեցաւ գիրս ձեռա տէր Յովանէս Տէրգնցոյս և որդւոյ իմոյ Խաչատուրին ի թվին ՌԼՁ, ի մայրաքաղաքն վենետիկ, ընդ հովանեաւ Մարկոս աւետարանչին, ի թագաւորութեան Պասքուալ Ջիծօնին, ի պատրիարգութեան Ջուան Թրւիզանոյն, և բանաստուն Ջուան Ալբերթին, ձեռնատուր խոճայ Շահսօլուն, և հոգեւոր որդւոյն իմոյ Ստեփաննոսին, և այլ Ջողեցոյց զոր տէր աստուած տացէ ըստ սրտից իւրոց։ Այլ զկարապետ Բաղշեցին յիշեցէք ի Քրիստոս, զուր բամ օգնութիւն հասոյց մեզ։ Այլ և զերեսս արկանեմք ոտից ձերոց մոխրամածեալ և արտասուալից հառաչմամբ հայցեմք և մաղթեմք ի ձէնջ. զի մի ողորմայիւ արժանի առնէք զկենակից իմ զինախըփաշէն, և զմայրն իմ զՄարիամն, և զհայրն իմ զխանէսն զփոխեալքն առ Աստուած. և յիշողացն և յիշեցելոցս Աստուած ողորմեսցի յիւր միւսանգամ գալստեան. ամէն»։

* * *

Ի վենետկոյ հաւանականաբար ի Մարսէյլ Գաղղիոյ անցեր է Տէրգնցի իր որդւովք. և հոն թարգմանած է ի հայ՝ փրանկաց վիպասանական մի, հայերէն ոտանաւոր չափով, և որոյ գաղղիարէն մակագիրն է Le Chevalier Paris et la belle Vienne: Մենք այս անունով գաղղիական երկասիրութեան քանի մի ամենահին տպագրութեանց հանդիպեցանք ի մեծի մատե-

Digitized by Google

նաղարանին փարիզու, որոնք ամենուին հանդիտութիւն կամ նմանութիւն մի չունէին մեր լեզուով գտնուած այս գրուածին հետ, որով կը կարծենք թէ ուրիշ համանուն երկասիրութեան մը թարգմանութիւնն կամ հետեւողութեամբ յօրինուած մի ըլլայ, որ ցարդ ձեռագիր մնացած է և երբէք տպագրութիւն մի չունի: Ի վերջ մատենին ստանաւոր գրուած մի կայ ի թարգմանչէն կամ ի յերիւրողէն, և տողից առաջին տառքն կը յօդեն: « Ջաէր Յովաննեսի Տէրզնցոյ ասաց յու ». փոխանակ ասացեալ կապելու. յորում կ՚երևի թէ շատ նեղուեր ու կրեր է նաև ի Մարսէյլ. և կարօտիւ փափաքելով իր դարձին ի հայրենիս՝ կամ նիւթական միջոցաց պակասութեամբ և կամ ուրիշ պատճառներէ կ՚արգիլուէր.

« Այլ ես, կ՚ըսէր յորդովք ի քաղաքս ուղղայ,
Սիրտս իմ կամի որ միշտ երթայ.
Այլ ճանապարհս երկրի սորայ
Ցամաքն ու ծով կապեալ մնայ:
Յաւտարութիւնս մաշեցայ.
Որ ի երկիրըն Ֆռանցայ.
Այս ինչ ցաւ է. կայ եւ մնայ
Կատարեցաւ բանս »:

Մենք ալ այս տողերով թողունք զՏէրզնցի, ու անցնինք ի Լեհաստան, և ի գլխաւոր քաղաք երկրին յիւլով:

ՔԱՐՄԱՏԱՆՆԵՆՑ ԺԱՄԱԳԻՐՔ ՑԻԼՎՈՎ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ Ի ՓԱՐԻԶ ԵՒ Ի ՀՌՈՎՄ

Ոչ այս հիւրամեծար և սիրելի երկիր և ժողովուրդ,

Digitized by Google

և ոչ նորա նշանաւոր ոստան անծանօթք են մեզ, որ ասպնջականութիւն, բարեբաստիկ հանգստութիւն, իշխանութիւն և ճոխութիւն տուին մեր յԱնւոյ ու ի քաղաքական արկածից նորա և փոփոխմանց փախստական ազգակցաց։ Զարմանք չէ որ այսչափ բազմաժիւ և նիւթական հանգստութիւն ունեցող գաղթականութեան մէջ՝ նա և տպագրութեան արուեստի պէտք, հետամտութիւն և ճարտարութիւն յերևան ելնէր։ Եւ յիրաւի, Տէրզնցւոյն ձեռքով տպագրուած Սաղմոսարանի գրքէն ետքը, ուրիշ Սաղմոսարանի մ'ալ կը հանդիպինք, որոյ տպագրութիւնն եղած է յԻլվով։

478 էջերէ բաղկացած գրքոյկ մ'է. որոյ թէպէտ թուանիշերը նշանակուած չեն, այլ յետոյ ձեռագիր յայլոց գրուած. իսկ ի վերջ գրոցն՝ մեր ուխտի բանասէր և բանագէտ վարդապետ մի, Զոհրապեան Հ. Յովհաննէս, հետևեալ ծանօթութիւնը կու տայ ինքնագիր գրչութեամբ. « Զայս Սաղմոսարան դէպ եղև ինձ գտանել և ի ձեռս բերել ի ճանապարհորդութեան իմում ի Լեհաստան, ի գիւղաքաղաքն Սնեաթին. որով ի յայտ եկն թէ յամին 1616 եղեալ է տպագրութիւն հայկական յԻլվով քաղաքի։ Եւ համարէի զսա առաջին՝ մինչ չև գտեալ էի զմիւսն ի Մեդիոլան, որ բազմօք յառաջ քան զսա տպագրեալ է ի Վենետիկ՝ ի ձեռն Աբգարու »։

Անցողաբար և երախտապարտ սրտիւ յիշելի է, թէ ազգային տպագրական պատմութեան այս երկու գլխաւոր վերայայտնութիւնք, արդիւնք են բազմահմուտ և արդիւնական անձիս։

Ճակատ մը ունի զարդափակ, և բաւական ճաշակով յօրինուած. ի վերին կողմն՝ Յիսուսի խաչելութեան պատկերն, և ի ստորինն՝ Աբրահամու զոհելը զորդին. չորս անկիւններն ալ՝ հին և նոր կտակարանէ առնուած դէպքեր. և ի մէջն զարդագրով « Սաղմոս ի Դաւիթ.» և ապա, « Տպագրեցաւ (տանգլուխ տառիւքն, իսկ յա-

Digitized by Google

ջորդքն բոլորագիր, տպագրին ուրիշ տառից նման) Սաղ-
մոսարանս ի կազմարանն Քարմատանենց առէր Ցոլհան-
նիսին. Թվին մարդեղութենէն տեառն ՌՋԺԶ և Հայոց
մեծաց ՌԿԵին դեկտեմբեր ամսոյ ԺԵ »։ Ի միւս էջն.
« Երանելոյն Եպիփանու եպիսկոպոսապետին Կիպրոսի արա-
րեալ պատճառ երգուց սաղմոսին »։ Ապա փայտափոր
պատկեր մը՝ որ կը ներկայացնէ զԴաւիթ, ու հրեշտակ
Աստուծոյ Սուսեր ի ձեռին ի վերայ կալին Ոռնեայ։
վերջը խորանազարդ, և սկզբնաւորութիւն և շարունա-
կութիւն սաղմոսաց, այս գլխագրով. « Մեկնութիւն ի
վերայ բոլանդակաց թէ վասն է՞ր և յորո՛ւմ աւուր նը-
ւագեաց Դաւիթ զիւրաքանչիւր սաղմոսն։ Յորժամ գնաց
Սաւուղ առ դիւթսն հանել զՍամուէլ, ասաց Դաւիթ.
Երանեալ է այր », և այլն։ Այսպէս ի գլուխ իւրաքան-
չիւր սաղմոսաց՝ անոր յօրինման պատճառն կը նշա-
նակուի, որպիսին չենք յիշեր հանդիպած ըլլալ ուրիշ
տպագիր սաղմոսարանաց մէջ։ Ամեն գուբղայ գլուխ՝ զար-
դագիր տառով կը սկսի։ Իսկ յետ երից գուբղայից, կամ
ինն սաղմոսաց, օրհնութիւնք մարգարէականք և աղօթք.
և ապա խորանազարդք իւրաքանչիւր երեք գուբղայից ե-
տևէն, և կարևոր մեկնութիւնք և տեղեկութիւնք։ Օ-
րինակ իմն, ի գլուխ « Աւրհնեա՛ անձն իմ զՏէր » սաղ-
մոսին, կը դնէ. « Զմեծ վարդապետութիւն ուսուցանէ
մեզ երանելիս Դաւիթ և ասէ. Աստ արժան է աւրհնել
զԱստուած, քանզի ի մահուն լռէ քնարս մեր յաւրհնու-
թենէ, և ասէ »։ Ի վերջ գրոցն կը դնէ Անանիանց
օրհնութիւնը, Մանասէի աղօթք, Սրբոյ Աստուածածնի
« Մեծացուսցէ » մաղթանք, և այլն. և Ներսիսի Շնոր-
հալւոյ « Հաւատով խոստովանիմ » աղօթք, հանդերձ
սկզբան խրատական ազդարարութեամբ. և որ թերի կը
մնայ մեր քով գտնուած օրինակին մէջ, քանի մի իջից
պակասելովը։ Բարեբախտաբար անկորուստ մնացած է հե-
տևեալ յիշատակարանս. յորմէ կը հասկըցուի հրատա-

Digitized by Google

ըակողին բաղիշեցի ըՍալը, թէ հայրը կը կոչուէր Քարմատանեց Մուրատ, մայրն՝ Աննա, պապն՝ Տէր Սիմէոն ոմն քահանայ, և թէ ինչպէս տարի մի ամբողջ՝ տպագրական արուեստի գործաւորաց հետ յոգնելով՝ հազիւ կրցեր է ի գլուխ հանել այս գործը։

Դնենք յիշատակարանս. «Ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կազմեցաւ նոր տպագիրս երկիրն Իլախաց ի քաղաքս Լէվ կոչեցեալ ընդ հովանեաւ Նշման Սուրբ Աստուածածնին, ձեռամբ յոգնամեղ Քարմատանենց Յովանէս իրիցու՝ զոր հոգս առեալ մեծաւ աշխատութեամբ և բաղում ծախիւք տարի մի բոլոր արուեստաւորաց հետ դատեցայ, մինչև գիրն ի գլուխ հանի. և նոր կազմարան սահմանեցի. և վասն փորձի նախ զերգսն Դաւթի մարգարէին տպագրեցի ի օգուտ և ի շահ աստուածասէր աղօթողաց մերասեռ ազանց. զոր եթէ հաճելի լիցի կամաց ձերոց՝ Տեառն փառք։ Արդ եղև գլաւ սորին թվականութեան Հայոց մեծաց ՌԿԵ ամին. ամսեանն դեկտեմբերի ԺԵ. և ի փրկչին ՌՋԺԶ ամի. ի հայրապետութեանն Էջմիածնայ սուրբ յաթոռոյն կենդանի նահատակին Տեառն՝ տէր Մելքիսեդեկ կաթողիկոսին, այլ և Կիլիկեցո գաւառին տէր Յովհանէս քաջ րաբունապետին. ի սոյին ժամանակս հանդիպեցաւ տառ սորին. այլ և ի թագաւորութեանն Քրիստոնէից Լեհ ազգին բարեպաշտ արքային Զիգմունտին. զոր Տէր ինքն անսասան պահեսցէ։ Արդ աղաչեմ զամենեսեան որ հանդիպիք այսմ գրիս, յիշեսջիք ի բարի և զծնօղս իմ ի Քրիստոս հանգուցեալ բաղէշցի Քարմատանենց զՄուրատ, և զմայրն իմ զԱննա. այլ և զպապն իմ զտէր Սիմէոն քահանայն և զամենայն ազգայինս իմ. և նա ինքն, որ առատն է ի տուրս բարեաց, կրկնակի բարութեամբ զփոխարէն պարգևեսցէ մեզ, և թողութիւն շնորհեսցէ յանձանց ձերոց և ձեր սուրբ աղօթիւքն զմեր ջնջեսցէ. այլ և զննջեցեալսն մեր խաչին լուսոյ և երկնից արքայու-

Digitized by Google

թեան արժանի արասցէ. որում փառք յաւիտեանս ամէն »:

Բաց ի այս Սաղմոսարանէս, որ սակաւագիւտ է, ուրիշ տպագրութեան յիշեալ ամենևին տեղեկութիւն չունիմք. որով կ՚երևնայ թէ Քարմատանենց՝ հանդերձ ամենայն բարեյօժարութեամբ զոր կը ցուցընէ ի յիշատակարանին՝ չէ յաջողած ուրիշ գրքեր ալ ընծայել տպագրութեամբ. յետ այնչափ աշխատանաց և ծախուց իրեն հետևող մը ունեցած չէ, շարունակող իւր գործոյն:

*
* *

Իլլովեան այս տպագրէն ետքը, հարկ է մեզ միւսանգամ դարձ առնել ի Հռոմ, կրկին հանդիպելով հոն մեզ յառաջագոյն ծանօթացեալ Աբգարեան Բարդուղիմէոս քահանային, հոգևոր հովուի ազգային քաղաքին: Իր թարգմանութեամբ կը տպագրուի ի Հռոմ՝ յամի 1623 հետևեալ խորագիրն ունեցող կոնդակ Եւգինէոս Դ քահանայապետի, տուելոյ յետ փլորենտեան սիւնհոդոսի. « Միաբանութիւն Հայոց ընդ Հռոմայ սուրբ եկեղեցւոյն, վասն պարզաբանութեան նոյն օրինացն, և եօթն խորհրդոց սուրբ եկեղեցւոյ. և այլ ևս բազում սուրբ խորհրդոց, որ եղեւ հրամանօք Եւճենիոսի չորրորդի սուրբ փափին ժողովն Ֆիորենցոյ, թուին 1439: Լատինականն է. Concordia Armenorum cum S. R. Ecclesiæ: et declaratio articulorum septem, Novæ legis sacramenta, pluraque aliis concernentium. Sub Eugenio Papæ IV in Concilio Florentino anno 1439 facta. Jussu SS. D. N. Gregorii XV et sacræ Congregationis de Prop. fide impressa: խորագիր սկզբնաւորութեանն. « Կանոն Եւճենիոսի չորրորդ փափի » թարգմանչին անունը կը նշանակուի ի վերջոյ. R. D. Bartolomæus Abgarus Armenus. և որ կը կրկնուի ի վկայութեանն

Digitized by Google

զոր տայ Fr. Gaspar Manughius Armenius Sac. Theol. Doctor, Fratrum Tertii Ordinis S. Francisci :

Կը յիշուի տպագրութիւն գրոցս ի Թղթի Ուրբանոսի Ը առ Փիլիպպոս կաթուղիկոս յամի 1641. Quod quidem et ejusdem concilii (Florentiæ) volumine, atque ex prædictis Pontificio Diplomate, quod esse ita pridem S. E. auctoritate, vestro idiomate conscriptum et in luce editum fuit.

Նոյն տարին տպագրուած է ի Հռոմ նաև Այբբենարան մ՚ալ, նոյնպէս Գրիգոր ԺԵ հայրապետին հրամանաւ, ի տպարանի ժողովոյ Տարածման հաւատոյ, և որ մեզի ծանօթ առաջին հայկական տպագրութիւն է այն գործարանէն, հետևեալ լատին և հայ խորագրով. Alphabetum Armenum. Jussu D. N. Gregorii XV. et S. Congr. de Prop. fide impressum. « *Այբուբենք Հայոց. և հրամանաւ սրբազան Գրիգորիոսի հընգետասաներորդի սուրբ փափին. այլ ևս սուրբ ժողովոյն որ վասն հաստատութեան հաւատոյ են կարգեալ՝ կազմեալ եղև : Թվ. ՌՈԻԳ* »: *Այս երկրորդ գիրք, ինչպէս յիշեցինք, տպագրուած է ի գործարանի Ուրբանեան վարժարանին, մինչ Եւգինէոսի Դ կոնդակը՝ առ Ստեփանոսի Բալինեան : Հոն տպագրուած է դարձեալ մեզի ցարդ ոչ ծանօթ ուրիշ գրուածք մ՚ալ, որոյ անունն և խորագիր կը յիշատակէ Ամադատիոս ի յառաջաբանի* Alphabetum Armenum *կոչուած գրոյ.* summa Doctrinæ Christianæ: mandatis Cyntii Aldobrandi Card. S. Georgii, Armenæ Nationis patroni, in armenicam linguam conversa; typ. Steph. Paulinum.

Ի Մեդիոլան (Միլան) Լոմբարտիոյ, 1624 թուին եղած կը գտնենք, Թէպէտ մասնական, հայկական տպագրութիւն մի. և է լատինական լեզուով ու բացատրու-

թեամբ հայ քերականութիւնն ի փրանկ. Հռիվոլայ կանոնիկոսէ, կրելով ի ճակատուն զտոհմանշան կնիք Պորրոմեանց, զի ընծայուած է ծիրանակիր արքեպիսկոպոսի քաղաքին՝ Փրանկիսկոսի Պորրոմէոսի: Ի համառօտ նուիրականին որ գրուած է ի գլուխ գրոյն, հեղինակն կը ծանուցանէ թէ յառաջ քան զհրատարակութիւն իւրմէ աշխատասիրուած և խոստացուած Հայ-լատին բառագրոց, հարկ սեպեր է նախ ի լոյս հանել զքերականութիւն: Մեր ուրիշ հրատարակութեան կը վերաբերի խօսիլ գրքին և անոր հայագէտ հեղինակին վրայ. հիմկուհիմայ այսչափս բաւական սեպենք ըսել, թէ տպագրուած է այն ի գործարանի Ամբրոսեան դպրոցին. և որ ունէր միատեսակ բոլորգիր տառեր, բաւական արուեստիւ և ճաշակաւ յղկուած, առանց գլխագրոց և նօտր տառից: Գէթ դիմացնիս եղած հատորոյն մէջ՝ անոնց կատարեալ բացակայութիւն կը նկատենք: Թէ ի՛նչ եղան յետոյ և կամ որուն ձեռքն անցան այն տառք, չենք կրնար բան մի գրուցել. որովհետև նոյն հեղինակին աշխատասիրած բառագիրք, ինչպէս ետքը պիտի տեսնենք, հրատարակուած է ի Փարիզ և ոչ ի Մեդիոլան. ուր՝ թէպէտ ժամանակ անցնելէն ետքը կը հանդիպինք հայագիտաց և հայասիրաց, բայց ոչ հայատառ տպագրութեանց: Քերականութեանս ճակատ գրուած է. Grammaticæ Armenæ libri quattuor; auctore Francisco Rivola Canonico in Ecclesia sancti Thomæ Mediolani. Ex typographia Collegii Ambrosiani, Anno M.DC.XXIV.

*
* *

Ի 1630 կը տպագրի ի Հռովմ, ի տպարանի Ուրբանեան, հետևեալ գրուածքս. « Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան թարգմանեալ

Digitized by Google

ի ֆռանգաց լեզուէ ի Հայց բառն Ջեռամբ տէր Պետրոս Պօղոսի Հայոց քահանային և հրամանաւ սրբազան փափին ութերորդ Ուրբանոսի և սուրբ ժողովեան որ վասն հաստատութեան հաւատոյ կարգեալ է. կազմեալ եղև ի թվ ծննդեան Քրիստոսի. ՌՈԼ »: Այս ի մի և նոյն իջի իտալական լեզուով. Dichiaratione copiosa della Dottrina Christiana tradotta dalla Italiana nella lingua Armena dal P. Pietro Paolo sacerdote Armeno. Stampata per ordine della S.[ta] del nostro Signor Papa Urbano Ottavo e della Sagra Congregatione de Propaganda fide. — In Roma, nella stamperia della S. C. di Propaganda Fide.

Ունի երկու հայ լեզուաւ յայտարարութիւններ. մին Ներսէս արքեպիսկոպոսի Բաղիշեցւոյ, և միւսն Օգոստինոսի Բաջենց, որ կը վկայեն գրքին օգտակարութեան և հաւատարիմ թարգմանութեան. և որոց տակ կը յաւելու դնել իւր ստորագրութիւնն Ստեփանոս Աւագ սարկաւագ Յամթեցի Դասպարի որդի: Նոյն Օգոստինոս Բաջենց, ինչպէս նաև կոստանդնուպոլսեցի Յովհաննէս Մկրտիչ Հայազգի փրանկիսկեան քարոզիչն, և նոյնպէս յազգէս Հայոց Գասպար Մանուկեան աստուածաբան վարդապետ և խոստովանահայր ազգայնոց ի Հռովմ՝ իտալերէն լեզուով մէյմէկ վկայութիւն կու տան, և որոց վրայ՝ տպագրութեան հրաման կը տրուի: Նուիրուած է մասնեանս սրբազան հայրապետին Ուրբանոսի Է:

*
* *

Յետ հրատարակութեան Հայ–լատին քերականութեան Հոխլոլայ՝ ինն տարի կ՚անցնի, և ապա հեղինակին խոստացած և երկասիրած Հայ–լատին բառագիրք կը հրատարակուի յարքունական տպարանին Փարիզու: Հայ-

Digitized by Google

կական տպարանի մը բացումը յայնմ ատանի, ինչպէս ուրիշ առթիւ ալ ուզեր ենք անդրադարձընել, քաղաքագիտական մեծ նպատակ մը ունէր: Ռիշլիոյ ծիրանաւոր կը փափաքէր գաղղիական ազդեցութիւնը տարածել յարևելս, և այն վախճանաւ այլ և այլ ջանքեր եղած են, թէպէտ առանց մեծ արդիւնք մը երևցընելու: Ինչուան խորհուրդ և մտածութիւն ալ ունեցան հայկական տպարան մ'ալ հիմնելու ի մայրաքաղաքին, կամ հայկական տառեր ստանալ՝ արքունական տպարանին համար, հրատարակել հայ եկեղեցական գրուածներ: Բայց միայն այս բառգիրք հրատարակեցաւ, առանց ուրիշ տպագրական արդիւնք մը երևցընելու. ժամանակ անցնելէն ետքը ի Մարսէյլ նորանոր հրատարակութիւնք եղան, ինչպէս պիտի տեսնենք. բայց հոն հաստատուած հայ գաղթականութեան կամ մասնաւորաց ջանքով, և բաւական դժուարութեամբք թէ եկեղեցական և թէ քաղաքական իշխանութեանց կողմանէ: Ի Փարիզ հրատարակուած այս Հայկական բառարան հետևեալ խորագիրն ունէր. Dictionarium Armeno–Latinum, Auctore Francisco Rivola, Civo Mediolanensi, Lutetiæ Parisiorum. Impensis societatis Typographiæ librorum Officii Ecclesiastici jussu Regis constitutæ. MDCXXXIII: Cum Privilegiis Majestatis suæ christianissimæ.

Այս բառագրոց հրատարակութեան անմիջապէս հետևեալ տարւոյն (1634) մէջ տպագրուած է ի Փարիզ ի նմին արքունական գործարանի՝ Պետրոսի Պօղոսի հայազգի ուրումն քահանայի Առաջել պարզաբանութիւնք կոչուած ու մեր վերագոյն յիշատակած գրոց երկրորդ տպագրութիւն մի, ըստ ամենայնի նման հռովմէական տպագրին՝ նա և ի վրիպակս լեզուին և ուղղագրութեան, միայն այսպիսի լատին յաւելուածով մի ի ճակատուն. De mandato D. Cardinalis de Richelieu, gratis di-

Digitized by Google

spensatam. և կը կրէ Գաղղիոյ արքունական կնիք, թագազարդ և շուշանակիր։ Տպագրապետն կամ հսկող տպագրութեան Ժան–Արման՝ կ'ընծայէ զայն ծիրանաւոր Ռիշլիոյի, ի դիմաց տպագրական ընկերութեան, regis christianissimi voluntate, ac prefatæ ejusdem Eminentiæ diligentia piè instituta: Այս թագաւորական հրովարտակ Լուդովիկոսի ԺԳ վասն հաստատութեան տպարանին, տուեալ ի Շադոյ–Թիէրրի յ'ինն դեկտ. 1631 ամին, իքսանեւորդի երկրորդի ամի թագաւորութեանն. կը գրուին տպա հայ, խառն և լատին վկայութիւնք որպէս յառաջին տպագրին Հռովմայ։ Ի վերջ գրոյն՝ յէջ 275, excudebat Antonino Vitray, 1633, և որ ծանօթ արևելագէտ տպագիր է։ Իսկ ի միւս էջն՝ ստանաւոր գրուած մի հայ, յայտաբար պարունակութեանց մատենին. «Գրոց ցանգըն է պարզաբանեալ, — Կարգին թըխտոցն է շարադըրեալ» և այլն։

Փարիզէն անցնինք ի Նոր Ջուղա։ Առ այս հեռաւորութիւն կը բռնադատուինք ի ժամանակագրական ցուցակէ տպագրութեանց։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ Ի ՆՈՐ ՋՈՒՂԱ

Հարանց վարուց առաջին տպագրութիւնն կ'ըլլայ ի Նոր Ջուղա 1640 թուին։ Այս ամենահին տպագրութեան օրինակք սակաւագիւտք են. և մեր մատենադարանինը՝ որ նուէր է Կոնիբիր ուսումնական և հայագէտ անգղիացւոյն, պակասաւոր է ի սկզբան, ու 3 թուահամարէն սկսելով՝ չունի ճակատ գրոցն։ 1663ին ի Վենետիկ գրչագրուած Տաղարանի մը յիշատակարանին մէջ կը գտնենք, թէ Խաչատուր վարդապետ և արհիեպիսկոպոս Կեսարացի՝ Ջուղայի Սպահանայ Ամենափրկիչ վանաց առաջնորդը,

Digitized by Google

ուսումնասէր եռանդեամբն վառուած՝ միաբանից հետը զբաղումն ի միաբանակցացն և անոնց հաւասար ջանքովը և յիրաւի զարմանալի և օրինակելի յարատեւութեամբ՝ տպարան մը հաստատեց ի Ջուղա, և յորում նախ առաջին հրատարակեցաւ Հարանց վարուց այս առաջին տպագրութիւնը: Իրենք էին գրոց կաղապարը շինողք, իրենք ձուլիչք տառից, շարողք և տպագրողք. իրենք դարձեալ տպագրութեան թուղթը պատրաստողք, առանց մէկէ մը տեսած և սորված ըլլալու արուեստը. միայն իրենց ճարտարութեան և յարատեւութեան արդեամբք. որով ոչ միայն արգահատելիք՝ իրենց արուեստական թերութեանց պատճառաւ, այլ մանաւանդ գովելիք՝ և մինչեւ իսկ զարմանալիք: Յիշատակարանն մէջ բերենք ամբողջ, որ լիակատար պատմութիւն մը կրնայ համարուիլ, հետաքըննութեան արժանաւոր, տպարանիս հաստատութեան.

« Փառք... որ ետ՝ կարողութիւն տառապեալ անձանցս, հասանել յաւարտ գրոցս որ կոչի Հարանց Վարք. Թվին ՌՂ. ի քաղաքն Շօշ, որ է Սպահան. յանապատի Նոր Ջուղայոյ ի Թագաւորութեան պարսից Շահսէֆոյն, և ի հայրապետութեան սուրբ Էջմիածնայ Տէր Փիլիպպոսի. Յիշխանութեան քաղաքին Ջուղայոյ իշխանաշուք պարոն Խօճայ Սարֆազին իմաստնոյ և բարեպաշտի. Ձեռամբ նուաստ խաչատուր վարդապետի կեսարացոյ, որ բազում աշխատութեամբ հանդերձ միաբան ուխտիւս հազիւ կարացաք այսչափս ի յայտ բերել: Զի ո՛չ ուսաք յումեքէ. եւ ո՛չ տեսեալ ի վարպետէ. այլ ի տեսչութենէ Հոգւոյն, և աղօթիւք հոգեւոր հօրն մերոյ Տէր Մովսէս կաթուղիկոսի փոխեցելոյ առ Տէր. որ կրկին լուսաւորիչ եղև հայկազն ազգիս, նորոգելով զսուրբ Էջմիածինն. և զեղծեալ կարգս մեր՝ որ ի թելադրութենէ յառաջնոցն, զոր Տէր Աստուած մեր ընդ երկոտասան վարդապետաց դասակից և պսակակից արասցէ. ամէն:

« Յիշեսջիք եւ զհոգեւոր որդեակքն իմ զՏէր Սիմէոն

վարդապետն, և զՏէր Դաւիթ վարդապետն. որ յայսմ ամի շնորհիւն Աստուծոյ տուաք զաւազան երկոցունցն. և զպատուական ծերունի տէր Մկրտիչն. նաև զաշակերտակից նոցին զտէր Բաղտասարն. զտէր Սահակն, զտէր Յովանէսն, զտէր Նիկողայոսն, զտէր Միքայէլն, զտէր Աւետիսն, զՅովսէփն, զմեծ Յովանէսն. և այլ եւս բազումք մեծամեծք և փոքունք. զոր ձանձրութիւն է յիշելն. և ամենեքեան օժանդակ են այսմ գործոյ: Ոմն ի թղթի շինութիւնն. զի զթուղթսն ևս ի տանէ եմք շինեալ: Բայց նիւթի լաւագոյնն դժուարագիւտ լինելոյ սակս, այսպէս ձեռն ետ այժմուս. անմեղադիր լերուք, թերեւս յառաջանալով լաւ եւս լիցի: Ոմն ի կազմութիւն գրոցս. ոմն ի սրբագրութիւնն. և այլք յայլ իմն գործս: Զոր հատուցանողն բարեաց ըստ իւրաքանչիւր ջանի և վաստակոց հատուսցէ բազմապատիկ աստ և ի հանդերձելումն: Եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի ի միւսանգամ գալըստեան իւրոյ. որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

« Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ և ի լուսաճաճանչ յաղօթս ձեր, որք օգտիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով՝ զփոքրագոյն աշակերտն իմ զտէր Յակոբն, զՄարգարէն, զՀայրապետն, զԱնտոնն և զՍարգիսն. որ բազում ջանիւք եւ աշխատութեամբ եղեն ձեռընտու յայսմ տպագրութեանս: Եւ պակասութեան սորին անմեղադիր լերուք »....

Այս յիշատակարանէս զատ ուրիշ յիշատակ մը չկայ ոչ երկար և ոչ համառօտ: Միայն նախընթացաբար յիշուած գրչագիր Տաղարանին մէջ գոլութեամբ կը յիշուին իբրու ձեռնարկողք և յառաջացուցիչք այս մեծ գործոյս, բաց ի Խաչատրոյ վանահայր արքեպիսկոպոսէ, նաև վերագոյն յիշուած « հանճարեղ փիլիսոփայ և իմաստուն քաջ Սիմէօն վարդապետ Ջուղայեցի և Բաղտասար և Սահակ վարդապետ, որք ամենեքեան Ջուղայեցիք

էին »։ Եւ կը յաւելու. « Եւ ես մեղաւոր աշակերտեցայ սոցա, և առ սոսա սրբոցս ուսայ զամենայն որ ինչ կարն մեր էր՝ որ ինչ և գիտեմք ողորմութեամբն Քրիստոսի և աղօթիւք սոցա ուսաք այսքանս որ ունիմք։ Զի ի յայն ժամանակն ի միում ամի տպեցաք հինգհարիւր Հարանց վարք ձեռամբ մերով ի տպագրատան Խաչատուր վարդապետի »։

* * *

Վրան երկու տարի անցնելէն ետքը, ի 1642, ուրիշ գրքի տպագրութիւն մ՚ ալ հրատարակուեցաւ նոյն տպարանէն. Ատենի Ժամագիրք մի։ Երկու տարուան միջոցի մէջ բաւական փոփոխութիւնք, ըսենք նաև յառաջադիմութիւն, մուծուեր էին ի գործարանին. զի ուր յառաջին տպագրին գործածուած տառք փոքրիկք էին, անկերպարանք և տձեւ, ասոր մէջ տեսակ մի նոր տառից կ՚աւելնայ, աւելի մեծ ձեւով, թէպէտ և նոյնպէս անյաջող արուեստիւ. և մինչ Տօնացոյցն նախկին տառիւք կը տպագրուի, Ժամագիրքն աւելի մեծերով։

Ինչպէս առաջինն, և սա ևս սակաւագիւտ է, և որոյ ճակատն պակասի ի միակ օրինակին զոր ունիմք ի մեր մատենադարանի. ութածալ մեծադիր հատոր մը, որպէս և նախայիշատակեալն։ Մեր քով գտնուածն՝ քաղաքիս ազգային Սուրբ Խաչ եկեղեցւոյն երիցուն պատկանած է ժամանակաւ, և որ ի մեկնիլն՝ թողած է անդ յիշատակ, և անտի ի մեր մատենադարան փոխադրուած։ Նոյն քահանային գրչագիր յիշատակարանն կայ. « Հրամանաւ երիցս երանեալ հայրապետին տեառն Փիլիպպոս սրբայզան ընդհանրից կաթողիկոսի. ես նուաստ և յետնեալ Սահակ երէցս Թոխաթցի, յղեալ եղէ ի սոյն հայրապետէ ի Կոստանդնուպօլսէ ի Վենետիկ քաղաք. սակս քահանայութիւն առնելոյ մերային ազանց վաճա֊

Digitized by Google

ռականաց. ի Թվին Հայոց ՌԾ և Բ. և մնացի աստ Գ ամ և Զ ամիս ի ծառայութիւն և ի սպասաւորութիւն այս սուրբ Երևման խաչ եկեղեցւոյս, որ է սեպհական վիճակ ազգին մերոյ Հայոց։ Եւ ունէի ընդ իս գժամայգիրս զայս ստացեալ իմոց ընչից և արդեանց. զսա ետու ի կուռն Երևման սուրբ խաչ եկեղեցւոյս, որպէս զի սա լիցի յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց »...։ Ասանկ տեղ տեղ ալ ուրիշ քանի մը համառօտ յիշատակագիր կը գրչագրէ Սահակ երէցս, աղաչելով յիշել և գնորահասակ որդեակն իւր զԵղիազար։ Ժամագրքէն ետքը նոյն տպագրին տառերով գրուած է և Դաւիթի մարգարէին Սաղմոսարանն և յետոյ գովասանութիւն սաղմոսաց ոտանաւոր, և ի վերջն յիշատակարան. « փառք... որոց ամենառատ շնորհիւ յանկ եկեալ կատարեցաւ տպագրութիւն հոգէնուագ սաղմոսացն Դաւթի ընդ նմին և կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեաց, յամի հազար և իննսներորդի և միակ Թուոյ։ Յամսեանն Հայոց տրէի երեք։ Եւ Հռոմայեցոց՝ Յանվարի իերկոտասան։ Յաշխարհին պարսից. Արքայանիստ քաղաքին ըստ դրոց Շօշ կոչեցելոյ. որ այժմ Ասպահան արտաձայնի։ Ի գիւղաքաղաքիս Նոր Ջուղայու։ Ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչի վանիցս. որ է մենաստան կուսակրօնից բանասիրաց։ Ի Թագաւորութեան պարսից Շահսաֆոյն։

Եւ ի գիտապետութեան Հայոց հանուրց սեռից. Տեառն Փիլիպպոսի երիցս երանեալ երջանիկ հայրապետի։ Եւ ի վերատեսչութեան նահանգիս ընդհանուր Պարսկաստանի հեզահոգի արհիեպիսկոպոսի և շնորհապարտ վարդապետի Տեառն Խաչատուրի, որ է բնիկ քաղաքաւ կեսարացի։ Որոյ ջանիւքն և աշխատութեամբն եղեւ տպագրութիւնս այս ի մէջ տոհմիս հայկազեան։ Քանզի այս ամէներջանիկ վարդապետս Խաչատուր օր ըստ օրէ տեսանէր զտպագրութիւնս ի մէջ ազգացն լատինացւոց. ցանկայր

Digitized by Google

միշտ որպէս զի լիցի ի մէջ Հայաստանեաց ևս. և յարաժամ խնդրէր հնար գիւտի արուեստիս այսորիկ: Եւ իբրեւ ոչ գտաւ ուստեք առ ի լնուլ զփափագ ցանկութեան իւրոյ, ապաւինեալ այնուհետև ի Հոգին սուրբ որ բաշխէ զշնորհս իւր առատապէս որք յուսան ի նա, սկսաւ աշխատել իւրով միաբան ուխտիւն, մինչ զի ի կատար եհան զտպագրութիւնս և սփռեալ տարածեաց զգիրս ի մէջ հայաստանեայցս: Որ և Ժամագիրքս զայս աշխատասէր կամօք ջանացեալ յաւարտ եհան ձեռամբ իւրով: Որ և մաղթեմ վայելողացդ և պատահողացդ զի խնդրեսջիք ի Քրիստոսէ տալ նմա երկարակեաց խաղաղութեամբ առողջ կեանք: Եւ յետ աստի կենացս ընդ սրբոց աշխատաջան վարդապետացն դասաւորիլ ի փառս Աստուծոյ. ամէն: Այլ և խնդրեմ անմեղադիր լինել սակս անյարմարութեան. քանզի ամենեւին ի վարպետաց ոչ է տեսեալ, այլ իւրով հանճարովն ըստ պարզելոյն սմա ի Հոգոյն սրբոյ այսքան յայտ ածեալ երեւեցոյց վասն օգտի բազմաց: Ընդ սրբոյ երջանիկ հօրս յիշել մաղթեմ զմաքրասուն աշակերտեալ մանկունս իւր» (զորս արդէն նշանակեց Հարանց վարուց տպագրին յիշատակարանին մէջ) «Ընդ որս յիշել աղաչեմ և զայլ աշակերտեալ սրբամիտ սարկաւագունսն, ըզտէր Աւետիսն խոհեմ, զխաչատուրն, զՍիմէօնն, զԳալուստն, զՍահակն որք միշտ աշխատին ի վերայ գործառնութեանս. ոմանք սրբագրելով, և այլք կազմելով: Այլ և յիշել հայցեմք ի սուրբ աղօթս ձեր զմեծ Յովանէսն այր քաջագօտի, որ է վերակացու սուրբ ուխտիս, որպէս հայր հասարակաց խնամէ զամենեսեան: Այլ և զծերունի խոհարար զաւէր Յուսիկն որ ծեր գոլով սպասաւորութիւն առնէ եղբարցն ամենեցունց: Որոց Քրիստոս լիցի վարձահատոյց ըստ վաստակոց իւրեանց:

«Ընդ սոցին յիշել պաղատիմ և զիս զտառապեալ հէքս ըզկրկին մարդով խօթացեալ Սիմէօն կարօտ բանի:

Digitized by Google

Որ տկար անձամբ սակաւ ինչ աշխատեցայ ի վերայ որբագրութեան սորա հինգ կանոնիւ չափ և ի վերայ տօնացուցին գլխովին իսկ »։

Ի տօնացուցին՝ յառաջ քան զզատիկ. « Յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր ո՛վ սուրբ ընթերցողք ըզԲաղտասար, և զուք յիշեալ լիջիք ի Քրիստոս. ամէն »։ Իսկ ի վերջ նոյն գրոց. « Գիտասջիք տօնասէրք, զի մեծ և երանելի հայրապետն Տէր Մովսէս որ նորոգեաց զսուրբ Էջմիածինն, որոյ ըստ արժանւոյն գովասանութիւն առաքինասէր վարուցն և աշխատաջան վաստակոցն որ ի վերայ կարգաց եկեղեցւոյն և կրօնից հաստատութեան ունէր՝ այլում թողից առնել. և կամ բաւական համարեալ մեր զոմանս յառաջագոյն ասացեալսն....... Աւարտ էառ ժամագիրքս բոլորովին ի Թուին Հայոց ՌՂ և Ա. յապրիլ ամսոյ ԻԱ, շնորհօք Քրիստոսի Աստուծոյ մերոյ տեառն ամենակալի, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։ Խնդրեմք ի ձէնջ որք պատահիցէք այսմ տպագրութեան յիշեա՛լ ի սուրբ յաղօթս ձեր զաշխատասիրօղսն այսմ տպագրութեան. զտէր Յակոբն. զՄարգարէն. զԲաղտասարն. զՍարգիսն և զԱզարիայն։ Ընդ սոսին և զնուաստ Սիմէօնս որ սակաւ ինչ աշխատեցայ ի վերայ որբագրութեան սորա »։

Քիչ ետքը կրկին առիթ պիտի ունենանք խօսիլ Յովհաննէս վարդապետին վրայ, զորմէ ակնարկութիւն ըրին յիշատակարանքս, յԵւրոպա ճանապարհորդութեան դրկուելով, տպագրութեան արուեստին կատարելագործութեան տեղեկանալու. որովհետև այս տպագիրք, անհարթք և անարուեստք, չէին կրնար զիրենք գոհ ընել։ Խորհրդատետրի մ'ալ յիշատակ եղաւ։ Մենք տեսած չենք. այլ միայն պատառիկ մը, երկու էջ բան հասած է ձեռուընիս. յորում թէ՛ մեծ և թէ փոքր տառք կան, և հաւանականաբար կ'ենթադրենք թէ ասոր հրատարակութիւնն ալ եղած ըլլայ ի Ջուղա, տառից ձևերովը և տպագրին նմա-

Digitized by Google

նօրինակ անհարթութեամբ։ Բայց առ այժմ որոշ բան մը չենք կրնար ըսել, և բանասիրաց համար իրաւամբ փափաքելի է որ ամբողջ օրինակ մը նոյն տպագրին յերեւան ելլէ. որով թերեւս լիագոյն տեղեկութիւն մը կարելի ըլլայ ստանալ ի յիշատակարանաց՝ եթէ կը գտնուին։

* * *

Անցնինք հիմա խօսիլ Յովհաննու Անկիւրացւոյ վրայ, որ ստուգապէս մեծ արդիւնք ունի հայկական տպագրական արուեստի յառաջադիմութեան և բարւոքման տեսակէտով։

Բանանք իր ձեռքովը և ջանիւք 1642 թուականին ի Վենետիկ տպագրուած Սաղմոսարան գրոց յիշատակարանն, տեսնելու համար թէ ո՛վ է Անկիւրացին։ Հոն կ'աղերսէ յիշատակութեան արժանի ընել իր ծնողքն, զհայրն Մուրատ սարկաւագ և զմայրն զՓաշամէլիք, իր երկու որդիքը զՄիքայէլ և զԳաբրիէլ. « Ես, կ'ըսէ, նուաստհոգի Յոհաննէսս անկիւրացիս տեսանելի զպակասութիւն գրեանց ազգիս Հայոց և վարանելի ի մտի, եթէ զինչ լինի հնար բազմանալոյ հին և նոր կտակարանաց. քանզի պատճառ նուազութեան այս էր, զի բազում ծախիւք և դժուարութեամբ հազիւ կարէ ոք ստանալ Ա գիրք կամ Բ. և կամ երիս. թող թէ պիտոյանայ բազում »։ Այս վախճանաւ դիմած է ի Հռոմ քաղաք, ուր չորս տարի նեղութեամբ և աշխատանօք « և բազում չարչարանօք, կ'ըսէ, զոր չէ հնար ի գիր արկանել, զոր ծածկագէտ ստեղծաւղն իմ գիտէ։ Եւ հանի զպողպատն և զկաղապարքն և զծաղիկքն և զծաղկագրերն բազում աշխատութեամբ »։

1642ին ի Հռոմ տպագրուած գրքի մը մէջ, Հայ խորհրդատետրի, առաջին տպագրութիւն, կը հանդիպինք իր անուան. Եւրոպացւոց կողմանէ, չենք գիտեր ինչ

Digitized by Google

պատճառաւ, իրեն տրուած՝ Ճովաննի Մոլինոյ անուամբ։ Ցարածման հաւատոյ ժողովոյն կողմանէ քննութեան կը տրուի գիրքս, որուն «կարգեալ սուրբ խորհրդոյ պատարագի Հայոց», կամ Լատին լեզուով Ordo divinæ missæ Armenorum *մակագիրն կ'ընծայուի, Վիցենցիուս Ռիքքարտոս անուն աստուածաբանին, որ կը վկայէ ի սկիզբն գրոցն, թէ «Հայոց պատարագի խորհուրդս այս լատին լեզուով գրեալ՝ ինձ յանձնեցին սուրբ ժողովքն Գարտինալաց, վասն օգտութեան Հայոց ազգի։ Եւ ես Վիցենցիուս մականուամբ Ռիքքարտուս՝ նորին սուրբ ժողովոյն հրամանաւն առեալ տեսի և սրբագրեցի»։ Լատինն՝ որոյ թարգմանութիւն է հայկականն՝ ունի այսպէս.* Liturgiam hanc Armenorum, potestati mihi facta a sacra Cardinalium Congregationes super negotiis Armenorum, recognovi; ut ex decreta ejusdem Sacræ Congregationis censura emendam. Romæ, die 6 Maji 1636: *Այս վկայականէն վերջը գրուած է հետեւեալն. «Ես Ցոհաննէս Մուլինի թարգմանիչ Հայոց. զգիրքս զայս հայի և լաթինի լեզուով գրեալ տեսի և կարդացի, և վկայեմ վասն ճշմարտութեան զի ամենևին հաւասարին միմեանց բարի և ստոյգ»։*

Այս վկայականէն և իրեն յանձնուած պաշտամանէն կ'երևնայ թէ Անկիւրացին բաւական դիրք ունեցող և կարեւոր անձ մ'էր ի Հռոմ. և յայլուստ ալ գիտենք թէ իրեն յանձն եղած էր դարձեալ հայկական Աստուածաշունչ գրոց հրատարակութիւն մը՝ յարևելից կամ յարեւմտից. բայց անկարելի եղած է այս գործին ձեռք զարնելը, կա՛մ ծանր ծախուց և կամ դիմացն ելած դժուարութեանց պատճառաւ։ Վասն զի ունինք իր ինքնագիր ուրիշ յիշատակարան մը յորում կ'ըսէ. «Ես Ցովհաննէս Անկիւրացի, Ֆրանկն Ճոլաննի Մաւլինօ կոչէ. եկի ի մեծն Հռոմ թվին Հայոց Ռ·ՁՁ և կե-

ցայ մինչեւ ՌՂ վասն պաւմայ առնելոյ զսուրբ աստուածաշունչն. բայց ոչ կարացի աւարտ առնել վասն բազում պատճառից -- բայց յոյս ունիմ ի Վանատիկ կամ ի Կոստանդինուպօլիս կատարել. զի ունիմ զամենայն գործիք որ պիտոյ են վասն այդ բանիդ »։

Այդ իւր յոյսը մասամբ միայն կրցաւ կատարել. այս ինքն Սաղմոսաց ընտիր տպագրութեամբ մը ի Վենետիկ, որոյ վրայ պիտի խօսինք։

Ութածալ հատոր մ'է այն, և վերնագիր կամ ճակատ ունի՝ « Սաղմոս ի Դաւիթ. կազմեցաւ ի մայրաքաղաքն Վանատիկ ազնուականութեամբ պատուական բըժըշկապետին Ցովսեփոս Աւօմատարիոսին և Անգեղոս Պելխսելոս աթենացւոյն, թվին Հայոց մեծաց ՌՂԱ։

Ո՞վ են այս երկու օտարանուն և օտարաքաղաքացի անձինք, որ Անկիւրացւոյն օգնական և օգտակար եղան այս ձեռնարկութեան. — ի յիշատակարանէն մասամբ կը յայտնուի. մինչ ազգային չըլլալնին անտարակոյս է. կարելի է, մանաւանդ երկրորդն, որ Ցոյնք ալ ըլլային, որ իբրև ղազզակիցս մեր, և աւելի բազմաթիւ գաղթականութիւն ունէին և ունին ցարդ ի Վենետիկ, և ուր ինչուան վերջի տարիներս կը տպագրուէին իրենց եկեղեցական գրեանք, և մաքուր և անսխալ տպագրութեամբ կը տարածուէին յարևելս։ Ի սկիզբն Անկիւրացւոյն այս հրատարակութեան դրուած է Դաւթի մարգարէի պատկեր մը՝ ընտիր պղնձի փորագրութեամբ, քաղաքին իշխանագլուխ տոժերու զգեստով ու փռիւգական գլխարկով։ Նոյնպիսի ընտիր փորագրութեամբ Բաբելոնի հնոցին մէջ ձգուած երից մանկանց դէպքին նկարագիրը, ի հանդիպոյ անոնց Օրհնութեան. և սրբոյ կուսին այցելութեանն առ Եղիսաբեթ, ի հանդիպոյ Մեծացուսցէ օրհնաբանութեան. Մանասէի՝ որոյ շղթաները քակել կու տայ Նաբուգոդոնոսոր. և նախ քան զՀաւատով խոստովանիմ աղօթս Շնորհալւոյ՝ նոյն սուրբ հայրապետին

Digitized by Google

պատկերը, միանձին տարազու, փիլոն արկեալ զանձամբ, վեղար ի գլուխն որ փիլոնին հետ կարուած է. ցուպ անշուք ի ձեռին, ուրարազգեստ: Թերեւս հրատարակողի ժամանակ Միաբանողաց և կամ ճգնաւորաց ձեն էր զոր կը զգենուին, և որով կը ներկայացընէ զսուրբ կաթուղիկոսն:

Ի մէջ միակ և գլխաւոր յիշատակարան մի, որոյ մէկ կարեւոր մասն արդէն յառաջ բերինք. և մնացածը հոս. Հռովմէն ըլլելով, « եկեալ հասա, կ՚ըսէ, ի վենետիկ. սկսա ի գործ անկանել: — Զոր և նկարեցաւ տպագրական երգարանս Դաւթի ի թըւականիս Հայոց ՌՂԱ:՟ Ի ժամանակս իշխանաց իշխանի պայծառազոյն փրանկլսկոս Էրիցո դուքին. մեծաւորաց հրամանաւ և քրիլլ լճով ձեռամբ իմոյ նուաստ անկիւրացի թարգմանիչ Յօհաննէսին, որ Ճուաննի Մօլինօ, ի լաւ և յընտիր աւրինակէ Կ.անեցոյ և յայլ ընտիր վարդապետաց և մկայեալ օրինակէ. քննութեամբ և վերակացու և հաստլեալ տպագրեցաւ զսուրբ գիրքս առ ի պայծառութիւն մանկանց եկեղեցո ազգիս Հայոց:

« Դարձեալ աղաչեմք զձեզ որ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զնուաստ անկիւրացի Յօհաննէս, որ պատճառ եղէ թէ գրին և թէ տպագրելոյն. և զպատուական այրն Յովէփոս Արօմաթօրիօն՝ որ ոսկով և արծաթով օգնեաց ինձ: Եւ զծնաւղն իմ, զփոխեալն ի Քրիստոս՝ զՄուրատ տարկաւագն, և զմայրն իմ զՓաշամելքն, և զերկոււ որդիսն իմ զՄիքայէլն և զԳաբրիէլն. և զայլն ամենայն արեան մերձօրս իմ. և դուք ընկալջիք զնոյն:

« Դարձեալ ծանիք զի ամենայն ինչ սորա ընտրութեամբ մողովեցի. եթէ ձև գրերուն, եթէ զչար տողերուն, եթէ զթանաքն եթէ ըղթուխթն, թէ զկանոնքն. և եթէ ծաղկագրերն եթէ զպատկերքն և եթէ զկազմն. մանաւանդ զյաւրինակն. որ բազում քննութեամբ և բա-

Digitized by Google

զուր աշխատութեամբ ի յայս չափս հասուցի աղաւթիւք ձերովք. և դուք որպէս վայելէ ձեր սրբութեանդ՝ այնպէս ընդունիք։

« Եւ այլ յիշեցէք զաղայահասակ մանուկն զՅոլսե֊փոսն, որ աւգնութիւն արար ինձ ի չարելն գրին. և է՝ երկոտասանամեայ մանուկ. զոր տէր Աստուած զինքն ամփոփ պահէ ի վերայ երկրի. ամէն։

« Դարձեալ աղաչեմ յիշել զՏարանդացի մահտեսի Աստուածատուրն, որ բազում օգնութիւն արար ինձ ի սրբագրելն և յատուգաբանելն. զոր տէր Աստուած տացէ զփոխարէնն աստ և ի հանդերձեալն. ամէն։ Ի տպա֊գրատան Սալիգաղաւ։ Վերջ »։ — Տպարանին անունն ալ յունական ձև մը ունի, որպէս և հօլովումը։

* * *

Նոյն Անկիւրացին հետևեալ 1643 տարւոյն ուրիշ հրատարակութիւն մ՚ ալ ըրած է ի նոյն քաղաքն Վե֊նետիկ. զնախկին տպագրութիւն Յիսուս որդի և այլ ուրիշ քանի մի չափական քերթուածոց Շնորհալւոյն. աւելի ընտրելագոյն տպիւք, մանրագոյն երկաթեայ տառիւք և զանազան պատկերներով. յորոց ի միումն կը տեսնենք դարձեալ զհայրապետն հեղինակ ի ձև միանձին և բոկոտն, խոնարհեալ ի ծունկս առաջի սրբոյ Երրոր֊դութեան։ փոքրիկ ութածալ հատոր մի, յորում ամփո֊փին, ինչպէս ըսինք, բաց ի Յիսուս որդի գրոց, Մաւեր քերբուշածք և Վիրպասանուրբիշն նոյն սուրբ հօր։

Հետաքննութեան արժանաւոր է և յայսմ տպագրի զետեղուած միակ յիշատակարանն ի վերջ գրոցն, յորում կը յիշատակէ իր յարատեւակ փոյթն և ջանք ի յա֊ռաջադիմութիւն և ի բարգաւաճանս տպագրական ա֊րուեստիս. և յորում կը յիշուի Սրապիոն կաթուղիկոս Հայոց, խրախուսիչ և յորդորող, նման իր նախորդին

Միքայէլի որ պատճառ եղաւ արգարեան տպագրութեանց։ Սոյն այս Սրապիոն հայրապետ, որոյ ուսումնասէր փոյթն ու եռանդը, գոլութեամբ կը յիշատակեն իր ժամանակակիցք, մեծ փափաք ունէր տպագրութեան արուեստիս, կ՚ըսէ Անկիւրացին իր այս յիշատակարանին մէջ, « և ոչ եղև հասու ». անշուշտ անձամբ աշխատելով ու չյաջողելով ի նոյն. ուստի պատուիրեց իր աշակերտին, Գրիգորի կեսարիոյ բաքունապետի. յոյս և վստահութիւն ունենալով թէ նա կարող ըլլայ ի գլուխ հանել. « և նա եւս ոչ կարողացաւ։ » Այն ատեն, կ՚ըսէ, ինձ յանձնեց զայդ գործ. և պատճառ այն յանձնարարութեան, որովհետև Անկիւրացին ծանօթութիւն ունէր Եւրոպացւոց հետ, « եթէ կարդալով և եթէ լեզուաւ »։ Չխուսափելով յաշխատանաց և ի նեղութենէ, և դժուարութեանց առջև չլքանելով, Անկիւրացին ինչպէս տեսանք, հասաւ իր նպատակին. « Յանձին կալեալ, կ՚ըսէ, ջանացի աղօթիւք նոցա։ Ջուր և պարգեւատուն ամենեցուն Քրիստոս պարգևեաց ի ձեռին իմոյ զայսչափն. առ ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ ի տանս Հայոց. Ջուր և հասի յաւարտ ըստ ձերում աղօթիւք. Իսկ եթէ նուազութիւն գտանէք՝ ներեցէք իմում պակասութեանս. զի կար մեր այս էր։ Արդ եղև կատարումն և աւարտումն երգոյս Տեառն Ներսիսի Հայոց կաթուղիկոսին, զոր անուանեալ կոչի Յիսուս որդի. ի լաւ և ընտիր յաւրինակէ սաւգաբանելով. ի թվականիս հայոց հազար և ՂԲ. ի հայրապետութեան Հայոց Տեառն Փիլիպպոսի սրբազան կաթուղիկոսի. Ի վայելուչ և ի գեղեցկաշէն կղզիս Վանատկոյ. Եւ յիշխանութեան նոյն քաղաքի Փրանկէսկոս Երիցու պուճի. և մեծամեծաց հրամանաւ և բրիլիլէճով։

« Դարձեալ աղաչեմ զձեզ որ հանդիպիք սմայ կարդալով և կամ օրինակելով, Յիշեցէք ի Քրիստոս զնուաստյոգի Յոհաննէս անկիւրեցի. և զծնողսն իմ զՄուրատ սարկաւագն և զփաշամելիքն. և զղեռաքոյս զաւակքն իմ

զՄիքայէլն և զԳաբրիէլն և զայլ ամենայն մերձաւորսն իմ… Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զբժիշկապետսն զՅօվսէփոս Արօմաթօրիօն և զԱնքեղոս Բէլխսէլոն որք ձեռնտու եղեն ինձ ծախիւք և ընչիւք։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏարանտացի մահտեսի Աստուածատուրն որ օգնութիւն արար ինձ ի սրբագրելն. այլ և զօրինակն շնորհեաց ինձ. զոր Տէր Աստուածն մեր տացէ զփոխարէնն աստ և ի հանդերձեալն. ամէն։ Կատարեցաւ գիրք. Բ. նախ Սաղմոս և ապա Յիսուս որդի։ — Ի տպագրատանն Սալիգաթաու։

Ընթերցողը կը տեսնէ որ ինչպէս նոյն է տպարանն՝ յորում դրոշմեցաւ Սաղմոսարանն, նոյն են և երկու յիշատակեալ ընկերակիցք և օժանդակք, յորոց միոյն բըժշկապետ մակդիրն կ'ընծայուի. նոյն և ի սրբագրութեան գրոցն իրեն ձեռնտու՝ Աստուածատուր Տարենտացի, որ բանիմաց և բանասէր ոմն թուի։

Այսչափ է մեր տեղեկութիւնը Յովհաննու Անկիւրացւոյն և իր տպագրական գործունէութեան վրայ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՅԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՔԱՂԱՔՍ ԵՒՐՈՊԻՈՅ

Ջուղայի տպագրութեանց, և այն նպատակաւ Կեսարացի Խաչատուր վարդապետին ջանից վրայ խօսելու ատեն, յիշեցինք թէ ոժգոհ և անբաւական՝ իւր ձեռքով եղած արուեստին անկատարութիւնը տեսնելով, մտածեց անձինք ղրկել յԵւրոպա՝ անոր ուսումնասիրութեան պարապելու, և անանկով յառաջացընելու զայն։ Յիշատակագիրն, ինչպէս տեսանք, հասկըցուց մեզ, թէ այդ վախճանաւ՝ Յովհաննէս անունով վարդապետ մը կը ղրկէ յԵւրոպա։ Թաւէռնիէ գաղղիացի ծանօթ ճանապարհորդին

գրուածոց մէջ՝ նման յիշատակութեան մը կը հանդիպինք. Յովհաննէս Յակոբ (Jean–Jacques) Ջուղայեցւոյ մը, որ 1641ին մեքենական արուեստի մէջ իր արդէն ունեցած հմտութիւնը կատարելագործելու համար կը ճանապարհորդէ յԵւրոպա. ուր տպագրութեան արուեստին ալ տեղեկանալով՝ կը դառնայ ի Սպահան, և հոն տպագրատուն մը բանալով կը հրատարակէ Պօղոսի թղթերը. Թաւէռնիէ կ՚ըսէ թէ արքունի ատաղձագործաց գլխաւորն էր նա. (Chef des menuisiers du roi des Perses). Զենք գիտեր թէ գաղղիացւոյն յիշատակած այս անձը՝ նո՞յն է ընդ Յովհաննու յղելոյ ի Խաչատրոյ. ժամանակն և նպատակի նմանութիւն՝ հաւանականաբար կը թուին նոյնացընել:

Արդ սա այս Յովհաննէս վարդապետս կը շրջի ընդ Եւրոպա, կամ մանաւանդ ընդ Իտալիա. կ՚անցնի ի Վենետիկ և ի Հռովմ, ապա ի Լիվոռնոյ. և ըստ կարի հմտանալով արուեստին՝ այս վերջին քաղաքին մէջ, Սաղմոսաց գիրք մը կը հրատարակէ, փոքրադիր հատոր մը, այսպիսի ճակատ գնելով. «Գիրք և Սաղմոսք Դաւթի, որ և Սաղմոսարան կոչի: Տպագրեալ եղև ի հայրապետութեան Հայոց Տէր Փիլիպպոսի Սրբազան կաթուղիկոսի. Հրամանաւ և կամօք երջանիկ Խաչատուր վարդապետին Կեսարացւոյ. Ջեռամբ և Հոգացողութեամբ Նուաստ Յովհաննէս վարդապետի Ջուղացոյ, յիւրում տպարանի, զոր կայացոյց յԻտալիա: Ի վայելուչ Քաղաքն եւ ի Նաւահանգիստն ի Լիվոռնոյ. ի Թվ. ՌՂԳ. Յօժարութեամբ վերակացուաց»: Այս ճակատ տպագրուած է կարմրաներկ և սեաւ տառիւք: Անմիջապէս ի միւս էջն յետ ճակատուն՝ ռափորաձեւ զարդ մը կարմրաներկ, և ի վերայ՝ սպիտակագոյն երկաթագիր տառիւք, «Յիսուսի Քրիստոսի ծառայ Յովհաննէս Ջուղացի. շնորհօքն Աստուծոյ վարդապետ և սպասաւոր սուրբ Էջմիածնի որ ի Թվ. ՌՁԸ»: Իսկ ի հանդիպոյ, «Առ երջանիկ Տէրն

Digitized by Google

իմ՝ Տէր խաչատուր թաքուհեաց Պետն. ի նուաստ Յովհաննիսէ Ջուղացւո Բանի Սպասաւորէ ։

» Արդ ըստ հրամանի և ըստ կամաց սուրբ Հօրդ իմոյ մեծի և երջանկագունի, և նախախնամութեամբ Տեառն որ ի Թվ. ՌՋԻԸ բաժանեալ ի սուրբ ուխտէդ, դիմեցի յարևմուտս սակս լրութեան տպագրութեանս. և ի տպա-ռուածս ամի միոյ, որ ընդ ծով և ընդ ցամաք, հասի յիտալիա, ի գեղազարդ քաղաքն ի վենետիկ. և մե-բահաստ եղեալ գործառնութեանցս, ընթացայ ի Հռոմ. և անդ սկիզբն արարի նորագոյն գրոց և տպոց. և աւար-տեալ մասն ինչ ի գործոցս՝ առի պարհեստաւորս և դիմեցի ի Լիվոռնոյ. և անդ գտեղի կալեալ՝ մեծաւ ջանիւ և բարի դիտաւորութեամբ, զտիւ և զգիշեր անդադար աշ-խատելով՝ լրումն տուաք տպագրութեանս. յերկարելով յաշխատութիւնս՝ բաց ի ճանապարհէն, Գ ամ և Դ ամիս, անմխիթար յամենայն կողմանց ։ Եւ շնորհօք ամենա-զօրին Աստուծոյ, և աղօթիւք Տեառնդ իմոյ աւարտեցաք զտպագրութիւնս անթերի. և անպակաս կատարելութեամբ. որք են տիպք զանազանք՝ ըստ զանազան որակութեան և քանակութեան, մեծք և փոքրք՝ ութիւք որոշեալք, ընդ որոց է և նիւթ երգոց և շարականաց. և այլ գործիք բազումք զարդարիչք տպագրութեանս. որով ամենայն ինչ կարելի է տպել. յորոց իբր միջին կերպ է այս, զոր տեսանէ Տէրդ իմ ի ներկայս, զոր իբրև զպտուղ հնազանդութեան՝ մատուցանեմ Տեառնդ իմոյ զերա-խայրի գործոցս. որով կարիցէ Տէրդ իմ ճանաչել զկա-տարելութիւն գործոցս՝ և զհաւատարմութիւն ծառայի քոյ. զի ոչ կորուսաք զժամանակն մեր ունայնաբար, որպէս կարծեն այլք ։ Իսկ վասն սակաւութեանցն ներեա երկարամտութեամբ. զի իբրև զփորձ տպեցաք զսա յայմ շտապմամբ, վասն անմխիթար նեղութեանցս. զի յաւուրս Ջ աւարտեցաք զսա Ռ և Ծ հատ թուով ի միասին, միայն և առանց ուրուք ձեռնտուի ։ վասն որոյ ըն-

դունելի լիցին Տեառնդ իմոյ, վաստակ ծառայի քոյ, իբրև գնուէր անձնանուէր. վասն զի մտեալ որպէս ի պատերազմ, իբրև արեամբ ստացայ զսա։ Ողջ լեր։ Ի Լիվոռնայ, Թվ. ՌՂԳ. մայիս Ժ։ Իսկ ի վերջ տաղմոսարանին՝ միւս այլ սափորաձեւ զարդ, և վրան գրուած նեւանների բոլորագրով. «Շնորհօք ամենազօրին Աստուծոյ ա՛րդ կայացաւ տպագրութիւնս։ Ձեռամբ Յովհաննէս վարդապետին»։

Այլ ընդարձակ յիշատակարան պատմական. «Ա՛ռ բարեպաշտաւէր անձինս ընթերցողաց, վասն մշտնջենաւոր յիշատակի. Շնորհօք ամենազօրին Աստուծոյ և նախախնամութեամբ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ի թվին ՌՂ և Ը ի դեկտեմբերի ամսոյ ի մէկն. Ես նուաստ ծառայ Յիսուսի Քրիստոսի Յովհաննէս Ջուղացի՝ Սպասաւոր բանի. Հրամանաւ երջանիկ հոգևոր հօրն իմոյ Խաչատուր վարդապետին կեսարացւոյ. Ելեալ ի Սպահանու դիմեցի յարևմուտս յերկիրն Իտալացոց՝ սակս լրման և կատարելութեան գործոյ տպագրութեանս. զոր արդէն եւս ձեռնարկեալ էաք։ Զի ի սպառուածս տարւոյ միոյ հասեալ ի պայծառ և ի գեղազարդ քաղաքն և Նաւահանգիստն ի Վենետիկ, ուր ընթացեալ ի տպարանս գրոց բազում ջանիւք հոգ տարեալ վերահասու եղէ կործառնութեանս. և վասն առաւել պակասութեան մերոյ տպագրութեան, ի մի եղի և խորհեցայ նորագոյն գիրք և տիպք կայացուցանել, որպէս զի ևս գեղեցկագոյնք լիցին գործք տպագրութեան մերոյ։ Այլ զի ի Վենետիկ ոչ գոյին արհեստաւորք պատշաճք այսմ գործոյ, դիմեցի ի Հռոմ. ուր սկիզբն արարաք գործառնութեանս. և մասն ինչ ի գործոյս անդ ի Հռոմ աւարտեցաք։ Եւ ապա անտի ընթացաք ի վայելուչ նաւահանգիստն ի Լիւոռնայ. ընդ մեզ ածելով և զարհեստաւորս. ուր զետեղեալք բազում ջանիւք և հոգացողութեամբ զուն գործեալ աւարտեցաք յառաջարկեալ զոր-

ծառնութիւնն մեր, ի ցայգ և ի ցորեկ մահու չափ աշխատելով՝ միայն և առանց ուրուք օգնականի յերկարեալ յաշխատութիւնս Գ ամ և հինգ ամիս ողջոյն. Բայց ի մի ամոյն զոր անցուցաք ի ճանապարհին. զանց առնելով զվիշտս և զտառապանս՝ զոր յայսքան ժամանակս կրեցաք ի հակառակասիրացն, և յոչ կամողացն զբարեգոյն գործս. որք փոխանակ օժանդակութեանն՝ զոր պարտէին, զիմարանեալ հակառակէին մշտաբար, բանիւք, գործովք և արգելմամբք. և զառաջարկեալ գործն մեր խափանել ջանային: Սակայն Աստուածն ամենահայեաց՝ ոչ հաճեցաւ ի խորհուրդս նոցա և ոչ արար ըստ կամաց նոցա, այլ օգնեաց ինձ աջովմամբ՝ միշտ և ամենայն ուրեք, տալով շնորհս առաջի ամենեցուն. և մեք եւս ոչ դադարէաք և ոչ թուլանայաք ի գործառնութեանցս. և ոչ ինչ էր փոյթ մեզ հակառակութիւնք նոցա, վասն յուսոյն իմոյ որ առ Աստուած. այլ ապաւինեալ ի զօրութիւնս տեառն ի կատարումն գործոյս հասանել փութայի, յիշելով զբանն Պօղոսի որ ասէ. Եթէ աստուած ի մեր կոյս իցէ, ո՞վ իցէ մեզ հակառակ. որպէս և եղեւն իսկ: Եւ շնորհօք ամենազօրին Աստուծոյ, և ձեռնտուութեամբ վաճառականաց ոմանց բարեպաշտից, աւարտեալ կատարեցաք զյառաջարկեալ գործ տպագրութեանս անթերի և յոյժ կատարեալ, քանակութեամբ և որակութեամբ զանազանեալ. յորոց մինն և իբր միջին կերպ է այս զոր տեսանէք յառաջիկայդ: Զոր յաղագս տեսութեան և փորձառնութեան գործոյս տպեցաք զսաղմոսարանս և աւարտեցաք զսա յամին որ ի ծննդենէն Քրիստոսի ՌՈ և Դ. ի հայրապետութեան Հայոց Տէր Փիլիպպոսի սրբազան կաթուղիկոսի. և ի թագաւորութեան Պարսից փոքր Շահ Աբասին նորընծայ թագաւորին. և ի թվին որ ըստ Հայոց ՌՂ և Գ. ի մայիսի ամսոյ ի տասն, ի Լիվօռնոյ. ի յեշատակ մշտնջենաւոր և ի փառս Քրիստոսի: — Արդ եթէ հաճոյ թուեսցի բարեպաշտութեան ձերում, շնորհք Տեառն է,

Digitized by Google

զՏէառնէ զոհացարուք. և եթէ ո՞չ ներեցէք իմում տկարութեանս, և երկայնամիտ լերուք ընդ գործառնութիւնս. զի իբրև փորձ տպեցաք զսա անհոգաբար և յոյժ ըշտապմամբ սակս բազում նեղութեանց և անմխիթարութեանց, զոր կրէի միշտ վասն միայնութեան և պանդխտութեան իմոյ։ — Վասն որոյ աղաչեմ զձեզ զամենեսեան որ հանդ(իպ)իք սմա, ստանալով զսա, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զվերոյասացեալզերջանիկ զխաչատուր վարդապետն. և զձեռնատու բարեպաշտասէր վաճառականսն, և զիս զնուաստ զՅովհաննէս Ջուղացի սպասաւոր բանի, որ բազում աշխատանօք յայտաբերեցի զտիպս և զտպագրութիւնս. և զբարեպաշտ ծնողս իմ, զհայրն իմ զհանգուցեալ մահդասի Եղիզարն, և զմայրն իմ զԱնամէլիքն. և զամենայն արեան մերձաւորս իմ զհոգեւորս և զմարմնաւորս. զկենդանիս և զհանգուցեալս. որպէս զի և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։ Հայր մեր։ Վերջն է գրոյս »։

Այս յիշատակարաններն իրենց ամբողջութեամբ մէջ բերելնուս պատճառն յայտնի է. այլևայլ հանգամանք իրաց կը նշանակուին անոնց մէջ որ ազգային տպագրական պատմութեան տեսակէտով ունին իրենց հետաքրքրական կարևորութիւնը։ Նախ, թէ ո՛րչափ դժուարին եղած է Յովհաննու՝ իրեն յանձնուած գործը ի կատար հասցընել. և թէ քանի՛ դժուարութեանց և հակառակութեանց հանդիպեր է, որոց՝ ինչպէս ինքն կը համարի, յաջողեր է յաղթել. թէպէտ և արդիւնքն զայն չի ցուցըներ. որովհետև և այնչափ իրարմէ զանազանեալ տառեր և կաղապարք չինել տուեր է շատ ծախքով, և միայն մէկ տեսակը իր վարդապետին և ընթերցողաց կը ներկայացընէ, առ ի հաւատարիմ առնել, ինչպէս կ՚ըսէ, թէ այլոց ենթադրածին կամ կասկածանաց համեմատ ժամանակը անօգուտ կերպով վատնած չէ. ուր մեզ ան-

ծանօթ կը միայ թէ այնչափ ծախք և կազմած ի՜նչ բանի ծառայեր են, ի՜նչ եղեր են այն տառերն և կաղապարք. որովհետև սաղմոսարանովս կը լսէ նաև Յովհաննու Ջուղայեցւոյ տպագրական գործունէութիւնը և անունը. և հասած չէ առ մեզ յիշատակ մը թէ այնչափ խնամօք յերիւրուած և յղկուած տառք ղրկուեցա՞ն առ Խաչատուր վարդապետ, եթէ անհետացան, ուսումնասէր առաջարկողին և գործակցին աշխատանաց առջև նիւթական և բարոյական արգելք ելլելով: Քառասուն և աւելի տարիներէն ետքը, 1681ին կը սկսին միւսանգամ հրատարակութիւնք զրոց յԱմենափրկիչ վանս Ջուղայի, ինչպէս առեններին պիտի տեսնենք, բայց ոչ Յովհաննու վարդապետին տառերով և արուեստով: Մեծապէս արդիւնաւոր է նա և անմոռաց յիշատակութեան արժանաւոր իր անունը, ոչ լոկ բազմաքիրտն և բազմավաստակ ջանից պատճառաւ, այլ և արտադրած երկին՝ մասնաւորին արուեստական ազնուութեամբ, անվրէպ և գրեթէ անսխալ տպագրութեամբ, հաճոյատեսիլ ձևովք տառից, մաքրութեամբ և ընտրութեամբ ուրիշ ամէն հանգամանաց թղթոյ, պատկերաց և զարդուց:

*
* *

1675ին կղեմայ Գալանոսի երկասիրութեամբ՝ գիրք մի կը հրատարակուի ի Հռովմ հայ և լատին լեզուով ի տպարանի Հաւատատարածութեան ժողովոյն: Ծանօթ է բանասիրաց որ Թէատինեան ուխտէն իտալացի հայերէնագէտ կրօնաւոր մ՚ էր Գալանոս ի Սորրենտոյ քաղաքէ նէապոլսեան գաւառաց, և երկար տարիներ առաքելական քարոզչի անուամբ և պաշտամամբ շրջած յարևելս և առանձին ի Հայաստան: Այդ երկար ուղևորութեանց և ծանօթութեանց, զոր քիչ շատ ստացեր էր, արդիւնք են իր քանի մը գրուածներն մեր լեզուին և ազգին

նկատմամբ, և որոց մէջ ի կարգի տպագրութեան առաջին է հետևեալ խորագիրն կրող գիրքը. Քերական և Տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ. Grammaticæ et Logicæ Institutiones Linguæ Litteralis Armenicæ Armenis traditæ a D. Clementi Galano, զոր հայ և լատին ընծայականաւ կը նուիրէ Յովհաննէս վարդապետ Եղեսացի՝ արքեպիսկոպոսն Միջագետաց առ Նախագահ ծերանաւոր սրբոյ ժողովոյն: Նոյնպէս հայ և լատին լեզուով վկայութիւն կու տան գրքին կարևորութեան Խաչատուր պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսի, Պօղոս եպիսկոպոս Տեվրիկոյ, և Նիկող եպիսկոպոս Թորոսովիչ, միայն ի լատին տուեալ ի Հռոմէ ի թուին Հայոց 1092: Տարածման հաւատոյ ժողովոյն տպարանին մէջ արդէն ի գործածութեան հնաձև և խոշոր տառից տպագրութիւն մ'է, ինչպէս հինգ տարի առջը և շարունակաբար հետևեալ տարիներու մէջ ի նմին տպարանի և նոյն հեղինակին երկասիրած Միաբանութեան գրոց հայ և լատին երեք հատորք, և փոքրադիր հատոր մ'ալ միայն պատմական մասին նոյն գրոց:

Մենք հոս տպագրութեան պատմութեան առթիւ յիշեցինք այս գրուածքներն. մատենագրական տեսակէտով ուրիշ գրուածքի մէջ կ'ըլլայ անոնց յիշատակութիւն, ինչպէս նաև հեղինակին վարուց պատմութիւնը և ազգայնոց հետ վերաբերութիւնք, որ բաւական հետաքննականք են:

* * *

1660 թուականին Յիսուս որդի գրոց տպագրութիւն մը կը գտնենք ի Վենետիկ, իտալացւոյ մը ձեռքով, որ նոյն ժամանակին քաղաքին մէջ գտնուող հայ գաղթականութեան ծանօթ և մտերիմ կ'երևնայ:

Digitized by Google

Արդէն տասնեւօթն տարի յառաջագոյն, ինչպէս յիշեցինք վերագոյն, նոյն գրոց տպագրութիւն մի հրատարակուած էր ի Վենետիկ, Յովհաննու Անկիւրացւոյ ձեռքով։ Ազգին ընդհանրութեան ծանօթ և սիրելի գիրք մը, կ'երեւնայ թէ քիչ ատենի մէջ սպառելով, կրկին տպագրեր է զայն Պոլիս ոմն Իտալացի, Անկիւրացւոյն տպագրին վրայ, հետեւելով նմա յամենայնի, և ի նոյն իսկ շարայրութեան յիշատակարանին։ Ի սկիզբն գրոյն՝ գրուած է պատկեր մը, և որ ճակատի տեղ ալ կը ծառայէ։ Զունի բաց ի գրքին վերջը գրուած յիշատակարանէ՝ զոր մէջ պիտի բերենք, ուրիշ յիշատակարան. պատկեր մի միայն Յիսուսի, որ ունի ի ձեռին զգունդ աշխարհի, և ուրիշ մ' ալ ի մէջ գրոցն՝ վեղարաւոր վարդապետ մի յամպիոնի քարոզելով, և ազգային սարազու զգեստաւորուած խուռն ունկնդիրք։ Իսկ ի վախճանի հետեւեալ յիշատակարանը, կամ ինչպէս ինքն հրատարակողն կ'ըսէ «ծանուցում պայծառ ընթերցողացս. փառք... որ ետ կարողութիւն նուաստ և տառապեալ անձին իմոյ Ճուան Պատիստա՝ որ մականուամբ ասի Պոլիս, որ եմ ազգաւ լատինացի ի գեղեցկաշէն մայրաքաղաքէն Վանատիկոյ։ Զոր բազում ջանիւք և աշխատանօք հազիւ կարացի ի յանկ հանել զտպագրութեան արուեստն. Եւ ոչ ուստեք եղև ինձ օգնութիւն այսմ տպագրութեան արուեստիս այսօրիկ։ Ապաւինելով ի յոյսն ամենեցուն Քրիստոս. և ի շնորհաբաշխ Հոգին սուրբ Աստուած. բարեխօսութեամբ սրբոհոյ Աստուածածնին. և աղօթիւք սրբոյն Գրիգորի լուսաւորչին. և բարեխօսութեամբ ընտրեալ անօթոցն և առաքելոցն Պետրոսի և Պօղոսի եղի ի մտի զտպագրութեան արհեստն առ ի պայծառութիւն ազգին Հայոց։ Այլ և պատճառ աշխատանաց մերոց այս էր. որ բազում ժամանակաւ յառաջ ունէի սէր և բարեկամութիւն ընդ ազգին Հայոց. և յարաժամ ցանկայի տեսանել զշքեղաշուք իշխանն հայոց խոճա Սաֆրազն. Զոր ոչ կարացի

Digitized by Google

հաստանել ցանկութեան իմոյ. զոր փոխեալ է առ Աստուած. և զնորհաս որդին իւր զխոճայ Վարդանն առ Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ. Զոր և պարգևատուն ամենեցուն Քրիստոս պարգևեսցէ ի ձեռին իմոյ զայսչափին, առ ի պայծառութիւն տանն Հայոց. Այլ և խնդրեմ անմեղադիր լինել սակս անյարմարութեան. քանզի ամենևին ոչ գիտէի լեզու հայոց, և կամ գիր. և ոչ տեսեալ ի վարպետաց զայս տպագրութեան արհեստն. ըստ պարգևելոյն ամա ի Հոգոյն Սրբոյ այսքան յայս ածեալ երևեցուցի վասն օգտութեան ազգին Հայոց զոր և հասի յաւարտ ըստ ձեռում աղօթիւք. Եւ եթէ նուազութիւն գտանէք՝ ներեցէք խմում պակասութեանս, զի կար մեր այս էր. Այս եղև կատարումն և աւարտումն երգոցս տեառն Ներսեսի Հայոց կաթուղիկոսի զոր անուանեալ կոչի Յիսուս որդի, ի լաւ և յընտիր օրինակէ բազում քննութեամբ և սրբագրանելով. ի թուականութեանս Հայոց ՌՃ և Թ ի յամսեանն մայիսի... ի հայրապետութեան Հայոց հանուրց տեառն Տեառն Յակոբայ երիցս երանեալ երջանիկ հայրապետի ի վայելուչ եւ ի գեղեցկաշէն կղզիս Վանաստիկոյ. Եւ յիշխանութեան նոյն քաղաքի Տօմենիկոյ Գոնդարինի Դուճի և մեծամեծաց հրամանաւ և բրիլիլէճով: Դարձեալ աղաչեմ զձեզ որք հանդիպիք սմա կարդալով և կամ տեսանելով յիշեցէք ի Քրիստոս և մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ Ճուան Պապիստա Պոլիսին և ծնողացն իմոց. և դեռաբոյս զաւակացն իմոց և այլ ամենայն մերձաւորացն իմոց. և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ ամէն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս ջուղա՛եցի տէր Ստեփանոսի որդի Եաղուպ աղան որ նա եւս աշխատեցաւ ի սրբագրելն սորա: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զնորահաս մանուկն Ստեփանոս որ է ազգաւ հայ որ շատ աշխատեցաւ. և օգնութիւն արար այս արհեստիս ի սրբագրելն և ի շարելն և այլ ամենայն որպիսութեան սորա. մինչ

Digitized by Google

տէր Աստուած զինքն անփորձ պահեսցէ ամենայն չարէ. ամէն: կատարեցաւ գիրք Բ. Նախ Յիսուս որդի և ապայ Սաղմոս 'ի տպագրատան Պօլիսին »: Իսկ ի միւս էջն՝ կնքանշան տպագրողին. եղն մը, աղեղն և երեք աստեղանշանք:

Ինչպէս ի յիշատակարանիս կը նշանակուի, Պօղոս Սաղմոսարանն ալ հրատարակեց նոյն 1666 թուականին ի նոյն յիւրում տպարանի, այս խորագրով. « Գիրք եւ Սաղմոս որ և Սաղմոսարան կոչի: Տպագրեալ եղև ի գեղեցկաշէն մայրաքաղաք Վանատիկ ի տունն Պօլիսին. ի Թուականութեան Հայոց մեծաց ՌՃ և Թ ». և յետոյ ունի յիշատակարան նման ըստ բանիցն և շարագրութեան նախընթացին. ուստի և աւելորդ յառաջ բերել: Միայն ի վերջոյ կը յաւելու յիշել և « Թոխաթեցի Ղաստապաղշայենց Սահակ երէցն որ զօրինակն ետուր, և ի սրբագրելն շատ աշխատեցաւ. միթէ վարձահատոյցն ամենեցուն Քրիստոս տացէ զփոխարէնն իւրոց աշխատանացն. ամէն: » կը յիշուի դարձեալ. « Այլ և օրինակ սորա քննած և ստուգաբանած է ի բազում վարդապետաց. որոց գլուխ է ամէներջանիկ կեսարացի Խաչատուր քաջ րաբունապետն, որ էր վերատեսուչ քաղաքին Ջուղայոյ. և պետաց պետն Սիմէօն, որք են հանգուցեալ առ Քրիստոս. Միթէ Տէր Աստուած զիւրեանցն ընդ երկոտասան սուրբ վարդապետացն և առաջին սուրբ հայրապետացն պսակիցս արասցէ. ամէն: Արդ եթէ հաճոյ թուեսցի բարեպաշտութեան ձերում, շնորհք տեառն է և զտեառնէ գոհացարուք. Եւ եթէ ոչ՝ ներեցէք մերում անարժանութեանս. եւ երկայնամիտ լերուք. զի կարն մեր այսքան էր. վասն որոյ աղաչեմ զձեզ զամենեսեանդ որք հանդիպիք սմա ստանալով, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր. և վայելելով զսա՝ զվերոյասացեալ Սահակ երէցն, և զՍտեփաննոս որ բազում աշխատանօք յայտարերեցաք զայսքան. առ ի պայծառութիւն ազգիս մերոյ Հայոց: Տպագրեալ եղեւ ի տունն Պօլիսին. վերջ »:

Digitized by Google

*
* *

Տասնըութ տարուան ընդհատութիւն մը կը տեսնուի վենետական հայ տպագրութեանց (1660–1678), յետոյ միւսանգամ սկզբնաւորելու համար։ Այս ժամանակաւոր դադարման ատենն է՝ յորում ազգային տպագրական արուեստ կը սկսի և կը բարգաւաճի յԱմստերտամ Հոլանտիոյ։

Վասն զի 1660 թուին Յիսուս որդի գրոց Շնորհալւոյ երրորդ տպագրութիւն մը կ՚ըլլայ յԱմստերտամ, նախընծայ արգասիք հոն հաստատուած հայ տպագրատան։

Յակոբ կաթուղիկոս Էջմիածնի՝ իւր նախընթացից նման ուսումնասէր անձն, անոնց օրինակին ալ հետևող կը յանձնարարէ նախորդ Փիլիպպոս հայրապետի նոտար՝ Մատթէի Ծարեցւոյ, որ յԵւրոպա անցնելով՝ ջանադիր ըլլայ այդ բազմօգուտ արուեստին հմտանալ և հոն այլ ևայլ գրքեր հրատարակելու աշխատիլ. Մատթէոս Հայոց ՌՃԵ (1656) թուականին կ՚ելլէ ի Զմիւռնիոյ, և քառասուն օր ճանապարհորդելով ընդ ծով կը հասնի «ի գեղազարդ քաղաքն և ի նաւահանգիստն ի Վենետիկ»։ Տեսանք արդէն նախընթացաբար որ Վենետիկ քաղաքին մէջ եղան, և դեռ ևս կ՚ըլլային հայկական տպագրութիւնք. և նոյն իսկ 1660 տարւոյն մէջ, Մատթէոսի հոն ժամանելէն քանի մի տարի յետոյ, Շնորհալւոյ Յիսուս որդի գիրքը հրատարակուեցաւ։ Բայց Ծարեցի կ՚ըսէ, որ «ընթացեալ ի տպարանս գրոց բազում ջանիւք հող տարեալ. վերահասու եղէ գործառնութեանս. և զի ի Վենետիկ ոչ գոյին արհեստաւորք պատշաճք այսմ գործոյ»․ ուստի բռնադատեցաւ անկէ մեկնիլ. և որովհետև սաստիկ համաճարակ մահ կայր յայնմ ամի ի Հռոմ և այն պատճառաւ ճանապարհք գոցուած էին, ստիպուեցաւ տասնուչորս ամիս ուշանալ ի Վենետիկ։ Իսկ երբ մահը

դաղրելով՝ երթեւեկք ալ դիւրացան, Մատթէոս գնաց ի Հռովմ. բայց հոն ալ չյաջողեցաւ գտնել փնտռած ճարտար արուեստագէտքը. մանաւանդ որ ոմանք « բարեատեացք և հակառակասէրք գրգռեցին զմեծամեծս և զժողովս առ ի խափանել զայս գործ »: Եւ այնչափ զօրացան իրենց այս ընդդիմամարտութեան մէջ, որ հրաման հանել տուին թէ ոչ ոք յարհեստաւորաց քաղաքին « իշխեսցէ հանել զայս արհեստ և տալ ի ձեռս Հայոց. և որք անտրգնեալ արասցեն զայս գործ՝ ծածուկ և կամ յայտնի, պատիժ սաստիկ կրելոց են ի մէնջ եւս կամէին ահացուցանել »: Բայց Ծարեցին կ՚ըսէ, թէ հոգերնիս չէր այս իրենց որոշմունք. որ ութ ամիս դեգերելով բնակութեամբ, աղերսական խնդիրը իմացոյց ծիրանաւորաց ժողովոյն ու նաեւ քահանայապետին. սակայն չկրցաւ յաջողիլ: Վասն որոյ գնաց յԱմստերտամ Հոլանտիոյ, ուր գտաւ ուզած վարպետ արուեստաւորքը, ու գիշեր և ցերեկ աշխատելով չորս տարի և նոյնչափ ամիս, ու շատ նեղութիւնք և հակառակութիւններ կրելով, և ինչպէս զանզատանաց սահմանէն ալ անդին անցնելով կ՚ըսէ. « մանաւանդ մերային չազանց՝ ի սուտաձեւ կարգաւորաց և յաշխարհականաց թէ՛ ի Վնէտիկ և թէ աստ ի Մստրթամ, որք փոխանակ օժանդակութեանն զոր պարտն էին՝ դիմաքանեալ հակառակէին մշտաքար »: Ասոնք խօսքով, գործով և արդեամբք կ՚ուզէին խափանել իր օգտակար ձեռնարկը. և եթէ յօտարազգեաց բարեպաշտք ոմանք իրեն օգնութիւն մը ուզենային մատուցանել « զայն եւս յուսահատեցուցանէին և. տպաշաւել տային բարեգործութեանն »: Սակայն յայլոց գտած ձեռնտուութեամբ քաջալերուելով Ծարեցին, յազգայնոց տեսած հակառակութիւնը կ՚արհամարհէր. որով և զօրացած, երեք տեսակ տառից յաջողեցաւ տալ շինել. յորոց միջին և կամ երկրորդ տեսակաւ ձեռք զարկաւ տպագրել զՅիսուս որդի, յամի 1660, « իշխանութեան քաղաքիս Նորընձա փոխ-

չփայլին Վիլհալըմ Օրանժայ » ։ Ցոյժ սխալագիր տպա-
գրութիւն մ'է այս, թէպէտ և վայելուչ ըստ ձևոյ տա-
ռիցն, և մանաւանդ ըստ բազմաթիւ պատկերաց, որ
անուանի վան Սիքէմ փորագրողի գործերն են, ինչպէս
կը տեսնուի փակագրէ մը որ ամէն պատկերաց ներքև
դրուած է ։ Տպագրութեան այս անհարթութեան տեղեակ
է և հրատարակիչն, ուստի և կը խնդրէ « ներել պակա-
սութեան գրոցս, զի օրինակն մի էր և շարողք փրանկք
ոչ են տեղեակք զյոց մերոց և լեզուաց. և ես միայն և
տկար գոլով կու սրբագրէի հազիւ այսքան կարի ստէպ »։

Մատթէի ծնողքն էին հանգուցեալ ծարեցի Աւագ
ու մայրն Պէկիխան. եղբարքն Ղարիպխան, Վարդան,
Պալասան, Մանկասար, Հախնազար. ինք ալ արուեստա-
ծաղկող և նկարիչ։ Երբ գրքին շարումն հասաւ 38 թեր-
թին և տպագրեցան 28ն, նոտար Մատթէոս վախճա-
նեցաւ ի թուին ՌՃԺ ի 22 յունուարի. կենդանութեան
ատեն պատրաստելով գրքին վերջը դրուելիք յիշատա-
կարանն, և տեղնիտեղը պատմելով այս տպագրական
գործոյն համար իր գլխէն անցածները։ Նոյն ժա-
մանակին յԱմըսդերտամ գտնուեցաւ Ոսկան վարդապետ
Երևանեցւոյ Աւետիս եղբայրն, որ և Ծարեցւոյն ըն-
կերն էր ի տպագրութիւնս գրոց, և շահակից անոնց վա-
ճառմունէ յառաջ եկած արդեանց։ Մահուընէն ետքը
Մատթէի յիշատակարանը կը լրացընէ Աւետիս. « Ես,
կ'ըսէ, երևանեցի Ղըլըճեցն Ոսկան վարդապետի եղբայր
Աւետիսս որ յենկեր ի նորա դրամով այլ օգնութեամբ,
աստուած իշն (ինչ) որ վաստակ տայ մեր մէջն վաստակն
կիսոյ լինի. որ ժամ որ մեռաւ ես իբրև որբ տարակուսեալ
և պարապ մընացի ես և սահմանք և գործն և մշակն.
ամիս ժամանակ անցաւ սկսան նաւերն գնալ ի դէմ
արևելս ի քաղաքն Զըմըռնայ աթոռն սուրբ Պողիկար-
պոսի որ է յեօթանասնիցն. անճարութեանն մնացեալ
ԺԴ տետրն տպագրեցի վախելով այսպէս սրբագրեցի.

Digitized by Google

օրինակն եաւ մի կողմ՝ տպայգրածն մի կողմ. մին կու նայի օրինակն՝ մի ի տպայգրածն. յորժամ որ սղալ լինէր կու մեկնի այսպէս սրբագրեցի. մընացալ ԺԳ տետրն. ապայ ուսայ ըզսրբագրելն որ տաւրին է. Թվին ՌՃԺ մարտ ամին ԻԵ Սուրբ Աստուածածինն միչնորդ անելով »:

Աւետիս կը գրէ յիշատակարանս, անկեղծութեամբ խոստովանելով՝ թէ իր անունը դնելու պատճառ կամ արժանաւորութիւն մը չունէր. բայց հարկ սեպեց, որովհետև շատ աշխատանք ունէր գործոյն վրայ թէ՛ դրամով և թէ ուրիշ օգնութեամբ. որովհետև ուխտ դրեր եմ ցմահ աշխատել ըստ կարողութեանս վասն Էջմիածնի և ատենահաս սրբոյն Սարգսի. անանկ որ « եթէ ես չըլլայի, կ՚ըսէ, չեմ գիտեր թէ Ծարեցւոյն մահուընէն ետքը ո՞վ պիտի տիրանար գործարանին. որովհետև թողած պարտքը հազար մառչիլ էր՝ մինչ տպարանին գոյք՝ այլ գումարին կէսը չէին արժէր: Ասկէ վերջը Աստուածաշնչի տպագրութեան գրերը պիտի դուրս գան. տիրացուն (Մաթէոս) որ մեռաւ՝ դեռ քառասուն կամ վաթսուն գիր փորուած չէր. տակաւին երկու հարիւր քսան գրոց մարք պիտի փորագրուին, վարձքը տուողն ես եմ, և մինչ ի խաչվերաց, եթէ արուեստաւորը չի մեռնի, ամենայն տառից փորագրութիւնք պիտի աւարտին և դուրս գան »:

Ասկէ վերջ կը յանձնէ յիշել զինքն և իւր հանգուցեալ կողակիցն զՄարիամ տատն, զհայրն Թորոս, զմայրն Գուհարազիզ, զեղբայրն՝ զԱւագ, զՈսկան վարդապետ, և զմիւս վանականն եղբայրն զՅովհաննէս, զՄիրզախան, զքոյրն Ռուսինէ՝ և այլն. Նոյնպէս « զնորաբոյս վանականն » երևանեցի Սահմատինեան Պօղոսի որդի զԳրիգորն, որ յանձն առած պարտքը հատոյց, որով արդիւնաւորեցաւ յիշատակուիլ:

Յ՚ էջն 458 զհամառօտս կ՚ընթեռնումք. « Յիշեցէք

զիս մեղաւոր նօթար Մաթէոս յետնորդ, որ ձեռնտու եղէ նա որ Երեւանեցի Ղլիճեցն Աւետիսս որ յիշեալ լիցիք անեղին Քրիստոսի ամէն »։

Տարի մը յետոյ տպագրեց Աւետիս (1661) համառօտեալ Ժամագիրք մի, յիշատակարանաւս. « Տպեցաւ ժամու և պարզատումարի տետրս ի թուին հայոց ՌՃ և Ժ յերկրին Հօլանտայ, ի քաղաքն Ամսթերդամ ձեռամբ Աւետսին. աւարտեցաւ յօգոստոսի Ե. ի հայրապետութեան տեառն Յակոբայ սրբազան կաթողիկոսի լուսակառոյց սուրբ աթոռոյն Էջմիածնի։ Ով եղբարք, որք հանդիպիք սմա յիշեսջիք առ Քրիստոս զնօտար Մաթէոսն որ հանգուցեալ է, և զկնի որոյ ըզնուաստս և զանարժան Երեւանեցի Ղլիճենց Աւետիսն՝ զկրտսեր եղբայր Ոսկան վարդապետին »։

Յիշուած Յիսուսի որդի գրոց յիշատակարանին մէջ պատմուածը կ'ամբողջանայ 1661 տարւոյն տպագրուած Սաղմոսարանի յիշատակարանի խօսքերէն. որոյ՝ ինչպէս նաև յառաջաբանին գրողն է Կարապետ վարդապետ Անգրիանեցի. ուր կը յիշէ զԾարեցի Մատթէոս, Նօտար Փիլիպպոս կաթուղիկոսի, « որ բազում ջանիւք և երկամբք քանդակել ետ և նորակերտեաց զազնիւ և զպատուական գիրս այս, հրամանաւ և կամօք երիցս երանեալ կաթուղիկոսին Յակոբայ»։ Տառից օրինակն ու ձեւը տուեր էր Մովսէս վարդապետ։ Կը յանձնէ մասնաւորաբար զյիշատակութիւն վերոյիշեալ Աւետիսի Ղլիճենց, որուն հետև ինքն եղաւ, կ'ըսէ, պատճառ որ այս ազնուակերտ և ըղձալի տպագրարանս ընծայուի Էջմիածնի և սրբոյն Սարգսի Յուշոյ վանից։ Զի Ծարեցին վերջին հիւանդութեանը ժամանակ կոչել տուաւ զԱւետիս, և փոխ դրամ կ'ուզէր իրմէ եօթնհարիւր հնգետասան մառչիլ, որպէս զի պարտապանաց հատուցանէ. այն ստակով, կ'ըսէր, երկու հազար սաղմոսարան և հազար երկու հարիւր Յիսուսի որդի կը տըպագրենք, ու անոնց վաճառմանէն եղած շահը երկուքի

կը բաժնեմք. մէկն ինձ և միւսն քեզ։ Իսկ եթէ մեռնիմ, քոյ տեսչութեան ներքև կ՚ըլլայ տպարանը ու կը վճարես պարտքս և ինծի առած շահովը։ Աւետիս այս առաջարկութեան յանձնառութիւն չի ցուցուց. այլ եթէ տպարանդ կ՚ընծայես, ըսաւ, Էջմիածնի և սրբոյն Սարգսի, հետդ ընկեր կ՚ըլլամ, ու ստակը տալով քեզ, ցորչափ կենդանի եմ կ՚աշխատիմ ի տպարանի. և դրամիս արդիւնքը վերոյիշեալ սրբոյն անուանն կրող վանաց կը նուիրեմ. իսկ մահուընէս ետքը՝ բովանդակը։ Հաւանեցաւ Մատթէոս, և կտակաւ որոշեց որ իր մահուընէն ու երկուքին ալ պարտուց հատուցմանէն ետքը՝ տպագրատունն յանձնուի Էջմիածնի և սրբոյն Սարգսի մենաստանաց։ — Ինք յառաջ քան զաւարտումն տպագրութեան Յիսուսի որդի գրոց վախճանեցաւ. և զոր Աւետիս, ինչպէս տեսանք, լրացընելով, ձեռք զարկաւ նաև Սաղմոսի տպագրութեան։ Բայց ինք բոլորովին անծանօթ և անտեղեակ ըլլալով արուեստին, ընկեր առաւ զԿարապետ վարդապետ Անդրիանեցի, ու հաւասար ջանքով և աշխատանօք հասուցին յաւարտ։ Դրամի ալ կարօտութիւն քաշելով՝ ամստրացի խուստապաշխի որդի Մինաս անուն մէկէ մը ինն հարիւր մառչիլ փոխ ստակ վերուցին. որով հազար երկու հարիւր օրինակի Յիսուսի որդի գրոց կազմել տալով՝ Զմիւռնիոյ վրայէն նաւով ղրկեցին յարևելս։ Վերջին յիշատակարանով մ՚ ալ առանձինն կը յանձնեն յիշել զՋուղայեցի Շահրիման և զՅովհան Միրզենց, որոց տուած եօթնհարիւր մառչիլ պրամով կարող եղան երկու հազար և եօթնհարիւր սաղմոսարան տպագրել։ Իսկ տառից փորագրիչն էր Գունտիք Քրիստոֆլ, հանճարեղ հոլանտացի արուեստաւորն, «որ և բազմահնար ջանիւ կերպացոյց զպղղովլատեայ և զպղնձի տիպ տառից»։

Յետագայ տարին (1662) Աւետիս և Կարապետ հրատարակեցին մեծադիր ժամագիրք մը (ոչ ամենի) «Նորաշէն տառիւ, (ինչպէս կ՚ըսեն յ՚էջն 3), նոր մասեան

աստուածային պաշտաման. Թուով իբրև երեքհազար. գե-
րակին և ձեռնհաս և ամենեցուն ստանալի... Զոր
հաստատեալ եղեւ ի կենարանին Թուոյն ՌՈԿԲ յամ-
սեանն օգոստոսի ԺԱ. և Արամեան տոհմին Թուականու-
Թեան ՌՃԺԱին. յամսոյն մարգաց ի Ի... Ցաշխարհին
Ցռանկաց երկրին յՕլանդայ, ի քաղաքն յԱմստերդամ,
յիշխանութեան տեղւոյս Վիլէլհէլմուս փրինց փային. ի
տպարանս որ կոչի Սուրբ Էջմիածնի, և սիրելի վկային
իւրոյ սրբոյն Սարգսի զօրավարին. որ կառուցաւ ի նոյն
Մաթէոս սարկաւագէ, և ի ժամու վախճանին նուիրեցաւ
վերոգրեալ սրբարանացն: Գոյիւք և արդեամբք և հօ-
գացողութեամբ Ղլիճենց Աւետսին Երևանեցւոյ՝ որ է
վերակացու և Թարգման տպարանիս. և մատակարարող
և առաջնորդող ամենայն գործակալաց արուեստարա-
նիս »: Նոյն խօսքեր կը կրկնուին նաև ի յիշատակա-
րանին, յորում Աւետիսի եղբայրն Ոսկան վարդապետ
կը կոչուի « երկրորդ Թարգմանիչ Հայոց »:

Որչափ ալ մեծ ջանքով և եռանդեամբ հետամուտ
էր Աւետիս իր վրան առած ծանր և դժուարին գործոյն,
բայց իր առևտրական զբաղմունք և զանազան գործա-
նութիւնք՝ չէին ներեր որ յարակայութեամբն յԱմստերդամ
յառաջ վարէ զայն. ու կը բռնադատուէր ուրիշի մը յանձ-
նել: Հաւանական կ'երևնայ թէ այս ամեն հանգամանք
ծանուցանելով կաթուղիկոսին, խնդրած ըլլայ անձ մը
ցոյց տալ իրեն՝ որուն կարենայ յանձնել վստահութեամբ
գործ մը, որոյ համար այնչափ ծախք և աշխատանք եղած
էր: Կաթուղիկոսին և իր ժողովոյն ընտրութիւնը ամե-
նայրմար անձի մը վրայ ինկաւ, որ թէ՛ սիրող էր
արուեստին և գործոյն, և թէ Աւետիսի ամենամերձաւոր.
իր հարազատ եղբօր Ոսկան վարդապետին:

Ոսկան երկու տարուընէ ետք՝ հրամանաւ Յակոբ կա-
թուղիկոսի կը ճանապարհորդէ յարևմուտս. և նախ ի
Լիվոռնոյ քաղաք Տոսկանայի հանդիպելով Աւետիս եղ-

Digitized by Google

քօրը, որ կը դառնար ի Զմիւռնիա, անոր ձեռագրով տպարանը կ՚առնու ի Նմանէ, և իր աշակերտ Կարապետ վարդապետի կը գրէ յԱմստերտամ, որ մինչ իւր ժամանելը՝ ձեռքէն եկածին չափ յառաջ վարէ զգործ տպարանին։ Անդրիանեցին՝ որովհետև արդէն Շարականի տպագրութեան մը խորհուրդ և փափաք ունենալով՝ սկսած էր այդ ձեռնարկին կարևոր խազերու փորագրութիւնը, փութաց աւարտել զայնոսիկ. ու սաղմոսարանի տպագրութենէն ետքը՝ ձեռք զարկաւ նաև շարականին։ Երբ Ոսկան հասաւ յԱմստերտամ, մինչ ի կարգ Համբարձման հասուցեր էր Կարապետ. և շարունակեցին միաբան աշխատիլ. ի նմին ժամանակի պատրաստութիւն տեսնել Աստուածաշունչ գրոց տպագրութեան, զոր միտք ունէին հրատարակել։ Ուստի Ոսկան ետևէ եղաւ տալ քանդակել Աստուածաշունչի խորագրութեանց համար նօտրագիր տառեր, և փութով երեք ամսուան մէջ աւարտելով, փորձի համար շարագրել տուաւ ի Շարականի, սկսելով մարտիրոսաց կարգէն։

Ըսինք թէ Ոսկան վարդապետ ի Զմիւռնիոյ գրեց առ աշակերտն իւր, որ տպարանին գործը ըստ կարի յառաջ վարէ մինչև իւր ժամանումը յԱմստերտամ. և թէ նա բաց ի շարականէ՝ սաղմոսարան մ՚ ալ տպագրեց։ Այս վերջին գրոց մէկ պակասաւոր օրինակը հասած է ձեռընիս. որոյ ճակատը կը պակսի, և յիշատակարանէն կրնանք հետևեալ տեղեկութիւններն քաղել։ Քրիստոսի 1664 թուականին եղած է այդ տպագրութիւն. «Ներ տպարանում որ հաստատեալ եղև ի նախանշանակեալ Մատթէոսէ սարկաւագէ. յերկրիս Հօլլանտիու ի քաղաքիս յԱմսդէլօտամի. որ կոչի աշխարհ Ֆլամէնկի. սպասաւորութեամբ և սրբագրութեամբ անարհեստ և անիմաստ և անպիտան Կարապետի Անդրիանացւոյ և բանի սպասաւորի, աշակերտի մեծի րաբունապետի տեառն Ոսկանի Երևանեցւոյ»։

Digitized by Google

Ոսկան կը հասնի յԱմստերտամ, ու 1666ին սկիզբն կ՚առնու իր բուն տպագրական գործունէութիւնն։ Նախ ամենակարեւոր գրքի մը հրատարակութեան ձեռք կը զարնէ, որ թէպէտ փոքր քանակաւ՝ բայց ազգին նոյն միջոցի գտնուած գիրքին համար անհրաժեշտ և մեծապէս հարկաւոր գրքոյկ մը. այբուբենից ու Քրիստոնէական վարդապետութեան. և որոց ճակատը գրուած է. « Հանդերձ Աստուծով։ Գիրք այբուբենից յաղագս նորեկ տըղայոց՝ և մանկանց անկրթից. Նաև արանց դեռ եւս ոչ ուսելոց. որոց լիցի օժանդակ հասանիլ ի կատարումն կրթութեան. և ի վարժումն ճահապէս ընթերցողութեան։ Յօրինեալ ներտպարանում որբոյ Էջմիածնի. և սրբոյն Սարգսի զօրավարի։ Յամըսդերտամ քաղաքի։ Ի՛ ներթուում փրկչին 1666. իսկ Հայոց ՌՃԺԵ յունվարի Գ »։ Ջունի յիշատակարան, միայն ի վերջ քրիստոնէական վարդապետութեանն, զոր հրատարակիչն կ՚անուանէ « Յաղագս մանկանց առ ի կրթութիւն. և վարժումն ի կրօնս քրիստոնէութեան », հետևեալ քանի մի տողերը կան. « Շարայրեցաւ բանս հաւատոյ սակս վարժութեան տհասից. ի թուի Փրկչի 1666. իսկ ի մերումս թուոյ ՌՃԺԵ ամսեանն նոյեմբերի. որոյ էին աւուրք քսան եւհինգ։ յԱմստէրտամ քաղաքի, ի տպարանի սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի »։

Տառից ձեւք ընտիր, անվթար և անսխալ տպագրութիւնն. մէկէն կ՚իմացուէր թէ հըմուտ, կարող ու իր գործէն հասկըցող անձի մը կառավարութեան և տեսչութեան ներքոյ էր Ամստերտամի տպարանը։

Digitized by Google

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ Ի ՁԵՌՆ ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ *

Բայց առ այժմ կանգ առնունք վայրիկ մի նկատել թէ ո՛վ էր Ոսկան։

Առաքելի Դաւրիժեցւոյ պատմութեան գրոցը մէջ, զոր ինքն Ոսկան տպագրեց իւր Ամստերդամեան տպարանի մէջ, համառօտիւ նշանակուած կը գտնենք իր վարուց պատմութիւնն, շարագրեալ յիւրմէ և յեռեալ ի գիրս Դաւրիժեցւոյն։ Իր ծնողքն Երևանեցիք էին, վարեալք ի Շահաբասայ յԱսպահան, ուր ծնաւ և սնաւ Ոսկան։ Ուսումնասէր և եռանդուն, աշակերտեցաւ Խաչատրոյ վարդապետի կեսարացւոյ, ուսումնակից և աշակերտակից ունելով զՍիմէոն Ջուղայեցի. ապա Մովսէս կաթողիկոսին հետ երթալով յէջմիածին, դարձաւ միւսանգամ

* Այն ինչ արդէն տպագրած էինք Հայ. տպագրութեան պատմութեան Երկրորդ շրջանին մէջ Աբգարու տպած Սաղմոսին վրայ մեր ունեցած տեղեկութիւնքը, ընդունեցանք Արժանապատիւ Սահակ եպիսկոպոս Խապայեանէ նամակ մը, յորում հաճեր էր մանրամասնօրէն հաղորդել մեզ իւր ունեցած տեղեկութիւնքը նախ Աբգարու Սաղմոսին, և երկրորդ՝ Պարզատումարին նկատմամբ. այս վերջինս մենք յիշած եմք Առաջին շրջանին մէջ։ Մեր շնորհակալութիւնը ի փոխարէն իւր ազնիւ զգացմանն անչափ է, զոր չեմք դանդաղիր հրապարակաւ յայտնել առ նորին Սրբազնութիւնը։ Հոս կը դնեմք իւր գրած տեղեկութիւնքն ամբողջովին ի լրումն մեր յառաջագոյն գրածին։

« Աբգարի սաղմոսը, որոյ սկիզբը դժբաղդաբար պակաս է, թէպէտ և պակասած թերթերէն յետոյ կը սկսի “Յայնժամ խաւսեսցի ընդ նոսա բարկութեամբ իւրով„, որով յայտնի կ՚երևի, թէ պակասածը բուն Սաղմոսէն հազիւ մէկ, կամ երկու թերթ լինի. բայց երկու թերթ վերջը՝ Ցդ. էջին տակ դրուած Գ. 3 տառարահամարը ցոյց կու տայ, որ պակաս թերթերը պիտի լինին 22։ Սաղմոսէն զատ այդքան թերթերը ինչ կը պարունակէին, դուք աւելի լաւ կրնաք ստուգել Միլանոյ կատարեալ օրինակէն։ Վերջի յիշատակարանէն ալ մաս մի կը պակսի. “'Ի Թուականիս Հայոց ՌԺԵ. մայիս ԺԷ. աւրն ուրբաթ ԺԲ ժամու։ Առ ոտս Միլքիսեդեկ եպիսկոպոսին՝ 'ի մայրաքաղաքն 'ի Վանատիկ ընդ հովանեաւ սուրբ Մարկոս աւ„, միւս ինկած երեսին վերայ է շարունակութիւնը։ Յիշատակարանը սկիզբէն չ՚օրինակեցի։

Երկրորդ գտածս է “Պարզատումար„, որոյ մասին երևի դուք ընաւ տեղեկութիւն չ՚ունիք. կամ Ճէվահիրճեան Մաղաքիա դպիրը

Digitized by Google

յԱսպահան։ Իսկ երբ կաթուղիկոսական աթոռոյ վրայ բազմեցաւ Փիլիպպոս, իր քով յէջմիածին կանչեց զինքն։ Ի նոյն վանս կը գտնուէր յայնմ ժամանակի լատին վարդապետ մի կրօնաւոր յուխտէ Դոմինիկեանց, Պօղոս Փիրոմալլի կամ Միջեռնացի կոչուած, որ Ուրբանոս Ը քահանայապետին հրամանաւ դրկուած էր յարեւելս, որ տեղւոյն տարազու և ձեւով շրջելով ի Միջագետս, այլ ի Վասպուրական և ի գաւառս Արարատայ, ուսաւ նաև հայերէն լեզուն, ու Փիլիպպոս կաթուղիկոսի մարդաւէր բարեկամութեանն համբաւն առնլով՝ գնաց յէջմիածին, և պատիւ մեծարանաց և սիրալիր ընդունելութիւն գտաւ ի նմանէ։ Ընտանեցաւ Ոսկանայ հետ, և իրարու փոփոխակի կը սորվեցընէին զհայ և զլատին լեզու, և թարգմանութեանց կը պարապէին, թէպէտ և ոչ կատարեալ տեղեկութեամբ երկաքանչիւր լեզուաց. և երբեմն ինչուան ի հին նախնեաց առ մեզ հասած գրոց լեզուն

“պարզատումարն„ ու “տօնացոյց„ը իրար չփոթած է. և կամ “տօնացոյց„ը բոլորովին տարբեր է “պարզատումարէն„ որոյ չափն 14 1/3×10 սանտ. իւրաքանչիւր էջ 13 տող կը պարունակէ. դուռ չունի. բայց սկզբնաւորութիւնը որ առաջին թերթի Բ. իջէն կը սկսի անթերի կ'երևի։

ԹՎՆ Ռ. Ժ. Դ.

Բանալի առաջի գիրն ՌԷ

Բայց տօմարահամարները չորս թերթ պակաս ցոյց կու տան։ Ընդամենը ութն թղթեայ 13 տետրակ է. կարծեմ յիշատակարանէն վերջն ալ մէկ թերթ կը պակսի. որովհետև վերջին տետրը փոխանակ ութ՝ եօթն թերթ է, և ինձ կը թուի թէ յիշատակարանը պակաս կը մնայ։

“Աւրինակին թվականն ՌԺԴ էր — մեր չինած տարին նահանջի էր և թվին ՌԺԷ էր։ Վասն աւրինակին համար զհին թուականն դրեք, զի առաջի ամ էր և տանուտէրն 'ի վերան խոյն էր„ “կազմեցաւ պարզատումարս հայոց, 'ի լաւ և ընտիր աւրինակացն. Յովանէս արհի. եպիսկոպոսն ու Մինաս. Սարկաւագին 'ի մայրաքաղաքն Ըստամբաւլ՝ երկրորդի ամի թագաւորութեանն տաճկաց Սելիմին. 'ի հայրապետութիւնն հայոց Տէր Միքել կթղ. սին, առ ոտս նոր Յակոբ րապունայպետ Պատրիարքին, ձեռամբ անարժան Աբգարի. յիշեցէք 'ի մաքրափայլ աղաւթս ձեր զաշխատողքս որոց »։

Մեր Առաջին շրջանի մէջ գրած, պարզատումարի ամբողջական օրինակ մի կը գտնուի նաև Մոնազդյի մատենադարանին մէջ (ի Բոււիերայ), զոր տեսած է Գեր. Սուքիաս Վարդապետ Պարոնեան, ինչպէս գրեր էր մեզ։

Digitized by Google

տղուաղել կ՚իշխէին։ Փիլոմալ չորս տարի յէջմիածին կենալէն ետքը՝ յԵւրոպա և ի Հռոմ անցնելով՝ հետը տարաւ Աստուածաշունչ գրոց հայերէն ընտիր թարգմանութեան գրչագիր օրինակ մի. և լատինական Վուլկատայի հետ բաղդատելով, մինչ մերին թարգմանութիւն, ինչպէս քաջայայտ է, յԵօթանասնից եղած է, ուզեց զմերն ընդ լատինին համաձայնեցնել, սուրբ Ժողովոյն ծիրանաւորաց ներկայացոյց. փափաքելով որ տպագրութեան հրաման տրուի. բայց առաջարկութիւնն ընդունելի չեղաւ։ Իսկ երբ 1642ին քահանայապետական հրամանաւ և յանձնարարականաւ դարձաւ Փիլոմալ, խօսքն ընելով նորա հետ. ուստի և գլուխ գլխի տուած՝ նորոգ բաղդատութեամբ այլևայլ փոփոխութիւններ և ի նորոյ թարգմանութիւններ ըրին նոյն իրենց անհարազատ ոճով, ու խանգարելով նախնեաց վայելուչ և ընտիր ոճերն և դարձուածներն։ Այս օրինակն հետն առած Ոսկան եկաւ յարեւմուտս, ուրիշ գրոց հետ նաև Աստուածաշնչի տպագրութեան փափաք և նպատակ ունենալով։

Զմիւռնիայէն անցաւ ի Լիվոռնոյ, ուր արդէն հայազգի վաճառականաց բաւական բազմութիւն կար, և ուր յառաջագոյն հայ գրոց տպագրութիւնք եղած էին։ Երկար խօսեցաւ և ջանաց համոզել այն քաղաքի ազգայինները, որպէս զի նեցուկ և ձեռնտու ըլլան իրեն տպագրութեան ծախուց, բայց առանց կարենալու հասնիլ դիտած վախճանին. որովհետև ոչ ոք յանձնառու եղաւ օգնել իրեն։ Յուսահատելով անոնցմէ՝ գնաց ի Հռոմ. և հոն ալ չհանդիպեցաւ իր գործառնութեան նկատմամբ օգնականութիւն գտնելու մխիթարութեան, զանազան ներհական պատճառաց համար, ինչպէս կ՚ըսէ, «Թէ ի մերայնոց ազանց և թէ ինքեանց սահմանաց և կանոնաց»։ Ինչպէս յառաջ յիշեցինք, այլք ալ հանդիպեր էին նման դժուարութեանց, և բաց ի մերոց՝ նաև նա ինքն Փիլոմալլի, որ իբրեւ իտալացի՝ աւելի ընդունելութիւն և յաջողութիւն գտնելու կրնար յոյս ունենալ։

Digitized by Google

Ոսկան վերադառնալով ի Լիվոռնոյ, նմանօրինակ դժուարութեանց և հակառակութեանց հանդիպեցաւ. և եթէ իր առաջարկութեան յանձնառուք ալ գտնուէին, դրած պայմաննին այնչափ ծանր էր, որ Ոսկան չկարաց հետերնին համաձայնիլ. որովհետև, կ'ըսէ, « Ոչ զօգուտ ազգի և զսրբոյ աթոռոյն, այլ զանձանց զցանկութիւն և կամաց զհաճութիւնն կամէին լնուլ » ։ Վասն որոյ անոնցմէ զատուելով՝ միաբանեցաւ երեք Ջուղայեցոց հետ, Ստեփանոսի, Պետրոսի և Թէոդորոսի. « Աստուածասէրք և կորովիք այսոքիկ՝ հայելով ի նուազութիւն աստուածային կտակարանաց որ ի մէջ ազգիս Հայոց... ջերմեռանդ սիրով յօժարեալք յորդորեցին զմիմեանս, քաջալերելով և զիմս նուաստութիւն ». և որովհետև նիւթական օգնութեան կարօտութիւն ունէր, այդպիսի գործոյ մը սկզբնաւորութեան և յաջողելու համար, խոստացան առատապէս նպաստել իրեն ։

Համոզուեցաւ Ոսկան և հաւատաց տուած խոստմանց, և միաբանեցան դաշնադրական գիր ստորագրելով և կնքելով, որ երեքը միաբան պիտի հոգային ամէն ծախքերը, « Առ ի յօգուտ ազգիս և ի շահ սուրբ աթոռոյն » ։ Դաշնագրին պայմաններն էին, որ Ստեփանոս և Պետրոս կը խոստանան Աստուածաշունչ գրոց վաճառմանէն աւելցած շահը՝ Էջմիածնի նուիրել. իսկ Թէոդորոս՝ իրեն ինկած բաժնին շահուն կէսը Երուսաղեմի վանաց ընծայել խոստացաւ, միւս կէսն ալ Յուշոյ վանից սրբոյն Սարգսի ։ Ոսկան իրենցմէ այս խոստմունքն առնելով գնաց յԱմստերտամ, ու տպագրութեանց ձեռք զարկաւ իր եղբօր Աւետիսի խնամքով յօրինուած տառիւք. որովհետև Ծարեցւոյն տառք խոշորք էին և անյարմարք, և խորագրոց համար յատուկ տառք կը պակսէին, իր դրամօք նոր գրեր ալ շինել տուաւ. և այսպէս յաջողեցաւ տպագրել բովանդակ Աստուածաշունչ գիրքը՝ բազմածախ և երկիջեան պատկերազարդ, ընտիր տառիւք, այսպիսի

խորագրաւ ճակատու. « Աստուածաշունչ գրոց և Նորոց կտակարանաց ներպարունակող, շարակարգութեամբ նախնեացն մերոց և ճշմարտասիրաց Թարգմանչաց։ Իսկ ըզկնի հրամանաւ վեհափառին տեառն Յակոբայ Հայոց կաթուղիկոսի՝ գլխակարգեալ և տընատեալ ըստ դաղմատականացն, նաև զհամաձայնութիւն հանուրց գրոց աստուածաշնչից, ընդ իրեարս առընթեր կարգեալ ամենեցուն, նուաստի ումեմն բանի սպասաւորի Ոսկանի Երեւանեցւոյ։ Յ՚ Ամստերդամ, ներտպարանում սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրավարի, ի Թուում փրկչին 1666, իսկ Հայոց ՌՃԷ »։

Այսպէս Ոսկանայ և ընդհանրութեան ազգին փափաքն կատարուեցաւ, պատկերազարդ Աստուածաշունչ գրոց տպագրութեամբ, որ արդարև մեծ ձեռնարկ մ՚էր, և մտածողաց և ի գլուխ հանողաց իրենց դրամական օժանդակութեամբ, մեծ պարծանք մը։ Դժբաղդաբար ուրիշ յիշատակարան մը՝ գործը նոյն աղէկ գոյներով չի ներկայացներ. և եթէ ճըշմարիտ են իր խօսքերն, վաճառականաց առ Ոսկան ցոյց տուած առատամտութիւնն նիւթական շահէ զերծ չէր։ Այս գրուածքին հեղինակն է Թադէոս երէց Համազասպեան, որ ժամանակ մը Ոսկանայ ընկեր և ձեռնտու եղաւ, և յետոյ իրարմէ բաժնուեցան, ինչպէս քիչ մը յետոյ պիտի պատմենք. և այս բաժանման առիթն ու հետևանք գրի վրայ առաւ, խորագիր դնելով իր գրուածոյն, « Պատմութիւն Պետրոսի Աւագ Գոնսուլին Հայոց, և երկու ընկերացն՝ Քթռէչէնց Դեւզորոսին (Թէոդորոսին) և Խոնենց Ստեփանին »։ Յորում պատմելով Ոսկան վարդապետի այս երեք անձանց հետ դրած և կընքած պայմանագիրն՝ Աստուածաշունչ գրոց տըպագրութեան համար, կ՚ըսէ, թէ իրենց տուած խօսքին և պայմանին վրայ չկեցան. ուստի և վարդապետն նեղուած ի պարտատեարց՝ ստիպուեցաւ յայլուստ փոխառութիւն ընել, և Աստուածաշնչի տպագրութիւնն

աւարտելով, օրինակներն յանձներ է Թադէոս երիցու, որպէս զի փոխադրելով յարեւելս՝ անոնց վաճառմանն պարապի։ Համազասպեան յԱմսդերտամէ ի Լիվոռնոյ անցնելով, կը տեսնուի այդ վաճառականաց հետ ու կը հիւրընկալուի անոնցմէ. և ինչպէս ինքն կ՚ըսէ, բարե-մտութեամբն խաբուելով անոնց խօսքերէն, կը ստորագրէ ընկալագիր մի և կու տայ ձեռուընին։ Իսկ անոնք գիրքերն իրմէ առնլով՝ և արդէն իր ընկալագիրը ձեռու-ընին՝ դեռ ետ իրեն չյանձնուած դրամից, գրքերն կը փութան ղրկել ի Պոլիս և հոն հանել ի վաճառ։ Թադէոս որ կ՚իմանար այս նենգութիւնը՝ դատաստանի կը դիմէ. և վկայիւք հաստատելով իր իրաւունքը՝ կը բողոքէ իրեք վաճառականաց իրեն դէմ ըրած անիրաւութեան հա-մար։ Բայց չենք գիտեր թէ ի՛նչ առթիւ և ի՛նչ կեր-պով՝ փոխանակ փնտռած և ակնկալած արդարութիւնն ձեռք ձգելու՝ կը բանտուի ի Փլորենտիա, ուր երկար ամիսներ մնալով և նեղուելով՝ հազիւ ազատութիւնը կը գտնէ Հռովմայ քահանայապետին նուիրակին միջնոր-դութեամբ։ Բայց մենք կրկին առիթ պիտի ունենանք Համազասպեանի և իր Ոսկանայ հետ ունեցած վերա-բերութեանց վրայ խօսելու, ինչպէս նաև ի Վենետիկ ցուցած տպագրական գործունէութեան։ Պատմութիւնն, Ոսկան, և իր ժառանգք և յաջորդք խիստ լեզու կը բանեցընեն իրեն դէմ. որով և վերը յիշուած գրուածին և աւանդածին շատ տեղուանքը կը պարզուին և կը լուսաբանուին, և զԹադէոս ու իր գործն ու վարմունքը՝ չեն արդարացներ։ Առջի բերան ընկերանալով իրարու հետ, շահու տեսակէտով՝ չէ թէ միայն իրարմէ զատուեր են, այլ և իրարու հակառակամարտ երևցած. և Թադէոս զՈսկան արեւմտեայց աչքէն հանելու և զինք անպատե-ցուցնելու համար, թուի թէ անոր կրօնական կարծիքն ալ ուզած ըլլայ ամբաստանել, յիրս իրս անհամաձայ-նութիւնն ընդ արեւմտեայս, որով թէ քաղաքական և

թէ կրօնական իշխանութեանց առջև կասկածելի երևցնելով անոր ընթացքն ու գործը, մոլեռանդութիւն և զգուշութիւն հրաւիրել վրան։ Այս ենթադրութիւն գրեթէ բացայայտ ճշմարտութեան կերպարանք կ'առնու՝ երբ ի Մարսիլիա Գաղղիոյ՝ Ոսկանայ նախաձեռնութեամբ հաստատուած տպարանին պատմութիւնն ընենք։

Ոսկան դեռ չորս տարի (1666–1669) մնաց յԱմստերդամ, և բաց յԱստուածաշնչէ ամէն տարի քանի մը նոր հրատարակութիւնք ընծայեց, Քերականութիւն, Քրիստոնէական մը (1666), հետևեալ տարին մեծ ժամագրոց երկրորդ տպագրութիւն մի, Մաշտոց, և հայ–լատին Քրիստոնէական, յորոյ ի ճակատն Ոսկանայ անունն չի յիշատակուիր, և այս խորագիրն կը կրէ. «Վարդապետութիւն քրիստոնէական ըստ Հայոց. տպագրեալ առ Հռոմայեցիս, միջնորդութեամբ Կարապետի վարդապետի Անկիւրիանացւոյ և Թէոդորոսեան Պետրոսի Սիմպրի։ Ց' Ամստէլօտամ, ծախիւք և տպագրութեամբ Թարգմանողաց»։ Յետագայ տարւոյն մէջ ալ կը տպագրուին նոյնպէս յայնմ քաղաքի Աղօթագիրք, Նոր կտակարան, որոյ յիշատակարանն կ'ըսէ, թէ աւարտեցաւ այն «երկասիրութեամբ նուաստ Ոսկանի եպիսկոպոսի... ի տպարանի աշակերտին իմոյ Կարապետի բանի սպասաւորի... բայց իմովք գրովք, իսկ արդեամբք երկոցունց... բուն նախագաղափար լեալ է իմով ձեռամբ գծեալ Նոր կտակարան, զկնի Հեթմոյ Թագաւորի աստուածաշունչ սրբագրութեանն գաղափար»։ Նշանաւոր են այս յիշատակարանիս խօսքերն. որով տպարանն Ամստերդամի որ մինչև նոյն ժամանակ յատուկ ստացուած համարուած էր Ոսկանայ, վաւերական գրով ընդունելով զայն ի ձեռաց Աւետիսի, աստէն իր աշակերտ Կարապետ վարդապետի անուամբ կը նշանակուի. որով հաւանական կ'երևնայ թէ վարդապետը պարտական մնացած ըլլայ աշակերտին, և կամ ուրիշ որ և իցէ

Digitized by Google

պատճառաւ՝ որ մեզ անգիտելի կը մնայ, հարկ սեպած ըլլայ անոր վրայ պարձըննել։ Ոմանք կը յաւելուն, ինչպէս և ինքն Ոսկան զնոյն կ՚ակնարկէր, թէ իրեն խոստացուած կամ յուսացած դրամական օգնութիւնք, կամ առեններին չէին հասներ ձեռքը, կամ բոլորովին կը զլացուէին։ Սակայն անով հանդերձ շարունակեց Ոսկան յանձն առած գործն, և նոյն տարւոյն մէջ Տոմարի մը հրատարակութիւնն ընելով, ի հետեւեալն՝ որ իւր վերջին տարին է յԱմսդերտամ, տպագրեց զԱռաքել պատմիչ և զՋայնքաղ շարական։

*
* *

1670 Թուականին ի Լիվոռնոյ կը գտնենք փոխադրուած զՈսկան։

Գաղղիացի բանասէր մի՝ Բորի, (J. D. Bory), որոյ Պատմական և մատենախօսական հետազօտութիւնք ի վերայ արուեստի տպագրութեան ի Մարսիլիա. (Les origines de l'Imprimerie à Marseille: Recherches historiques et bibliographiques). 1858ի տպագրուած գրքէն կը քաղենք, հոն նոյն քաղաքին մէջ քիչ ետքը հաստատուած հայկական տպարանին պատմութիւնը. այս փոխադրութեան պատճառ կը համարի՝ Ոսկանայ կողմանէ խիղճ մը, ուչ ուղղափառ (նորալանդ) աշխարհի մէջ եկեղեցական գրքեր տպագրելը. մենք աւելի հաւանական կը կարծենք՝ նոյն խիղճը, զանոնք ընդունող ու իրենց հոգեւոր պաշտամանց մէջ գործածող ժողովրդեան կողմանէ։ Զնոյն կ՚ակնարկէ Զմիւռնիոյ ժողովրդեան կողմանէ առ խորհրդականս Պոլլանտայ արդարութեան ատենին ուղղած խօսքերը՝ Ոսկանայ նկատմամբ, թէ « Ուզեց նախապէս՝ իրմէ հերետիկոսաց Ամսդերտամ քաղաքին մէջ հաստատուած տպարանն՝ Մարսիլիա փոխադրել, հռովմէական ուղղափառաց ոճովը գրքեր տը-

պագրելու »· (Ipsius voluntas fuit quod Typographia... quæ antea fuerat apud hereticos Amsterdam, ad libros catholicos romanorum modo componendum, illam Marsiliæ (transtulit). ուստի և բռնադատեցաւ Հոլանտայէն ելնելով ի Լիվոռնոյ իտալիոյ հաստատել տպարանը ։ Կ՚ուզէր թերևս այս փոխադրութեամբ սուտ հանել Համազասպեանի իրեն դէմ յարուցած ամբաստանութիւնքը ։

Հոն նոյն 1670 տարին՝ անմիջապէս երկու գրքոյկ հրատարակած կը տեսնենք իր տպարանէն, երկուքն ալ հոգևորական մատենիկք. Պարտէզ կոչուած աղօթից գիրք մը, որ արևելեան համանուն գրքերէն բոլորովին տարբեր եղանակաւորութիւն մը ունի, և յարևմուտս կրթուած ու սորված ուղղափառ վարդապետի մի երկասիրութիւն է, և Քրիստոնէական մը՝ համաձայն արևմտեան եկեղեցւոյ վարդապետականին ։ Պարտէզ գրոց յիշատակարանին մէջ կ՚ըսուի․ (Տպեցեալ) յամի Տեառն 1670, Լիվոռնի, ի տպարանի սրբոյ Էջմիածնի և սրբոյ Սարգսի զօրավարի․ In Livorno, con licenza dei superiori, 1670․ « Աւարտեցաւ գրքիկս որ կոչի Պարտէզ հոգևոր, ի թուոյն Հայոց ՌՃԻ․ հաւանութեամբ տեառն Ոսկանի երևանեցւոյ, և սրբագրութեամբ կարապետի վարդապետի Անդրիանացւոյ »։

ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ Ի ՄԱՐՍԻԼԻԱ ԳԱՂՂԻՈՅ

Ասկէ քանի մի տարի ետք Ոսկանեան նոր հրատարակութիւն մը չկայ, ոչ յԱմստերտամ, ուստի վերցուած և փոխադրուած է տպարանն, և ոչ ի Լիվոռնոյ։ Միայն կը գտնենք 1669 մայիս 26 թուականաւ՝ լատին լեզուաւ աղերսի թուղթ մի, զոր նոյն Ոսկան վարդապետ կ՚ուղղէ առ Լուդովիկոս ԺԴ թագաւոր Գաղղիոյ. որ իր սքանչանաց և զարմանաց հաւաստեաց հետ առ նոյն մեծափառ թագաւոր, իր ջանքով տպագրուած Աստուածաշունչ գրոց օրինակ մի կը համարձակի ընծայել արքային։ Խրախուսելով այն ընդունելութեամբ, անձամբ կ՚երթայ ի Փարիզ, և միջնորդ ունելով զհռչակաւոր արևելագէտ ժամանակին զԼորիան Տարվիէոյ, մարսիլիացի ծննդեամբ, կը յաջողի ընդունել ի թագաւորէն «զհրամանագիր տպարանի մը հաստատութեան ի Մարսիլիա կամ ի Լիոն, և կամ Գաղղիոյ տէրութեան ուրիշ քաղաքի մը մէջ. որովհետև այդ գործը մեծապէս օգտակար էր հասարակութեան, և արևելեան լեզուաց ուսման մեծ դիւրութիւն պիտի մատուցանէր»։ Հրամանագիրն, կ՚ըսէ Պորի, պայման մ՚ալ կը դնէր տպագրողաց վրայ, որ «հրատարակելի գրքերը ուղղափառ, հռովմէական կրօնից վարդապետութեան և հաւատալեաց հակառակ բան չպարունակեն»։ Ոսկան կ՚ընդունէր այս պայմանը, քանի որ իր բուն և ճիշդ իմաստին համեմատ կը գործադրուէր. բայց կը վախնար որ չըլլայ թէ առիթ մի տրուի անով՝ յապագային փոփոխելու կամ բոլորովին անհետ ընելու հայկական արարողութիւնքն ու ծէսերը։ Իրաւացի էր Ոսկանայ այդ երկիւղը յեռանդուն և ի փութաջան հաճոյակատարութենէ ազգայնոց ոմանց, քանի որ ուրիշ տեղ տպագրուած հայ գրոց մէջ կը սկսէին երևնալ այդ նշաններ, և պարտք կը սեպէ Ոսկան՝ կարելի զգու-

Digitized by Google

շութիւնն ընել, նոյն խսկ իւր և ընկերակցաց նիւթական չահուն տեսակէտէն. որովհետև այդ կերպով եղած հրատարակութիւնք՝ ազգին ընդհանրութեան չէին կրնար հաճոյանալ, ու գրքերն անվաճառ կը մնային: « Սակայն և այնպէս, կը շարայարէ Պօրէ, վասահ դազղիական պետութեան կողմանէ սրուած խստմանց անկեղծութեան, և թագաւորական պաշտպանութեան, որոշեր էր Ոսկան փոխադրել, ինչպէս և փոխադրեց, իր տպարանն յԱմստէրտամէ ի Մարսիլիա, հանդերձ ամենայն կահիւքն և կազմուածքով »: Մենք տեսանք թէ ի՛նչպէս տարի մը գործեց նա ի Լիվոռնոյ, ուստի անցաւ ի Գաղղիա:

Հռովմայ աթոռը երբ առաւ այս փոխադրութեան լուրը, փութաց անոր վրայ հրաւիրել թեմական եպիսկոպոսին հսկողութիւնն, իմացընելով թէ Ոսկան ի յարաբերութեան է արևելեան եկեղեցւոյ պատրիարքին՝ որ յէջմիածին: Այն պատճառաւ Գեր. Ֆորպէն Ժանսոն՝ որ ի ժամանակին Մարսիլիայի եպիսկոպոսական աթոռոյն գահակալն էր, պահանջեց նախ արքեպիսկոպոս տպագրիչէն հաւատոյ դաւանութիւն մը՝ համաձայն հռովմէական եկեղեցւոյ վարդապետութեան, գրաւոր՝ ի հայ և ի լատին լեզու. և ապա իւր ընդհանուր փոխանորդին հսկողութեանն յանձնելով նոր բացուած տպարանը, իրեն սեպհականեց հոն հրատարակելի գրոց քննութիւնը հայ լեզուի հմուտ քահանայի մը ձեռքով, որ այս նպատակաւ ի պատեհ ժամանակի պիտի ղրկուէր ի Հռովմայ:

Երբ իրերն այս վիճակի մէջ էին՝ ձեռք զարկաւ Ոսկան իր նոր տպագրատան հաստատութեանը, որոյ անունն անփոփոխ պահեց կոչելով Տպարան սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրավարի. զի կը յուսար որ պիտի յաջողի յատուկ անձնական ծախուք հրատարակել իբրու երախայրիք նոր գործատան՝ քառածալ Ժամագիրք մի, երեք հազար օրինակ, եւ զարդարուած ութ մեծ պատկերներով, արդիւնք Քունտիէ (Cundier) փորագրողին ճարտար գրչին:

Այս ժամագրոց յառաջաբանին մէջ՝ Ոսկան կը գանգատի իր գրամական անձկութեան վրայ՝ որով յիրաւի կը նեղուէր. « Քանիցս անգամ, կ՚ըսէ, գրեաց առ իս մեծաշուք և բարձրագահ հայրապետն Տէր Յակոբ, տեղակալ և առաջնորդ սրբոյ Էջմիածնի, ապագրել զՍաղմոսարան ատենի, և խոստացաւ առաքել զծախն, բայց ոչ եղև. քանզի ոչ միայն ոչ առաքեաց, այլ և ոչ բանիւ կարաց օգնել, վասն վրդովմանցն որ անկաւ ի մէջ նոցին, որոյ վրդովման վնասն և ինձ ժամանեաց. վասն այն ես կարի ստրկացայ վասն պարտուցն որք ի վերայ իմ բարդեցան, և բարդեալք կան սակս Աստուածաշնչոցն և այլոց գրոց, որք սփռեցան ի մէջ Հայաստանեայց, որ և յուսահատեալ քանի մի տարի բարձի թողի արարի. վասն նեղութեան և վտանգին որ հասին ի վերայ իմ և պատեցան զինեւ: Բայց այժմ տեսանելով զի յուսահատութեամբ լքանելն ոչ ինչ օգնէ », բռնադատուեցաւ, ինչպէս յիշեցինք, երկրորդ անձի մը ընկերակցութեան դիմել՝ գործը առաջ տանելու և ի պարտատեարց չնեղուելու համար:

Ընկերակցութիւնն ըրաւ Համազասպեան Թադէոս Երիցուն հետ, որ Ոսկանայ քաղաքակիցն էր ու հետը ի Փարիզ և ի Մարսիլիա ճանապարհորդութիւն ըրեր. բայց ընտրութեանը մէջ բաղդաւոր չեղաւ. որովհետեւ. այդ անձին յետագայ բռնած ընթացքէն յայտնապէս կ՚երեւնայ որ նիւթական շահէն աւելի զօրաւոր և գաղտնի շահէ մը մղուած, հետը ընկերանալու եկեր եղած էր ամէն կարելի ջանիւք, թէ՛ ժամագրոց հրատարակութիւնը խափանելու և թէ տպագրատունը բոլորովին անհետ ընելու նպատակաւ: Զմիւռնացւոց հանրագիրը, « Եթէ իրեն հաւատալու ըլլաք, կ՚ըսէ, մեր տպագրատունը կը փճացընէք և գիտութեան լոյսը կը մարէք. (Si illi creditis, nostram typographiam destructis et scientiae nostrae lumen extinguetis).

Ոսկան իրեն ընկեր առնելով զԹադէոս՝ տպագրելի գրոց ծախուց և շահուն մասնակից ընելու համար, պէտք եղած զգուշաւորութիւնքը բանեցուցեր էր, բացարձակաբար իր անձին պահելով գրոց սրբագրութիւնը։ Ըսածնիս յայտնապէս կ՚երևնայ այն դաշնագրէն՝ որ 1673ին երկուքին մէջ գրուած է. որով կը պարտաւորին հազարական դահեկան դնել՝ գործաւորաց վարձուն, թղթոյ ստացման և ուրիշ ամէն կարեւոր ծախուց հատուցման համար. յայտնի և որոշ պայմանագրով, որ յետ աւարտման տպագրութեանն՝ արքեպիսկոպոսն երեքհարիւր յիսուն օրինակ վերցնելու իրաւունք պիտի ունենար, իբրու ի վարձ իւր աշխատանաց՝ գրոց սրբագրութեան և տպագրին աւարտման, և մնացած երկու հաւասար բաժին պիտի ըլլային, մին Ոսկանայ և միւսն Թադէի։ Բայց շուտով յայտնի եղաւ թէ ո՛րչափ անբաւական էին Ոսկանայ կողմանէ եղած այս զգուշութիւնք։ Վասն զի հազիւ ժամագրոց առաջին թերթը մամլոյ յանձնուած էր, Թադէոս սկսաւ ամենազգի արգելք հանել. և եթէ արժան է հաւատք ընծայել Զմիւռնիոյ Հայոց կողմանէ տրուած աղերսագրին, զոր արդէն յիշեցինք, այս ընկերակցին՝ զոր անարժան կը համարին ոչ միայն քահանայ, այլ և քրիստոնեայ կոչուելու, ի գործ դրած անարժան միջոցներուն և նախատանաց հետեւանք եղաւ տպագրիչ արքեպիսկոպոսին մահը։

Այս ծանր ամբաստանութիւնն, ստոյգ ըլլայ կամ ոչ, յայտնի է որ Ոսկան մեռաւ ի Մարսիլիա 1674 թուականին առաջին ամիսներուն. և Թադէոս փութաց տէրութեան միջամտութեամբ կնքել տպագրական գործարանը, և սինեսկալի պատարանին փոխանորդը մտցընել ի տուն վախճանելոյն։ Նոյն միջոցին ժամագրոց տպագրութիւն հազիւ վեցերորդ թերթին հասած էր։ Ուրիշ գիրք մ՚ալ, սաղմոսաց Դաւթի, որ Ոսկանայ յատուկ ստացուածքն էր, և ամբողջ ութ թերթերու մէջ պիտի բովանդակուէր,

Digitized by Google

դեռ նոր սկսեր էր տպագրուիլ և միայն առաջին քանի մի թերթք հրատարակուած էին ։ Պօրի Գաղղիացւոյն այս յիշատակած Սաղմոսը՝ և մեր ունեցած տեղեկութիւնք կը ցուցնեն թէ այս անկատար մնացած տպագրութիւն՝ Նարեկացւոյն աղօթամատեանն է, որոց քանի մի թերթերն միայն ունինք, տպագրեալ ի 1673, և յորոց ի ճակատուն այսպէս նշանակուած է. « Գիրք ... տըպագրեցեալ ներգործարանում սրբոյ Էջմիածնի, և սրբոյն Սարգսի զօրավարի ։ Ի հայրապետութեան տեառն Յակօբայ, և ի թագաւորութեան Քրիստոսապսակի և բարեպաշտի արքային Լուդովիկոսի. վերակացութեամբ և հոգաբարձութեամբ և ծախիւք Ոսկանայ վարդապետի և եպիսկոպոսի Երեւանեցւոյ. ի Մարսիլիայ. Թուին Քրիստոսի 1673 և ապրիլի 3 » ։ Ի Պոլիս ի 1175 թուին Հայոց տպագրեալ մեծադիր Նարեկ գրոց ծանուցման մը մէջ կը յիշատակուի, թէ « լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետն սկսեալ էր (զտպագրութիւն Նարեկի), և չէր կատարեալ յինչ և իցէ պատճառէ » ։ Սաղմոսաց տպագրութիւն մ'ալ եղած է արդարև նոյն քաղաքին մէջ, բայց Ոսկանայ մահուընէն ետքը, ինչպէս քիչ յետոյ պիտի յիշատակենք ։ Արդէն սկզբնաւորեալ այս երկու գրոց տպագրութիւնն յառաջ վարելու և ի գլուխ հանելու համար, — որոց վրայ պատաւրանք արդէն ձեռք դրած էին, — բռնադատեցաւ Սողոմոն՝ Ոսկանայ քեռորդին և ժառանգ, բանակցութեան մտնել Թաղէի հետ և ընդունիլ դրած պայմանները ։

Նոյն 1674 տարւոյն հաստատուած դաշնագրով մի որոշուեցաւ, որ նորատիպ Ժամագրոց և Սաղմոսարանի ամէն թերթերն, թէ՛ տպագրուածներն և թէ տպագրելիք ի մամլոյ ելնելնուն պէս անմիջապէս յանձնուին Լըֆէպիւր փաստաբանին, Թաղէի ապահովութեան համար հոն մնան մինչև Ժամագրոց տպագրութեան աւարտումը, և իրեք հազար օրինակաց հաւասարաբաժին բաշխումն

երկուքին մէջ, ըստ արդէն կնքեալ պայմանադրութեան։ Սողոմոն հաւատարիմ և փութաջան երեւցաւ իր կողմանէ ի պահպանութիւն պայմանացն։ Վրան հազիւ տարի մի անցած էր՝ երբ հանճարամիտ օժանդակութեամբ Նասի-պայ Գրիգորեան, իր կողմանէ ղրկուած գործակատարին, և Մատթէի Յովհաննիսեան շարող տպագրչի, ոչ միայն դաշնագրին նպատակ ժամագրոց տպագրութիւնը աւարտեց, այլ նաև ուրիշ գրքեր ալ կարող եղաւ հրատարակել. ինչ-պէս անմիջապէս հետևեալ տարւոյն մէջ՝ Ճարտասանու-թեան գիրք մը, հեղինակութեամբ Յովհաննու Յակոբայ (Հոլով) վարդապետի կոստանդնուպոլսեցւոյ. որոյ տառից շարաբարդողն էր, ինչպէս նշանակուած է յ՚էջն 153, «Մատթէոս Յոհաննեսեան, — Որ ի գեղջէ եմ վա-նանդեան, — Եղէ բարդող փոքերս գրկան»։

* * *

Սոյն Յովհաննու Յակոբայ հայ ուղղափառ քահանայի ձեռքով ամէն տպագրելի գրքեր կը քննուէին, որ պաշ-տօնապէս ղրկուած էր ի Հռոմէ ի Մարսիլիա, և որոյ ճանապարհի ծախուց համար հատոյց Սողոմոն երեքհարիւր դահեկանի գումար մի։ Այսպիսի որոշիչ քննութենէ մի ետքը՝ Ս. Էջմիածնի տպարանին վերակացուք փութացան առաջարկել Թադէի՝ որ անյապաղ ժամագրոց օրինակաց հաւասար բաշխման գործը կատարուի. և անով փոխա-քեղի և երկու որոշ արդիւնք ձեռք բերած կ՚ըլլային։ Նախ, որ այնուհետև կը դադրէին իրենց ամէն յարաբերութիւնք՝ բուռն և տարապարտ խնդիրներով յուզում և շփոթու-թիւն պատճառող անձի մի հետ, և երկրորդ, որ դրա-մական շահու մերձաւոր յոյս մը կ՚ունենային, և որուն մեծապէս պէտք ունէր Ոսկանայ ձեռքով հաստատուած տպարանն։ Սակայն Թադէի մտաց խորհուրդք հոն չէին, որ ինչպէս ըսինք՝ իր նիւթական շահէն աւելի նպատակ

Digitized by Google

ունէր գործարանին խափանումը քան անոր վերահաստատութիւնը։ Ոչ միայն չուզեց ստորագրութիւնը դնել իրեն առաջարկուած ընկերակցութեան պայմանագրի մը, այլ սենեսկալի փոխանորդին դատարանին դիմելով՝ ամբաստանութիւն ըրաւ արդէն ի Ցակոբայ քահանայէ քննուած ժամագրոց վրայ, իբր թէ տակաւին կը գտնուին ի նմա հերձուածողական բաներ, հակառակամարտք ուղղափառ հաւատոյ, և խնդրելով անոնց սրբագրութիւնը՝ կը պահանջէր որ հրատարակուած ութ թերթք նորէն տպագրուին, գործակատար ճանչցուած Նասիպ Գրիգորի ծախքով։ Կը պահանջէր դարձեալ բարոյական շահու մը պատրուակաւ քօղարկելու համար այսպիսի ամբաստանութեան մը ատելի մասը, որ ի ճակատու գրոցն յայտնապէս նշանակուի թէ հրատարակութիւնն եղած էր հասարակաց ծախիւք Ոսկանայ արքեպիսկոպոսին և Թադէի։

Այդ կրկին առաջարկութիւնք ընդունելի եղան. բայց խորհրդարանն վճիռ տալով ի 1675 ի սեպտեմբերի 28 որ երկու ընկերակցաց անուանք ժամագրոց ճակատը գրուին, ջնջեց սենեսկալի ատենին վճիռը, և երկու կողման ալ պատուիրեց, որ քաղաքին եպիսկոպոսական գլխաւոր փոխանորդին ներկայանան և իրմէ լսեն թէ արդեօք հա՞րկ է այն սրբագրութիւններն ընել։

Թադէոս գոհ չեղաւ հետապնդութեամբն դատաստանական միջոցներով՝ ի գործադրութիւն այս բարձրագոյն վճռոյն. այլ մասնաւոր գրուածով մը ամբաստանեց զՆասիպ Գրիգոր, իբրու նենգավաճառ, դատարկաշրջիկ և սնանկացած մարդ մը. և յաջողեցաւ նոր վճիռ մը ձեռք բերել, որով իշխանութիւն կը տրուէր բռնել տալ Մոզոմին Լեւոնեանի այդ գործակատարը։ Նասիպ՝ նոյն ժամանակին տիրող օրինաց տրամադրութեանց հակառակ բանտ դրուելուն՝ բողոքեց խորհրդարանին արդարասիրութեանն, իր ազատութիւնն խնդրելով. և 1676 յունիս 9 դրուած վճռով մը բանտէն արձըկուելով, որոշուեցաւ

որ ժամագիրքն միւսանգամ եպիսկոպոսական փոխանորդին քննութեանն յանձնուի, և վկայիւք հաստատուի թէ ուղղափառ, առաքելական և հռոմէական վարդապետութեանց հակառակ բան մի չի բովանդակեր ։

Թաղէի այս ամէն գործերը՝ ատելի ըրին թէ՛ իր անձը և թէ ընկերակցութիւնը ի գործ Մարսիլիայի տպարանին. ուստի և ամենախիստ լեզու մը կը գործածեն իրեն դէմ նոյն տպարանին վարիչք, ու Ոսկանայ անուամբ կտակ մը հրատարակելով՝ անոր մահուընէն ետքը, թէ՛ վարդապետին վախճանին և թէ տպագրատան յառաջադիմութեան կասելուն և ձախողելու՝ զինք պատճառ կը բռնեն ։ Ահաւասիկ նոյն կտակին քանի մի տողերն, զոր Ոսկան կ'ուղղէ « առ ամենայն հայ ազինս, յաւէտ առ հոգեւոր հայրն իմ Տէր Յակոբ սրբազան կաթուղիկոս... սակս դառնակսկիծ մահուան իմոյ. ի պատճառէ չարեացն չԹաղէոսի իրիցոյ՝ անցուցելոյն ընդ իս և ընդ գործարանիս իմոյ ի Մարսիլիայ քաղաքի ». և կ'աւանդէ թէ « .... Թաղէոս Համազասպեան զամբոցս և զգեղեակս անօրէնութեան կերտեաց աստ, բազմահնար մեքենայիւք, հաստատեալ ի նմին ամբարտակս չարութեան ... մուծանելով զինքն ընդ յարկաւ անկելոյն՝ յեցեալ ի զօրութիւնս նորին վաղակործանին ... որպիսի՛ անցս անցոյց ընդ իս ի ժամանակի ծերութեանս իմում, ի մէջ այլասեռ քրիստոնէից » ։

Զօրութեամբ վերոյիշեալ վճռոյն՝ Գեր. Ֆորպէն-Ժանսոնի յանձնուեցաւ գիրքը ։ Եպիսկոպոսը հարկ չի սեպեց թարգման մը ուզել ի Հռոմէ՝ այս քննութիւնն ի գլուխ տանելու համար. ու յանձնեց Թովմաս Հայրապետեան հայ քահանայի մի, որ նոյն ատեն գտնուեցաւ ի Մարսիլիա, անտի ի Փարիզ անցնելու դիտաւորութեամբ ։ Նոր թարգմանն ոչ միայն նպաստաւոր չերեւցաւ իր հայրենակից տպագրողաց, այլ խստապահանջ քան զԹաղէոս. վասն զի ոչ միայն պահանջեց նշանակուած

ութ թերթից կրկին տպագրութիւնն, այլ ուրիշ ութ թերթ ալ անոնց վրայ աւելցուց, զորս հարկ էր փոխել՝ հերետիկոսական արատ կրելնուն։

Նասիպ Գրիգորեան խնայելով իր յանձնարարին (mandant) կրկին տպագրութեան ծանր ծախքը, դէմ չկեցաւ կարևոր սեպուած սրբագրութիւններն ընելու, վրիպակացոյց տախտակ մը աւելցընելով տպագրուած վերջին թերթին յետին երկրորդ երեսին վրայ, որպէս զի կարելի չըլլայ փրցընել հանել զայն առանց գիրքն պակասաւոր և անկատար ընելու։ Այս առաջարկութիւն՝ խորհրդարանին վաւերացուցման ներկայելով, *1678* ապրիլ *1* վճռով մը որոշուեցաւ, որ Մարսիլիայի եպիսկոպոսը պատշաճականն գործէ՝ ինչ որ իրեն կարևոր երևնայ. ուստի և Գեր. Ժանսոն՝ հետևեալ յունիս 7 հրամանագրով մը պատուիրեց Հայոց, որ տպագրեալ ամէն թերթերէն երկերկու օրինակ իրեն յանձնուին, որպէս զի կարող ըլլայ սրբագրել այն վրիպակներն որ կրնան սպրդած ըլլալ։ Բայց եպիսկոպոսը պիտի չկարենար այս փափուկ ու դժուարին գործը ի գլուխ հանել, վասն զի Մարսիլիայի աթոռէն ի Պովէ փոխադրուելով ի *1679*, ի պարապութեան մնաց իր գահը. ու Ֆիլիփ Տըպոսէ քահանայի մի (prévôt) յանձնուեցաւ անոր վիճակին առժամանակեայ կառավարութիւնը, որ յերկարեցաւ մինչև ի *1682*։

* * *

Եպիսկոպոսական ընդհանուր փոխանորդն Տըպոսէ բացարձակ տէր եղողն Էջմիածնի տպագրական գործատան վիճակին, իր հրատարակած կրօնական քանի մի երկասիրութեամբքը Ցանսենեանց համամիտ ճանչցուած էր։ Բայց որովհետև Իննովկենտիոս ԺԱ քահանայապետ՝ Լուդովիկոս ԺԴ թագաւորին հետ ունեցած երկարատև խընդրոց պատճառաւ ամէն ուժովը կը պաշտպանէր Իպրի ե-

պիսկոպոսին հետեւողքը, Ֆիլիփ Տըպոսէ քահանայապետական իշխանութեան ջերմ կուսակից դառնալով, ետեւէ եղաւ Մարսիլիայի մէջ՝ Հռովմայ Հաւատատասփիւռ ժողովոյն նման ընկերութիւն մի հաստատել, և որոյ նպատակն պիտի ըլլար բարձումն և ջնջումն ամենայն հերետիկոսութեանց իր վիճակէն: Այս ընկերութիւնն հաստատուեցաւ ի 1679, բայց առանց երկարատեւ ըլլալու: Մեծ եռանդով զբաղեցաւ նա հայկական տպարանին գործովը, և զոր կը հաւատարմացընէ մեզ Մարսիլիայի մատենադարանին մէջ ինչուան հիմայ պահուած ժամագրոց օրինակ մը, յորոյ ի ճակատուն և ի վերջին 408 էջն՝ հետեւեալ ինքնագիր ստորագրութիւնք գրուած են. « Թագէոս երէց» (հայ լեզուով ու գրով.) – Philippe Bausset prévôt et vic. — Marguerite Chava (Մարսիլիացի, Սողոմոն սարկաւագի կին). — Thomas Herbied. — Sossin, notaire secrétaire.

Ի ստորև ճակատու նոյն օրինակին սկզբնագիր վաւերական կամ ընկալագիր մի կայ հետեւեալ խօսքերով. Remis rière (?), prière) de greffe de l'evesché, en conséquence de l' ordonance rendue par M. le grand vicaire, au pied de son verbal, le vingt-quatre octobre mil six cent septante-neuf, le 25 du dit. Ստորագրեալ Sorsin. Գրքին ճակտին վրայ նշանակուած է որ հրատարակութիւնն եղած է ի տպարանի սրբոյն Սարգսի զօրավարի « Ջանիւք և սրբագրութեամբ Ոսկանայ Վարդապետի և Արքեպիսկոպոսի Երեւանեցւոյ. արդեամբք և ծախուք նորին Ոսկանայ Արհի- եպիսկոպոսի և Թաթէոսի իրիցու երեւանեցւոյ » ի Մարսիլիա, յամի 1673 և Թուականին Հայոց ՌՃԻԲ:

Տարակոյս չկայ ուրեմն որ վճիռք խորհրդարանին նըկատմամբ ժամագրոց ճակտին կարգաւորութեանը՝ լիովին ի գործ դրուած էին 1679 Թուականին հոկտեմբեր ամսոյն մէջ: Որով այնուհետեւ ուրիշ բան չէր մնար՝ բայց

սահմանել թէ արդեօք հա՞րկ էր կամ ոչ, գրքին մէջ անցընել այն սրբագրութիւններն որոց վերջին որոշումը թողուած էր վիճակաւոր եպիսկոպոսին, կամ այն եկեղեցականին՝ որ անոր փոխանորդութեան պաշտօնը կը կատարէր։ Բայց այս նկատմամբ՝ հայ տպագրողաց առջև դրուած դժուարութիւնք՝ շուտով իրենց լուծումը կարող պիտի չըլլային ընդունել։ Հերետիկոսութիւնք՝ որոց համար կ՚ամբաստանուէին թէ մուծուած ըլլան ի տպագրեալ գիրս, որ օրուան վրայ կը տարբերէին ու կը բազմանային. Թովմաս Հայրապետս զոհ չէր ըլլար, ինչպէս յառաջ, պահանջելով զսրբագրութիւն այն տեղերուն որ կրնային հակառակիլ կամ անհամաձայն համարուիլ էական մասանց հռովմէական վարդապետութեան. այլ և կ՚ուզէր փոփոխել Հայոց եկեղեցական արարողութիւններն և մասնաւոր սովորութիւններն, և Ոսկանայ տպագրած ժամագրքէն դուրս հանել այնպիսի մասունք՝ որ կը գտնուէին նոյն իսկ 'ի Հռովմ տպագրուած յոյն, մարոնիտ և ուրիշ արեւելեան եկեղեցական գրոց մէջ։

Սրբագրութեանց անչափ եռանդեամբն գրեթէ ի ծայրայեղութիւն մղուելով՝ հարկաւոր կը սեպէր Հայոց տումարն ալ Գրիգորեանին հետ համաձայնեցընել, մինչև իսկ անուանց և թուականաց տարբերութիւններուն հերետիկոսութիւն համարելով. այսպիսի վարմունքով աւելի չափազանց եռանդն և արդիւնք ցուցընելու փափաք մը կ՚երևցընէր, քան աստուածաբանական ուսմանց հմտութիւն. որով բազմացան ի Գաղղիա բազմաթիւ գանգատանաց ձայներ և բուռն պարսաւագրութիւնք՝ ոչ միայն զանոնք առաջարկող Թարգմանին հակառակ, այլ նաև Տըպոսէ փոխանորդին, որ հաճութիւն և հաւանութիւն կը ցուցընէր և իր ազդեցիկ իշխանութեամբ կը պաշտպանէր։

Հայոց պաշտպան կեցող եկեղեցականաց մէջ նշանաւոր եղաւ նախ Հայրն Փիտու (Pidou) Փարիզցի, գիտնական կրօնաւորն Թէաթինեան և առաքելական քա-

Digitized by Google

թողից, որ անկեղծաբար և հաւասար լուսամտութեամբ 1666ին մայր եկեղեցւոյ գիրկն առաջնորդեց Լեհաստանի Հայոց գաղթականութիւնը։ Այս աւետարանական անձին հետ յիշել արժան է և զՓիք (Piques) սորբոնեան վարդապետը, որ 1681ին հրատարակած այլևայլ նամակներովը՝ ճարտար հմտութեամբ և արիութեամբ կռուեցաւ Թովմաս Հայրապետի ենթադրեալ սրբազրութեանց դրութեան դէմ։ Հայկական թարգմանութեանց պաշտօնական թարգմանն ի զուր ջանաց նոյն տարւոյն մայիս 9 թուականը կրող գրուածով մը պատասխանել իրեն. այնչափ անյաջող և վտանգալից էր այն, որ եպիսկոպոսական փոխանորդն անգամ ստիպուեցաւ գրիչն ձեռք առնուլ ի պաշտպանութիւն իւր անձին և գործոց։

Ամօթոյ պարապութեան միջոցն վերջապէս լմննալով, ի 1682 մայիս 26ին գահակալ սահմանուեցաւ Գէր. Տէթան, որ ի փարիզէ ծանուցանելով իւր ընտրութիւնը և ամբարձումը յեպիսկոպոսութիւն Մարսիլիայի՝ Ֆիլիփ Տըրպոսէէն հաշիւ և համար կը պահանջէր քաղաքին մէջ գտնուած Հայոց նկատմամբ գործածներուն։ Ջատագովական յիշատակագրով մը՝ զոր Նոր եպիսկոպոսին ներկայացոյց նախկին Թեմական փոխանորդն, պաշտօնական կերպով կը յայտարարէ՝ թէ Հայրապետի ամէն սրբագրութիւններն ընդունած չէ, չմերժածներն ալ այնպիսիք են՝ որ արդէն Ժողովոց, Կալանոսի և մանաւանդ Հաւատասփիւռ ժողովոյն հաւանութեան կնիքը կը կրեն. իսկ իր կողմանէ եղած քանի մի քմահաճոյ զեղչմանց համար կը յաւելու ըսել, թէ «անոնք կրնան տպագրական վրիպակք ըլլալ՝ քան թէ եպիսկոպոսական իշխանութեամբ եղած սրբագրութիւնք»։

* * *

Այսպիսի վիճմանց և հակառակութեանց առեն յան֊

Digitized by Google

կարծ ձայն ելաւ թէ Հաւատասփիւռ ժողովը ծիրանաւոր Նէրլիի կողմանէ տրուած տեղեկագրի մը վրայ վճռեր էր, որ Թովմաս Հայրապետ երեք տարի մնայ ի Մարսիլիա՝ իբրու առաքելական քարոզիչ և քննիչ հայկական տպագրութեանց, մասնաւոր թոշակ մ՚ալ սահմանելով իրեն ի վարձ այս աշխատանաց։

Այս կարգադրութեամբ կերպով մը Հռովմայ նոյն ժողովոյն իշխանութեան տակ ձգել կարծուեցաւ Մարսիլիայի Հայերն, որ կը բնակէին ի Գաղղիա՝ Լուդովիկ ԺԴի պաշտպանութիւնը վայելելով։ Նոյն ատեններն Վատիկանի ու Լուդովիկ Թագաւորի մէջ եղած յարաբերութիւնք այնչափ սերտ բարեկամականք չէին։ Թագաւորն հրաման տուած էր ազգային ժողով մը կազմել՝ յերեսունևհինգ եպիսկոպոսաց, ամէն խորհրդականաց հաւանութեամբ պատուիրելով, որ աստուածաբանական ու կանոնական իրաւանց ուսուցիչք ստիպուին սորվեցընել և ընդունելի ընել չորս առաջարկութիւններն, որոնց նպատակն էր ջնջել ի Գաղղիոյ զոգի անդրալեռնականութեան (ultramontanisme), և որ համբաւաւոր են ի պատմութեան՝ Գաղղիական եկեղեցւոյ ազատութեանց անուամբ։

Սողոմոն Լեւոնեան նոյն միջոցին ի Փարիզ կը գտնուէր բաւական ժամանակէ ի վեր, Թագաւորական խորհրդարանէն արդարութիւն պահանջելով։ Այնչափ աւելի սիրալիր եղաւ գտած ընդունելութիւնը, որչափ խիթալի և զգուշալի կրնային երևնալ Հայրապետի տրուած նոր պաշտպանութիւնք Մարսիլիայի եպիսկոպոսին և անոր մեծ փոխանորդին քով։ Զի Լուդովիկ ԺԴ հաստատուն իր դիտաւորութեան վրայ, և Թագաւորութեանը մէջ նոր ու հակառակամարտ համարուած իշխանութիւն մի չհանդուրժելով տեսնել, հրամայեց Փռովանսի արդարութեան ատեանին պաշտօնեայ Մորանի, տեղեկութիւն առնուլ ի Հռովմայ սահմանուած քննիչին վրայ, և հաստատուն

պահել Հայոց սրուած արտօնութիւնը, իրենց գրոց տպագրութեան նկատմամբ։ Այս առթիւ ղրկուած արքունական թուղթք՝ 1683 տարւոյն 3 յունուարի և 15 փետրուարի թուականներն կը կրեն։

Թօլմաս Հայրապետ 1683 փետրուար 25 և մարտի 1ին՝ ատենական հարցաքննութեան կոչուելով, յայտարարեց որ 1676ին Մարսիլիայէն անցնելու ատեն Գերժանսոն վիճակաւոր եպիսկոպոսէն պաշտօնական հրաման ընդուներ էր մնալ ի քաղաքին և հսկել հայերէն տպագրելի մատենից սրբագրութեան վերայ. և թէ այն ատենէն ի վեր անխափան պարապեր էր Թիարանին հիւանդանոցին մէջ արգիլեալ յանցաւոր Թուրքերը քրիստոնեայ ընել, ու դարձի եկողներն խոստովանցընելու. և երբէք հաւատաքնին պաշտօնէի գործ վարած չէ։ Ծանոյց թէ երկու տարիէ ի վեր՝ թոշակ մը կ՚ընդունէր ի Հռոմայ, բայց ոչ իբրու հաւատաքնին՝ այլ այն պատճառներու համար՝ զոր մասնաւոր թղթով մը ընդունած էր յԱլտիէռի ծիրանաւորէ, և զոր ատենին առջև դրաւ։ Այս թուղթս սրուած էր անոր 1681 ի 25 փետրուարի, յորում կ՚ըսուէր, թէ ժողովը տեսնելով զկարեւորութիւն հայերէն լեզուն գիտցող քահանայի մը ներկայութեան ի Մարսիլիա, և Թուրքերէնի տեղեակ անձի՝ արքունի Թիարանին մէջ եղող գերեաց համար, սահմաներ էր երեք տարուան համար տալ Հայրապետի երեքհարիւր լիրա տարեկան թոշակ. և այն պաշտօնն կատարելով՝ շարունակել միանգամայն և ուշ դնել սրբագրութեան վրիպական ընթերցուածոց տպագրելի հայ գրոց։

Ներկայացոյց ատեանին երկար ցուցակ մը մոլորութեանց, զորս կը հաստատէր թէ գտած ըլլայ Ոսկանայ ժամագրոց և իր յաջորդին ձեռքով եղած ուրիշ տպագրութեանց մէջ։ Այս հարցաքննութենէն ետքը՝ որոյ նպատակն էր գէթ առ արտաքս պահպանել թագաւորական իշխանութիւնը, արդարութեան պաշտօնէին վճռովն սահ-

մանուեցաւ թէ Հայրապետի ի Մարսիլիա բնակութիւնը արքունի իշխանական մեծվայելչութեան փաստակար կէտ մը չունէր, ինչպէս և ոչ պետական առանձնաշնորհութեան. — Թէ հաւատաքննչի պաշտօն չունէր նա, և այդպիսի գործ իրեն յանձնուած չէր Հաւատասփիւռ ժողովոյն իրեն տրուած թղթով. — Թէ այս թուղթը ոչ խորհըրդարանին և ոչ ալ վիճակաւոր եպիսկոպոսին ներկայացուած չէր, ուստի և արժան էր համարել զայն իբրու պատճառ մը իրեն տրուելիք թոշակին: Հետեւաբար թոյլ տրուեցաւ որ Հայրապետ կարող ըլլայ շարունակել իւր բնակութիւնն ի Մարսիլիա, միայն պայման դնելով՝ որ բացարձակաբար չխառնուի հայկական տպագրելի գրոց սրբագրութեան խնդրոյն և գործին, նոյնպէս ուրիշ ո՛ր և իցէ պաշտօն չի կատարէ, առանց հրամանի կամ յանձնարարութեան վիճակաւոր եպիսկոպոսին: Վճիռը պարտք մ'ալ կը դնէր Սողոմոն Լեւոնեանի, որ պարապելով ի հրատարակութիւն իւր ազգին գրչագիր մատենից, համաձայնի ճըշդութեամբ ամենայն պայմանաց 1669ին տրուած արտօնագրին. կամ ուրիշ խօսքով, կարող չըլլայ գաղտնաբար ուղղափառ հաւատոց վարդապետականին հակառակ բան մը հրատարակել:

Հայրապետեան իր ուզած դիրքին մէջ հաստատուելով, առաջինէն աւելի բուռն և իշխանական կերպ մը առաւ: Նոր ցուցակ մը յօրինեց ի լատին լեզու, յորում Ոսկանայ ժամագրոց և ի Մարսիլիա հրատարակուած ուրիշ հայ մատենից մէջ գտնուած ոչ ուղղափառական բացատրութիւններն շատ աւելի կը գտնէր, և կը պահանջէր միանգամայն սրբագրութիւն Աստուածաշունչ գրոց՝ զոր Սողոմոն կ'ուզէր վերստին տպագրել ըստ մասին, (այսինքն Նոր կտակարանը), որպէս զի ըստ ամենայնի համաձայնիցընէ լատին Վուլկաթային հետ:

Այսպիսի պահանջմանց համար կրկին բարձրացան զօրաւոր բողոքք, և որոց ամենուն բերան եղաւ Ուիշար

Սիմոն։ Իր հրատարակած երկու նամակներով՝ 1683 տարւոյն սեպտեմբերի 20 և 28 թուականաւ, Պարիսացի իմաստուն վարդապետն կը ստորագրէ Մարսիլիայի Հայոց կրած ամէն նեղութեանց պատմութիւնը, և Հայրապետի կողմանէ տրուած ցուցակի ամէն մոլորութեանց ամբաստանութիւնն մէկիկ մէկիկ կը հերքէ, մեղադրելով թէ զինքն և թէ իրեն համակարծիք սեպուող Փիլիպ Դը—Բոսէ. « Հայոց իրաւունք և արդարութիւն ընելու համար, — կ'ըսէ, խօսքն աւարտելով, — հարկ է արեւելեան աստուածաբանութեան հմուտ անձանց հետ խորհրդակցիլ. և այսպիսիք՝ դիւրագոյն է գտնել ի Պարիս քան ի Մարսիլիա »։

Ռիշարի կողմանէ յարուցած վէճը կրնար Հայոց դատին պաշտպաններ գտնել զոմանս ի վարդապետաց Սորբոնի. բայց ասով բնականաբար Մարսիլիայի աստուածաբանից անձնասիրութիւնը պիտի վիրաւորուէր։

Գեր. Տէթան անակնկալ մահուամբ վախճանեցաւ ի Պարիս 1684 յունուարի վեցին. ճիշտ այն օրը՝ յորում որոշած էր մեկնիլ ի վիճակ եպիսկոպոսական պաշտամանն. և մայր եկեղեցւոյն կանոնիկոսաց ժողովը կրկին հաստատեց զԴը—Բոսէ ի պաշտաման փոխանորդի ի նորոգ պարապութեան աթոռոյն։ Հայ տպագրիչք՝ որոց համբերութիւնն ալ վերջին ծայր հասեր էր տասը տարուան անդադար հակառակութիւններէն, յոյսերնին դրած էին Գեր. Տէթանի արդարասիրութեան և ընելիք բարեկարգական սահմանադրութեանց վրայ։ Իր մահը՝ և Գը—Բոսէի կրկին պաշտաման բարձրանալը՝ զիրենք յուսահատութեան մէջ ձգեց, գիտնալով որ ի՛նչ կերպով ալ շարժին՝ անկարելի պիտի ըլլայ մտնել ի շնորհս եպիսկոպոսին Մարսիլիայի։ Կրնային փոխադրել զտպարանն Թագաւորութեան ուրիշ ո՛ր և իցէ քաղաք մը, 1669ին տրուած արտօնագիրը կու տար իրենց զայդ իշխանութիւն. բայց օրինաց խստապահանջութեան զար մ'էր ի Գաղղիա։ Հերե-

Digitized by Google

տիկոսական մոլորութեան ամբաստանութեանց տակ, յորմէ չյաջողեցան արդարանալ իրենց կողմանէ յաճախակի և ամէն օր կրկնուած ուղղափառ դաւանութեան բողոքանօք, լաւ համարեցան ապահովել իրենք զիրենք յարքունասաստ բարկութենէ, քան անոր պաշտպանութիւնը միւսանգամ խնդրելու հարկին ենթարկուիլ, յաջողութեան տարակուսանօք. ուստի և հետևաբար որոշեցին նոյն 1684 տարւոյն մէջ թողուլ հեռանալ Մարսիլիայէ և ի Գաղղիոյ, ուր լաւագոյն ժամանակաց մէջ կրկին պիտի դառնային իրենց թոռնորդիք։

* * *

Տասը տարուան մէջ (1674–1683), — վասն զի այնչափ միայն եղաւ տպագրական գործունէութիւննին յայնմ քաղաքի, — իրենց ձեռքով հրատարակուած գրքեր քիչ ծանօթ են և անով մանաւանդ աւելի հետաքննականք, որ կ'օժանդակեն մեզ ի տեղեկութիւն պատմութեան տպարանի արուեստի ի Գաղղիա, և կրօնական ազատութեանց յեօթնևտասներորդ դարու։ Մատենագիտութեանց մեջի նշանակածներն՝ ցարդ մետասանք են թուով, և որոց անուանքը՝ համառօտ նշանակութեամբ պարունակութեանցն, մարթ է գտնել խնդրողաց ի ցուցակին, զոր Հանրըսի հրատարակեց, ըստ ցուցակաց զոր արդէն յօրինած էին Զրպետեան ուսուցիչ և Սէն–Մարտին՝ Հայաստանի վրայ գրած յիշատակարանաց հատորներուն մէջ։ Բորի գաղղիացին կ'ըսէ, թէ մեր ամեն հետաքննութեամբն և փութով՝ հատոր մի միայն կրցանք յաջողիլ յաւելուլ այս արդէն ծանօթ ցուցակին վրայ, և որոյ խորագիրն է. «Գիրք Սաղմոսաց Դաւթի, տպագրեալ ի տպարանի սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրավարի, խնամօք և ծախիւք Սողոմոնի՝ քեռորդւոյ հանգուցեալ Ոսկանայ վարդապետի Երևանեցւոյ արքեպիսկո֊

պօսի, յամի Տեառն 1677, յ'8 յունուարի, ի Մար-սիլիա »։

Գտնենք նոս Հանրըսիի ցուցակը՝ իր բուն գաղղիական լեզուով, քաղելով Notice sur l'origine de l'Imprimerie en Provence *մատենէն ։*

1°. Les Psaumes de David et l'Eucologe arménien, avec l' ordre et le régulateur de l'office divin, selon le rite de l'Église d'Arménie ;1673.

2°. Les Psaumes de David avec un abrégé de Calendrier arménien, et la liste des noms de tous les Patriarches d'Arménie, par ordre chronologique ; 1673.

3° . Entretien avec Dieu, ou livre de prières composé par St. Grégoire de Nareg, docteur de l'Église d'Arménie, dans le X. Siècle ; 1674.

4° . Calendrier arménien en tablettes, pour l'usage du peuple de ce pays ; 1675 .

5° . Abécédaire arménien, avec un abrégé de grammaire italienne, expliquée en arménien ; 1675.

6°. Les préservatifs de la santé ; 1675.

7° . L'abrégé Géographique de Moïse de Khorène, avec un recueil de fables, connu chez les Arméniens sous le titre du Livre du Renard ; 1676.

8°. La Géographie de Moïse de Khorène ; 1683.

Ասոնք Գաղղիացւոյն նշանակածներն են ։ Մեզի ծանօթ տպագրութիւնք տասնուչորս են թուով, զորս դնեմք հրատարակութեանց թուականի կարգաւ.

1673. Գրգուկ կարեւոր. — Ժամագիրք առենի, Սաղմոսիւ. — Նարեկ (անկատար մնացած) ։

1674. Ճարտասանութիւն։ 1675. — Այբբենարան. —

Digitized by Google

Արուեստ համարողութեան. — Պարզատոմար։ 1676. Գրգուկ կարեւոր (երկրորդ տպագր.) — Մաշտոց. — Նուագարան կուսի։ 1677. Սաղմոս։ 1678. Ակն հոգե-կան. — Պարտէզ։ 1686. Ժամագիրք։

*
* *

Ազատ ու անկեղծ հիւրընկալութեան յիշատակն՝ զոր երբեմն վայելեր էր յԱմստերտամ հայկական տպագրու-թեան վերանորոգիչն Ոսկան, յորդորամիտ ըրաւ զՄտղո-մոն միւսանգամ հոն փոխադրել իւրեն տեսչութեան յանձնուած գործատունը, ուր զերծ ամէն հակառակու-թիւններէ և վերաքննութենէ, այդ քաղաքին մէջ օգնա-կանութեամբ Մատթէի Վանանդեցւոյ տպագրեց և կրկին տպագրութիւններ ըրաւ զանազան գրոց, համաձայն յարեւե-լից բերուած գրչագրաց։

Բայց այս խնդրոց և շփոթութեանց միջոցին՝ Եւրո-պիոյ քանի մը քաղաքաց մէջ կը շարունակուէին այլեայլ տպագրութիւնք ընծայուիլ ի հայ լեզու։ Ասոնց մէջ գլխաւոր կրնար սեպուիլ Հռովմայ Ուրբանեան վարժարանի տպա-գրատունն, ուստի՝ ինչպէս տեսանք, արդէն տարիներ յառաջագոյն ելած էին քանի մը հրատարակութիւնք ի մեր լեզուս, որոց գլխաւոր շարժառիթ և փափաքող կ'երեւնայ մեզմէ այլ և այլ անգամ յիշատակուած Յովհաննէս Յա-կոբ բիւզանդեան կամ Հոլով կոչուած վարդապետն, որ մերթ ի Վենետիկ կը գտնուէր, մերթ ի Լիվոռնոյ և ի Մարսիլիա, և յաճախագոյն ի Հռովմ. ուր՝ և սուրբ ժողովոյն ակնարկութեամբ և հաճութեամբ այլ և այլ թարգմանութիւնք ըրած է կամ ինքնագիր երկասիրու-թիւնք, և որ տպագրուեր են ի յիշեալ տպարանի Ուրբա-նեան վարժարանին։ Ասոնք են 1671ին Բոնա ծիրա-նաւորին Manuductio (ի Թարգմանչէն Ձեռքածուցութիւն կոչուած) գրոց առաջին տպագրութիւն. երեք տարիէն

(1674) Գեմրացւոյն ընծայուած Նմանութեան գիրքը. Զտութիւն հայկաբանութեան, և Պօղոս Պիրոմալլի մէկ գրուածը. ի նմին ամի նա և Ճարտասանութիւն մը ի Մարսիլիա։ Յետագայ տարիներուն՝ ցամ 1681, զանազան մանր մունր գրոց տպագրութիւնք եղած են ի Հռոմ նոյն անշուք և անհարթ տառիւք. և այն թուականէն ետքը առ ժամանակ մի դադրեր են նոր հրատարակութիւնք մինչև ի 1695. յորում եղած է և փոփոխութիւն տպագրական տառից՝ համեմատաբար ընտրելագունից փոխանակելով զհինսն։

* * *

Երբ Մարսիլիայի գործարանն փակուելու վրայ էր, 1677ին նոր տպագրատուն մի կը բացուի ի Պոլիս. ուր ինչպէս կը յիշեն անշուշտ մեր ընթեցողք, Աբգար Թոխաթեցի և իւր ընկերներն փորձ մը ուզեցին փորձել ու չյաջողեցան յառաջ տանիլ։ Երկրորդ փորձ մ՚ալ ուզեց ընել, բայց դրեթէ հաւասար անյաջողութեամբ, Երեմիա չէլէպի Քէօմիւրճեան։ 1706ին նոյն Պոլիս քաղքին մէջ տպագրուած Ցայսմաւուրք գրոց յիշատակարանին մէջ՝ հրատարակիչն Գրիգոր մարսուանեցի կ՚աւանդէ, թէ ինչպէս «հռետորն Երեմիա չէլէպի Քէօմիւրճեանց՝ յառաջագոյն բազում ջանիւ և աշխատանաւ կրեցեալ էր վասն գործարանիս և յառաջ ածեալ։ Եւ տպագրեալ վասն փորձարանաց (կուզէ ըսել՝ փորձոյ) գրոյն՝ փոքրիկ տետրակս երկուս»։

Այս երկու փոքրիկ գրքոյկներն են, ինչպէս նոյն յիշատակագիրն կ՚ակնարկէ «գովասանութեան իւրոյ յարմարեալ ի սուրբ տնօրինականացն Քրիստոսի. և միւսն տաղս գեղեցիկս»․ յորոց երկուքէն ալ մէյմէկ օրինակ ձեռուընիս հասած են։ Առաջնոյն մակագիրն է. «Տեղեաց տնօրինականաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,

որ ի սուրբ Երուսաղէմ և ընդ գաւառսն ։ Զպատմողաբարն ստաշարեալ, զոր տեսեալ տէր Յովէփ վարդապետ հրամանատար տեառն Եղիազար կաթուղիկոսի Երուսաղէմայ, կամակցութեամբ տեառն Սուքիաս բաբունապետի ետուն տպագրել ի փառս փրկագործողին Քրիստոսի և ի պարծանս քրիստոնէութեան հաւատոյս ։ Երախայրեցուցեալ առ հոգևոր տէրն. բնաբանիւ Պնէ. Տնօրիննի թիւ խ եղանակէ» ։ Երեսուն և մի իջից մէջ բովանդակած քերթուած մի, հնգետասան պատկերօք ան զեաց տնօրինականաց յԵրուսաղէմ, զոր հեղինակն շարադրեր է ի 1665 ։ Իսկ երկրորդ հրատարակութիւնն է, ըստ խորագրին, « Գիրք որ ի մնայորդացն Յիսուս որդւոյ գրոյն Տեառն Ներսիսի Կլայեցւոյ տնօրինեալ սաստանօր իմն ի տպագրութիւն շնորհօք Տեառն որ ի ծննդենէ Քրիստոսի ՌՀ և Է. և ի Հայոց ՌՃԻ և Զ թուականք զոլ ի սեպտեմբերի և Գ գիպելոյ սակի. և գրուատ խաչին Յիսուսի, երախայրեցաւ ի փառս բարերարութեանն ։ Եւ զցանկ գրոցս ի վերջքն գտցես. և կամեցելումն քո սիրեցելովդ զքօսնուցաւս ով ուսումնասէր հոգիս փէտէրի ազիզ Ատել ֆէմ Նազիս Քէրլէնտի Ֆարիս» ։ Այս տարից մարք, ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնեմք, կ'անցնին ի ձեռս Գրիգորի մարսուանեցւոյ, և ըստ կարի բարւոքմամբ ձևոց կը գործածուին ի տպագրութիւնս գրոց ։

* * *

Նոր հայկական տպագրութիւն կը տեսնենք ի Վենետիկ 1678ին, և այն ոչ ազգայնոյ մը ձեռամբ, ինչպէս նախընթացաբար եղածներն, այլ Միքայէլ — Անգելոս Բարբոնի կոչուած իտալացւոյ մը, որ անշուշտ շահադիտական նպատակաւ և կամ ի յորդորելոյ հայ բարեկամաց ըսկսաւ իր արդէն ունեցած տպագրատանէն հայերէն գրքեր ալ հրատարակել, և որոց առաջինն եղաւ,

յամին 1678, Տօնացոյց մը, ու երկու տարիէն ետքը Աւետարանաց գիրք ի 1680 «տպագրեցեալ, ինչպէս կը նշակուի ի ճակատուն, հրամանաւ Սանթ'օֆիցիին», ինչպէս օրէնք և կանոն կը պահանջէր Վենետիկոյ հասարակապետական իշխանութեան, կրօնքի և հաւատոյ վերաբերեալ ամէն գրքերը՝ Հռովմայ Հաւատաքննութեան ատենին ժողովոյն ի քաղաքին գտնուած գործակատարին հրամանաւ տպագրելն. 1685ին երկրորդ տպագրութիւն մ'ալ կը հրատարակէ Աւետարանին, աւելցընելով նաև համաբարբառ ընթերցուածքը, «արդեամբք և գոյիւք ագուլեցի Մարտիրոսի որդի Ոսկանին», և ի յիշատակարանին կը յաւելու, թէ եղած ըլլայ «բազում երկամբք և աշխատանօք, վասն ոչ գտանելոյ զհամաձայնութիւն համաբարբառից, ի պատճառս անհոգութեան գրչացն, քանզի մինչև ցայժմ համաբարբառիւք աւետարան ոչ էր տպեցեալ երբէք՝ վասն դժուարութեանց զանազանից թուոցն, մեք վասն պայծառութեան Հայոց յանձն առաք զամենայն դժուարութիւն, որպէս զի սփռեալ տարածեսցի ի միջի ձերում»...:

Որոշակի բան մը չենք կրնար զրուցել թէ Բարբոնիի ձեռք ուստի՛ ընկած են այս հայկական տառք, որք կամ Անկիւրացւոյն են, և կամ աւելի հաւանականաբար նոր փորագրութիւնք, և կամ ստանալով ի Հռովմայ, ուր թերևս կը պահուէին. զի նոյն տառիւք ի Հռոմ տպուած կը գտնեմք յամի 1674 Պիրոմալլիի գիրքը: Բայց այս տառերէն զատ՝ Բարբոնիի ընծայուած տպագրութեանց մէջ կը գտնեմք նաև միջին չափով տառեր, որ անշուշտ իր ջանքովն ու ծախիւք փորագրուած են:

Ի նմին գործարանի տպագրուած է, նոյն 1680 թուականին, Հայելի ճշմարտութեան կոչուած Յովհաննու Յակոբայ մէկ երկասիրութիւնն կամ թարգմանութիւն. ու հետևեալ տարւոյն, 1681, համառօտեալ Ժամագիրք մը, ինչպէս ուրիշ մանր երկասիրութիւնք, որոց ցուցակը՝

ըստ Թուոյ հրատարակութեանց կը գտնենք ի վերջ մատենիկանս, և որ կը շարունակէ գործել ցամ̃ 1690, յորմէ և անդր կը դադրի անունն, և հրատարակած վերջին գիրքն կ'ըլլայ խորհրդատետր մը:

Բարբոնիի տպարանին նշանագրոշմն՝ զոր կը դնէ ի վերջ իւր տպագիր մատենից՝ են իտալերէն barboni կոչուած երկու ձկունք:

Սակայն ի մէջ 1685 և 1687 թուականաց կը յիշատակուի ուրիշ իտալացի տպագրապետ մի, որոյ անունը՝ Յակոբ Մորետտի (Giacomo Moretti) կը գտնենք իտալական տառիւք նախ ի վերջ Սաղմոսարանի մի, և ի 1687 Պատասխանատուութիւնք կոչուած և ի Յովհաննէ Յակոբայ շարագրեալ գրքին, նշանակելով զանուն հրատարակողին «առ Եաքօմոյ Մորէթթի»: Իրմէ զատ և ի մի և նոյն ժամանակի զբաղին ի Վենետիկ հայկական տպագրական գործով և ազգայինքն՝ մեզի յառաջագոյն ծանօթ Թադէոս երէց Համազասպեան և Սահրատեան Նահապետ, մի և նոյն՝ 1687 տարւոյն իրարմէ անկախ կերպով:

Թադէոս ի Լիվոռնոյէ և ի Մարսիլիայէ կը փոխադրուի ի Վենետիկ, ուր 1686ին կը տպագրէ զխորհրդատետր և զՃաշոց գիրս: Շահրիմանեան մեծանուն և մեծահարուստ ընտանիքէն՝ Ջուղայեցի խոճայ Սահրատենք տպարան մը կը բանան ի Վենետիկ, որ ի ճակատս խորհրդատետրին «Նորակերտ» կը կոչուի, ճոխացեալ նորաձոյլ և վայելչաձև տառիւք, մեծ և փոքր, ծաղկագիրք, զարդագրովք և պատկերօք, յետ Ոսկանի՝ գլխաւոր պատիւ բերելով ազգային ճարտարութեան այս ճիւղին: Տպագրութիւն եղած է «արդեամբք և գոյիւք պարոն Գասպարին»:

Ի վերջ գրոյն՝ յետ աւարտման մատուցման սրբոյ պատարագին՝ խորհրդակատար քահանային բերանն կը դրուի, սովորական գոհութեան խօսքէն ետքը «Տէր Յիսուս Քրիս-

տոս Աստուած ողորմեա ինձ ։ Եւ մատակարարի գործարանիս Թաթէոսի Երիցու Երեւանեցւոյ և ծնողաց նորին »։ Անմիջապէս յետոյ գրուած յիշատակարանին մէջ կ՚ըսուի. « Ի վախճանի աստուածային պատարագամատոյցի այսորիկ աղաչեմ զտեարսդ իմ անմեղադիր լինել խրթնութեան նորատիպ տառիս և դեռաշէն գործարանիս, որովհետև ամենայն իրաց սկիզբն դժուարութիւն է ։ Եւ զի գրակերպքն, գրաձոյլքն և դրաշարք անվարժք գոլով, հազիւ զայսքանս հնարել կարացին մեծի աշխատութեան մեզ առիթք լինելով։ Բայց յուսամ թէ այսուհետև ամենայն ինչ ամբողջապէս ընթանայցէ առանց թերութեան ։ Այժմ օգնութեամբ տեառն սկիզբն արարաք Ճաշոցին, որ թէպէտ գործ իմն տաժանելի է և դժուարին մեզ գործավարացս, բայց յոյժ վայելուչ ձեզ վայելողացդ թէ ըստ ձևոյն և թէ ըստ ճոխութեան ։ Զոր և հաւատամ թէ հաճելի լինելոց իցէ ի փառս Քրիստոսի և ի պարծանս ազգին մերոյ և ի գովեստ Սրբազան Հայրապետին Տեառն Եղիազարու, և յիշատակ անջնջելի տանն Սահրատեան ։ Արդ որ վայելէք զսա՝ յիշեցէք յաղօթս զպարոն Գասպարն, և զնորաբողբոջ որդիս նորին Աղայ Ստեփանն, Սահրատն և զԲարսեղն »։ Յետոյ եւրոպական տառիւք և թուականաւ. In Venezia, M. DC. LXXXI. Per Giacomo Moretti. Con licenza de' Superiori ։ Իտալացի տպագրապետին անունն կամ անոր համար գրուած է՝ որ իր գործարանէն հրատարակուած է, և կամ տէրութեան օրինաց ձևականութեան պահանջանաց համեմատ ։ Իսկ տպագրուած գիրք, զուտ հայկական կերպարանքով է, առանց կրելու յինքեան նախընթաց տպագրութեանց մէջ ներմուծուած փոփոխութիւններն ։

Իսկ Ճաշոց գրոց համար կ՚ըսուի ճակատումն թէ տպագրութիւն եղած է « ներսպարանում ճուղայեցի խոճայ Սահրատի որդի պարոն Գասպարին, և Թաթէոսի երիցու

Երեւանեցւոյ Համազասպեան »: Որով կրկին անտէրք տպարանին կը նշանակուին. և Թադէոս երէցն ոչ լոկ իւր նիւթական գործակցութիւնն կ'ունենայ, այլ և դրամական ծախուց մասնակցութիւն: Ի գլուխ գրոցն ընծայական մը գրուած է ի Համազասպեան երիցուէ առ սրբազան կաթուղիկոսն Եղիազար, յորում կը պատմէ թէ ի՛նչպէս ի Սպահան գտնուած առեն յայտներ է իւր փափաք հայկական գրոց նորանոր տպագրութեան առ ազնուատոհմ Սահրատի որդի Գասպարն, և խոստումն ընդունած իրմէ դրամական նպաստի. որոյ վրայ յաւելլով նաև իր քիչ շատ ունեցածը, կը ճանապարհորդէ ի Մարսիլիա, ուր էր յայնժամ Ոսկան վարդապետ, և իր բացած տպարանն: Եւ ուր Ոսկան, և իր ընկերակիցք և ազգակիցք՝ զնա ինքն Թադէոս կը համարին ոսկանեան տպարանին աւերման և քայքայման պատճառ, Երեւանեցին կ'ըսէ. գտանելով զտպագրատունն տապալեալ և ի սպառ քայքայեալ և աւերեալ, դարձաւ ի Վենետիկ. հետն բերելով « զկատարեալ իւրն տօնացոյց՝ ի գիտնոց արանց սրբագրեցեալ և զգուշապէս գաղափարեալ. և զերկուս և զերիս ճաշոցս՝ հարուստս և ճոխս, մեծաւ հնարիւ աստ և անտի հազիւ ի ձեռս արկեալս. բայց անհամեմատս և անբաղդատս միմեանց թէ՛ ընթերցուածովք և թէ աղօթիւք տէրունականացն տօնից »: Եւ երբ տարակուսանաց մէջ էր թէ որո՛ւն համեմատ արժան է որ ընէ իր ընտրութիւնը տպագրութեան համար, ըստ բաղդի ձեռքն ընկաւ հոն ի Վենետիկ « ճաշոց իւրն վաղեմեան՝ ամբողջ և անթերի, ի գանձուց հնոց թագաւորացն Հայոց », զոր համեմատելով Աստուածաշունչ մատենից հետ, ընթերցուածովքն ամենևին համաձայն գտաւ զայն: Ուստի վստահութեամբ երկու տեսակ նորակերպ տառից փորագրել տուաւ. մին մեծ և միւսն մանր խորագրոց գործածութեան. և տպագրատան կարևորքն հոգալով, տպագրեց նախ զԽորհրդատետր, զոր յիշատա-

կեցինք, ապա Ճաշոց գիրք, ամենայն հնարաւոր ճոխութեամբ զարդուց, ծաղկագրոց և պատշաճական պատկերաց: Հոն ի Վենետիկ գտնուեցաւ նա և Ցոլէփ ոմն կոչեցեալ արքեպիսկոպոս Զմիւռնիոյ, որոյ խորհրդակցութեամբ և հաճութեամբ վարուեցաւ Թադէոս՝ իր այս մեծ և բազմածախ ձեռնարկին մէջ, որ իր թերութեամբքն ալ նկատմամբ տպագրական ուղղութեան, մեծ պատիւ կը բերէ իր անվեհեր ջանիցը և Սահրատեան տպարանին: Իրեն առաջնորդ բռնած սկզբնագրին վրայ՝ հետեւեալ տողերը կը քաղենք ոտանաւոր յառաջաբանէն, որ անմիջապէս առ Եղիազար կաթուղիկոս ուղղուած ընծայականէն ետք դրուած է. «Ցօրինակէ գաղափարեալ՝ — Որ յարքայից էր յօրինեալ, — Ի Կիլիկիոյ գանձս ամբարեալ, — Եւ ըղձմատեանն անտի բերեալ: — Վաճառականք մեր մի եղեալ, — Որք ի կըղզւոջ յայսմիկ բնակեալ, — Զխորհուրդ բարի յառաջ արկեալ, — Եւ ըղձմատեանն անտի բերեալ: — ... Արդ ըղձերքն զայն մինչ մեր տեսեալ, — Ցերկնից պարգև զոլ համարեալ, — Մեզ գաղափար պատճէն ընտրեալ, — Զգուշաբար նըմին հետևեալ»: Գործոյն ընթացից մէջ տեղ տեղ գրուած համառօտ յիշատակարանք, երբեմն նա և ոտանաւորք, կը յանձնեն յիշել զԹադէոս՝ մատակարար զնա կոչելով գործարանին և զծնողս նորա [1]:

1. Աղուանից երկիր և դրացիք նոր գրքին հեղինակ Բարխուտարեան Մ. Վ. կ'աւանդէ (յէջ 265) եկեղեցւոյ մը աւերակաց մէջ որմուած ու վերջերս յայտնուեր է 1686ին յԷջմիածին տպագրուած ճաշոց մը: Աղանեան Գիւտ քահանայ Սիմէոն կաթողիկոսի կենսագրութիւնը կոչուած գրքին մէջ (Արձագանք, 1894 թիւ 36) կ'ըսէ թէ «մեծ դըժուարութեամբ նոյն իսկ Հ. Բարխուտարեանցի ջանքով արտագրել տալով այդ ճաշոցի պատառոտուն յիշատակարանը՝ համոզուեցանք որ դա տպուած է ոչ թէ ս. Էջմիածնում, այլ «ս. Էջմիածնի» անուանած մի և նոյն տպարանում, որ երբեմն Մարչիլիա (Մարսէյլ) էր գործում և երբեմն յԱմստերդամ»:

Մեր դրածէն յայտնի կ'երևնայ թէ կը վրիպի նաև Գիւտ քահա-

Digitized by Google

Յիշեալ երկու եկեղեցական գրքերէ զատ ուրիշ տպագրութիւն չենք գտներ Թաղէի ձեռքով եղած, ոչ հոս ի Վենետիկ և ոչ այլ ուրեք։ Բայց նոյն Սահրատեան տպարանէն ի լոյս կ՚ընծայուի ի յետագայ 1687 ամին համառօտ հոգեւորական գրքոյկ մի, խոկումն քրիստոնէական, թարգմանութեամբ Յովհաննու Յակոբայ. որոյ երկասիրութիւն է նաև Պարզաբանութիւնք Սաղմոսաց, որ ի մի և նոյն ամի կը տպագրի ի Վենետիկ, ի հայկական մասնաւոր տպարանի, զոր իւր տան մէջ կը հաստատէ Նահապետ ոմն ազգային վաճառական ագուլեցի։ Այս անձին, ինչպէս նաև գործարանին և Վենետկոյ մէջ ունեցած պարապմանց վրայ արդէն ուրիշ առթով գրուած է լիուլի, յորմէ համառօտելով քաղենք հետևեալ մասերը, որ մեր նիւթին կը վերաբերին։

Արդ Պարզաբանութիւնք Սաղմոսաց կոչուած գրքին ճակատուն և յիշատակարանին մէջ կ՚ընթեռնումք թէ ի՛նչ առթով և որո՛ւ ձեռքով եղած է թարգմանութիւն և որոյ ջանիւք տպագրութիւնն, որ և համառօտութիւն մի կրնայ համարուիլ գրոց տպագրութեանը պատմութեան։ Արդ է « Պարզաբանութիւն սաղմոսացն Դաւթի մարգարէի. ժողովեցեալ ի զանազանից մասնից վարդապետաց եկեղեցւոյ, և թարգմանեցեալ... ի նուաստ Յոհաննիսէ վարդապետէ կոստանդինուպօլսեցւոյ... Եւ տպագրեցեալ արդեամբք և գոյիւք ագուլեցի խօճայ Գուլնազարի որդի խօճայ Նահապետին, ի սեփհականի — տան իւրում, ի թուականութեան մերում ՌՃԼԶ »։ Աւելցընելով ապա և յիտալական լեզու. In Venezia, per Naabiet de Gulnazar, 1687. Con licenzia de' superiori e privilegio ». Ի յիշատակարանին ալ

նայ, Վենետկոյ տպագիր ըլլալով այս ճաշոցը, մի և նոյն 1686 թուականին. զի ոչ ի Մարսէյլ և ոչ յԱմստերտամ, ուր Ոսկանեան գործարանք Էջմիածնի անուամբ հաստատուած էին, երբէք ճաշոց գրոց տպագրութեան ձեռնարկած չեն։

կ'աւանդէ... «... Ես զկարողութիւն պաշտօնէիցս ի բազմավիշտ և ի յոգնավտանգ ժամանակիս հաստուցանել ի կատար և ի վախճան զքաղցրանուագ և զհոգեյորդոր Պարզաբանութիւն Սաղմոսացն Դաւթի մարգարէի, ի Թուականութեանս մերում ՌՃԼԲ. սեպտեմբեր ամսոյ Ժ. ի Վենետիկ քաղաքի։ Արդ որ վայելէք զսա առողջութեամբ ի շնորհս Տեառն, յիշեցէք ի սրբազան աղօթս ձեր զԱգուլեցի խօճա Գուլնազարի որդի զխօճայ Նահապետն. ընդ բնաւից ծնողաց և ազգականաց նորին հանգուցելոց ի Քրիստոս. որ աջողեցութեամբ Հոգւոյն սրբոյ և յօրդորմամբ բարեպաշտից ոմանց մերազնեաց՝ եմուտ ի զոլելի գործառնութիւնս այս. և մեծաւ հոգաբարձութեամբ յառաջեցոյց զԹարգմանութիւն և զապագրութիւն սորին. վատնելով զգոյս և զինչս բազումս ի ձուլումն գեղեցիկ տառից, ի շինումն նորակերտ տպարանիս, ի գնումն պատուական թղթոյս, և ի յօրինումն ամենայն իրաց պիտանաւորաց յայսմիկ նուազեցելում ամի, յորում համայնք առեւտրութիւնք զոն խանգարեցեալք. առ ի թողուլ զյիշատակ իւր անջնջելի զկնի ինքեան ի խրախճանս հանուրց Հայկազունեաց... Յիշեցէք ևս... զԱգուլեցի մղտսի Աստուածատրի որդի զսպար սաւորն իմ զԹօմայն. որ ամենայն ջանիւք անձանձիք աշխատեցաւ ի տպագրատանն և օգնեաց ի սրբագրութիւն սորին. և ձեռնտու եղև միշտ Յովհաննէս վարդապետին... »։

Սաղմոսաց Պարզաբանութեանն առաջ, 1683ին, Յովհաննէս վարդապետ յիտալական լեզու Թարգմաներ, ու հայերէն բնագրին հետ տպագրեր էր ի դրոշմատան Միքայելի Բարբոնի իտալացւոյ, որոյ յիշատակարանին մէջ կը նշանակուին անուանք «Արձանացուցօղաց գրոցս. և մանաւանդ Ագուլեցի Նահապետին, և Ջուղայեցի Ղարսաշենց պարոն Անտոնին», որով կ'երեւնայ թէ այն Թուականին իրեն յատուկ տպարանը չունէր Ագուլեցին

Նահապետ, որ և իր երկրաւոր կեանքը կնքած է 1694 տարւոյն վերջին օրը։

Այժմ վենետկէն պէտք է նորէն անցնինք ի Ջուղա, ուր արդէն մեր ընթերցողաց ծանօթ տպարանէն վերջին երկու հրատարակութիւնք կ'ըլլան ի 1687 և ի 1688, և կը լռէ այնուհետև հայկական մամուլ՝ մինչև մեր օրերուն նոր կեանք մը ստանալը։ Այս կրկին հրատարակութիւնք են, առաջինն՝ Աղեքսանդր վարդապետի Ջուղայեցւոյ, յետոյ կաթուղիկոսի, գիրք մը հետևեալ խորագրով. «Գիրք որ ասի վիճաբանական, ներտպագրեցաւ ի տպարանում սրբոյ Ամենափրկչի վանացս Նոր Ջուղայու. ի հայրապետութեան տեառն Եղիազարու... և յառաջնորդութեան այսմ նահանգի տեառն Ստեփանոսի յայտածողի զտպագրատունս և հրամայողի առնել զգիրս։ Աշխատասիրութեամբ ամենա՛ նուաստի՝ տէր Աղեքսանդրի ծառայի բանի, ի թուականութեանս Հայոց ՌՃԼԶ»։ Ետին 3 իբրու յառաջաբան «Առ քրիստոսասէր և յուղղադաւան ժողովուրդս հայկական՝ ի Քրիստոսի նուաստ ծառայից ծառայ Աղեքսանդր պիտականուն վարդապետէ յայտարարութիւն»։ Զունի մասնաւոր յիշատակարան բայց հետևեալ տաղերը.

Ինձ ողորմեա՛, տէր իմ Յիսուս, Աստուած և Բան,
Աղէքսանդրի քո ծառայիս որ պարտական,
Որ եմ նըպաստ սակաւ բանից որ ասացան.
Զիս յիշեսցես յաւուր մեծի քոյ գալըստեան.
Հազար հարիւր երեսուն և մին էր թուական,
Զայս բանս գրեցի վասն փրկչին դաւանութեան.
Որք հանդիպիք սիրով եղբարք ուղղադաւան,
Զիս յիշեսջիք վասն յուսոյ արքայութեան։

Զսակաւ աշխատողս սորին և զյարմարող զԱղեքսանդր՝ անուամբ եւեթ բանի սպասաւոր՝ յիշել աղաչեմ ով դասք ուղղափառաց հայկական տոհմի։ Ի թուոջ ՌՃԼԱ։ Ե-

ղեւ կատարումն տպագրութեան գրոցս ի գահս արքայանիստ և ի գեօղաքաղաքիս Ջուղա, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչի վանացս, ի թուին ՌՃԼԶ, և գթիւ տպոյս է հինգ հարիւր ։

Այս տպագրին մէջ կը յիշուի Ստեփանոս ոմն յայտածող տպագրատանս և հրամայող առնել զգիրս. որով թէ՛ տպարանին հաստատութիւնը և թէ տառից յօրինումն և ձուլումն իրեն կ'ընծայուի ։ Հետեւեալ տարւոյն հրատարակութեան յիշատակարանին մէջ աւելի բացայայտ կ'երեւնայ իր անձնաւորութիւնն և արդիւնք յարուեստի տպագրութեան ։ Այս գիրքն է Մրքուզ Յովհաննու Ջուղայեցւոյ երկասիրութիւն, այսպիսի խորագրով· « Գիրք իսկապէս համառօտ վասն և ճշմարիտ հաւատոյ. և դաւանութիւն ուղղափառ կաթուղիկէ ընդհանուր Հայաստանեայց եկեղեցւոյ, զորս առաք և ունիմք այժմ ի Գրիգորէ սուրբ Լուսաւորչէն, և երից սուրբ ժողովոյն և ի սրբոց հոգելընկալ երկոտասան վարդապետացն... Եղեւ տպագրութիւնս ի թագաւորութեան արքայից արքայ Շահ Սուլէման թագաւորին... Ի Ջուղա, ի վանս սուրբ Ամենափրկչի. ձեռամբ նորին առաջնորդի Ստեփաննոսի արհիեպիսկոպոսի. ի քալանթարութեան պայազատ պարոն Աւետին, աշխատողք տպարանումս զՍարգիս և զԱստուածատուր երիցունքն եւս յիշել աղաչեմք »։ Գրքին ճակատէն յառաջ գրուած է՝ այս ծանօթութիւն ի Ստեփաննոսէ, ինչպէս կ'ըսուի, « բանի պաշտօնէէ և վերադիտողի մասին Հայոց որք ի կողմանս Պարսից ։ Գիտութիւն. լիցի ձեզ սիրելեացդ, զի զպատճառ տպագրութեան մեր է այս. հետազօտ եղաք ներկայս՝ զի յոլովք գիրք գոյր յանյայտ յումեքէ ի մերայնոց նախնեաց սրբոց վարդապետաց. մանաւանդ պիտանիք, հարկաւորք և լուսաւորողք. և թէ ուրեք ուրեք առ այս և այն գտանի, զի՞նչ շահ և օգուտ հասարակին ։ Վասն որոյ ապաւինեալ ի յոյսն ամենից ի սուրբ հոգին. սկսաք ի լոյս ածել

զտպագրատունս. առ ի տպել զխաղեմի սուրբ գրեանքս. զոր յետ սուղ ժամանակի տպեալ առաքելոց եմք առ ձեզ։ Այլ ներկայս և թուղթք որ և գիրք ես. վասն ընդդիմութեան երկաքնակաց, թէ ո՞ և ո՞վ ոք աշխատասիրութեամբ ճնշեալ տքնութեամբ ժողովեալ և մեկնեալ հագաճս սրբոյ աստուածաշունչ գրոց»։ Հոս գրքին մէջ ամփոփումներն յիշատակելէն ետքը կը յաւելու. «Արդ որովհետև ոչ գոյր յազգին մերոյ տպագրատուն. եթէ տպեալ յոլովեցուցեալ սփռեալ էին ի տուն Հայոց, և ձեռագրով հազիւ այսպէս. և այսքան լինի որպէս տեսանէքդ. և յղել տալ տպել յերկիրն Ֆռանկաց, անմարթ և անկար։ Զի մերս գիրք՝ ինքեանց գրոցն է ներհակ. վասն որոյ ոչ կամին, և ոչ թոյլ տան առ ի բազմանալ մերայնոց սրբոց վարդապետաց գրեցելոցն։ Այժմ որովհետև պատրաստեալ եղև ի միջի մերում գործարան տըպագրութեանս, այսուհետև անահ և անկասկած տպելոց եմք զամենայն զգրեանս սրբոց վարդապետաց որ առ մեզ գոյ։ Բայց այժմ զկրկնակի փոքր գրեանսն որ գրաւ և կատարումն եղև. հինգ հինգ հարիւրով սփռեցաք առ ամենայն լուսաւորչածնունդ և ուղղափառ հայոց. զի են սոքա փորձ գործարանիս և գրչութեան. իբր առհաւատչեայ ի խրախութիւն քրիստոսասիրացդ։ Քանզի պատշաճ տեսեալ մեր ներկայս զնոսա հարկեալ ի վերայ սիրելի և հարազատ եղբարց Յոհաննէս և Աղէքսանդր վարդապետացս. որ և իսկոյն թարց տարակուսի հօգացեալ. առաք և տըպեցաք զհայցելին մեր. որոց Քրիստոս լիցի վարձահատոյց։ Զկնի որոյ զմեծամեծսն և կատարեալսն եմք տըպելոց... Եղև սկիզբն և կատարումն սորին ի վանս սուրբ ամենափրկչի Նոր Ջուղայու. ձեռամբ և հոգաբարձութեամբ տեառն Ստեփաննոսի նորին այցելուի...»։

Յիշատակարանն կը յանձնէ «յիշել ի Քրիստոս զսրբոյ մենարանի աստ գումարեցելոց. յուսուցչապետ և հոգեընկալ հօրս մերոյ Տեառն Դաւթի վարդապետի. որք միշտ

ի տպատու կան՝ և կատարեն զպաշտօն սրբոյ եկեղեցւոյս. որ և կամակցութեամբ միմեանց ջան եդեալ և զուն գործեալ, ի վերայ գործարանի տպագրութեանս. այս ինքն զՄիքայէլ վարդապետն, զՅոհաննէս վարդապետն զշարադրող գրոյս, զԱղեքսանդր միշտաքարոզ վարդապետն. զԵսայի վարդապետն. զԱհարոն վարդապետն. զհոգէբարձու վանաց և տպագրութեանս զՏէր Անդրէասն. զՏէր Թովմասն. զՏէր Յոհանն: Եւ այլ գործակալք տպագրութեանս. և միշտ աշխատօղք զՏէր Սարգիսն, և զՏէր Աստուածատուրն ի սրբոյ Յակոբայ. մանկդասի կոստանդ դպրապետն. զաւագ սարկաւագունսն, զՍէթն, զՍիմէոնն, զՄիքայէլն, զՆերսէսեանքն, զՅոհանէսն, զԱստուածատուրն, Գասպարն, Յոհաննէսն, Տէրոնն, Թորոսն, Փիլիպոսն, Պետրոսն, զՅոհանն, զԱնտոնն, զՀայրապետն . . . որ այժմ կան ի վերայ իւրաքանչիւր գործոց »:

Նախայիշատակեալ Ջուղայի մէջ եղած հրատարակութեանց հետ բաղդատելով այս երկու տպագրութիւններն, անհամեմատ առաւելութիւն կը տեսնենք յարուեստի, գրեթէ հաւասար գտնելով ասկէ հարիւր և աւելի յառաջ յԵւրոպա եղած հայ տպագրութեանց հետ: Միայն թէ տպագրողաց կողմանէ տրուած խոստմունք՝ նորանոր հրատարակութեամբ գոհացնելու ազգին մէջ արդէն զգալի եղող մտաւորական սնունդը՝ իրենց գործադրութիւնը չեն ունենար. և ցաւելու առիթ մը չենք տեսներ՝ զէթ մեր առանձինն կարծիքով, եթէ հետեւեալ հրատարակութեանց նիւթք՝ այս ընծայուած երախայրեաց նման ըլլային:

Հայկական մասնական տպագրութեան մ՚ալ կը հանդիպինք 1680 թուականին եղած ի Լայպցիգ կամ ի Լիպսիա Գերմանիոյ, որ և առաջին հայկական հրատարակութիւնն է յայնմ աշխարհի, ձեռամբ Անդրէի Ակոլութի, որ մեր լեզուին հմտացած, և իր գիտութեանը ճաշակ մը ուզեց ընծայել հայրենեաց, առաջին երախայրիք այն անծանօթ բարբառոյն, հրատարակելով Աբ-

գիրս մարգարէութեան կրող հին հայկական թարգմանութիւն մը. և այս վախճանաւ ստիպուեցաւ իր ծախքով հայ մասնաւոր տառեր փորագրել, ձուլել և տպագրել. հարկաւ ոչ մեծ ճարտարութեամբ արուեստի, այլ մեծագոյն ջանից և փութոյ յայտարարք։ Գրքին հայերէն խորագիրն է՝ Աբդիու Հայերէն. իսկ լատինականն, Obadias armenus quo cum analisi vocum armenicarum grammatica et collatione versionis armenicæ cum fontibus aliisque maximam partem orientalibus versionibus exhibetur primum in Germania specimen characterum armenicorum in celeberrima accademia Lipsiensi procuratorum, a M. Andrea Acolutho Vratislav. Siles. Anno epochæ Messenianæ MDCXXC, Armenorum MCXXIV. Lipsiæ, Typis Iustini Brandi.

Գրուածքին և անոր հեղինակին վրայ ուրիշ առթով և գրուածքին մէջ պէտք եղած տեղեկութիւններն տուած ենք։

* * *

Ի 1685 հայկական նորանոր տպագրութեանց սկըզբնաւորութիւն կ'ըլլայ յԱմստերտամ, վանանդեցի Մատթէի ձեռքով, և առաջին հրատարակութիւնն է Տարականաց գիրք մը, « տպեցեալ, ինչպէս ի խորագրին կը կարդամք, յԱմստէլօտամում քաղաքի, յամի տեառն 1685 »։ Իսկ ի յիշատակարանին « ... ի տպարանի Մատթէոսի վանանդեցւոյ, որ եթ (ենթ) անուամբ յանուն սրբոյ խաչի և ամենօրհնեցելոյ կուսին Մարիամու Աստուածածնի։ Ի հայրապետութեան տեառն Եղէազարու ամենայն հայոց կաթուղիկոսի և յաջորդ սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարթուղիմէոսի և սրբոյն Գրիգորի լուսաւորչին։ Ես նուաստս յամենից Մատթէոս

դպիրս՝ եկի ծառայելով ընդ արենակից վարդապետին իմոյ յերկիրն յիտալացւոց և ի մայրաքաղաքն Հռոմ, և վեհն իմ գնաց յայլ ուրեք, և ես դարձայ յԱլիկօռնոյ առ ոտս աշակերտի տեառն Ոսկանայ արհի եպիսկոպոսի՝ տեառն Կարապետի վարդապետի, և ուսայ ի նմանէ զարհեստ շարաբարդութեան, և մնացի ընդ վեհին Ոսկանայ արհի եպիսկոպոսի և քեռորդւոյ նորա Սողոմոնի ամս չորեքտասան, և վարձուց կողմանէ ոչ ինչ ընկալայ. քանզի և տէր Յակոբ կաթուղիկոսն գրեաց առ իս ի Մարսիլիայ թէ ընկալայ զհամբաւդ ի քէն զբարւոք ուսանիլն զարհեստիդ. վասն որոյ և զփոքր նամակս օրհնութեան առաքեցի առ հոգևոր որդեակդ իմ Մատթէոս, զի բարւոք ծառայիցես տեառն Ոսկանայ արհի եպիսկոպոսի աշակերտի իմոյ, և զկնի վախճանի նորա մի ումեք կարօտասցիս. այնպէս համարեա՛ թէ ինձ ես արարեալ, որպէս ասէ Տէրն. և ես զքոյ վարձն հատուցանելոց եմ. և եթէ մահ հասարակաց հանդիպի՝ զհետնամնաց նստօղ սրբոյ աթոռոյն պարտին հատուցանել։ Սակս որոյ ժամանակս բազումս ծառայեցի, և զկնի փոխելոյն նոցա առ Աստուած, և իմ տեսեալ զչարակրութիւն և զանաչողութիւն յամենայն կողմանց. վասն որոյ դիմեցի յերկիրն Հօլանդիոյ՝ ի վայելուչ քաղաքն յԱմստէլօտամ, և գտի զլաւ վարպետ իմն, որ անուամբ Նիկօլայուս ասի՝ և ետու յօրինել զգիրս այբուբենից բազմօք աշխատանօք, և զայլ տեսակս եւս գրոց նօտրի և բոլորի։

« Եւ ի աւարտման գործոյս՝ ոչ ունելով բաւականապէս զդրամս վասն տպելոյ զգիրս. և ընկերացայ ընդ տեառն Յօհաննու Երևանցւոյ սրբանուէր քահանայի և ընդ Ջուղայեցի պարոն Պօղոսին սակս երկուց գրոց միայն Շարակնոցի և Ժամագրքի »։

Այլ եւ այլ անձանց անուան յիշատակութիւնը մաղթելէն ետքը կը յաւելու. « Հուսկ յետոյ և զմեղապարտ դպիր Մատթէոս շարաբարդօղ և մատակարարօղ և օգ-

նիչ սրբագրութեան. յիշեսցիք ծնօղսն իմ զՕհաննէսն և զՄարիամն և զայլ արեանառու մերձաւորսն... կարի աշխատեցաք ի սրբագրութեան դորա. թէ ի հոլովս անուանց և ի նախադրութիւնս նոցա. թէ ի ժամանակս բայից և ի կերպաւորութիւնս նոցա, հետեւեալ հռետորին Արիստակէսի. վասն որոյ եթէ ոք հմուտ է քերթութեան, և վարժ գրչութեան Արիստակեայ, գտցէ և ոչ ինչ պակասեալ ի գրելոց նորին... Եւ թէ այլ ինչ սխալութիւն գտցի՝ այն չէ ի կամաց մերոց այլ ի մոռացմանէ. վասն որոյ խնդրեմք ներել, զպակասն լնուլ և զաւելորդն յապաւել, որք հմուտք էք արհեստի և մակացութեան, և զմեզ պահել անմեղադրելի: Իսկ որք ոչ էք ներհմտացեալ արհեստից գրչութեան և քերթողութեան, մի այլ ինչ բարուրէք յանդգնաբար, այլ ջանացարուք ուսանիլ զգրեալն և տեղեկանալ ներպարուրեալ գիտութեանն...»:

Վանանդեցին հետեւեալ 1686 թուականին Ժամագրոց տպագրութիւն մ'ալ կը հրատարակէ, «ի տպարանի՝ ինչպէս կ'ակնարկէ ի յիշատակարանին, Մատթէոսի, յամենավայելուչ քաղաքէն Վանանդոյ»: Հաւասարապէս ընթերցողաց և վայելողաց աղօթքին կը յանձնէ «զԵրեւանեցի զտէր Յօհան սրբանուէր քահանայն՝ և զՋուղայեցի պարոն Պօղոսն. քանզի ոչ ունելով բաւականապէս զդրամս տպելոյ զայն երկու գրեանս, վասն որոյ հարկաւորեցայ ընկերանալ ընդ տեառն Յովհաննու սրբանուէր քահանայի և ընդ Ջուղայեցի պարոն Պօղոսին, սակս երկու գրեանց, նախ շարակնոցի և ապա ժամագըրքի»:...

Ուրիշ տպագրութիւն մ'ալ ըրաւ նոյն գրոց ի նմին քաղաքի և յիւրում տպարանի ի 1688 թուին, համանըման նախընթացին և առանց մասնաւոր պատմական յիշատակարանի:

Այս հրատարակութեան վրայ եօթն տարի նոր հայ-

Digitized by Google

կական տպագրութեան յիշատակութիւն կամ գիրք չենք գտներ ի գործարանի Վանանդեցւոյն. բայց այդ միջոցին կը տեսնենք որ կու գան կը հաստատուին յԱմստերտամ ուրիշ նորանոր ազգայինք՝ ազգականք Վանանդեցւոյն, Թովմաս եպիսկոպոս Գողթնեաց, որոյ մօրեղբօրորդին է Յովհաննէս, և նոյն եպիսկոպոսին եղբարց որդիք՝ Ղուկաս և Միքայէլ, որոց համար կ'ըսուի իրեն տպագրած գրոց միոյն յիշատակարանի մը մէջ, թէ « են վարժք և ներհմտացեալք լաթինական լեզուի և կրթեցեալք յուսումն փիլիսոփայական բազմազան հանճարոյ »։

Վանանդեցւոյն Յովհաննու հրատարակութիւններէն յայտնապէս կը տեսնուի իր մեծ հմտութիւնն և վարժութիւնը այն արհեստին մէջ, ընտիր ախորժակն և եւրոպական այն ատենուան ճաշակին յառաջադիմութեան հետ համաքայլ ընթանալը, ուստի և յիրաւի և արժանապէս կը գրուատուէր ի կաթողիկոսէն, ինչպէս տեսանք ։ Բան մի միայն կը պակսէր թերեւս իրեն. դրամական միջոցաց դիւրութիւն անծանօթ ու հեռաւոր օտարութեան մէջ, որով կը բռնադատուէր միոյն կամ միւսոյն հետ ընկերութիւն կազմել, թէ՛ ծախուց դիւրութեան և թէ շահադիտութեան տեսակէտով։ Մեզ հաւանական կ'երեւնայ թէ այս կրկին նպատակաւ՝ Յովհաննու օժանդակութեան հասած, իրենց ուսմամբն և լեզուագիտութեամբ ձեռնարկեալ գործոյն աւելի ընդարձակութիւն, պայծառութիւն, փայլ տալու, որով և յազգէն՝ աւելի մեծ ընդունելութեան և օգտի ։

Եւ յիրաւի կը տեսնենք որ մեծ և ամենայն գովութեան արժանի արտադրութիւն մը կ'ընծայէ Թովմաս Գողթնեաց՝ Համատարած մեծ աշխարհացոյց մը, ի 1695, այս ստանաւոր յիշատակարանաւ.

«Նորոգ քանդակ գեղեցկավէպ հանրանշան,
Փոխաբերեաց Թօմա յետնորդ ոստ Վանանդեան·
Փորագրութիւն յոյժ ցանկալի

Ի ձեռն եղբարց հարազատի.
Աղբիանու Ըսկօնդէկլի
Եւ Պետրոսի քաջավարժի.
Ընդ Ղուկասու հըմտագունի
Երկամբք բազմօք յայտ ածողի
Եղբօրորդի իմ անդրանկի
Պահեսցէ Լին յիւրում ծոցի»։

Գրեթէ երկու դար ետքը՝ փորագրութեան այսչափ և այսպիսի յառաջադիմութենէ մը յետոյ, արուեստին հմուտք և հետամուտք՝ դեռ եւս զարմանօք և հիացմամբ կը նկատեն զայն, և որչափ ալ գլխաւոր արդիւնքը եւրոպացի արուեստագիտին ընծայեն, գովութեան մեծ մաս մ'ալ իրեն առաջնորդողին կը վերաբերեն աննախանձաբար, Ղուկայ Վանանդեցւոյ Նուրիճան։

Յաջորդ տարին Համատարածին վերաբերեալ ուրիշ երկասիրութիւն մ'ալ ընծայեցին հրատարակողքն, կոչելով զայն Բանալի համատարած աշխարհացուցի, այսպիսի յառաջաբան տեղեկութեամբ. « Շահաւէտութիւն և պիտանութիւն որ յաշխարհացուցէն յառաջագայի... բայց եւս քան զեւս պիտանանայ վաճառականաց, մանաւանդ հայկազարմից, որք ի մէջ ասիական և արեւելական ազգաց, ընդունելիք և յոչ սակաւուց սիրելիք, ընդ ամենայն աշխարհ զանքոյթ երթեւեկութիւն ունելով. զամենայն երկիր առ ոտն հարելով յաճախեն. վասն որոյ ոչ ընդ վայր աշխատիմք ի շահ և յօգուտ մերազնեայցդ, ի լոյս ածելով զՀամատարած աշխարհացոյցն հայկական բառի և տառի տպեցեալ... Յիշեցէք... զեռամեծ վարդապետն մեր և զհեզահոգի վեհն վսեմախորհուրդ զտէր Թօմաս եպիսկոպոսն սրբոյ Խաչի վանիցն Գողթնեաց, զի ընծայէ զծաղիկ բերկրութեան ցանկալի ազգին Արամեան. եւս զյոգներախտ և զմիակ բուն տպագիրն Հայոց զանուանին Մատթէոս Յոհաննիսեան, ապա և զորդւոց դպիրս Ղուկաս, ծնունդս Գրիգորի, սերունդս Նուրիջանի, սնունդս Հոռմայու, և զմատուցօղս այսր Գործակի »։

Digitized by Google

Մի և նոյն Թուականին տպագրած է Վանանդեցի եպիսկոպոսը՝ Նմանութիւն Քրիստոսի կոչուած գրոց երկրորդ հրատարակութիւն մի, որ ի 1674 առաջին տպագրութիւն ունեցեր էր ի Հռոմ։ Ի Յիշատակարանին. « ... Ես հեզս և ողբոց բազմաց ստորակայեալս, ... արտաքսեալ յերամաց և ի մասնէ տենչալի վայրից Վանանդու... պատեհաւոր վարկայ զհամեղախօս և գքաղցրաճաշակ գիրս Թօմայի Քեմփացւոյ, տպագրել յիմում գործարանի, զոր յարմարեցի և կազմեցի վշտօք անթուելեօք. այլ և զծախս նոցունց յիմոց ընչից, զի զոնէ յընթերցասէր եղբարցդ խնդրեցից օժիտս սիրոյ... Յիշել մաղթեմ զբազմերախտ և զկառավարօղ գործարանին և բանհմուտ և վարժ յարուեստ տպագրութեան զվարպետ Մատթէոսն, որ է որդի եղբօր մօր իմոյ... և զորդիս եղբարց իմոց զՂուկաս և զՄիքայէլ... »։

Այս գրութենէն կը հասկցուի, թէ գործարանն արդէն Վանանդեցի եպիսկոպոսին ձեռքն անցած էր, և ծախքն իրեն վրայ. իսկ Մատթէոս կը մնար կառավարիչ՝ իր արդէն ծանօթ և գովելի վարժութեամբն և հմտութեամբ յայնմ արուեստի։ Այս խօսքին ստուգութիւնը յայտնապէս կ'երեւնայ 1698ին տպագրուած Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց, և այլն, կոչուած երկասիրութեան մէջ, որոյ համար կ'ըսուի ի ճակատուն « Շարեցեալ ի Յօհաննիսեան Մատթէոսէ, և յօրինեցեալ յապիրատ Նուրիջանեան Ղուկասէ Վանանդեցւոյ։ Տպիւք և ծախիւք Թօմայ եռամեծ վարդապետին, և վանիցն Գողթնեաց Ս. Խաչին սրբափայլ եպիսկոպոսին, յամի տեառն 1698 յԱմստէրտամ »։ Ուր տասն տող ստանաւոր գրուածքէ մը ետքը. « Վերոյգրեցեալ չափաբանական խնդրուածն՝ է ասացեալ յԵռամեծ Թօմայ Վանանդեան Բաբունեայն, որում ենթարկին Տպարանս, ամենայն աշխատանք և աշխատաւորք Տպարանիս », որ է ըսել թէ ինքն է և ոչ այլ ոք գործարանին տէրը։

Նոյն 1698 տարւոյն կը տպագրի « Աստուածաշունչ նոր կտակարան՝ տպագրեցեալ վայելչագիր և գեղեցկագիր յօրինուածովք ։ Հաւանութեամբ, տպիւք և ծախիւք Թովմայ եռամեծ վարդապետին ». և որ ի յիշատակարանին կ'իմացընէ թէ « վաղ ուրեմն նախ տպագրեցեալ գոյր ի մեծէ և յերջանկագոյն վարդապետէն Ոսկանայ Երեւանեցւոյ... Ուստի և ես յօգնազան միրօք լցեալս ձեռն արկի երկրորդումն տպագրել բազում մշտօք »։ 1700ին տպագրուած են երկրորդ մասը՝ Գործք առաքելոց, Թուղթք, և այլն ։

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

1700 ԹՈՒԱԿԱՆԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՌ ՄԵԶ

Հայկական տպագրութեան պատմութեան երրորդ շրջանին գլուխը այն մեծ անձին անունը պէտք է դնենք, որոյ երևումը և ունեցած գաղափարին գործադրութիւնն հարկ է որ պարագլուխ մը համարուի, գէթ մեր ազգին համար, նկատելով անոր աղքատութիւնը և տառապանաց վիճակը, նաև մեր ազգային մատենագրութեան վերածնութեանը։ Այս անձն, ամէն անաչառ և ճշմարտասէր անձինք կը հասկընան, Մխիթար Պետրոսեան սեբաստացին է, աբբահայր և հիմնադիր՝ իր յուսալիր անունը կրող երկու Միաբանութեանց։

Ծնաւ նա յամին 1676, և սկսաւ իր յառաջիդեալ նպատակին ուղղութեան համեմատ գործել, նախ ի Հայրենիս և ապա ի Բիւզանդիոն։ Մեր նպատակն ըլլալով իւր և իւրայնոց գործունէութիւնն և արդիւնքը ստորագրել՝ միայն տպագրական արուեստի տեսակէտովն, անով կ'ուզենք գրաւել և գրաւեցընել մեր ընթերցողները։

1700 թուականին փոխադրուած է ի Պոլիս՝ իր քանի մի համախոհ և համանուէր աշակերտներով։ Հայրենեաց մէջ ժամանակին տիրող տգիտութեան գործած աւերակաց ընդարձակութիւնը՝ սուր մտքովը և մեծ հոգւով նկատող ու չափող սիրտը՝ սրտի և հոգւոյ աստուածապարգև լուսաւորութեան մէջ կը նկատէր։ Այդ լոյսը, այդ հոգեհրատ հուրը ծաւալել ու ընդհանուր ընել՝ իւր և

Digitized by Google

իւրոց միակ ու փափաքելի ջանքն պիտի ըլլար. խօսքով՝ սրտերը վառել բորբոքել, գրքով ու անոնց ծաւալմամբ՝ եկամուտ խաւար մը փարատել։

Եւ երբ ամենայն ինչ կը պակսի իրեն և հետը միաբանելոց, տուն, պաշտպանութիւն, սնունդ, նա ամէն բանէ վեր կը համարի ազգին մտաւոր սննդեան կարօտութիւնը, ու առանց լքանելու և յուսահատելու ի պժուարին հանգամանաց ժամանակին, գրքեր տպագրելու ետևէ կ՚ըլլայ։

Նոյն վերոյիշեալ 1700 Թուականին, ինչպէս իր հաստատած Ուխտին ժամանակագրութեան մէջ կը կարդանք, կը տպագրէ «Նախ զգիրսն Թովմայի Գեմբացւոյ,... զհետ գրոցն Թովմայի՝ զմտաւորական աղօթից ինչ գիրս ետ տպագրել։ Ապա ի Մծխիթացի Պետրոս վարդապետէ յօրինեալ զգիրս ինչ մեկնութեանց Յայտնութեան սրբոյն Յօհաննու խնդրեաց և ետ տպագրել։ Այլ և զմեկնութիւն Երգոյ երգոյն Սողոմոնի, զոր Խաչատուր վարդապետն էր արարեալ, ետ տպագրել»։

Առաջինն՝ Ոսկեմատեան կոչուած իրաւամբք, մասնաւորաբար իր աշակերտաց համար էր, նոյնպէս և երկրորդն՝ զոր չենք կրնար ստուգել թէ՝ ի՛նչ կամ ո՛րո՛յ երկասիրութիւն էր. իսկ միւս երկու գրոյ հեղինակ էին նոյն ատենին ծաղկած երկու վարդապետք, իրաւամբ հռչակելիք իրենց ուսմամբ և գիտութեամբ. Մելքիսեթ պատրիարքն ալ ոչ միայն հաւանութիւն կու տար անոնց հրատարակութեան, այլ և օգտակարութեանը վկայութիւն և յանձնարարութիւն։ Իսկ տպագրութեան ծախքն վրան առնող Մխիթար վարդապետ, միանգամայն յորդարող և սրբագրող էր առաջարկեալ գրուածոց, ինչպէս յայտնապէս կ՚ակնարկեն յիշատակարանք գրոցն, առանց յայտնապէս իր անունն տալու, այլ միայն «սրբագրութեամբ ումեմն չնչին բանասիրի»։

Ոչ Գեմբացւոյն և ոչ Խաչատրոյ վարդապետի գրոց

մէջ նշանակուած չենք գտներ թէ յորում տպարանի հրատարակուած ըլլան։ Մեր նախընթացաբար տուած տեղեկութիւններն ալ կը յայտնեն, թէ մինչև անցեալ դարուն սկիզբը՝ կարգաւորեալ տպարանի մը հաստատութեան յիշատակութիւնը չի կայ ի Պոլիս, բաց ի Աբգարու և իրեն ընկերաց ձեռքով ու ետքը Երեմիայ Չէլէպւոյ ջանիւք հաստատուածներէն, յորոց երկուքն ալ անհետացած կ'երևին։ Միայն Մծխիթացւոյն մեկնութիւն Յայտնութեան գրոց ճակատը խորագրուած կը տեսնենք, « Տպագրեցեալ նոր տպարանում սրբոյ Էջմիածնի, և սրբոյ Սարգսի զօրավարի, ի Կոստանդնուպօլիս քաղաքի »։ Մեր ընթերցողք կը յիշեն անշուշտ, թէ այս անուամբ կը կոչուէին Ոսկանեան տպարանք ի Լիվոռնոյ, ի Մարսիլիա և յԱմսդերտամ։ Գիտենք դարձեալ, թէ այս չորս գրոց տպագրութենէն անմիջապէս քանի մը տարի յետոյ (1705), Աստուածաշունչ գրոց երկրորդ տպագրութիւն մը եղաւ ի Պոլիս « ի Թաղն Պէկօղլի կոչեցեալ, ի ձեռն ուրումն Պետրոսի Լաթինացի կոչեցելոյ »։ Ոսկանի գրոց յիշատակարանաց մէջ չենք յիշեր հանդիպած ըլլալ այս անձիս անուան. բայց ինքն տպագիրն ի յիշատակարանին կ'ըսէ. « Եղև գրաւ Աստուածաշունչ մատենիս... ի յօրինակս հնոյ տպեցեալ լուսաւոր հոգի Ոսկան վարդապետի յոր և նման, ոչ աւելի և ոչ նուազ, սակայն մանր գրով։ Ի տպարանս ազգականի նոյնոյ Ոսկանի վարդապետի Լատինացւոյ Պետրոսի »։ Որով կ'երևի թէ Ոսկանայ մահուընէն ետքը՝ իրեն գոյից մաս մը, պարտուցը հատուցմանէն ետքը մնացածը կամ աւելցածը, անցած ըլլայ իր մերձաւոր ժառանգին՝ Պետրոսի, որ տէրն էր այս տպարանին։ Իրաւ որ այս Աստուածաշունչ գրոց տպագրին մանր տառք՝ չունին այն արուեստի կատարելութիւնը, որով կը փայլին Ոսկանեան տպագիրք. բայց յաճախ, ինչպէս քաջայայտ է տեղեկաց, այդ անհարթութիւնն հետևանք է

Digitized by Google

անարուեստ ձուլման. և այն ատենուան Պոլիսը՝ շատ հեռի էր արուեստիս կողմանէ Ամստերտամի նախանձորդ մը ըլլալէն, որ բոլոր Եւրոպայի մէջ հռչակեալ էր այս նկատմամբ ։

Մասն մը ի հայրց և ի մօրց ոսկաննեան տառից՝ ինչպէս ըսինք, և քիչ ետքը նորէն առիթ պիտի ունենանք յիշելու, մնացին յԱմստերտամ, և ժամանակ անցնելէն ետքը անցան ի ձեռս այլոց. փոքրիկ մասն ալ անցաւ ի Կոստանդնուպոլիս, ուր օգտուեցան Պետրոս Լատինացի և Սարգիս, և այլն, և իրենց անուամբը բացուեցան տպարանք ի նմին քաղաքի, որոց վրայ քիչ ետքը ։ Այս տպարաններէն հրատարակուած են՝ Մխիթարայ աբբայի ջանից և փութոյն երախայրիք՝ վերոյիշեալ չորս գրքերը ։

Պատմութիւնն իր.վարուց՝ կ'աւանդէ մեզ թէ ինչպէս չկարենալով մնալ ի Պոլիս, բռնադատեցաւ անցնիլ յարևմուտս՝ նախ ի Պեղոպոնեսս և ապա ի Վենետիկ, ուր իրմէ առաջ փոխադրուեր էր իր բարեկամն և մտերիմ՝ խաչատուր վարդապետ, քաղքին մէջ գտնուող Հայազգեաց հոգևոր հովուութեան և անոնց եկեղեցւոյն վերակացութեան պաշտամամբ ։

Գրուածքիս առաջին և երկրորդ շրջանը ծանօթացուց մեզ այլ և այլ տպարաններ, որ կամ յազգայնոց և կամ յիտալացւոց ոմանց հաստատուեցան ի Վենետիկ քաղաքի ։ Երրորդ շրջանիս առաջին տարիներուն մէջ, 1702 թուականին, մանաւանդ թէ անկէ քիչ յառաջ (1695), կը գտնենք որ Պոլթոլի անուն իտալացին հայկական գրոց տպագրութիւններ կը սկսի ընել և կը շարունակէ մինչև ի 1774. և առաջին հրատարակութիւնն է Դաշանց թուղթը, և ուրիշ քանի մը գրքոյկներ, և ապա ի 1702 Դուռն ողորմութեան Աստուծոյ կոչուած հոգևորական մատենիկ մը ։ Հաւանական կ'երևնայ թէ Դաշանց թղթոյն հրատարակողն է արդէն մեզի

Digitized by Google

ծանօթ Ագուլեցի Նահապետն. և հաւանականաբար Յովհաննէս Հոլով քահանայն և ապա Խաչատուր վարդապետն յորդորամիտ ըրած ըլլան զինքն՝ հայ գրոց տպագրութեան գործոյն, մանաւանդ որ այս երկրորդիս երկասիրութիւնքն ալ հետզհետէ նոյն գործարանէն ընծայուած են։ Յիշեալ գրուածը Ստեփանոս Ստեփանեան կամենիցացի քահանայինն է, և իրմէ «նուիրեցեալ ամենապայծառ խոճայ Սահրատի որդւոյ պարոն Մուրատին»։ Ի վերջ մատենկանն կը նշանակուի. «տպագրեցաւ գրքուկս ի տպարանի Անդոնիոսի Պօրթոլի, առ սուրբ Աստուածածինն Ֆորմոզա, ի Վենետիկ քաղաքի»։

Նոյն տարւոյն եղած է Շնորհալւոյն Յիսուս որդի գրոց չորրորդ տպագրութիւնը, առանց ճակատու կամ քաղաքի և տպարանի անուան, այլ լոկ այսպիսի խորագիր մը կրելով. «Յիսուս որդի անուն, տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսի ասացեալ... յամի 1702»։ Յիշատակարան չունի։ Թէպէտև ուրիշ ատեն ենթադրեր ենք թէ Մարսիլիայի տպագրութիւն ըլլայ, բայց ցուցակի մը մէջ Վենետկոյ այս գործարանէն եղած գտանք, որով չենք կարող ստոյգ բան մը ըսել։

1710ին Պոլթոլի կը տպագրէ Պարտէզ կոչուած աղօթագրոց չորրորդ տպագրութիւնը, որ ինչպէս յայտնի է, Յովհաննու Յակոբ Հոլովի երկասիրութիւն է, «ըստ խնդրոյ իսկ և արդեամբք Ճուղայեցի խոճա Սահրատի որդի պարոն Մարգարին. տպագրեցաւ գրքուկս այս շահաւէտ»։ Ապա նոյն տարւոյն մէջ Խաչատրոյ վարդապետի Քարոզգիրք երկհատոր, «Տպագրեցեալ արդեամբք և գոյիւք ամենապայծառ Ջուղայեցի Շէրիմանեանց բարեպաշտ և աստուածասէր խօջայ Սահրատի որդի պարոն Մուրատին»։ Գրքին վերջին երեսը՝ Վենետիկ քաղքի այլ և այլ տպարաններէն հրատարակուած հայերէն մատենից ցուցակը դրուած է այսպիսի խորագրով. «Շարաբանութիւն և ցուցակ գրոց որք գտանին մեծագունիւ

Digitized by Google

Թուով առ Անտոնիոս Պօռթօլի տպագրիչն ի Վենետիկ, ի Սուրբ Մարիամ Ֆօռմոզա ի քալլէ Լոնգա ի Ներկայի ամի 1710»։

Նոյն տարիներն՝ Հայ Միաբանողաց կարգէն քանի մի անձինք կը գտնուէին ի Վենետիկ, որք դրամական օժանդակութեամբ հայազգի և իրենց հայրենակից բարերարաց ոմանց, որ վաճառականութեամբ կը գտնուէին ի Վենետիկ, այլ և այլ բարեպաշտական գրքեր տպագրել տուած են առ Պօրթօլիի. այսպէս, Ժամագիրք Աստուածածնի (1706), որ երկու տարիէն երկրորդ տպագրութիւն մ՚ ալ ունեցած է ի նմին քաղաքի և գործատան. Ժամագիրք Լուսաւորչի (1706), Բուրաստան աղօթից Ստեփաննոսի Ռօշքեան Կամենիցացւոյ (1707), Ժամագիրք Ննջեցելոց (1709), ու քանի մը տարի ետքը նաև Պրէվիար կամ Ժամագիրք Ունիթորաց (1714)։

Այս միջոցին Մխիթար աբբահայր իրեն միաբաններովն անցաւ ի Մեթոնէ Պեղոպոնեսոյ ի Վենետիկ, ու հաստատուեցաւ սրբոյն Ղազարու փոքրիկ կղզւոյն մէջ։ Հասարակապետութեան խիստ օրէնք և կարգադրութիւնք, ինչպէս նաև իր նիւթական վիճակին անձկութիւնը, չէին ներեր Մխիթարայ առանձին տպարան մը ունենալ. ուստի և բռնադատեցաւ քաղաքին գործարանատեարց դիմել, ու անոնց միջոցով տալ տպագրել զանազան գրքեր, առջի բերան անոնց տառերով, ու յետոյ նաև իրմէ գնուած կամ շինել տուած դրոշմիւք՝ զանոնք իր ծախիւքը ձուլել տալով։ Իր տպագրել տուած գրոց մէջ ի Վենետիկ, և գլխաւորաբար առ Պօրթօլիի, առաջինն է ի 1715 Թուականի «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան ի յուսումն մանկանց հաւատացելոց, ամենից որք ունին զպիտոյս։ Շարագրեցեալ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ... ի 1715 մարտի 8, ի Վենետիկ Անտոնի Պօռթօլի։ Հրամանաւ մեծաւորաց և փրիվիլէճիով զերազան

Digitized by Google

ցագուների ծերակուտին»։ Երկրորդն է՝ մի և նոյն տարւոյ մէջ հրատարակեալ Ալբերտի մեծի Աստուածաբանութեան համառօտութիւնը, «Թարգմանեալ ի վաղնջուց ժամանակաց, ի մեծամեծաց վարդապետաց մերոց ի լատին լեզուէ ի հայ բարբառ։ Եւ նարդեննիս ի լոյս ածեցեալ և ուղղագրեցեալ ըստ հնոց օրինակաց և ըստ նախատպին իւրոյ, հոգաբարձութեամբ և աշխատութեամբ Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ...»։

Բայց սա չէր կրնար գոհ ըլլալ այն տառիւք, ուստի և կը փափաքէր ընտրելագոյն հարց և մարց դրոշմներ ձեռք ձգել, և այնպէս զարգացընել տպագրական արուեստը յազգին, աչքին առջև ունենալով զԱբգար, զՈսկան և զՎանանդեցիս։ Գիտէր թէ Ամստերտամեան տառք պարտքի փոխարէն գրաւուած էին ի պարտատերց. կը ճանչնար անոնց արուեստին ընտրութիւնը և արուեստագիտաց ճարտարութիւնը, և թէ ինչպէս բազմածախ պիտի ըլլար իրեն անոնց հաւասար արուեստով և ճաշակի ընտրութեամբ գաղափարաց տիրանալ։ Ուստի և կը փափաքէր զանոնք գրաւող տեարց ձեռքէն ազատել, տալով գին և տիրանալով տառից։ Վերը յիշուած ժամանակագրութեան մէջ կը գտնենք այսպէս նշանակուած. (Յամի 1729) «հասին առ մեզ պղնձի գաղափարք տպագրական տառից, և ընդ իւրաքանչիւր նոցա պողովատիկ նշանագիծք, յորոց դրոշմելոյ լինին գաղափարքս այսոքիկ. և էին սոքա երից կարգաց. զի էր ի նոսա խոշորագիր, մանրագիր և միջասահման. և յիւրաքանչիւրում կարգի եղեալն ունէր գիր գլխագիրն ըստ իւրում պայմանին. այլ և նշանագիծս կետից, շեշտանշակաց և այլոց նշանախեցից, որք առ տպագրութիւն գրոց կարևորք են. ամբողջ, աննիազ և անվթար։ Մանրագիրն և միջասահմանն ունէին և գնօտրգիր ըստ իւրեանց պայմանի, այլ խոշորագրին ոչ գոյր։ Էին ևս նշանագիծք խազից շարականաց. ամենեքեան սոքա պողովատիկք ամբողջք,

Digitized by Google

անվթարք, վայելչատիպք և անաղարտք ։ Այլ թէ ուստի՛ և զի՞րդ եղեւ մեզ ի ձեռս բերել, ամն ի վաճառականաց Յարութիւն անուն, բարեկամ էր աբբահօր մերում. սա յորժամ հանդերձիւր յԱմսդէլօդամ երթալ՝ յանձն արար նմա, հարցփորձ առնել անդ և գիտել՝ թէ յո՛յր ձեռս անցեալ իցեն և առ ո՛ւմ կացցեն տպագրեաց գաղափարքն, և նոցա պողովատիկ դրոշմիչքն, յետ անցանելոյ նոցա, որք զկնի Ոսկանայ եպիսկոպոսին փոխանորդեալք զտպագրատուն կալան յԱմսդէլօդամ, և զայլ գաղափարս յաւելեալ ի նոսա ճոխացուցին ։ Եւ եղեւ ի հասանել նորա անդր, հարցփորձ առնէր զայսմ իրէ և գտանէր առ միում ի վճար պարտուց տուեալ այն ամենայն ։ Ծանեաւ զգին նոցա և ազդ արար աբբահօր մերում. յայնժամ գրեաց առ նա աբբահայրն գնոց առնուլ զնոսա վասն մեր, և այնպէս արարեալ եբեր առ մեզ, և աբբահայրն մեր տուեալ նմա զգինն ամենեցուն, էառ զամենայնս » ։ Ատեն անցնելէն ետքը այս եռատեսակ տառից վրայ աւելցուց չորրորդ տեսակ մ՚ալ, միջակ ու մանր գրոց մէջ, առջինէն քիչ մի փոքրիկ, և երրորդէն քիչ մը աւելի մեծ. որով 1737ին տպագրել տուաւ իրմէ յօրինուած Մատթէոսեան աւետարանի մեկնութեան գիրքը ։

Ոսկան և մանաւանդ Վանանդեցիք՝ զորս յիշեցինք, հայկական տպագրութեան արուեստին մեծ փայլ և պայծառութիւն տուին, և իրենցմէ ետքը երեւցողք ի Պոլիս, ի Զմիւռնիա և ի Ռուսիա՝ մինչև ներկայ դարուս սկզբնաւորութիւնը և անկէ ալ ետքը՝ չկրցան անոնց հաւասարիլ ։ Ասոնց մէջ բացառութիւն մ՚է Մխիթար աբբայ ։ Առանց ուզելու մանրապատում խօսել իր արդեանցը վրայ այս արուեստիս նկատմամբ, միայն քանի մը հրատարակութիւններն յիշենք, որոնք նոյն ատենուան եւրոպական մեծամեծ հրատարակութեանց հետ՝ արժանապէս կրնան բաղդատուիլ ու իրաւացի պարծանօք մէջ բերուիլ ։ Ասոնց

Digitized by Google

մէջ առաջին յիշատակութեան պատուաւոր տեղը կրնայ գրաւել Աստուածաշունչ գիրքը, զոր տպագրել տուաւ։ Ոսկանի բնագրին և պատկերաց հետևողութեամբ եղած է այս տպագիրը. և եթէ առաջինն իրաւամբ ունի և կը պահէ իւր առաջնութեան պատիւը, երկրորդս շատ աւելի ընտրութիւն կ'երևցընէ ճաշակի և արուեստի, և իրաւամբ կը ստուգէ ի ճակատուն գրուած խորագիրը. «Լաւագոյն թղթովք, ազնուագոյն պատկերօք, գեղեցկագոյն ծաղկագրօք, զգուշագոյն սրբագրութեամբ և բազում ծախիւք վերստին տպագրութեամբ ի լոյս ածեցեալ»։

Մինչդեռ պօրթոլեան ապարանէն կը սկսուին և կը շարունակուին այլ և այլ հայկական տպագրութիւնք թէ ի Մխիթարայ և թէ յաշակերտացն, որպէս մերթ ընդ մերթ նաև յայլոց, 1719ին Ճուա՛նի Պաչօ իտալացի տպագրապետի մի անուան կը հանդիպինք, որ հայերէն մէկ երկու գիրք տպագրած է, և որոյ գրոշմարանին համար կ'ըսուի ի ճակատու խոկումն քրիստոնէական գրոց երկրորդ տպագրին, «որ է կառուցեալ ծախիւք Ճորճի Ռիցցի*»։ Նոյն խորագիրն ունի ի նմին ամի տպագրուած Պարտէզ աղօթագրոց չորրորդ տպագրութիւնն։ Միայն այս երկու հրատարակութիւնք մատենից՝ ծանօթ են մեզ Պաչօյի գործարանէն ընծայուած։ Ուրիշ իտալացի տպագրապետ մ'ալ կը գտնենք ի քաղաքին, նոյնպէս հայագիր տպագրութեամբք գրաւող յայնմ միջոցի, և է Ալբրիցցի ոմն, «Պաթիսթա Ալպրիցցի Ճէրօլիմոյի», որ 1729ին կը հրատարակէ Ալպերտի Դրախտ հոգւոյ կոչեցեալ գիրքը, «Թարգմանեցեալ ի լաթինականէ լեզուէ ի հայ բարբառ, աշխատասիրութեամբ տեառն Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ Աբբայ Հայր կոչեցելոյ, և նորին աշակերտի Յօհաննիսի վար-

* Որ է՝ Գէորգ Գարագաշեան։

ղապետի իւրոյ քաղաքացւոյ»։ Հետևեալ տարւոյն ալ կը հրատարակուի ի Նմին գործարանի «Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի», երկասիրութեամբ Մխիթարայ աբբայի։

Մինչև ցմահ Մխիթարայ աբբայի և քանի մը տարի ալ անդին, Սրբոյն Ղազարու միաբանից ինքնագիր երկասիրութիւնք կամ թարգմանութիւնքն, ինչպէս ըսինք, կը տպագրուէին առ Պորթոլիի. բայց երբ հայագիր տառից և անոնց կաղապարաց տէրը եղան, սկսան իրենց ուզած և կամ շահաւոր կերպով ծառայող տպարանատերց ձեռքովը օգտուիլ։ Բնականաբար չէր կրնար Պորթոլի գոհ ըլլալ այս փոփոխութենէն, մանաւանդ թէ կ'ենթադրէր որ մասնաւոր արտօնութիւն մը իրեն տըրուած ըլլայ հասարակապետական կառավարութենէն, և իրաւունքէն չէր ուզեր հրաժարիլ. ուստի դատ ուզեց բանալ Մխիթարեանց դէմ։ Այսպիսի անհամաձայնութեան մը նկատմամբ հետևեալ տեղեկութիւնները կը քաղենք Ուխտիս Ժամանակագրութենէն. «Առ ժամանակօք անցեալ տարւոյ (1751) եղին ոմանք ձեռնարկել ի տըպագրութիւն գրեանց մերոց... մանաւանդ Անտոն Պորթոլին. որ սպառնայր զգրեանս մեր՝ որպէս զՅունացն՝ առանց ակնածութեան ինչ տպագրել, վասն սարտնլոյ մեր ի տպարանէ նորա։ Վասն որոյ և ես վճռեցի ճար առնել այսմ վնասու»։ Եօթն ամիս հարկ եղաւ մաքառիլ՝ պետական զօրաւոր պաշտպանութեամբն ալ, և վերջապէս ընդունեցաւ Ուխտս արտօնութիւն, ուզած տպարանին մէջ առնել զհրատարակութիւն գրոցն, վանքին յատուկ տառիւքն. և իրենց ամենայն ջանիւքն չկրցան խափանել զայն, ոչ Պորթոլին և ոչ այլք որ հետը միացեր էին։ Ուստի և կը տեսնենք որ յայնմ հետէ Մխիթարեանք՝ մերթ Դեմետրեայ Թէոդոսեան, մերթ Վալվազեան և մերթ Փիացեան տպարանաց մէջ կը դրոշմեն գրքերնին, մինչև որ 1789ին մասնաւոր և իրենց կղզւոյն վրայ առանձին տըպարան մը ունենալու հրաման կ'ընդունին։

Digitized by Google

Այդ նոր տպարանին առաջին հրատարակութիւնն կ'ըլլայ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Երգոց երգոյն Մեկնութեան գիրքը, յորոյ ի ճակատն դրոշմեալ է, « Ի վանս Սրբոյն Ղազարու, յանուն Անտոնիոսի Պօլթօլի » ։ Ասկէ զատ, հետեւեալ 1790 տարւոյն Օրացոյցը, փոքրադիր Նարեկ, Նոր կտակարան, Սաղմոս, միշտ նոյն յաւելուածով ի ճակատուն ։ Այս կերպով հրատարակուած են մինչ ի 1794 և 95 եղած տպագրութիւնք, և անկէ ետքը բոլորովին վերցուած է Պոլթոլի անունն. միայն աւստրիական կառավարութեան օրինաց համեմատ՝ պարտական ըլլալով պետական գրաքննչի հաւանութիւնն և հրամանն ունենալ, հարկ եղաւ քիչ մը ժամանակ իտալական լեզուով Հրամանաւ մեծաւորաց Con licenza de' superiori դնել՝ ի վերջ տպագրեալ գրոց ։

* * *

Սրբոյն Ղազարու վանաց տպարանէն լոյս տեսած հրատարակութիւնք խիստ անշուք են առջի բերան, մանաւանդ գործածուած թղթին և այլ տպագրական պարագայից նկատմամբ ։ Առաջին կարգաւորողն եղած է Սիւրմէլեան Հ. Խաչատուր, ապա հետզհետէ Սամուէլեան Հ. Սամուէլ, Սորկունեան Հ. Յովհաննէս, որ Գաղղիոյ մայրաքաղաքին մէջ գտնուելու առիթէն ալ օգտուելով, հին տառից նոր կերպարանք և ձեւակերպութիւններ ալ տուաւ, և բազմատեսակ գլխագիր, բոլոր և նօտր տառեր ալ փորագրել տալով. անոնց հետեւողութեամբ, և երբեմն նաև աւելի վայելչական ձեւերով և ճաշակաւ ազգային այլ և այլ տպարաններ իրենց տառից մթերքը ճոխացուցին, պարծանք և գեղեցկութիւն ընծայելով հայ արուեստին այս մասին. և առանձինն՝ և թերեւս շատեր գերազանցելով, համանուն Ուխտին տպարանն ի Վիէննա, և Արամեանն ի Պարիս, ուր նախ

Digitized by Google

մրցակից երեւցաւ Մխիթարեան գործարանին, և ապա փոխադրեց ի Մարսիլիա և ի Պոլիս։ Կը թողունք ուրիշ տպարանաց յիշատակութիւնն, որ վերջի քսանուհինգ տարիներու մէջ արժանապէս փայլեցան ի Պոլիս, ի Տըփխիս, ի Մոսկուա և ի Պետրպուրգ։

Վենետկոյ Մխիթարեան տպարանին մէջ՝ բաց ի հայկական տառից, արեւելեան ուրիշ ազգաց տառեր ալ աւելցան, և անով ջանք մը երեւցաւ աւելի հռչակ տալ անոր՝ ճոխութեամբ նաեւ օտար տառից. և այդ բազմազգի տառիւք առաջին անգամ տպագրեցաւ Շնորհալի սուրբ հայրապետին Հաւատով խոստովանիմ աղօթքն՝ քսանուչորս լեզուով ի 1833, և ընծայուեցաւ Գուլիէլմոս Նասսաւի և Բելգիոյ Թագաւոր և Լիւքսէնբուրգի դքսին, իր գլխաւոր պաշտօնէին ձեռքով, և որ ի 15 ապրիլի հետեւեալ տարւոյն՝ գրէր և ծանուցանէր ի վանս. «... Je me suis empressé à remettre à S. M. le Roi, le cadeau interessant d'un exemplaire de choix de l'edition polyglotte des *Praeces S. Nierses Clajensis*, que vous avez bien voulu à confier à cette fin ; et S. M. sensible à cette attention bienveillante, a non seulement ordonné la deposition de ce volume dans la Bibliothèque royale, ici en ville (Լահէյ), mais a daigné aussi, par un arreté spécial, décerner à votre etablissement util, la médaille d'honneur, en argent, destinée, comme une rémuneration royale vis-à-vis des personnes, et portant d'un coté, son effigie, et de l'autre une inscription honorable, en mémoire de ce present ».

Եւ այսպիսի էր արձանագրութիւնն փորագրեալ յասպէս. Ven. PP. — Monasterii Armenici, — in insulam — S. Lazari Venet. — Pro o-

blato libro — praecium S. Niers. Claj. — XXIV linguis — conscriptarum — ab ipsis – typis excusso. — Rex dedit. — MDCCC-XXXIV.

Ցետոյ ճոխ և ընտիր տպագրութեամբ այլեւայլ ուրիշ գրուածքներ ալ հրատարակուելով՝ ընծայուեցան սրբազան քահանայապետաց Պիոսի Թ և Լեւոնի ԺԳ, իրենց քահանայութեան և եպիսկոպոսութեան յոբելեաններուն առթիւ, և կայսերաց Աղեքսանդր Ա., Նիկողայոս Ա. և Աղեքսանդր Բ. Ռուսիոյ, Փրանկիսկոսի Յովսեփայ Աւստրիոյ, և Նապոլէոնի Գ, Գաղղիոյ, և Վիկտորիայ Թագուհւոյն Անգղիոյ։

Տիեզերական աշխարհահանդիսից առթիւ ալ դրկուեցան նոյն տպարանի արտադրութիւնք, երկիցս ի Լոնդոն,. կրկին անգամ ի Պարիս, և ի 1870 ի Վիէննա և այլուր, և ամէն տեղ արծաթի մետալի ընդունելութեամբ վարձատրուեցան։

Աւելորդ կը սեպենք յիշել պատկերազարդ բազմաթիւ հրատարակութիւնք, մանաւանդ մեր հայրենեաց վերաբերեալ հնօտական գրութիւնք, ներկայացընելով անոնց աւերակաց, ժամանակին անխնայ ձեռքէն ազատած և մինչ առ մեզ հասած կերպարանաց նկարները։

Այսպէս շարունակած է, և լիայոյս ենք որ պիտի շարունակէ, ժամանակին յառաջադիմասէր ոգւոյն և ճարտարութեանց հետ համաքայլ ընթանալով՝ աւելի եւս արժանաւոր երեւնալ իր համբաւոյն։

Այս մաղթանօք կնքելով խօսքերնիս, անցնինք միւսանգամ յարեւելս և ի Պոլիս։

*
* *

Այդ մեծ և բազմահայ ոստանին մէջ տեսանք 1677ին և հետեւեալ տարւոյն, երկու գրոց տպագրութիւնք ե-

ղած Քէօմիւրճեան Երեմիա բանաստեղծի ջանքով։ Բայց անհարթ և անարուեստ տպագրութիւնն, ու տձեւ և դժուարընթեռնլի տառքն՝ շուտով խափանուեցան, որով բաց ի յիշեալ երկու գրոց ոչ ինքն Երեմիա, և ոչ այլք կրցան ուրիշ նոր արտադրութիւն մը ընծայել։

Անցան տպագրական անգործութեան քսան տարիներ ի Պոլիս։ Բայց 1698–1700 տարիներուն հայկական տպագրութիւնք նորէն կը սկսին ի քաղաքին, և նշանակուած առաջին թուականին (1698) հոգևորական գրքի մը հրատարակութեան կը հանդիպինք, Խոստովանութեանց կոչուած, որիշ Սրբոյն Թովմայի համանուն մակագիրը կրող գրքոյկէն, որ ի 1701 տպագրուած է ի Վենետիկ, ինչպէս դարձեալ այս վերջի քաղաքին մէջ 1727ին հրատարակեալ նոյն անունն ունեցող գրութենէն՝ Թարգմանութեամբ Միւհիւպ Պետրոս վարդապետի։ Մեր նշանակածին յիշատակագրութեան մէջ կ'ըսուի, թէ տպագրութիւնն (թերեւս և շարադրութիւն կամ թարգմանութիւն) եղած ըլլայ «Հոգաբարձութեամբ Աստուածատուրի Դաշտեցւոյ»։ Թէպէտև տպարանի անուն չկայ, բայց, հաւանական կը թուի որ Պէյօղլուի կոչուածին արգասիքն է, ուր և Մխիթար աբբայ իր առաջին հրատարակութիւնքն ըրաւ քանի մի տարի ետք, ինչպէս տեսանք։

Կրնայ դարձեալ նոյն Աստուածատրոյ տպարանն ըլլալ, որոյ անունն՝ իբրև տպագրիչ, կը յիշատակուի ի 1700 թուականին ի Պոլիս. և առաջին մեզի ծանօթ հրատարակութիւնն է Նարեկ մը «տպագրեցեալ Նոր գործարանում սրբոյն Մինասայ զօրավարի... ի տպարանի պարոն Կարապետի որդւոյ պարոն Աստուածատուրի։ Արդեամբք և հոգաբարձութեամբ և ծախիւք Տիզանեցի Մինասի որդւոյ Ղազար երիցու»։ Գրքին վերջը դրուած յիշատակարանին մէջ ալ կը պատմուի, թէ՝ Երուսաղեմի պատրիարքն Մինաս արքեպիսկոպոս՝ Հայոց

Digitized by Google

1140 Թուականին երթալով յԵրուսաղէմ, ընտիր և կատարեալ օրինակի մը հանդիպեր է նոյն գրքին, յորում նախկին տպագրութեանց մէջ պակաս հինգ եւս գլուխք բանից աւելի կը գտնուէին ։ Ապա երթալով յէջմիածին, նոյն վանաց մատենադարանէն, ինչպէս նաեւ ի Սաղմոսավանից, ի Խորվիրապէ և յԱնապատէն Սեւանու, ուրիշ հինգ օրինակ ալ բերել տուաւ, ու բաղդատելով սրբագրեց քովը գտնուած օրինակին վրայ. և ի դարձին ի Պոլիս՝ տեսնելով որ կ'ուզեն տպագրութեամբ հրատարակել, յօժարութեամբ տուաւ իր աշխատութեամբ պատրաստուած ու բաղդատուած օրինակը, որպէս զի անոր համեմատ ընեն հրատարակութիւնը ։

Աստուածատրոյ տպարանէն ի լոյս ընծայուած է և ժամագրոց առաջին մեծադիր տպագրութիւնն ի Պոլիս, յորոյ ի յիշատակարանին կը նշանակուի « շարաբարդօղ գիրքիս ամենեցուն ծառայ Աստուածատուրս ». և երկրորդին մէջ ալ կը յանձնէ յիշատակել « զպարոն Խուտավէրտին, զի ետ տպել ժամագիրքս այս յիշատակ ծընողաց իւրոց » ։

Աստուածատրոյ և իրեն յաջորդաց հրատարակութիւնք կը շարունակուին մինչև իննևտասներորդ դարուս առաջին քառորդը, և մեծապէս օգտակար և շահաւէտ գործունէութեամբ ։ Գրոց կարօտութիւնը զգալի էր, ընթերցասիրութիւնն՝ մանաւանդ նախնեաց գրուածոց և երկասիրած թարգմանութեանց, կը սկսէր աճիլ և զարգանալ, ուստի կը փնտռուէին բաւական հետաքրքրութեամբ ։ Բնականաբար տպագրողք՝ շահադիտութեան նպատակաւ ալ, անոնց հրատարակութեամբ կը պարապէին, մանաւանդ զի նորանոր գրքեր յօրինելու կամ թարգմանելու բաւականութիւն ունեցողք՝ դեռ սակաւաւորք էին յազգին ։ Նախընթաց դարուն մէջ հռչականուն էր՝ նախնեաց գրուածները տպագրութեամբ ընդհանրացընելու գովելի ջանքովը՝ Կոստանդնուպոլսոյ պատրիարքն Յով-

Digitized by Google

հաննէս Կոլոտ, և ներկայ դարուս մէջ ալ կը շարունակէր մինչ ի մահն. և այլ և այլ նախնեաց գրոց տպագրութիւններ ըրաւ իր կամ բարերարաց ծախիւք և օժանդակութեամբ, ինչպէս Մատենագիտութեան մէջ նըշանակուած յիշատակարաններէն կրնան տեղեկանալ ընթերցողք։ Պաղտասար դպիր մ'ալ կը յիշատակուի իրմէ ետքը, որ բաւական տեղեակ հայ լեզուի, նիւթական օգնիչ մ'էր տպագրողաց, սրբագրելով շարուածքը, բայց երբեմն նոյն ազատութիւն բանեցընելու իրաւունք կարծելով ունենալ բնագրաց վրայ, փոփոխութիւններ ներմուծելով թէ՛ լեզուի և թէ ուրիշ տեսակէտով, ուր ի նախնեաց աւանդուած ամենայն գրուածք՝ անձեռնամերձ պիտի յարգուին, և եթէ սխալմունք մ'ունենալ ենթադրուին, որ կրնայ հանդիպիլ, ի ստորեւ էջից տպագրացն ի ծանօթութեան նշանակուին։

1701 թուականէն Սարգսի անունով տպարան մ'ալ կը սկսի և կը շարունակուի ի Պոլիս, յորում հրատարակուած է Տօնացոյց գրոց մեծագիր հրատարակութիւն մը, և ի ճակատուն նշանակելով, ինչպէս ժամանակին սովորութիւնն էր, թէ Նահապետ կաթուղիկոսի ժամանակ եղած էր այն, կը յաւելու. «առ ի մէնջ յոյժ խընդրող գտաւ ըստ այսմ Տօնացուցի»։ Ի Յիշատակարանին, «... ետ կարողութիւն հասուցանել ի կատար... զգիրքըս... ի հայրապետութեան Նահապետի ամենայն Հայոց կաթուղիկոսի... և պատրիարքութեան մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Աւետիք վարդապետի. ի թվականութեանս Հայոց ՌՃԾԱ, յամսեանն մայիսի»։

Սարգսի գործարանն հաստատուած էր ընդ հովանեաւ եկեղեցւոյ Տիրամօրն որ առ պատրիարքարանաւ, և ունէր նորաձոյլ երկատեսակ տառք, խոշոր և մանր։ Առաջին արգասիքն եղաւ մեր արդ իսկ յիշատակած Տօնացոյցն, և գրեթէ կէս դարու մէջ շարունակաբար եւ անընդհատ գործեց, նախ անձամբ, և յետ մահուանն

Digitized by Google

անցնելով Մարտիրոս որդւոյն ձեռք։ 1752 թուականէն անդին յիշատակութեանը չենք հանդիպիր։ Բայց այս յիսուն և աւելի տարիներու մէջ՝ տասնևութ գիրք հրատարակուած կը գտնենք Սարգսեան տպարանէն. և նախ վերը յիշուած Ցօնացուցէն անմիջապէս ետքը (1704) մեծադիր և ատենի ժամագիրք մը, համեմատ Աստուածատուրոյ տպարանէն ընծայուածին, աւելցընելով միայն ի յիշատակարանին, թէ «շարաբարդող գրգիս, ամենեցուն ծառայ զՍարգիսն (յիշեցէք)»։

Պոլսոյ մէջ դարձեալ՝ 1708 թուականին՝ Գրիգորի ուրումն տպագրապետի Մարզուանեցւոյ գործարանի յիշատակութիւնն կը սկսի, յորում այդ տարւոյն՝ Ագաթանգեղոս գրոց առաջին տպագրութիւնն կ՚ըլլայ. «ի յերրորդ ամի հովուապետութեան, ինչպէս կ՚ակնարկուի ի ճակատուն, եկեղեցւոյն Քրիստոսի, Տեառն Աղեքսանդր սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց սուրբ Էջմիածնի, նորին հրամանաւն գաղափարեալ տպագրեցաւ ի քաղաքիս Կոստանդնուպօլսոյ, ի տպարանի և ձեռամբ Գրիգոր դպրի, որդւոյ Մկրտչի Մարզուանեցւոյ»։

Հրատարակողն՝ Աղանի Աստուածատուր վարդապետ՝ ի յիշատակարանի գրոցն կ՚աւանդէ, թէ՝ երբ նուիրակութեամբ կու գայ ի Բիւզանդիոն, կաթուղիկոսն տուեր էր նմա զօրինակ մի գրոցն՝ յանձնելով որ տպագրել տայ։ Բայց ժամանակն անյարմար դատելով, հարկ տեսեր էր նուիրակն երկու տարիէն վերադարձընել առ կաթուղիկոսն՝ իրեն յանձնուած աւանդը. մինչեւ ապա բարեպաշտօն անձ մը, Գալուստ՝ որդի Մուրատի Ագուլեցւոյ Գողթնեաց, տպագրութեան ծախքը տալով հրատարակեց ի ձեռն «տպագրապետ Գրիգորի դպրի»։

Իր քովը տպագրեցաւ 1713ին Յովհաննու Մրգուզ վարդապետի Կրթութիւն հաւատոյ կոչուած երկասիրութեան երկրորդ տպագրութիւնն, որոյ վերջաբան յիշատակարանէն, և Գրիգորի տպագրական գործունէութեան ար-

Digitized by Google

դիւնքէն՝ ընդհանրապէս յայտնի կ'երեւնայ, թէ՝ ո՛րչափ և որպիսի՛ փոյթ ունէր ի նախնեաց աւանդուած և անկորուստ մնացած գրուածներն՝ տպագրութեամբ ազգին ընտանի և մատչելի ընել. « ի վաղուց հետէ, կ'ըսէ, ածեալ իմ զմտաւ՝ տապեցեալ խորովէի ի սրտի, եթէ ո՛րքան գրեանք աստուածայինք… արտաքսեցեալք գոն ի մերս, և ահա ոչ երեւին ներկայապէս » ։

ԹՈՎՄԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ

Ի 1699՝ երկասիրութեամբ Մաթէոսի և Ղուկասու վանանդեցեաց և « տպիւք և ծախիւք եռամեծ րաբունւոյն Թովմայ », կը հրատարակուի Դուռն իմաստութեան կամ Ոսկեայ դուռն դպրութեան կոչուած գիրքը, « վասն դեռակիրթ և խակավարժ մերազնեայ մանկանց ». այլ և այլ նախնական գիտելեօք և հետաքրքրական տեղեկութիւններ պարունակող գրուած մը, որ ժամանակին մեծապէս օգտակար եղած է ։ Ոչ նուազ կարևորութիւն ունեցող մատենիկ մ'էր նոյն տարւոյն մէջ տպագրուած « Գանձ չափոց, կշռոց, թուոց և դրամից բոլոր աշխարհի » գիրքը · « որ է, ինչպէս ի ճակատուն կը նշանակուի, գիտութիւն ամենայն տեսակ կշռոց, չափոց և դրամից. որով բոլոր աշխարհի վաճառականութիւնն վարի ։ Ժողովեալ և ի մի վայր հաւաքեալ աշխատութեամբ Ղուկասու՝ ապաշնորհ ջահընկալի վանանդեցւոյ ։ Ծախիւք և ի խնդրոյ հայցման Ջուղայեցի Խաչատուրի որդի պարոն Պետրոսի »։ — Տումար կամ Պարզատումար մ'ալ հրատարակուած է նոյն տարին, յորում նաև Յովասափու տաղ, Մարմնախաղաց, Երազահան ։

1700ին Գործք առաքելոց գրոց տպագրութիւն մը կը հրատարակուի նոյն տպարանէն, և երկու տարիէն՝

Digitized by Google

Բնաքանութիւն իմաստասիրական կամ տարերական կոչուած գիրք մը. « որ է բան յաղագս տարերաց և տարերական որակութեանց, խառնուածոց և վերամբարձ ըղքօսանացն, ուստի գոյանայ ամպն, մառայլն, և այլն... Յօրինեալ ի Մատթէոսէ և ի Ղուկասէ յապիրատ վանանդեան դպրաց, ի պէտս բանասէր մերազնեայ եղբարց: Տպիւք և ծախիւք Թովմայ եռամեծ րաբունւոյ »:

Իսկ ի յառաջաբանին... « արասցեն յիշման արժանի զառաքելաշաւիղ հայրն մեր զԹովմաս եռամեծ րաբունին, զյարմարօղ և զկազմօղ գործարանիս, հանդերձ երկոքումբք արեանառու գործակալօքն՝ Մատթէոսիւ և Ղուկասիւ... »:

Նոյն անձինքն՝ իբրու աշխատակիցք և գործակիցք կը յիշատակուին 1704ին տպագրուած Պաշտօն աստուածային կոչուած գրքին յիշատակարանին մէջ, յորոյ ի խորագրին նշանակուած կը գտնեմք, թէ Թարգմանութիւն է այն « ի լացիական լեզուէ, երկասիրութեամբ ուրեմն վանանդեան Ղուկասու, Նուաստ և յետնեալ դպրի », ի գործարանի Թովմաս արքեպիսկոպոսի: Իսկ ի վերջն — « ... Արդ որոց ընդունելի թուեսցի այս նորատիպ գործակս՝ յիշեսցեն ի ջերմեռանդ յաղօթսն զխօջայ Կարապետն (Քառասնամանկացն՝ զոր յիշեր էր յառաջագոյն), հանդերձ սորին զարմիւքն և ժառանգօքն. Նաև պարոն Նազարէթի որդի գյետնեալ չնչին և գապիկար արբանեակն Յօհաննէս, որոյ հոգաբարձու վերակացութեամբն տպեցաւ այս հոգւոյ գանձս »:

Սոյն այս Թուականին տպագրեալ է հետևեալն. « Յոգնադիմի Աստուածաբանական, Բարոյական և Քաղաքական իրողութեանց սահմանք: Երկասիրութեամբ մեղուաջան արանց ի մի վայր՝ ըստ կարգի այբուբենից հաւաքեցեալք: Ի լոյս ածեալ տպիւք և արդեամբք առաքելաշաւիղ Թովմայ եռամեծ վարդապետի Վանանդեցւոյ: Որ հրահանգից վարժարանի, — Չէ տակաւին Ներկուռ

բանի, — կամ ի հանդէս Փիլոսոփի — Ջանձն իմաստիւք կըրթեալ չունի. — Զայս սահմանաց թ'ի միտս ունի, — Մեծի ուսման ժառանգ լինի։ Յամի Տեառն 1704, յԱմստէլտամ»։ Ի վերջ գրոցն՝ լատինական այս բան և վճիռ հայ ստորիւք. «Փի՛նիս կորօ՛նատ օ՛պուս»։

Յաջորդ 1705 տարւոյն տպագրեց Վանանդեցին, Բոնա ծիրանաւորին Ձեռքածութիւն (Manuductio) յերկինս կոչուած հոգեւորական գիրքն, որ ինչպէս յայտնի է արդէն մեր ընթերցողաց, Յովհաննէս վարդան քահանայի թարգմանութիւն է, և յառաջագոյն տպագրուած ի Հռոմ։ Վանանդեցւոյն տպագիրը՝ յետ ճակատուն անմիջապէս հետևեալ ծանօթութիւնը կը դնէ։ «Յամի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 1705. իսկ ըստ Հայոց 1154, Օգոստոսի 7, Մարգաց 5, յԱմստրտամ քաղաքի՝ տպագրեցաւ այս գիրք վայելուչ և մեծաշահ, ի տպարանի Թօմասու Վանանդացւոյ, ծախիւք նորին և հաւանութեամբ։ Վասն զի զո՛յր նախկնաբար թարգմանեցեալ՝ քաջաբան և յ'ամէնիմաստ Վարդան վարդապետէն, ի Լաթին լեզուէ ի Հայկական բարբառ։ Եւս զի նա յաճախօրէն և լիապէս խօսի, գեղեցկաշար և համեղ բանիւ, յորդորական և խրատօրէն առ մերայինսն, բաւական և քաղցր ոճով։ Եւ մեք ոչ հաճեցաք յօդել ի բանս նորին, որք են խորիսխ մեղու, սուղ ինչ ոսպն կամ բանջարեղէն, այլ զնորայն ընկալեալք, որք քաղցեալք և ծարաւիք իցեն հմտութեան և ուսման, նոքօք լցցեն զփափաք իւրեանց և զծարաւ...» և կը ստորագրէ. «Պարտաւոր Թօմաս ծառայ ծառայից Աստուծոյ, լոկ անուամբ վարդապետ»։ Իսկ ի յիշատակարանին... «Անարգիւն և թափուր յամենայն լաւաց՝ Թօմաս ծառայ Եկեղեցւոյն Քրիստոսի ի Վանանդայ Գողթնեաց՝... տպեցի զքաղցրաճաշակ գիրս Մեծին Կարդինալ Բոնային (զոր եռամեծ Վարդան բա-

բունին Լաթին լեզուէ թարգմանեաց ի Հայկական բարբառ համեղ և ախորժ ոճով), յիմում սպարանի և ծախիւք իմովք յ'Ամստրտամ քաղաքի։ Ցամի տեառն 1705. Հոկտեմբերի 4. և ի թուին Հայոց 1155, Նաւասարդի 9»։ Ու կը յանձնէ յիշել 'իւր հայրը զՆուրիջան Նուրիջանեան, զմայրն զԴիլզար, հօրեղբարքն զՂուկաս և Ստեփանոս, և զեղբարսն զԳրիգոր, Արիստակէս և Յակոբ, և զԱննա քոյրն։ Նոյնպէս «զհաբազատ, և զմտերիմ շարաբարդօղ, ուղղագրօղ և կառավարօղ գործակալս տպարանիս մերոյ»...։

Եօթն տարի վրայ անցնելէն ետքը, յորս Վանանդեցւոյ տպարանէն ընծայուած արտադրութեան մը չենք հանդիպիր, ի 1711 կը հրատարակուի յԱմստերտամ Շրէօտէրի Գանձ արամեան կոչուած հետաքննական երկասիրութիւնն լատին—հայ, ոչ նոյն գործարանէն ընծայուած, այլ իրմէ փոխ առնուած տառերով։ Այս միջոցին հանդիպած է Թովմաս եպիսկոպոսին մահը, և թերևս այն պատճառաւ քանի մի տարի դադրած է տպարանն ի գործոյ։ Շրէօտէր իր գրքին յառաջաբանին մէջ մեծապէս կը գովասէ զՂուկաս Նուրիջան, յորմէ և օգնուած էր իր ձեռնարկին մէջ։ Իր ուսմանց և ուսուցչաց խօսքն ընելով, վրայ կը բերէ. Hujus ductu (Gulielmi Surenhusii) cum Rabbinica, Misnica et Gemarica legerem, fama ad me perferebatur de Reverendissimo Archiepiscopo Armenorum Thoma Golthanensi, ejusque ex fratre nepote Luca Nurigianide, plurimis in nationem suam meritis, et variarum Asiaticarum ac Europearum linguarum cognitione clarissimo. Horum benevolentiam adjuvandos meos in Armenicis conatus cum impetrassem, fidelissimo præceptoris mei auxilio in Haicanæ linguæ cognitione feliciter progrediebar... Նուրիճանեանն

Digitized by Google

ալ՝ իւր աշակերտին և բարեկամին արժանաւոր գովեստը կ՚ընէ անոր գրքին վերջը գրուած հետևեալ տողերով.

... «Թէ և յայլոց այս գործ փորձեալ,
Բայց Գոնջ սորին գերազանցեալ.
Զի Հայկական ներկուռ եղեալ
Զարհեստ տառից ներհուն վարժեալ...
Քաջդ Յոհաննէս պայծառացեալ,
Գերմանացւոց փառք ծաղկեցեալ։
Ո՛վ ազգ պայծառ բարեօք լցեալ.
Ի Փիւնիկեայ զարմէ սերեալ.
Որ ոչ հեռի Հայոց եղեալ,
Եւ ոչ միմեանց օտար գտեալ։
Արի զուարթ մեզ մերձեցեալ
Որպէս խնամի և ազգակցեալ.
Այսու գործով օժանդակեալ
ԶԱյրարատեան Գանձըս գիտեալ.
Զի Սկրօդէրեանն զայս ինչ գանձեալ
Ի մէջ գանձից Գոնջ նոր ցուցեալ.
Ամենայնիւ սա գանձացեալ
Գանձասիրաց յառաջ եդեալ»։

1711 Թուականին յԱմստերտամ եղած տպագրութեան մ՚ալ կը հանդիպինք, ամենընտիր արուեստով, կրնանք ըսել գոհար տպագրութեան մը, առանց անուան գործարանի, այսպիսի խորագրով. «Համառօտ — Քերականութիւն — եւ — Տրամաբանութիւն — որ է — Քերթութիւն բառի, և կրթութիւն բանի ։ — Արարեալ երկասիրութեամբ Յօհաննիսի վարդապետի Ջուղայեցւոյ ։ — Յ՚Աթոռակալութեանն Էջմիածնայ — Տեառըն Աղէքսանդրի ամենից Հայոց — կաթուղիկոսի ։ Տըպագրեցեալ — Յ՚ամի Փրկչին 1711. և Հայոց 1160 — ՅԱմստրտամ ։

Վանանդեցւոյ մանր և ընտիր նոլաձոյլ գրերով եղած է այս տպագրութիւն, 78 փոքրադիր էջերու մէջ ամփոփուած, առանց յիշատակարանի մը ։ Միայն յ՚էջ

Digitized by Google

36, « Եւ Ցուողին մակացութիւն մակացուացն. ծնիցելոյն և բղխիցելոյն. և ամենագութ պատճառին, փառք. պատիւ. և գոհութիւն, և օրհնութիւն այժմ, և անսպառ յաւիտենից ամէն » ։

Նոյնպէս և ի վերջին (78) իջին. « Եւ Քրիստոսի շնորհողին մակացութիւն մակացուացն փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից՝ ամէն » ։

Ցարաձայն, սառալծորդ, Նրբաբան՝ և բանակռիւ առարկութիւն ։

Գեղ կամակար անծագ հորդէ.
Կեղ կամակոր ձանձախ յորդէ
Ցեղ զայս համր գիրք ի հարկս հոլով.
Ճեղ զայն յամր գիրք ի յարկս յոլով.
Ամաց հերձի, ամաց պատուէր,
Զի էր պատուէր՝ զի նա պատուէր »

Եպիսկոպոսին մահուընէն ետքը տպարանին իրաւունք, ծախք և բոլանդակ խնամք իրեն հօրեղբօրորդւոյն վրայ կը մնար, Ղուկասու Վանանդեցւոյ. և օտար աշխարհի մէջ ձեռնարկուած այն ծանր գործը՝ առաւել ևս ծանրանար ։ 1715 Թուականին նոյն տպարանէն հրատարակուած գրքի մը մէջ լիովի կը խօսի Վանանդեցին իր գտնուած դժուարին դիրքին վրայ ։ Այս գիրքն է Հայելի աստուածաշնչեան գրոց հին կտակարանի կոչուածը, « պարզաբանեալ վայելչալուր տաղաչափութեամբ. գիւրահաս և համառօտապատում հոգեշահ մեկնութեամբ ։ Երկասիրութիւն է նոյն Ղուկասու դպրի, հրատարակեալ ծախիւք խօջազադայ Պօղոսի որդւոյ պարոն Պետրոսին... Ցամի 1715, ի տպարանի, ինչպէս կը նշանակուի ի ճակատուն. Ղուկասու Վանանդեցւոյ, յ'Ամսդէլօտամ » ։ Բարերար հրատարակիչն առաջարկեր է հեղինակին որ այս երկասիրութեան ձեռք զարնէ. «քանզի, կ'ըսէ» ի նախերգանի, բարենախանձ և կորովամիտ երեսուն և եր-

կու ամեայ երիտասարդն Պետրոս հայելով ի ճոխութիւն եւրոպացւոց՝ սակս յոգնազիմի հոգեշահ և հոգեկեցոյց գրոցն՝ որով խայտայ բոլոր կալուածն Եւրոպայու, ես և վերաթեւեալ միօք դիտելով զպակաս հոգևորութիւնս Արամեան ազգին, սակս նոյնասարաս բուսաւոր գրոց նուազութեան, բարեպաշտ նախանձու վառեալ յօժարակամ սիրով զօտեւորեցաւ ի լոյս ածել ծախիւք իւրովք զայս առաջիկայ գործս, զայս լուսատու անշէջ ճըրագս, և զնորատունկ հոգեւոր բուրաստան յանջինջ յիշատակ իւր և տոհմին իւրոյ, նաև ի պայծառափայլութիւն բարեպաշտասէր եղբարցն Հայկազունեաց ։ Գոլով առ այս կոչութեանց արժանի պարոն Պետրոս ի վերայ այսպիսի չքնաղ դիտաւորութեան, յորդորեաց զհէգս յայսպիսի տաժանակիր գործ միջամուխ լինել... ոչ կարացի ստունկանել զայսպիսի հարկէ... այլ... յանձն առի գնալ ընդ անհետ ճանապարհս, թէպէտեւ յոյժ դժուարին և տքնելի մանաւանդ հեղձամղձուկ անձինս ։ Քանզի որբացեալ թշուառս ի հեզահոգի հաւուն իմոյ Թօմայ եռափայլ եպիսկոպոսէն ի Տէր հանգուցելոյ, և մնացեալ յարեանառու ընկերացս, կեամ բքաբեր հողմով ալէկոծեալ, և ես վասն անմխիթար վայրացս »։... Ապա կը խնդրէ յիշել՝ բաց յայլոց և ի Թովմայ եպիսկոպոսէ հանգուցելոյ, « զարուպ դպիրս Ղուկաս, ըղծնունդս Գրիգորեան, սերունդս Վանանդեան, և անձանձիր տքնութեամբ յարմարօղս, յիմում իսկ տպարանի տպօղս այս նորակերտ բուրաստանիս... Հուսկ յետոյ զփոքրիկ պասաւանին զարեան առուն իմ և զձեռնասունն Յօհաննէս Նուրիջանեան, որ ըստ դեռաբոյս հասակին առաւել քան զկար իւր աշխատի յառաջիկայ տարապարհակ ծանրաբեռն արհեստիս յայլեւայլ պաշտօնս »...։ Նոյնպէս և ի յիշատակարանին մեծամեծ գովեստիւք զբարերարն և իրեն ազնիւ տոհմը դրուատելէն ետքը՝ կը յաւելու.... « Ի վախճանի յիշեցէք յա-

Digitized by Google

ղօթս ձեր զհարազատ և զմտերիմ տպարանիս մատակարար և զհեղինակ նորածին գործոյս զանձնազատ դպիրս Ղուկաս Նուրիջանեան, սերունդս Գողթնեան և ծնունդս Վանանդեան. Ես և զայրեանսաուն իմ զՅօհաննէս պատանեակն Նուրիջանեան. որք ըստ կարի և պաշտօնի մերում աշխատեցաք և աշխատիմք հարազատօրէն »։...

Նոյն որբութեան և անմխիթար օտարութեան յիշատակութիւնը կ'ընէ Վանանդեցին Ղուկաս՝ մի և նոյն տարուան մէջ տպագրուած Սաղմոսարանին վերջը. որոյ համար կ'ըսէ թէ վերոյիշեալ պատանեակն Յովհաննէս բոլոր գիրքը « մեղուաջան քրտամբք շարակարգեաց. և զայլ բազում դժուարակիր աշխատանս տպագրութեանն մտերմաբար յանձն էառ »։ « Թօմայ եռափայլ եպիսկոպոսին » յիշատակն ընելով, « որոյ յոգնաջան քըրտամբքն, կ'ըսէ, կանգնեցաւ այս գեղեցկատիպ, և հիքոյս՝ կտակաւ նորին ի ժառանգութիւն ժամանեալ տըպարանս ։ Նաև ի ժամանակի տպագրութեանս տարերք փոփոխեալ ունէին զիւրեանց զբնութիւնս՝ ըստ քերթողահօրն, գարունն երաշտացեալ, ամառն անձրևայոյզ, աշունն ձմեռնացեալ և ձմեռն մրրկալից յերկարացեալ »։ Գաղղիացի մատենագէտ մը այս տպագրութեան համար կը ծանօթարանէ. Cette rare édition du Psautier est ornée d'un grand nombre des figures gravées sur bois par Van Sichem, որ ժամանակին հռչականուն փորագրող մ'էր։

1690ին ալ Տիմոթէոս Գառնուկ (Agnelli), եպիսկոպոս մ'ալ կը յիշուի ի Պատուա Իտալիոյ, որ կը տպագրէ նոյն քաղաքին մէջ Դաշանց թուղթը և Ներսիսի Շնորհալւոյ Հաւատով աղօթքն ի հայ լեզու։ Ուրիշ իրեն հայագիր տպագրութեանց հանդիպած չենք։

Digitized by Google

ՏՊԱՐԱՆ ՅԷՋՄԻԱԾԻՆ

Մեր ընթերցողաց արդէն ծանօթ գաղղիացի ուսուցչապետն Կարրիէր, քանի մը տարի յառաջ ներկայացոյց մեզ՝ հոլանտացի անուանի տպագրապետի մը քով՝ յԱմստերդամ ձուլուած և տպագրուած հայկական տառից նմոյշ մը, զոր հոս կը ներկացընեմք [1], փափաքելով գիտնալ թէ որո՞ւն համար եղած են այն տառից փորագրութիւնք և ի՞նչ վախճանաւ։ — Մեզի համար կը պակսէր այն ատեն՝ իր հարցասիրութիւնն գոհ ընելու պատասխանին։

1. Le 27 Novembre 1658 un contrat fut passé par *Mattheé Avac* (Մատթեոսի) avec *Cristophévan Dyck*, le fameux graveur du Elzévirs, pour la fourniture de 170 poinçons et 240 matrices de caractères arméniens nécessaires pour l'impression de la Bible. Chacun de ces poinçons fut payé 34 sous de Hollande, et l'artiste inséra dans le traité cette condition que Avac ferait à sa femme un cadeau de 10 florins.

Le 16 Décembre 1755 un contrat fut passé entre *Arachiel di Paulo* et *Jan Michaël Fleischman* pour la gravure par ce dernier de neuf corps de caractères arméniens, ce qui devait faire, y compris bons points, signes musicaux, etc, environ 500 poinçons et les matrices correspondantes. Pour chaque poinçon et la matrice correspondante, le graveur devait recevoir *trois* florins, et s'il était nécessaire de fournir plusieurs matrices pour un poinçon, chaque matrice supplémentaire était payée *un* florin.

Ce contrat est signé *Arachiel di Paulo.* Il fut exécuté, du moins en grande partie; car le fondeur de caractères Jean Euschedé, dans un *spécimen* des caractères fondus par lui,

Digitized by Google

Text Armenisch.

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ
ն շ ո չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք և ֆ օ ։ ․ ՚ (
1 2 3 4 5 6 7 8 9 0 ր ե լ խ ղ յ շ չ ջ վ ց
ք ՝ ․ ,) մե մէ մի մխ մկ մն վն ք ը ը ~ ՝

Augustyn Armenisch.

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք Օ Ֆ 1 2 3 4 5 6 7 8 9 0
ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք և օ

Mediaan Armenisch.

Ջրարբնաւթն (որև՝ մնդիկ, ժխեայ՝ և զեղյան ասի։) Հեղուկ երակի ՚ի մետաղական ջրոյ․ կոչուն Հողաէ_յին, քաշկամնպորդ ընդ ծըծմբոյ՝ և շնչալի․ ցուրտ_խոնաւ՝ և ապխտակ յ՝ արտաքուստ․ Ջերմ չոր՝ կրակոր՝ և աւմենադոյն ՚ի ներքուստ․ Թափանցանէ ընդ մե_տալս՝ զորս մերձենալովն լուծանէ․ և է՛ նիւթ ամ մետալից․ զի սպառունակէ զամենայն մետալս։ քանդաիեալ եղև և տայեցաւ․ ՚ի Թուէին փրկչին ՌՆՃԿ․ մայիսի մեկ․ յ՝ ամստէրդամ։

Descendiaan Armenisch.

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ
Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ
Ջ Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ Փ Ք Օ ․ Տ
ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ
մ յ ն շ ո չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք և ֆ օ ։
ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ
ն շ ո չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք օ ։

Digitized by Google

Քիչ ետքը Աղանեան Գիւտ քահանայի և Երիցեանց Աղեքսանդր բանասիրի ձեռքով եղած պատուական հրատարակութիւնք՝ հարկաւոր սեպուած լոյսը տուին մեզ, այդ խնդրոյ և հարցումի նկատմամբ։

Որչափ ալ զանազան անգամ ազգերնուս մէջ տպագրութեան բարգաւաճման և հասարակաց ըլլալուն փոյթ, ջանք, գործակցութիւն և պաշտպանութիւն ցոյց տուեր են Էջմիածնի հայրապետքն, ինչպէս գրուածքիս համառօտութիւնն ալ ցոյց տուաւ մեզ, բայց բուն իրենց աթոռատեղին տպարան մը ունենալու յաջողութիւնն ունեցած չէին, այն պատճառաց համար՝ որ արդէն յայտնի են ազգային պատմութիւնն ուսումնասիրող բանասիրաց։

Ենթադրեցին ոմանք թէ կանխագոյն ժամանակաց մէջ ալ տպարանի գոյութիւն և տպագրութիւնք եղած ըլլան յԷջմիածին, այդ սրբավայրին անուամբ յԵւրոպա՝ այլևայլ քաղաքաց մէջ հաստատուած ազգային տպարան-

publié en 1768, donne une épreuve de quatre écritures arméniennes, corps 16, 12, 11 et 10, avec souscription :

J. M. Fleischman fecit 1756 et 1757.

Dans la préface du même *spécimen* J. Euschedé dit : « Le sieur J. M. Fleischman a gravé en 1756 et 1757 sept écritures arméniennes admirablement belles pour le sieur Arachiel di Paulo qui est actuellement le posseseur légal des poinçons et matrices. »

Mais, dans la préface d'un autre *spécimen* publié en 1825 par la même maison (la famille Euschedé est encore aujourd'hui à la tête de cette fonderie), nous lisons:

« Nous regrettons beaucoup de n'avoir pu acquérir les caractères arméniens qui ont été gravés par Fleischman *pour l'église arménienne d'Amsterdam, et qui ont été transportés il n'y a pas longtemps en Russie.* »

A quelles impressions ont bien pu servir les caractères *admirablement beaux* gravés par Fleischman, et que peuvent-ils bien être devenus ?

Digitized by Google

ներն, յԱմսդերտամ, ի Մարսիլիա և ի Լիվոռնոյ՝ շփոթելով, և կարծելով թէ բուն տեղւոյն վրայ կառուցուած ըլլան, ուր երբէք այդպիսի հաստատութիւն եղած չէ հոն՝ յառաջ քան զՍիմէոն կաթուղիկոս, որ Էջմիածնի Հայրապետական աթոռոյն վրայ նստաւ յամի 1763։ վասն զի միայն իր ատեն Էջմիածնի մէջ մասնաւոր շէնք մը կառուցուեցաւ, որոյ ճակատուն վրայ հետևեալ յիշատակարանն գրուած էր.

« Աստուծով հաստատեցաւ տպագրատունս նոր ի նորոյ ի սուրբ Աթոռս Էջմիածին ամենայն պարագայիւքն, հոգաբարձութեամբ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին Երեւանցւոյ, արդեամբ Ջուղայեցի ի Հինդ բընակեալ բարեպաշտաւն Գրիգոր աղային Ջաքիկենց ի յիշատակ իւրեան, և իւր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն Միքայէլին և Մամխաթունին, իւր կենակից Մատլինային և վաղաժառամ Միքայէլ որդւոյն, և քերցն՝ Անամարիային և Ջիպիտային, հօրեղբարցն՝ Եղիազարին, Սաֆարին և Աղեքսանդրին, պապուն Գրիգորին և կենակից Թագուհւոյն, և հօրաքեռն՝ Ջիժազատային, և մեծպապ Ցակոբջանին, և հաւրեղբօր դստերացն՝ Պէկզատային և Գիւլնաբաթին և այլ ամենայն հին և նոր ննջեցելոց նորին... Թվ. ՌՄԻ »։

Այս արձանագրութիւն՝ որչափ ալ հիմա վերցուած է նոր տպարանին գրան վրայէն, կամ թերևս ուրիշ տեղ փոխադրուած, բայց յայտնի նշանակ է՝ թէ յիշեալ թուականին եղած է հաստատութիւնն, և այն հայրապետին օրով՝ որոյ անուն յիշատակուած է յարձանագրութեանն։

Նոյն միջոցին՝ վենետիկ և Պոլիս քիչ շատ գործունէութիւն կը ցուցընէին, տպագրութեամբ թէ՛ եկեղեցական և թէ արտաքին մատենագրութեան երկասիրութիւններ ընծայելով ազգին։ Հայրապետական աթոռոյն պատիւն և պարտք կը պահանջէին՝ որ անոնցմէ յետամնաց չերևնայ. մանաւանդ որ երբեմն այնպիսի եր-

կասիրութիւնք կը հրատարակուէին՝ որ չէին կրնար ըստ ամենայնի հաճոյանալ աթոռոյն, հարկ համարուելով իր կրօնական ուղղութեան և սկզբանց հաւատարիմ մնալու համար, կերպով մը հակառակիլ այդ գործունէութեան ։

Սիմէոն կաթուղիկոսին ինքնագիր յիշատակարանք ի վերջ իրմէ տպագրուած գրոց, յայտարար հաւաստիք և հաստատութիւն են մեր ըսածին, և որուն հետևող պիտի երեւնար՝ սակաւակեացն Արղութեանց կաթուղիկոս, իր եպիսկոպոսութեան տարիներուն ։

Հայրապետական աթոռն բազմելէն անմիջապէս երկու տարի ետքը, 1765ին կը գրէր Սիմէոն առ Ղուկաս վարդապետ, նուիրակ և առաջնորդ Զմիւռնիոյ, թէ յԱմսդերդամ ազնիւ և ընտիր փորագրութեամբ հայկական տպագրական տառեր կը գտնուէին, զորս Առաքել անունով մէկը շինել տուեր էր, և գործարարաց պակասութեան պատճառաւ՝ չէր յաջողած տպարան մը հաստատել հոն, ինչպէս կը փափաքէր. և կը պատուիրէր Ղուկասու՝ բանակցիլ գրով ընդ Առաքելի, և ստացման գինը յարմարցընելով՝ առնուլ ի նմանէ գտառսն և յղել առ ինքն յէջմիածին ։ Իր այս նամակին գոհացուցիչ պատասխան մը չընդունելով ի վարդապետէն, միւսանգամ գրեց առ նա, թէ ի Զմիւռնիա Մարկոս անունով տպագրիչ մը կայ. խօսի անոր հետ, որպէս զի իւր սեպհականութիւն եղող տառերն հետը առնելով՝ ելլէ գայ առ ինքն յէջմիածին ։ Մենք արդէն յիշատակեր ենք զՄարկոսեան տպագրատուն Զմիւռնիոյ, ու հոն հրատարակուած քանի մը գրքերը ։ Ղուկաս վարդապետ պատասխանեց, թէ խօսեր է Մարկոս տպագրչին հետ, և թէ չէ կարող նա առ այժմ տպարանը վերցընել ի Զմիւռնիոյ և գալ յէջմիածին, որովհետև պիտաւորութիւն և կամք ունի տպագրել նախ սաղմոսարան մը ։ Դարձեալ կը գրէ հայրապետն, որ եթէ Մարկոսի

գալստեան ժամանակը ձգձըգելը և յապաղումը դրամի համար է, վճարէ ուզած փողը և բըռնադատէ կնա փոխադրուիլ յէջմիածին, ուր կրնայ տըպագրել իր հաշուին ուզած սաղմոս գիրքը։ Քիչ ետքը աւելի խստութեամբ կը կրկնէ նոյն պատուէրը։

Ամստերտամի Ցովհաննէս վարդապետին ալ, որ Ղազար կաթուղիկոսին օրուընէ հոն ղրկուած էր՝ իբրու ապգային եկեղեցւոյն տեսուչ և հովիւ, կը գրէ և կը բռնադատէ, « զի զԱռաքելի գիրն՝ կամ անդ տպարան հաստատել տալ, և կամ առնուլ և ի սուրբ Աթոռն յղել. իսկ եթէ Առաքելն չտայցէ, և թէ անդ տպարան իցեն հաստատելոց կամ ոչ, նոյն փորագրողին, զձեռն մի գիր վասն սուրբ Աթոռոյն փորեցուցեալ յղեսցէ »։ Նոյնը առանձին նամակաւ գրեց և առ Առաքել, առաջարկելով Ղուկաս վարդապետէն ստանալ կարևոր ծախքն, և « վասն Մարկոսին ետ ջանալ, և մի՛ ի կողմն հատանել զբանն՝ » մէկդի ձգելով այդ խորհուրդը։ Կոստանդնուպոլսէն ալ ծանոյց կաթուղիկոսին իր Մովսէս գործակալը, թէ « վասն Զմիւռնիոյ տպագրիչ Մարկոսին թէ գտեալ եմք զհնարս ինչ յղել այդր ». և հայրապետն գրեց որ փութան առ այդ, նախապէս խորհըրդակցելով ընդ Ղուկաս վարդապետի։

Վրան տարի մը ժամանակ անցաւ, և կարելի չէր ըլլար ոչ զմին և ոչ զմիւսն համոզել, որ իրենց ձեռաց տակ եղած տպարանական ամենայն պարագայքը նուիրեն կամ՝ գէթ վաճառեն Էջմիածնի. և Սիմէոն տեսնելով գործոյն անյաջողութիւնը, մտածեց ուրիշ տեղ դարձընել իւր մտադրութիւնն։

Digitized by Google

*
* *

Վենետիկ քաղաքին մէջ հաստատուած տպարաններու վրայ խօսած ատեննիս յիշեցինք, թէ Սարաֆեան Սարգիս անունով վարդապետ կամ եպիսկոպոս մ'ալ կար հոն, ուր յարևելից փոխադրուելով՝ ետևէ եղաւ նաև հայերէն գրքերու հրատարակութեան, մանաւոր իրեն սեպհականութիւնն եղող տառեր ձուլել տալով։ Այդ տառերն, կամ մանաւանդ անոնց հայրերն ու մայրերը հետն առնլլով, ի Վենետկոյ անցեր էր ի Կոստանդ-նուպոլիս։

Սարգիս վարդապետ նախկին միաբան մ'էր Էջմիածնի, «գիր տպագրական փորագրեցեալ, — կ'ըսէ յիշատա-կարաննիս գրողն, — ի Վենետիկ, յոյժ ազնիւ և քաղ-ցրատես, որով գէֆէմէրտէս գիրքն տպեալ էր․ և պա-հէր առ ինքն զգիրն, և ոչ ումեք տայր, և ոչ ինքն զտպագրատուն բանայր»։ Սիրալիր նամակ մը գրեց առ նա կաթուղիկոսն, առաջարկելով որ կամ դրամով, և կամ ի յիշատակ իւր հոգւոյն՝ նոյն տառերն Էջմիածնի նուիրէ։ «Եւ եթէ կամիցի զայս, կ'ըսէր, որով կեր-պիւ և իցէ, ծանուսցէ մերայնոցն՝ որոց և կամիցի ինքն՝ զմխոս իւր, զի գրեսցեն ինքեան, և կամ ինքն խօսեսցի գրով. և որպէս կամիցի առէ, և ինձ է հաճելի»։

Մի և նոյն ժամանակ մահտեսի Մովսէս անունով անձէն, որ Էջմիածնի՝ ինչպէս ըսինք, Աթոռոյն գոր-ծակալն էր ի Պոլիս, գրեց ու ծանոյց՝ որ եթէ Սարգիս վարդապետ այս խնդրոյն նկատմամբ հետը խօսք բանալու ըլ-լայ, պահանջած գինը հասկընալով փութայ իմացընել իրեն. և որովհետև քաղաքէն տպագրիչ մը 1,500 դահեկան առաջարկեր էր ստացման համար, մինչ Սարգիս վարդա-պետ 1800 դահեկան գին կը պահանջէր, ինք աշխատի այդ գնէն պակասով ձեռք ձգել, բայց անկէ աւելի գին

չվճարել ։ Նոյն Թուականաւ Թուղթ մ՚ալ գրեց առ Ջուղայեցի Առաքել յԱմսդերտամ, պատուիրելով որ եթէ իրեն հաշուին յատուկ տպարան բացեր կամ բանալու միտք ունի յԱմսդերտամ, Էջմիածնի համար և հաշուին նոյն փորագրողին՝ իր ունեցած ամէն գրերէն, ծաղկագրերէն, զարդերէն փորագրել տայ ։ Ղուկաս վարդապետին ալ իմացընելով իր այս կամքը ի Զմիւռնիա, միւս անգամ կը յորդորէր որ ստիպէ զՄարկոս տպագրիչ՝ առնուլ ժողովել իր արուեստին վերաբերեալ ամէն պարագայքը և գալ յԷջմիածին ։

Կաթուղիկոսին ոչ մէկ և ոչ միւս կամք և բաղձանքն չյաջողեցաւ, որով առաքելեան տառք մնացին յԱմսդերտամ, և Մարկոս տպագրիչ ի Զմիւռնիա ։

Ասոր պատճառը կ՚ենթադրենք գտնել ձեռուընիս եղած ազգային ճանապարհորդի մը գրութեան մէջ, որ նոյն ժամանակներն Ամսդերտամ էր ։ Այդ քաղաք՝ իր երբեմն ունեցած կարևորութիւնն ալ կորուսեր էր մերազգեաց համար, և Յովհաննէս վարդապետին հետ՝ Սիւնեցի մականուանեալ, միայն քանի մը անձինք մնացած էին ։ Էջմիածնի կաթուղիկոսն՝ նկատելով այդ տեղւոյն ազգային գաղթականութեան գրեթէ ի սպառ անհետանալը, կ՚ուզէր վաճառել եկեղեցին և անոր ամէն կալուածներն՝ իբրու սեփականութիւն Աթոռոյն, և տիրանալ ստացուածոցը ։ Բնականաբար չէր կրնար հաճոյ անցնիլ Ամսդերտամի ազգայնոց՝ իր այդ կամքն և խորհուրդն. ուստի հարկ եղաւ տէրութեան դիմելով խափանել զայն,. ինչպէս յաջողեցան ։

* * *

Վերջապէս կրցաւ կաթուղիկոսն Հնդկաբնակ Զաքիկենց Գրիգորի առատատուր օժանդակութեամբ բանալ տպարանն յԷջմիածին ի 1771 Թուի, որուն մատուցած

Digitized by Google

երախայրիքն եղաւ Զբօսարան հոգեւոր կոչեցեալ գրքոյկ մը, վեշտասան ծալքով աղօթից մատենիկն։ Հետեւեալ տարւոյն, կաթուղիկոսն կը գրէ առ բարերար ձեռնար-կութեանն. «Իսկ ի կողմանէ տպագրատան՝ միամիտ և անհոգ և ուրախ լինիցիս. զի Աստուծով ահա հաստա-տեցաւ լաւապէս, և օր ըստ օրէ լաւագոյն հաստատի։ Ցառաջագոյն զփոքրիկ գրքոյկ մի աղօթից յօրինեալ էի, զոր նորաքանդակ գրով տպեցաք, և յղեցաք ի նմանէ վասն սիրելւոյդ»։ 1773ին գրած նամակին մէջ ալ Տաղարանի մը խօսքն կ՚ընէ, իբրու յառաջագոյն տը-պուած. «Այժմ եւս նոյն աղօթից քոյ գրոց վերատին տպել ետու վասն բարւոք փորձառութեան գործարանին։ Ահա երկու հատ եւս ի նմանէ եղաք ի մէջ թղթոյս և յղեցաք վասն սիրելւոյդ, առ ի տեսնել և ուրախանալ քեզ այդու եւս. զի ահա տիպն գորին փոքր ինչ լա-ւագոյն է քան զաղօթից գրոց տիպն. ու այդպէս օր ըստ օրէ լաւապէս հաստատի տպարանն»։

Նոյն թղթով կ՚իմացընէ, թէ ուրիշ ընտրելագոյն տառից փորագրութեամբ և ձուլմամբ կը զբաղին, որովք նորանոր հրատարակութիւնք պիտի ըլլային հետզհետէ, և առաջինն Տօնացոյց մը։

* * *

Տպագրական գործոյն ամենահարկաւոր նիւթերէն մէկն է նաև թուղթը։ Հաղորդակցութեանց դժուարութեան համար՝ գրեթէ անկարելի էր Եւրոպայէն թուղթ բերել։ Անոր ալ դարմանը մտածեց Սիմէոն կաթուղիկոս, թղթի գործարան մը հաստատել յէջմիածին, յարարատեան դաշտի, ուր առատութիւն է բամբակի և ջրոյ. ուստի յԵւրոպայէ հմուտ արուեստագէտներ բերել տալով, 1774 ին՝ տաճարին հարաւային կողմը ու անկէ քաւական հեռու՝ մեծ շէնք մը կառուցանելով, հոն գետեղեց թըղ-թաշինութեան համար բերել տուած գործիները։

Թղթագործարանին ալ շինութեան առատամիտ բարերարն էր նոյն ուսումնասէր մատրասեցի Զաքիկենց Գրիգոր, առ որ գրէ կաթուղիկոսն ի 1774. «Ցանցեալ ՌՄԻԱ (1772) թուոյն եհաս առ մեզ թուղթ քոյ որ յաղագս թղթաշէն վարպետացն և այլոց յոլովից իրակութեանց գրեալ էիր... իսկ մեք թղթաշինաց թուղթսըն՝ յետ հասանելոյն առ մեզ՝ շուտով յղեցաք ի մեծն Պօլիս առ մեր նուիրակ Զաքարիա վարդապետն յղել անդ, որպէս և քեզ եւս գրեալ եմք յառաջ, և նա ի վաղուց հետէ յղեալ էր և գրեալ առ մեզ: Բայց պատասխանքն նոցին մինչեւ ցայժմ տակաւին ոչ ընկալաք, զի գիտասցուք թէ ո՛րպէս եղեն, գալո՞ց են թէ ոչ: Եթէ դու զհամբաւ ինչ լուեալ իցես ի նոցունց, մեզ եւս գրեա՛՝ զի գիտասցուք. ապա թէ չես լուեալ, եթէ կամիցիս վերստին գրեա անդ, զի թերեւս եկեսցեն»:

Կը ծանուցանէ դարձեալ, թէ ընդունած է շնորհակալութեամբ և օրհնութեամբ, տպարանի կանգնման և հաստատութեան անհրաժեշտ ծախուց համար իր կողմանէ ղրկած երեք հազար հարիւր և վեց ոսկւոյ գումարը. և թէ՝ տպարանի շէնքը փոքր ըլլալուն՝ պիտի ընդարձակել տայ, և գլխաւոր դրան վրայ դնել՝ ի յիշատակ իրեն՝ այն արձանագրութիւնը, զոր ի վեր անդր մէջ բերինք:

Պարսկաստանի մէջ կային ի ժամանակին թղթի գործարաններ, ուստի կաթուղիկոսն հմուտ կարծուած արուեստաւորներ բերել տուաւ, որ իր դիտած վախճանին չկրցան օգտակար ըլլալ:

Յոյսը կտրելով անոնցմէ, գրեց առ Զաքիկեան Գրիգոր, խնդրելով որ ինք գտնէ թղթաշինութեան ճարտար և հմուտ արուեստաւորներ: Պարիսէն երկու գաղղիացիք եկած էին այն ատեններն ի Պոլիս, տեղեակք արուեստին: Անոնց հետ օրինաւոր դաշնագրութիւն ընել տուաւ Զաքիկենց, որ երթան յէջմիածին թըղ-

թագործարան և թուղթ շինելու, և հետևերնին տանին այդ արուեստին հարկաւոր ամէն պարագայքը, տեղացի աշակերտներ ունենան և սորվեցընեն անոնց արուեստը, որպէս զի իրենց պայմանաժամն լրանալէն ետքը՝ կարենան դառնալ իրենց ուզած տեղը, և գործը աշակերտաց ձեռքով շարունակի։ Ռուտեստի և ուրիշ ամէն ծախքերէ զատ՝ 14,000 ռուբլի վարձատրութիւն խոստացեր էր իրենց, զնելով հետերնին նաև հայազգի թարգման մը։

Բայց այդ երկու եւրոպացիք, իրենց համար նշանակուած տեղը հասնելով, սկսան այլևայլ դժուարութիւններ յարուցանել գործոյն սկզբնաւորութեան, ու երկու տարի գործը ձգձգելով՝ մեծ ծախքեր ընել տուին, առանց իրական արդիւնք մը ցուցնելու։ Կաթուղիկոսն իրաւամբ նեղանալով իրենց բռնած այս կերպին վրայ, վարպետներն իր դիմացը կանչեց, և պահանջեց գործարանը՝ զոր խոստացեր էին շինել։ Անոնք նեղը մընալով խոստովանեցան, թէ մտքերնին դրած են արուեստնին մէկու մը չսորվեցընել։ Երբ այդ պատասխանին վրայ ա՛լ աւելի զայրացաւ կաթուղիկոսն, ու փաղախա բերել տալով սպառնացաւ զիրենք պատուհասել ու սառնատուն ձգել, զղջալով խոստացան՝ որ վեց ամիս պայմանաժամ շնորհուի իրենց, որպէս զի յանձնառու եղած գործերնին կատարեն։ Սիմէոն կաթուղիկոս զիջաւ այդ ժամանակը շնորհել իրենց, ու վրանին հսկող և տեսուչ դրաւ զիսահակ եպիսկոպոս Գեղամեան, որոյ հոգաբարձութեամբ շուտով կառուցուեցաւ թղթաշինութեան գործարանն, և հարկաւոր եղած թուղթն սկսաւ հայթհայթել տպարանին։

Այն ատեն կաթուղիկոսն ձեռք զարկաւ տպագրել իւր հեղինակած Պարտավճար կոչեցեալ գիրքը, ու փութալով հրատարակեալ առաջին թերթերն յղել առ բարեբարն Ջաքիկեան, ծանոյց իրեն միանգամայն թէ թըղ-

Digitized by Google

թագործարանին վրայ 7800 պարսկական թուման ծախք եղեր է։ Իսկ նա նուիրատուութեանը նախընծայ արգասիքն տեսնելով գոհութեամբ, մէկէն յղեց այն գումարը առ հայրապետն Սիմէոն, և հետը չորս հարիւր զոյգ ընտիր յախճապակէ ըմպանակներ և ուրիշ անօթներ, որոց ամենուն վրայ ոսկեգրով և հայերէն տառերով գրուած էին անոր անունը որուն կը նուիրուէին ի բարի վայելս, ի ՌՄԻԶ Հայոց թուին։

Սիմէոն առանձին գրութեամբ ծանոյց Գրիգորի՝ գաղղիացի վարպետներուն խաբէութիւնը, և թէ արուեստնին չուզեցին սորվեցընել աշակերտաց, ինչպէս պարտականութիւն առած էին վրանին ըստ դաշնագրին. բայց նոքա յաջողեցան, և իրենց վարպետներէն շատ լաւագոյն և ընտիր թուղթ շինեցին. և տպացոյց իր խօսքին՝ չորս թերթ թուղթ ղրկեց առ նա. երկուքը առաջին շինութենէն, և միւսերն երկրորդէն՝ աւելի մեծադիր. իմացուց նաև թէ թուղթը շինուած է Էջմիածնի անուամբ և նշանաւ. և խոստացաւ՝ ինչպէս տպարանին՝ սանկ նաև թղթագործարանին վրայ արձանագրել բարերարին անունը։ Զաքիկեան անգլիերենէ ի հայ հինգ օրինակ մուրհակագրի թարգմանելով, ղրկեց առ կաթուղիկոսն. խնդրելով որ հայերէն լեզուն սըրբագրեն և տպագրելով դարձընեն առ ինքն։ Սիմէոն փութաց կատարել խնդիրքը, և միանգամայն հաղորդեց իրեն՝ թէ ի յիշատակ նորա բարերարութեանն՝ Զբօսարան և Տօնացոյց գրքերն ձրի բաշխեր է եկեղեցեաց՝ առանց դրամական փոխարինութեան մը։

Էջմիածնի թղթագործարանին մէջ շինուած թուղթը մասնաւոր նշան մը կը կրէր ամէն թերթերուն վրայ. մէկ կողմը նոյն սրբավայրին անուան փակագիրը, կաթուղիկոսին անուան և աստիճանին սկզբնատառք (Ս. Կ.), և ի միւսն՝ բարերարին անուան՝ Գրիգորի Միքայէլեան (Գ. Մ.) Զաքիկեան, տպարանին կառուցման հայկական թուականը։

Անկէ յառաջ, 1774ին, տպագրեցաւ Տօնացոյցն, որ ընդհանրապէս կաթուղիկոսին անուամբը կը կոչուի, իրեն կարգաւորութիւնն ըլլալով. և վերջաբանին մէջ կը ստորագրէ կրածներն Էջմիածնի տպարանին հաստատութեանն համար. «Ահա հինգ ամ է, կ'ըսէ, յորս աշխատիմք և ազնիմք զի զարհեստս զայս ի ձեռն բերցուք և հաստատեսցուք ի սուրբ Աթոռոջս... զոր և հաստատեցաք իսկ Աստուծով: Ցորում տպեցաք նախապէս ըզքանի հատ սաղմոսս, որ զտհասութիւնս շատ ունէ նկատմամբ տպեցմանս: Երկրորդապէս տպեցաք զփոքրիկ գիրք Աղօթից, և ես փորձելոյ աղագաւ զպարագայս գործոյս. որ թէպէտ հասուն էր քան զՍաղմոսն, սակայն և ևս ունէր անհասութիւնս ումանս՝ որքան առ գործս այս: Ապա երրորդապէս տպեցաք զՏօնացոյցս զայս, որ Աստուծով քան զնոսա հասուն է և կատարեալ»: Ցիշատակարանին մէջ ալ մասնաւորաբար կը յանձնէ «զԻսահակ եպիսկոպոսն Գեղամացի, որ յամենայնի կարգաւորիչ և տնօրինիչ է գործոյս և գործավարացն նորին, անձանձիր աշխատեցմամբ: Ընդ նմին և զաիրացու Ցարութիւնն Էջմիածնեցի, որ է փորագրող և օժանդակող բոլորից գրոց, պատկերաց, խորանաց, կանոնաց և այլոց ծաղկանշանից. Նաև տպօղ գրքոյս... Արժանի է յիշման և Շօռօթեցի Մկրտիչ արքեպիսկոպոսն· որ իբրու նախկին հեղինակ եղև գործոյս այսորիկ՝ որքան առ փորագրութիւնն ի պողովատեայս: Նաև... Գրիգոր աղայն Ջուղայեցի ի Հինտ բնակեալ... խօջաջանեան Ջաքիկենց... Քանզի գործս այս՝ բոլորովին պարագայիւքն և բնաւիւք ծախիւքն վերոյիշեալ բարեպաշտի... յառաջանայ ձրիապէս»:

* * *

Էջմիածնի տպարանէն ընծայուած առաջին երախայրիքն՝ Զբօսարան կոչուած աղօթից մատենիկն էր ըսինք. յետոյ Տաղարան մը, որոյ նախկին տպագրութիւնն տեսած չենք, և կ'երևնայ թէ անարուեստ և անհարթ տպագրութեանն համար մասնաւոր դիտմամբ անհետ ըրած են. և տպագրատան աւելի կարգաւորութիւն առնըլէն ետքը՝ 1777ին, միւսանգամ տպագրած, ինչպէս կ'ակնարկէ ի ճակատ գրոցն դրուած խորագիրը. «շարահիւսեցեալ ի Սիմէօնէ սրբազան կաթուղիկոսէ ամենայն Հայոց յայլ և այլ ժամանակս: Որոյ հրամանաւն այժմ ևս տպեցաւ կրկին՝ ի սպառիլ առաջնոյ տպեցելոյն, ի թախանձանաց սիրատարփ խնդրողաց... ի սուրբ աթոռն Էջմիածին, ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»: Գրքին վերջն ալ. «Յիշեսջիք ի Քրիստոս հաստատողն տպարանիս, և զամենայն աշխատօղսն որ ի սմա. և զհոգացօղն ծախուց սորին՝ զՋուղայեցի Խօջիջանենց Գրիգոր աղայն»:

1777 թուականին տպագրուած է յԷջմիածին «Կարգ թաղման հայրապետաց, եպիսկոպոսաց և քահանայից» մասնական մաշտոցը, որոյ համար կ'ըսուի ի ճակատուն, «զոր ի բուն մաշտոցէն մերմէ առեալ՝ սրբագրեալ և կարգաւորեալ տեառն Սիմէոնի գերերջանիկ և գիտնական կաթուղիկոսի ամենայն Հայոց, ետ տպագրել մեծաւ զգուշութեամբ, ինքնին իսկ լինելով վերակացու»: Խորհրդաւոր փայտափոր պատկերներ ալ ունի, վերաբերութեամբ առ Մասիս լեառն և առ աթոռն հայրապետական, մեր արևելեան առաջին տպագրութեանց մէջ գրեթէ անհրաժեշտ և սովորական անարուեստութեամբ:

Digitized by Google

* * *

Ինչպէս ըսինք, Սիմէոն կաթուղիկոս Էջմիածնի տը֊
պարանն և թղթագործարան հաստատելէն ու բարեկար֊
գելէն ետքը՝ տպագրեց Պարտավճար գիրքը, որոյ տը֊
պագրութիւնն թէպէտ իր օրովը սկսաւ, բայց չկրցաւ
տեսնել անոր լրանալը և հրատարակութիւնը, ինչպէս
կ՚ակնարկուի ի յիշատակարանին... «Գիտելի է, կ՚ը֊
սէ, զի յօրինողն տառիս տէր Սիմէօն յոգնաջան կա֊
թուղիկոս ի ՌՄԻԸ թուոջն մերում աւարտեաց զայս,
և պարզագրեցուցեալ ետ ի տպագրութիւն... Սակայն
ոչ յաջողեցաւ նմա յայնմ ժամանակի բոլորապէս տպե֊
ցուցանել: Քանզի յետ առաջնոյ հատորի տպեցման...
անկաւ ի ցաւագին հիւանդութիւնս... պատուիրեաց հո֊
գեծին որդւոց և աշակերտաց իւրոց զկնի վախճանի
իւրոյ զմնացորդն գրոցս տպեցուցանել... Իսկ ի յուլիսի
իզ (ՌՄԻԹ) փոխեցաւ ի կենաց աստի: Եւ զկնի տը֊
նօրինմամբն Աստուծոյ յաջորդեաց զաթոռս սուրբ տէր
Ղուկաս... հրամայեաց այլ եւս թարց յապաղման տը֊
պեցուցանել. և կատարեցաւ ի թուոջ փրկչին ՌՋՋԳ...»:

Այս թուականէն ետքը քանի մը տարի կը դադրին
տպագրական հրատարակութիւնք յԷջմիածին, զէթ մեր
քով եղած զրացուցակաց համեմատ, ցամն 1787. յո֊
րում կ՚երեւնայ թէ տպարանն արուեստական նոր կազ֊
մակերպութիւն և փոփոխութիւններ կը կրէ. զի ի յի֊
շատակարանի Ցովսեպոսի գրոց պատմութեան, որ նոյն
տարւոյն մէջ տպուեցաւ, կրկին յիշատակութեան կը
յանձնուի, «կերտողն գրոց և կանոնաց և ծաղկանշանից,
վարպետ Ցարութիւնն Վաղարշապատցի», որ կ՚երեւնայ
թէ օր ըստ օրէ աւելի կը յաջողէր յիւրում արուեստի.
վասն զի այս տպագրիս մէջ՝ թէ ըստ տառից և թէ
ըստ թղթոյն, համեմատական շատ աւելի արուեստ և

ընտրութիւն կը նկատուի, քան նոյն գործարանէն նախընթացաբար ընծայուածներուն մէջ։

*
* *

Հայոց նորագոյն պատմութեան տխուր էջերուն վրայ ակնարկ մը միայն ձգողը՝ յայտնապէս կը տեսնէ, թէ ինչպէս անցեալ դարուն վերջերը և ներկայիս քառորդին մէջ, Էջմիածնի վանաց վիճակը շատ դժուարին վիճակ մ'ունէր, որպէս զի կարենայ տպագրութեան գործով զբաղիլ և զբաղեցընել. մինչ իր միաբանք՝ և ոչ իսկ նիւթական քիչ մը հանգիստ վիճակ կրնային ունենալ իրենց բազմադարեան բնակութեան մէջ, որ ձեռքէ ձեռք անցնելով՝ նշանակ և նպատակ դարձած էր բռնութեանց, և նեղիչ հալածանաց։ Սրբոյն Գրիգորի յաջորդքն ալ՝ կարծես թէ տպագրական գործէ աւելի կարևորագոյն զբաղմունք մը կը համարէին զատած ըլլալ։ — Գէթ այսպէս ենթադրել կու տան Աղանեան և Երիցեանց այն ժամանակաց վրայ խօսող իրենց վերջին հրատարակութիւններով։

Կը հասնինք մինչև Յովհաննու ութերորդի Կարբեցւոյ հայրապետութեան ժամանակ, յորում երկրին քաղաքական դիրքը մեծ յեղափոխութիւն կը կրէ, և հետը նաև Էջմիածնի վանքն, ուր զանազան ուրիշ բարեկարգութեանց հետ կը մտածուի նաև տպարանի վերաբացման և գրական գործունէութեան համար աշխատիլ։ Միաբանից մէջ կ'երևնան անձինք որ եռանդեամբ կու տան ինքզինքնին ուսումնասիրութեան և ուսմանց, որոց մեծապէս խրախուսիչ և օժանդակ կ'երևնայ Կարբեցւոյն անմիջական յաջորդը՝ Ներսէս Ե Աշտարակեցի։ Այսպիսի եռանդուն փութոյ առաջին և գոլերի արգասիք կ'ըլլայ Շահխաթունեան Յովհաննէս վարդապետի Ստորագրութիւն սրբոյ Էջմիածնի կոչուած երկհատոր հմուտ և հմտացուցիչ երկասիրութիւն, տպագրեալ ի 1842։

*
* *

Էջմիածնի ուսումնական ներկայ բարգաւաճանաց և յառաջադիմութեան սկզբնաւորութիւնն Մատթէոս Ա և մանաւանդ Գէորգ Դ կաթուղիկոսի զահակալութեան ժամանակին համարելու որ ըլլանք, ազգին մեծագոյն մասին զգացման համեմատ կ'ենթադրենք խօսիլ և գրել։

Ժամանակք փոխուած էին. իւր նախորդներէն Ներսէս՝ կովկասու գլխաւոր քաղաքին, Տփղիսու մէջ մեծ դպրատուն մը բացեր, մինչև Եւրոպայէն ուսուցիչներ բերել տուեր էր, որպէս զի իւր թեմին մէջ կրթութիւնն և ուսմունք ծաղկին։ Համալսարան և հռչականուն վարժոց մը արդէն հաստատուած էր ի Մոսկուա, Լազարեան տոհմին առատամիտ և առատաձեռն տրոլք, զոր Ռուսաց պետութիւն իր հզօր պաշտպանութեան ներքև առնելով, նախնաբար ազգին ընծայած բարերար որդեանց բազմապատիկը կը խոստանար և կը յուսացընէր. նոյնպէս ի Պետերբուրգ մայրաքաղաքին, ի Նոր Նախիջեւան, ի Թէոդոսիա և այլուր հաստատուած առաջնակարգ վարժարանք և դպրոցք, իրենց մեծ ազդեցութիւնն ըրած էին Ռուսիաբնակ ազգայնոց վրայ, լաւագոյն ապագայ մը խոստանալով։

Այդչափ եռանդեամբ ուսման հետևող ազգին համար՝ կրթութեան և գիտնական ուսումնականութեան համազօր և հաւասարաքայլ կղերի մը կարօտութիւնն իմացեր էր Գէորգ հայրապետ, որ Թուրքիոյ մայրաքաղաքէն կու գար՝ բազմիլ կաթուղիկոսական աթոռոյն վրայ, և ուր արդէն իր աչքին առջև, իր պատրիարքութեան օրով կը յաճախէին դպրոցք, վարժոցք, լսարան, թատերք. ամէնքն ալ՝ եթէ իրենց օրինաւոր սահմանին մէջ միան ու գործեն, մէկմէկ զօրաւոր շարժառիթք, հնարք և միջոցք զարգացման։

Digitized by Google

Գէորգայ ընտրութիւնն եղաւ ի 1868. և յաջորդ տարին մեկնեցաւ յէջմիածին։ Առաջին մտածութիւնն եղաւ տպարանական գործոյ զբաղիլ և բանալ կրկին ի վայելս հեռաւոր և մերձաւոր ազգայնոց լուսոյ և ուսմանց շէնքին այն դռներն՝ ուստի ամէնքն իրաւամբ լոյս և ուսումն կը պահանջէին։ Այս վախճանաւ ետևէ եղաւ յորդորել միաբաններն ուսումնական և կրօնական հանդիսի մը, Արարատ լրագրին, հրատարակութեան ձեռք զարնել, որ ցայսօր կը շարունակուի անընդհատ։

Այդ պարբերականին առաջին թիւերը ձեռք առնողներն, գրեթէ քառասուն տարիներէ ետքը, անշուշտ շատ թերակատար պիտի գտնեն զանոնք, մանաւանդ արուեստագիտական տեսակէտով. իսկ այսօրուան թերթերն ակնարկած ատեն՝ պիտի տեսնեն թէ ամենայն ձեռնարկ, մանաւանդ մեզ նման ազգի մէջ, միշտ պզտիկէն կ'առնուն իրենց սկզբնաւորութիւնը, ինչպէս և բնութեան ամէն արտադրութիւնք. և թէ ժամանակն ու ջանքն են՝ որ իրարու ձեռք ձեռքի տուած կը գործեն ամեն յառաջադիմութիւն։

Նոյն վախճանաւ հաստատեց Հայրապետն իր անունը կրող մեծ վարժարանն յ'Էջմիածին, ուստի ամ ըստ ամէ կ'ընծայուին ազգին գիտուն հոգեւորականութիւն և աշխարհիկ ուսուցիչք, կրթիչք և դաստիարակք ազգին ապագայ սերնդեան։

Իր յաջորդն Մակար Ա. ի հիմանց փառաւոր տպարան, ձուլարան և այլ կարևոր պարագայքն կառոյց և հոգաց, ազգասէր և բարերար անձանց դրամական օժանդակութեամբ, որոց անուան փառքն՝ գործոյն օգտակարութեանը մէջ է, և երախտապարտ ազգին շնորհակալութիւն՝ յաւերժական արձան յիշատակի։

Իսկ արդի Հայրապետն, անուամբն և սրտիւ ստուգիւ Հայր իր հոգեւոր խնամոցը յանձնուած սիրելի ժողովրդեան, Հայրապետութեան առաջին օրերէն՝ ընտիր

ամենազգի տառեր ստացաւ ի Մխիթարեանց Վիեննայի, և նոր կերպարանք մը տուաւ թէ՛ Արարատ լրագրին և թէ ուրիշ տպագրեալ գրոց, օգտակարը ջանալով միաբանել ընդ գեղեցկին և ճաշակաւորին։

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ Ի ՀՆԴԻԿՍ

Այս հեռաւոր աշխարհին մէջ՝ պատուաւոր քաղաքական դրիւք և ընչիւք ազգային գաղթականութիւն մը կար դաբերէ ի վեր, փոխադրեալք ի մայր հայրենեաց և ի Ջուղայէ. ժամանակին հանգամանօքը տարագիր, այլ առանց մոռնալու զայն. սիրելով միշտ զազգը և զլեզուն։ Նախընթաց յօդուածով տեսանք արդէն թէ որպիսի բարերար մը եղաւ Զաքիկեան՝ ի հաստատութիւն և ի յառաջադիմութիւն Էջմիածնի տպարանին. նաեւ յայլուստ գիտենք թէ առատամիտ նուիրատուութիւնք եղած են յայլոց զանազան վարժարանաց և ուսումնարանաց կառուցման, նորանոր և օգտակար մատենից հրատարակութեան ինչուան մեր օրերը։

Բայց առանձին տպարանի կառուցման յիշատակ իրենց քով՝ ճիշտ այն թուականին կը հանդիպինք, յորում Սիմէոն կաթուղիկոսն տպարան կը հաստատէր յ՚Էջմիածին, այսինքն 1772ին Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ, Շահմիրեան՝ կամ ինչպէս այլք կը կոչեն, Շամիրամեան կոչուած ազգայնոյ մը ձեռօք։

Վաճառական մ՚էր նա, և հաւանականաբար առևտրոյ պատճառաւ փոխադրեալ ի Հնդկաստան։ Հայրենեաց սէրը վառ կը պահէր և կը տածէր սրտին մէջ. անոր հետեւանք՝ նաև այնպիսի խորհուրդք, բաղձանք և մտածութիւնք, որ լրջաբար գործողի մը համար գէթ տա-

Digitized by Google

րաժամ կրնային համարուիլ, և գործադրութիւնն ոչ այնչափ դիւրին։ Միանգամայն լաւ հասկցած ըլլալով՝ թէ ազգային կենաց բարւոքման անհրաժեշտ պայման մ՚ալ ուսումն է, ետևէ եղաւ զայն ծաւալելու աշխատիլ գրոց տպագրութեամբ։

Այս նպատակին հասնելու համար որոշեց տպարան մը բանալ ի Մատրաս, ուր յամի 1772 Նոր տետրակ կոչուած գրքոյկ մը հրատարակեց, յորում կ՚ընթեռնունք հետևեալ յիշատակարանն. « Նոր տետրակ որ կոչի Յորդորակ, շարադրեցեալ սակս սթափելոյ երիտասարդութեան, և մանկանցն հայկազանց և ի հեռացեալ թմրութենէ քնոյ ծուլութեան։ Եւ խանդաղատական տարփանօք տպագրեցեալ ջանիւքն և ծախիւք Յակոբայ Շամիրեան կոչեցելոյ. աշխատութեամբ Մովսիսի Բաղրամեան հրահանգչին իւրոյն, ի յօգուտ թարմահասակ և նորաւիթիթ մանկանցն Հայոց... Յամի մարդեղութեան Բանին 1772. և ի թուին Հայոց 1221, ի Հնդիկս, ի քաղաքն Մատրաս, ի տպարանի նոյնոյ Յակոբայ Շամիրեան կոչեցելոյ »։

Հետևեալ տարւոյն կը հրատարակուի Որոգայթ փառաց. « Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան։ Շարադրեցեալ Յակոբայ Շահամիրեանց Նոր Ջուղայեցւոյ առ ի յօգուտ ազգին Հայոց... ի թագաւորութեան յոգոստափայլ տեառն երկրորդի Հերակլիոսի ի Թիֆլիս։ Յամի Տեառն և փրկչին մերոյ Յ. Քրիստոսի 1773. և ի թուին թուականութեան Հայոց 1222 ի Հնդիկս ի մայրաքաղաքն Մատրաս։ Ի տպարանի նոյն Յակոբայ Շահամիրեանց »։ Գրքին ճակատէն անմիջապէս ետքը հետևեալ ծանօթութիւնն գրուած է. « Սխալանք բոլոր գրքիս տառի և բառի ընթերցօղդ ի ձայնէ բառից ճանաչի, ի պատճառս անծանօթութեան արհեստին շարագրօղիս, զի ոչ գիտաց զանազանութիւն տառից, այսինքն՝

գ, թ, ծ, ձ, հ, յ, ղ, տ, ց, ւ. սոքա գտնես մին ի տեղի միւսի, դու ինքնդ ի միտս քո փոխարկէ որն որ արժան է»: Ց'էջն 105 սկիզբն է երկրորդ հատորին զոր ինքն կը կոչէ «Նշանակ կամ կարգադրութիւն Հայոց վասն կառավարութեան Հայաստանեաց յԱշխարհի»: Ի սկիզբն գրոցս. «Ես ստորագրողս՝ որ եմ ի փոքրկանց Հայոց, և խոնարհ սպասաւորն ձեր, խոստովանիմ առաջի Աստուծոյ և մարդկան, որ ոչ ունիմ ցանկութիւն ըստ անձի՝ ոչ իշխանութեան և ոչ հարըստութեան և փառաց. բայց միայն կատարեալ սիրով կապակցեալ կամ ընդ սեփհական ազգն իմ և աշխարհս մեր. այլ տարբերութիւն ժամանակին ձգեաց զմեզ ի տարր աշխարհ. որում զաւի գիս ի ներքոյ կառավարութեան այլ ազգաց քրիստոնէից ազատաց... Եւ ի երկու պատճառէ չկամէի յիշեցուցանել անուն շարադրողիս. նախ զի տգէտք մի՛ հայհոյեսցեն, և երկրորդ՝ զի իմաստունք մի՛ փառաբանեսցեն. այլ ի պատճառն որ ոչ կարէ լինել ոչ ինչ շարադրութիւնք մինչ չիցէ անուն շարադրող. վասն այն մատծութեան շարադրողն սորա յարկիւ բացատրեցի որպէս յըսկզբնագրութիւնն մի ի փոքրկանց որդւոց Հայոց ի յազգէն թորգոմայ և ի տանէն Նախիջևանոյ ի 42երորդ աստիճան յուսուսային կողմ յաշխարհէ ի յոտս ծայրագոյն լերին Մասիս. և այժմոյս եղեւ ի ափն Ովկիանոս կորմանտելի դրանն մայրաքաղաքի Մատրասու, յամի Տեառն Փրկչին մերոյ Քրիստոսի 1773»: Ցիշատակարանին մէջ այլ այսպիսի տեղեկութեան մը կը հանդիպինք. «Որպէս շարադրող գրքիս վաճառական անծանօթ ի արհեստին շարադրութենէ և բոլորովին աղքատ... ոչ կարաց լուս ածել աւելի քան զայս... զի հեղինակ գրքոյս ոչ եգիտ յօգնականութիւն յումեքէ. բայց հաւատարիմ սպասաւորաց տան հօր իւրոյ, եթէ շարելն տառից, եթէ անջատելն եթէ ջոկելն և եթէ տպելն. որ սոքա էին ի յազգէ

Digitized by Google

Սիամ, ուր ունին ի ծննդենէ լեզուս բարբառս յազգին իւրեանց. որովհետև ի յայլ ազգէ և յայլ լեզուէ կարէ լուս առնել այսքան. ուրեմն ոչ է արժան զի մէջ մեր ոչ ոք ասիցէ թէ բանս մեզանէ իբրև անկարելի... վասն որոյ արժանի համարեցի յիշատակել ջանասէր աշխատօղս իմ և օգնական բանիս այսմիկ. այսինքն Ջերհան որդւոյ Սրօնեան և Ջաքէոս որդւոյ Մարկոսեան, երկոքեան ծնեալ ի յաշխարհն Սիամ. և ի տարբերութենէ ժամանակի պատճառաց հասեալ առ մեզ ի հասակի մանկութեան իւրեանց ի մէջ մեր զարգացեալ, սնեալ և սիրով յանձն առեալ մկրտութիւն սուրբ ի յանուն ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ըստ օրինօք ամուսնացեալ ընդ աղախինս հօր իմոյ, եղեալ հայր որդւոց և դստերաց և հաւատարիմ տեառն իւրեանց։ Վասն որոյ աղաչեմ առ բոլոր ազգն Հայոց, կամ որ ոք տարր աշխարհ ի մէջ ազգին Հայոց, սիրով սոցա ունիցիք ըստ արժանեաց աշխատանաց՝ որպէս իբրև երախտագէտ. քանզի ի դրացեաց սոցա այժմոյս ևս գտանի ի Հայաստան աշխարհ, որում ցեղաբանութիւնն կոչի Մամիկոնացիք»։ Կը ծանուցանէ դարձեալ թէ՝ «Ի սմանէ տպեցաւ ծախուք մերօք մին հարիւր և տասն հատ. տասն ի սմանէ մնալոյ վարձ ծախուց մերոց. մնացեալ մին հարիւր հատն, եթէ իշխանք, եթէ հասարակ անձինք. ո՛վ ոք որ գացի, ուրախ վայելումն լինի վասն իւր. այլ գինն նորա՝ իւրաքանչիւր մի գրքի տասն ոսկի, որում համապատասխանի քառասուն ռուփի հատուցանի սնանկաց և աղքատաց. վասն սիրոյ և փրկութեան ազգին Հայոց ի լծորդութենէ բարբարոսաց. այս հատուցումն ոչ հարկադրեմ, եթէ ոչ աղաչանօք խնդրեմ»։

1783ին նոյն Շահմիրեան Յակոբայ տպարանէն հրատարակուած կը գտնենք Դաճմազի պատմութեան գիրք՝ որ է «պատմագրութիւն վարուցն և գործոց Նատրշահ

թագաւորին պարսից. հանեալ ի գրոցն պատմութեան ազգին պարսից. արարեալ յումեմնէ անգղիացւոյ մստր Հանստնէ կոչեցելոյ», յանգղիականէ ի հայ վերածուած է ի Միրզայեան Պօղոսէ Ամկեցւոյ «մի ի յանպիտան աշակերտացն՝ — ինչպէս ի ճակատուն կը նշանակուի, — ի Քրիստոս հանգուցեալ Եղիա աստուածիմաստ վարդապետին, որ էր մի ի յընտիր միաբանից վանացն Ամենափրկչի ի Ջուղա»: Ի վերջաբանին ալ կ'ըսուի. «Եւ գրգուկս այս նորոգ լոյս ածեալ, տպեցաւ երկու հարիւր հատ. ի պատիւ հասարակ ազգին Հայոց... Յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1783»:

Շահմիրի տպագրութիւն է «Թարգմանութիւն Նամականի շնորհաց և պահպանութեան ի Տեառնէ Եկատարինա դշխոյն Ռուսաց առ ի Հայոց Քրիստոնէից բնակողաց ի գաւառն Ազօֆ ի նորաշէն քաղաքի Յանուանեալն Նախիջևան» — ի Հայրապետութեան տեառն Սիմէոնի ամենայն Հայոց կաթողիկոսի, Յամի մարդեղութեան բանին 1781 և ի թուին Հայոց 1230 ի Հնդիկս ի քաղաքն Մադրաս ի Տպարանի Յակոբայ Շամիրեան կոչեցելոյ»: Կը թողունք յիշել քանի մը տետրակներ:

Այսչափ է, գէթ մեր գիտցածը, նկատմամբ Շահմիրեանի տպագրական գործին:

Միայն մեր վանական յիշատակարանները կ'ըսեն թէ ծանր պարտքի տակ ընկած ըլլայ. «ընդ ծանր պարտեօք հեծէ, կը գրէ մեր միաբաններէն մէկը ի Մատրասէ 1819, երևելի տունն Շահմիրեանց յետ ի վաճառ տալոյ զստացուածս իւր անթիւս»:

Իրմէ վերջը կը գտնենք զՅովհան զՅարութիւն քահանայ Շիրազեցի Շմաւոնեան, որ Մատրաս քաղաքին մէջ 1789ին տպարան մը բանալով՝ նոյն թուականին կը տպագրէ Մարիանէ կուսին վկայաբանութիւնը, յառաջագոյն Հայոց 1215ին ի կոստանդնուպոլիս եղած տպագրի մը

Digitized by Google

վրայէն. « Եւ այժմ տպագրեցեալ, — կ'ըսէ ճակատուն խորագիրը, — ի Հնդիկս ի մայրաքաղաքս Մատրաս՝ տառիւ յօրինեցեալ ի ձեռագործէ Յարութիւն քահանայի որդւոյ Շմաւոն Շիրազեցւոյ »: Աւելի պարզաբար. « ... տպագրեցաւ գրքուկս այս երկու հարիւր հատս՝ առ ի պատիւ սիրտ մտերմին իմոյ ազնուազուն աղա Մարութ Յովսէփ փանաչեանց... ով ոք վայելէք գքաղցրաճաշակ գրքոյկս այս, յիշեցէք՝ որդի վշտաց և գոյա գրոցս որ յօրինեցաւ ձեռամբ իմով, ամենայն պարագայս թէ տառաշինութիւնն և թէ շարումն կատարից. ծախիւք և վաստակօք իմոյ՝ Յարութիւն Շմաւոն, շնորհօքն Աստուծոյ քահանայ Շիրազեցի... Մատրասումն: Յունվարի 30, յամի Տեառն 1790 »: — 1792ին ալ Յիսուս Որդի Շնորհալւոյն տպագրուած է նոյն տպարանին մէջ, բայց ուրիշ ձեռքով և արդեամբք, ինչպէս կ'ակնարկուի յոտանաւոր յիշատակարանին.

« Արդ բացատրեմք վասըն հարկին
Սակս որոյ գիրքս ընծային.
Զի ի նահանգըս Հընդկային
Յոյժ ցանկացաք գրոց սոցին,
Քանզի հազիւ գըտանէին,
Եւ քահանայք փափակէին.
Ներկայացեալ ոչ գըտանէին
Զիղձս յինքեան պարփակէին:
Զորոյ կալաք զփոյթ անձին
Յաճախ առնել զտարփալին.
Գործակցութեամբ բարեպաշտին
Աստուածասէր և երջանկին
Պարոն Աւետ Սեթեան հեզին
Բուռն հարեալ արդեամբ սորին
Տըպեցուցաք զըղձմամբ սըրտին
ԶՅիսուս Որդի գիրքս հոգելին..
Եւ Գրիգորի բանասիրին
Փիլիպպոսի բարեշնորհին,
Եղիազարու քաջասըրտին
Նորաբողբոջ Յօհաննիսին...

Պատշաճ վարկաք և յիշման
Որոց անուանքն են իսկ արժան
Որք կանխաւ են մեր օգնական,
Բարեպաշտօն և ժրաջան
Զպարոն Մանուկ Յակոբջանեան
Նաև Նախնեօք նոքումբք համայն
Արժան լիցին երանութեան...»։

Յիսուս Որդի գրքէն յառաջ տպագրուած է ի գործարանի Շիրազեցւոյն տետրակ մ'ալ Որք Հայաստանեաց կոչեցեալ, որ ունի մակագիր « Տետրակ որ կոչի Որք Հայաստանեաց. շարադրեցեալ ի Թադէոս քահանայէ որդւոյ Տէր Անդրէասի Նոր Ջուղայեցւոյ Սոգինեանց կոչեցելոյ. ի վայելումն մանկանց եկեղեցւոյ, ի հայրապետութեան Տեառն Ղուկասու ամենայն Հայոց կաթուղիկոսի ի Վաղարշապատ։ Եւ ի յառաջնորդութեան Նոր Ջուղայու Տեառն Յակոբայ արքեպիսկոպոսի։ Եւ ի թագաւորութեան Օգոստափայլ տեառն երկրորդի Հերակլայ արքայի։ Յամի Մարդեղութեան Փրկչին 1791, և ի Թուականութեանս Հայոց 1240, ի Հնդիկս մայրաքաղաքն Մատրաս։ Ի տպարանի Տէր Յարութիւնի Շմաւոնեան Շիրազեցւոյ »։

* * *

Ինչպէս Շամիրի, այսպէս նաև Շիրազեցւոյ տպագրութիւնք խիստ անարուեստք էին, որովհետև ինչպէս իրենք ալ անկեղծաբար կը խոստովանին, իրենք էին տառից հարքն ու մարքը փորագրող, ձուլող, շարող և տպագրող. հարկաւ աւելի կատարելութիւն չէր կրնար պահանջուիլ այսպիսի դժուարութեամբ գործողներէ։ Բայց ինչպէս նախկին գրոց, և հետևեալին մէջ ալ պիտի տեսնենք որ յաջողեցաւ Շիրազեցին իրեն բարերար սատարիչք ալ գտնել, և այսպէս փոքր ինչ աւելի բարեշնորհ ընել տպագրութիւնքն։

1793ին Պորփիւրի Ներածութիւնն, Դաւթի Անյաղթի թարգմանութեամբ, կը հրատարակուէր Շիրազեցւոյն տպարանէն, յորում հրատարակողն ուրախութեամբ կ'ըսէր ի յիշատակարանին թէ՝ « Հոգին սուրբ... լցոյց զտարփումն սրտի իմոյ, զի միանգամ ի սկզբանէ ի հնումն բացատրեցաւ ի լուսաւորութիւն ազգիս Հայոց... վասն որոյ զամենայն զքարութիւնս տեսեալ իմ ոչ խնայեցի զվշտակրութիւնս. ուստի նախապէս հարկաւորեցայ օրինակաց, զի իցէր յստակ և զատեալ յամենայն սխալանաց. զչորս գիրն միակերպ ունէի, և ի բազում տեղիս պակաս և թերի երևէին, որովք ոչ կարէաք ձեռնամուխ լինել գործոյս: Ուստի գոյր ի մեզ, այր աստուածահաճոյ և մեծահաւատ, բարեսէր և բարի անուամբ համբաւեալ և առաքինութեամբ զարդարեալ: Ջոր և յորջորջիւր պարոն Յակոբ որդի Պտումի և Թոռն աղա խոջայ Աղափիրին յազգէն Ջախարունեաց... :

« Ուրեմն յիշել մաղթեմ զնոցանէ որ եղեն օժանդակ և օգնական գործարանիս... նախապէս յիշեսջիք զարժանին բարի յիշման զպարոն Մանուկն Յակոբջանեան հանդերձ իւրայնովք: Նաև զնախկին բարեկամն իմ և հարազատ սիրելին, աղայ Մարուժ Յովսէփեան փոնաչեանց, հանդերձ նորաբողբոջ աղայ Գրիգոր որդեկաւ և ամենայն ընտանեօք: Այլ և զմեծահաւատ և զգերապատիւ Ջուղայեցի պարոն Յարութիւն Կարապետեան, խնամակալն իմ հանդերձ ազգականօք: Նաև զպարոն Բարղամ Սարգիս Քալանթարեանն, զնախկին սիրելի և ձեռնտուն, որ զճնճղագիրն ետ փորագրել և շնորհեաց տպարանիս յիշատակ: Եւ ևս զպարոն Յակոբ Սիմոնեան Այուբեանց, նախկին յարդարող գործարանիս: Այլ և յիշեսջիք զվաստակաւորս գործարանիս նախապէս զհոգեծին զաւակն իմ զձեռնասուն աշակերտն, զխաչիկ Ծատուր Ջարիփեանն Նոր—Ջուղայու Թաւրիզեցին... զի ի սկզբանէ աշխատող է և օգնական իմ և համայն

Digitized by Google

գործարանիս, և մանաւանդ փորագրութեան տառից, և ոչ եթէ միայն Հայոց, այլ և այլազգաց և պարսից՝ զոր վասն փորձառութեան յայտ արարաք ձերում բանասիրութեան, պարսից լեզուով, զոր Բէյիթ ասեն, սակս գովութեան արժանեալ գործոյս աշխատողաց, ի փառս տուողին շնորհաց »:

1794 տարւոյն սկսաւ հրատարակել Ազդարար անունով լրագիրն, ամսօրեայ հրատարակութիւն, որ շարունակեց մինչ ի 1796. « Նկատելով, կ՚ըսէ հրատարակողն, եթէ զօժանդակութիւնն տպարանին, և եթէ բարեպէս յառաջ եկեալն ուսումնասիրաց, յարմար վարկայ նուիրել առաջի ձերում ազգասիրութեան զխոկմունս նարգենիս, այսինքն՝ տպեցմամբ ի լոյս ածել զասարակ մի յամենայնում վերջնոյ ամսոյ, անուանեալ Ազգ արարող, յորմէ իմացումն լինելոց է ընթերցողաց, ծայրաքաղ անցքն նոյնոյ ամսոյ, եթէ ՚ի զանազան կազեթայ, եթէ ի զանազան քարտիսաց, և եթէ այլոց զանազան գրոց. նաև բանք հարկաւորք և քաղցրալուրք. և ի վերջնումն տեարակիս՝ զ՚օրացոյց մի հետևեալ ամսոյ, պարունակեալ ի նմա զտօնս սրբոց, և զաւուրս ծննդեան և լրման լուսնոյ »:

Այս նախընծայ հայերէն լրագիրն է, որոյ բազմաւոր հրատարակիչն, մինչ աւելի կարեւորագոյն երկք և գործք մտաւորութեան կը տրուին, ունեցաւ իւր վրայ հիացողքն և ինչուան հարիւրամեայ յոբելինի արժանացաւ[1]:

1. Այն առթով Տօքթ. Ռուսահայ չաբաթաթերթը հետաքննական կենսագիր տեղեկութիւններ հաղորդեց Շմաւոնեանի վրայ, որ ընդհանրապէս, ինչպէս նաև մեզի ալ, անծանօթ էին:

Իւր տպագրութիւնքը Մադրասեան երկրորդ տպագրին մէջ աւելի կատարեալք են, որոնց վրայ յաւելուած է նաև Դաւթի Անյաղթի և Արիստոտէլ յոյն իմաստասէրին գրուածոց մէկ մասին հրատարակութիւնը, զոր Կոնիբէր անգղիացի հայագէտն մեր Մատենադարանին ընծայեց ի դարձին ի Հնդկաց: Հիմա կ՚իմանանք որ այս տպագրի մէկ օրինակն ալ կը գտնուի ի Կեսարիա առ Գեր. Տրդատ Վ. Պալեան: — Հանդէս ամսօրեայ. 1896. հոկտ.:

Վրան երեսունեւհինգ տարի անցնելէն ետքը՝ Սարգիս Ծատուր Աղաւալեան նոր տպարան մը հաստատելով ի Մատրաս «ցանկայր, կ՚ըսէ, յիշատակարան մը գրոց, իսկ ամենայն յօժարութեամբ սրտի, հանդերձ ծախիւք իւրովք, զի յիւրում տպարանի տպագրեսցին ամենայն նորատիպ մատեանք առ ի հոգևոր վայելումն ամենայն հայկազեան տոհմի»: Նոյն ատեն դեռ կենդանի էր յիշեալ Յարութիւն Շմաւոնեան, քահանայ Մատրասի եկեղեցւոյն. որ ունէր քովը Ճաշակեցէք կամ Սրբազնագործութիւն կոչեցեալ գրքոյկ մը, «ժողովեալ ի գրոց աստուածայնոց և ի լուսաւոր բանից սուրբ վարդապետաց, աշխատութեամբ Նոր Ջուղայու Ս. Ամենափրկչի գերահռչակ վանից միաբան՝ Յովհաննէս մեծիմաստ հռետորի և բանիբուն աստուածաբան վարդապետի»: Տեսնելով Աղաւալեանի առաջարկութիւնը, Շմաւոնեան ներկայացուց իրեն այս գրքով. «տեսեալ, կ՚ըսէ, զամենաբարի փափաք սոյն ազնուատոհմ պարոնիս, փութացայ յառաջ մատուցանել զսոյն մատեան առ ի լոյս ընծայել տպագրութեամբ: Եւ սոյն ազնուազարմ պարոնս ամենայն յօժարակամ կամօք ընկալեալ՝ փութովին ետ տպագրել զայս քաղցրաճաշակ մատեան»:

1810ին եղած է հոն Շնորհալի Հայրապետին Եդեսիոյ ողբոց առաջին տպագրութիւնն, «արդեամբ և ծախիւք, — ինչպէս կը նշանակուի ի ճակատուն, պարոն Սարգիս Ծատուր Աղաւալեանց կոչեցելոյն, և ի նորին տպարանի որ ի Մատրաս»: Յառաջաբանին մէջ կը ծանուցանէ տպագրողն, «... գործարանս այս՝ որ եղև նախկին լուսածող սորա, ոչ միայն զաւետիս ուրախութեան ազգիս մերոյ մատուցանէ զտպագրութենէ սորա, այլ և յայտ առնէ միանգամայն զփոյթն իւր և զհոգ՝ զոր կալաւ ըստ կարի իւրում առ ուղղագրութիւն սորուն, բաղդատութեամբ երկուց ձեռագիր օրինակաց և եթ, զորս միայն կարաց գտանել. մինն՝ որ առաւել ընտիր երևե‐

ցաւ (թէ և ուրեք ուրեք խոտորեալ) գտաք ի մէջ բազմաթիւ ձեռագիր հին մատենից պարոն Յարութիւնի իսահակեան, ի ձեռն հարազատի որդւոյ նորա պարոն Աբրահամ գուարթամիտ պատանւոյն, որ ամենայօժար կամօք առձեռն պատրաստ եւ գործատանս մերոյ՝ զայս գրքոյկ ի տպագրումն »:

Նա ինքն պարոն Աբրահամ Աղանուր, փեսայացեալ ապա մեծանուն բարերարի ազգիս, Սամուէլի Մուրատայ, բարերար և առատամիտ սատար երևցաւ ի թարգմանութիւն և ի տպագրութիւն զանազան օգտակար երկասիրութեանց:

Մանօթ է նաև Պուռնազեան Պետրոս վարդապետին տպագրութիւնն, որ կարնեցի էր հայրենեօք և Հռովմայ Հաւատասփիւռ Ժողովոյն դպրոցին աշակերտ: Սա 1808ին՝ ի խնդրոյ նոյն Աղանուր պատանւոյն՝ թարգմանեաց Մարմոնթէլ գաղղիացւոյն Բելիսար վիպասանականը, և տպագրեցաւ ի Մատրաս: Ատեն անցնելէն ետքը՝ համանուն գիրք մը, երկասիրութեամբ Ժանլիս օրիորդի գաղղուհւոյ, թարգմանութեամբ ի հայ՝ Գեր. Եղուարդայ Հիւրմիւզ, ի խնդրոյ և ծախիւք նոյն պարոն Աղանուրի՝ տպագրեցաւ ի Ս. Ղազար վենետկոյ, ուր արդէն նոյն պարոնին խնդրանօք և նոյն թարգմանչին ձեռքով հրատարակուեր էր Ֆլորիանու Նումա Պոմպիլիոս և ուրիշ գրքեր:

* * *

Երկասիրութեանս տպագրուած ատեն, պատմական հետաքննական գրուածք մը երևցաւ յանգլիական բարբառ, շարադրեալ յազգային անձէ մը և տպագրեալ ի Կալկաթա: Խորագիրն է = History of Armenians in India, = բաղկացած 190 էջերէ, և հեղինակն Մեսրովբ Յ. Սեթ: Մեր հեռաւոր գաղթականաց սկզբ-

Digitized by Google

նուորելուն և յառաջացնելուն վրայ օգտակար տեղեկութիւններ հրատարակելէն զատ, որ մեծապէս ուշագրաւ են, առանձին գլխով կը խօսի Հնդկաբնակ ազգայնոց նախկին ուսումնասիրութեանց վրայ. կը յիշատակէ անոնց հաստատած տպարանները ի Պոմպէյ, ի Մատրաս և ի Կալկաթա, և անոնցմէ հրատարակուած լրագրերն և ուրիշ գրքերն ինչուան մեր օրերն։ Բայց գաղթական և փոքրաթիւ ժողովրդոց ճակատագիրն անոնց վրայ ալ կատարուած կը տեսնենք. և անոնք որ իրենց ազգեցիկ գիրքն ունէին նաև մեզմէ հարիւր տարի յառաջ, ու իրաւամբ ազգին փառք սեպուած էին, կամաց կամաց անգղիական մեծ ազգին հետ ձուլուելով անհետանալու վրայ են։ Ասոր կը ձայնակցին Արարատ Էջմիածնի լրագրին 1896 տարւոյ քանի մը յօդուածներն՝ որ Ջուղայեցի Թորոս քահանայէն գրուած են, բանիբուն և հմուտ անձէ։

Վերջին դարու կիսէն ասդին ալ այլևայլ արդիւնագործ անձինք երևցան զանազան տեսակիտով Հնդկահայ գաղթականութեան մէջ, որոց իրաւացի և արժանաւոր գովեստը ամենուն բերանն է։ Մենք բաւական կը համարինք յիշատակել զԱւգալեան Յովհաննէս, զԹաղիադեան Մեսրովպ և զՎիջենեանն։

Ասոնցմէ առաջինն մեծ անուն հանած է Հնդկահայոց մէջ իբրև դաստիարակ և Թարգմանիչ. ինքը Մարդասիրական կոչուած ճեմարանը հիմնողներէն է ի Կալկաթա, ուր 1811էն տպարան մ'ալ բացեր էր Աւետ Ջնթուլում, և կը հրատարակուէին բաց ի ուրիշ գրքերէ նաև Աւգալեանի հեղինակութիւններն կամ թարգմանութիւններն։ Մատենագիտութիւն գրոց մէջ իւր անուան տակ նշանակուած են ասոնք, ինչպէս, նաև 1858ին մեր տպարանին մէջ դրոշմուած մի ճառը՝ զոր խօսեր է, հանդերձ իւր կենդանագրով։

Երկրորդն է Մեսրովպ Թաղիադեանց, գրեթէ ժա-

Digitized by Google

մանակակից առաջնոյն, թերևս տարւոք կրսերագոյն կամ իրմէ ետքը վախճանած։ Մկրեան Ցոլհաննէս աւագ քահանայն, որ Պարտիզակցի է, և Պոլսոյ մէջ այլևայլ կարևոր պաշտօններ կատարած թէ եկեղեցեաց և թէ պատրիարքարանի մէջ, գնացած է և ի Հնդկաստան, և մանաւոր գրուածքով մը ի Տփղիս, Թաղիադեանի կենսագրութիւնը տպագրած է. թէ՛ նոյն գրուածքին և թէ Մասնե-ճագիտոռւրեաճ Նոր տպագրին մէջ նշանակուած են Թաղիադեանցի բազմաթիւ գրուածներն. որոց մէջ ամենէն հետաքրքրական կրնայ սեպուիլ Ազգասէր լրագիրն, որ Կալկաթա կը հրատարակուէր Արարատեան կոչուած տպարանին մէջ։

Վիջենեանն՝ Արծիւ տպարանն հաստատեց ի Կալկաթա, 1842, ուր այլ և այլ հրատարակութիւններ ըրաւ, մանաւանդ եկեղեցական գրոց։ Իւղաբերից աւետարանաց վերջը՝ այսպիսի յիշատակարան մը կը տեսնենք.« Ո՜վ սրբազնագործ քահանայ, յիշեա՛ զբարերար Տպարանի զբարեպաշտ աղայ Ցոլհանջան Էլիազեարի եղջանիկ կեանք, և մաղթեա զհոգի համայն ննջեցեալսն »։ Ազգասէր լրագիրն կը յաւելու. « Թողեալ զգրաւորական մասին պակասութիւնս, վերագոյն համարիմք զգործն քան զոր տեսաք մինչև ցարդ ի լեզու ազգիս։ Միշտ փինիկ տպագրութեանց համարեալ, և զարմանամք ընդ տրայս եւրոպացի եղբարց մերոց։ Բայց պարոն Վիջենեանն կոստանդնուպոլսեցի՝ շուք ածէ զամենեքումբք յայսպիսի մասին, եթէ հիմնաւոր և բաւական քաջալերութիւն ունիցի »։

Կալկաթայի տպագրութեանց մէջ Ջնթուլումէն յառաջ, եպիսկոպոսական տպարանին մէջ եղած է Ջուղայեցի Ցոլհաննէս վարդապետի Հայ—արաբ և Սիւլէյման Շահի (1665) ընծայուած կրօնական երկասիրութիւնը։

Բաց ի Ազդարար և Ազգասէր լրագրաց, տպուած են ի Հնդիկս նաև Օձաճաափիրա, Հայելի և Ուսումնասէր,

և Հայրենասէր լրագիրք ։ 1846ին ի Մատրաս նորէն կը սկսի Ազդարարը, բայց քիչ ատեն կը տեւէ ։ Հրատարակողքն են՝ Ս. Պ. Յովհաննէս և Փ. Պ. Մելիտոս ։

1833ին ալ հայկական տպագրութիւնք եղած են ի Կալկաթա ի Մկրտիչ միսիոնարաց ։

ՀԱՅ ՏՊԱՐԱՆՔ Ի ՌՈՒՍԻԱ ԵՒ Ի ԿՈՎԿԱՍ

Ռուսաստանի մէջ առաջին տպարան հայ լեզուի հաստատուած է ի Փեթրպուրկ մայրաքաղաքի՝ յամի 1783 ։ — Վաղարշապատ և Էջմիածին, — աւելորդ է յիշեցընելը՝ որ այն ատեն Ռուսաց իշխանութեան չէին պատկանիր ։

Այս նոր հիմնարկութեան ալ հետամուտ, փափաքող, սատար և բարեգործ բարերար, Ջուղայեցի ազգային մ'է, հարուստ նիւթական ընչիւք, բայց աւելի սրտիւն և սիրով առ բարին և օգուտ ազգին. և բարւոյ յիշատակի արժանաւոր այս անձը՝ կը կոչուի Խօջամալի որդի Խալդարենց Գրիգոր ։

Իր տպարանէն հրատարակուած Ժամագրոց ինքնագիր յիշատակարանին մէջ (ի 1783) կը պատմուի անոր հաստատութիւնը. « Ես, կ'ըսէ նա, շատ ժամանակէ ի վեր փափաք և ցանկութիւն ունէի տպարան մը ունենալու, որպէս զի կարող ըլլամ ազգիս համար կարեւոր գրքեր հրատարակել ։ Փափաքիս կատարումն այս կերպով յաջողեց ինձ Աստուած ։ Հարկաւոր գործառնութեան մը համար պէտք եղաւ ինձ Հնդկաստանէն փոխադրուիլ յԱնգլիա և ի քաղաքն Լոնտոն, ուր գրեթէ տասը տարի մնացի ։ Այս երկար միջոցին՝ ետեւէ էի ա֊

րուեստաւոր մը գտնելու, որ փորագրէր և տայր ինձ հայկական տառեր. և թէպէտ գտայ շատերը, բայց ոչ ոք ի նոցանէ յանձնառու կ'ըլլար շինել ու տալ պողպատեայ տառերը, և ոչ անոնց մայրերը, այլ միայն կապարեայ տառքը։ Իսկ իմ ուզածս առաջիններն էին, որով և փափաքս ալ անկատար կը մնար։ Բայց լցուցիչն ամենայն կարօտութեանց Աստուած, իմ բազմամեայ իղձս կատարեց, չկարծած ատենս ղրկելով առ իս անգղիացի արուեստաւոր մը, որ իմանալով ուզածս՝ յանձն առաւ շինել ինչ որ կ'ուզէի և տալ ինձ։ Ես ալ պատուիրեցի որ երեք տեսակ գիր շինէ ինծի համար, և ինչ վարձք և փոխարէն ուզեց՝ առանց խնայելու խոստացայ։

« Գործոյն աւարտելէն ետքը, հարկ եղաւ ինձ միւսանգամ դառնալ ի մայրաքաղաքն Ռուսաց ի Փեթըրպուրկ, ուր քիչ ատենէն արժանի եղայ ճանչնալ զիշխանազն արքեպիսկոպոսն Յովսէփ, Ռուսաստանի Հայոց առաջնորդը։ Տեսնելով մեր նորակազմ տպագիր տառքը, շատ գոհ և ուրախ եղաւ, և պատուիրեց այբուբենից փոքրիկ տետր մը տպագրել կամ Այբբենարան մը, զոր ըրի իմ ծախքովս, և խոստացաւ այլևայլ գրքեր ալ գտնել՝ տպագրութեամբ հրատարակելու համար։

« Այն ատեն գրեցի Լոնտոնի արուեստաւորիս, որ գայ ի Փեթրպուրկ խոշորագոյն տառեր փորագրէ, ինչ որ ճշդիւ կատարեց նա։ Բայց թէ այս ամէն բանի համար ո՛րչափ և որպիսի՛ ծախք և աշխատանք ունեցանք, փորձը ընողներուն յայտնի է։ Յետոյ՝ սրբազանին կրկին հրամանաւը՝ իմ ծախքովս տպագրել տուի Ժամագիրք կոչուած հասարակաց աղօթից այս գիրքը, որ աւարտեցաւ յամի 1784 »։

Յետագայ և յաջորդ 1785 տարւոյն, Շնորհալւոյ Յիսուս Որդի գրոց տասներորդ տպագրութիւնն հրատարակուած է նոյն տպարանէն, Սանահնեցի յիշեալ

Արղութեանց արհիեպիսկոպոսին հրամանաւը ։ Նոյնպէս ի նմին ամի՝ Սուրբ Գրոց համառօտ պատմութիւն մը «Թարգմանեալ ի ռուսաց լեզուէ, ի հայ բարբառ՝ ի պարոն Ցարութիւն Դաւթեան Ջուղայեցւոյ», և ի յէջ 65 կ՚ըսուի. «Առ ի լնլոյ զպարապ տեղիս, եդաք բան ինչ յաղագս իրաւանց, Թարգմանեալ ի յանգղիացւոց լեզուէ, ի հայ բարբառ, ի պարոն Գրիգորէն Խալդարեանց կոչեցելոյ» ։

1786ին երեք գրքի հրատարակութեան կը հանդիպինք ի նմին տպագրատան, և են՝ Աստուածաղերս, Աւետարան ձաշու և վէմ գայթակղութեան, ինչպէս ի յաջորդ տարին կարճ ժամագրոց ։

***

Խալդարեանց որչափ ալ մեծաջան եռանդեամբ աշխատեցաւ իր անուամբն կառուցուած տպարանին վրայ, բայց չի կրնալով ըրած ծախքերն հատուցանել, ծանր պարտքի տակ ընկաւ, և մինչեւ և հնարք մը չէր կրնար գտնել անկէ ազատելու ։ Բարեբաղդաբար, ինչպէս տեսանք, իրեն խրախուսիչ և օգնական ունէր զՑոլակի արքեպիսկոպոս, որ՝ թէ հոգևոր իշխանութեամբն և թէ պետական պաշտպանութեամբ՝ մեծ ազդեցութիւն ունեցող անձն համարուած էր ։ Ինքն ալ փափաք ունէր, ուրիշ այլևայլ յառաջադիմական նորութեանց հետ՝ տպարան մ՚ալ հաստատել իւր թեմին մէջ, ի Նոր Նախիջևան ։ Ցեսնելով Խալդարենց Գրիգորի գտնուած դժուարին վիճքը, իր վրայ առաւ իւր բոլոր պարտքերը, անով տպարանին տէրն եղաւ, ու պատուիրեց Գրիգորի փոխադրել զայն ի Նոր Նախիջևան ։ Այս ամէն բան մանրամասն աւանդուած են Շնորհալւոյ Ընդհանրական Թղթոյն յիշատակարանին մէջ, որ վերջին տպագիրն եղաւ Խալդարեանցի ի Փեթրպուրկ, թէպէտ և Արղու-

թեանց արքեպիսկոպոսին անուամբը։ Խալդարենցի ամէն արդիւնքն և պարտուց տակ մնալը նշանակելէն ետքը, կը յաւելու յիշատակագիրն. «... Տեսեալ անձնադիր հովուին (Յովսեփայ Արղութեանց) զմնալն անօժանդակ նորակառոյց տպարանին, ի յԱշդարխան կամ՝ ի Նոր Նախիջեւան անդրափոխեցման զգիր գրեալ հրաւիրէր. և մինչ պարոն Գրիգորն Խալդարեան ի ճանապարհորդել նախապատրաստիւր, հասեալ օր մահուն մեռանէր։ Իսկ ծանրութիւն բոլորի տպարանին հանդերձ պարտիւքն մնաց ի վերայ արքեպիսկոպոսին Յովսեփայ . . . որ և առաքեաց զԹադէոս վարդապետն կոստանդնուպօլսեցի ի Սանկտպետրբուրգ, յանձնելով նմա զամենայն կառավարութիւն տպարանին . . . իսկ նորա գնացեալ՝ իմացաւ զամենայն հանգամանս տպարանին. զի էր ի ներքոյ պարտուց հազար երկու հարիւր թումանի (որ է քառասուն քսակ). զոր Յովսէփ արքեպիսկոպոսն յանձն էառ հատուցանել օժանդակութեամբ ազգիս, և տանել ըզտպարանն ի Նոր Նախիջեւան, որպէս և եղև իսկ։ Զի գնացեալ Յովսեփայ յԱշդարխան՝ եգիտ բազում նպաստամատոյցս գործոյն . . . որք ամենեքին առատօրէն օգնեցին ըստ կարի իւրեանց, որով կարօղացաւ զտպարանի պարտն թեթևացուցանել, և բերել ի Նոր Նախիջեւան հաստատել» . . . ։

***

Արղութեանց 1790ին տպագրեց յիւրում տպարանի ի Նոր Նախիջեւան՝ Ստեփանոսի Սիւնեցւոյ «Ողբք և հառաչանք ի դիմաց մօր մերոյ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» գրուածը. և ի յիշատակարանին կը յաւելու յետագայ ծանօթութիւններն իր տոհմին վրայ. «Հանդիպողքդ բանիս, յիշեցէք ի Աստուած զՍանահնեցի զՅովսէփ արքեպիսկոպոսն ի կողմանս հիւսիսոյ, և զնախ֊

նիսն իմ զՋաքարիա Ամիր* սպասալարն Հայոց և Վրաց. և զհանգուցեալ զծնօղսն իմ զՇիօշբէգն զսպանեալն յանօրինաց ի տարապարտուց, և կպարկեշտագնաց մայրն իմ զՔէթէվանն, և զվաղաժառամ զեղբարսն իմ զՄուխէս բէգն և զՓարսադանն, և զքոյրն իմ զՄարիամն, և զկենդանի եղբայրն իմ զիշխան պարոն Բէժանբէգն, և զեղբօրորդին իմ զիշխանազուն զՇիօշն . . . որք ի հնում կոչէաք Երկայնաբազուկք, և այժմ Արղութեանք . . . (Յովսէփ արքեպիսկոպոս) . . . զանտանելի պարտս տպարանին յուսով բարեսիրացդ սատանձնեալ ի Սանկտ—Պետրբուրգ մայրաքաղաքէն զտպարանն ի Նոր Նախիջեւան փոխաբերեալ՝ զհաստատութիւն եդ ի նորակառոյց սուրբ Խաչ երկնահանգէս»:

Նոյն տարին տպագրուած են հոն Գանձարան ուխտականութեան կոչուած գիրք մը, և առաջին կանոն Սաղմոսաց կամ Հեգերէն մը:

1791 Ժամագիրք և Սաղմոսարան, երկուքն ալ «արդեամբք և ծախիւք ի Սուրաթ բնակեալ Աղաբաբեան բարեպաշտ պարոն Ստեփանոսին և կենակցի նորին մեծահաւատ Հոփսիմէ տիկնոջն»:

Հետեւեալ տարին՝ Դուռն ողորմութեան կոչուած տետրակ մը, յորում «հրովարտակն գթութեան ամենաբարեպաշտ և մեծ կայսրուհի ինքնակալ Թագուհւոյն Եկատարինէի երկրորդի, սակս Գրիգորուպօլ նոր քաղաքին Հայոց. ձեռամբ բարձր սրբազնութեան տեառն Յովսեփայ աստուածարեալ արքեպիսկոպոսին, օծմամբ հիմնարկման: Եւ երկրորդ, հրաքանչ հանդէսն հիմնարկութեան նոյն Գրիգորուպօլ քաղաքին Հայոց»: Նոյնպէս ի նմին ամի Ծործորեցւոյն Վիպասանութիւն զերկնային մարմնոց. 1794 ին Ցետրակ համառօտ բառարանի, 1796 Քաղանթարեանի Բժշկարանն և Թեղամաք. 1796ի իր մէկ Առնեմաքանութիւնն, և յաջորդ տարւոյն Վարդանայ Բարձրբերդցւոյ Սաղմոսաց

Digitized by Google

մեկնութեան գիրք, և որ վերջին հրատարակութիւն է Նոր Նախիջեւանի Արղութեան տպարանի, « արդեամբ և ծախիւք՝ ի Սուրաթ բնակեալ՝ խօջայ Մինասեանց Գրիգոր աղայի որդի՝ ի Քրիստոս հանգուցեալ աղայ Յովհաննեսին Ջուղայեցւոյ »: Ի յիշատակարանին կը ծանուցուի թէ սատարք այս գրոց հրատարակման՝ դաշնադիր եղած են, որ տպագրութեանց դրամանգլուխն « որպէս զվիճակ վաճառուց՝ մնասցէ միշտ նոր տպարանիս՝ անվերջանալի, և որքան ինչ ազգօգուտ գրեանք տպիցին ի նոյն տպարանի՝ այն դրամով, ի զանազան ժամանակս, ամենայնն՝ ի յիշատակ անուան իւրոյ և իւրայոցն լինիցի »:

Արղութեանց՝ ինչպէս ծանօթ է, ընտրեցաւ յաթոռ հայրապետութեան Էջմիածնի. և մինչ ի Նոր Նախիջեւանէ երթայր բազմել յայն, անակնկալ մահուամբ մեռաւ ի Տփղիս:

Ուսումնասէր և ազգին մէջ գիտութիւն և ուսումն ծաւալելու համար մեծ ջանք ունէր: Իր մէկ թղթէն, առ իւր բարեկամ և բարերար ի Հնդիկս, 1790ին գրուած, հետեւեալ տողերը մէջ կը բերենք, որ յայտնի կը ցուցնեն թէ որպիսի սէր և եռանդ կար այդ սրտին մէջ: Խալպարեանցի տպարանին վրայ խօսելով, « . . . կամաւ, կ'ըսէ, զանձն իմ ետու . . . առնուլ զտպարանն և բերել հաստատել ի Նոր Նախիջեւան քաղաքի Հայոց . . . որպէս և արարի իսկ. Թերևս ըստ չափու տկարութեան իմոյ կարացից գլուսաւոր գրեանս սրբոց հարցն մերոց և վարդապետութեանց՝ տպմամբ ի լոյս ածել . . . որպէս զցանկալի գիրքն սրբոյն Ներսիսի Շնորհալւոյն. զոր ի լոյս ածաք և առ ձեզ առաքեցաք . . . :

« Բայց տպարանն որովհետև թարց իմաստութեան ոչ կարէ ինքնին կառավարիլ, որպէս երեսք առանց աչաց, և անձն թարց գլխոյ, վասն որոյ և հնարեցի դպրոց ինչ. զոր ըստ ժամանակիս բերմանցն և ըստ չափու

կարողութեան իմոյ հաստատեցի . . . Հրամայեցի յայն առաջին շինուած մեր, որ ի Նախիջեւանն՝ յունայնացուցանել և սկսանել զմեծամեծ շինուածս կառուցանել վասն տպարանին, և վասն դպրոցին ի զանազան դասս բաժանելոյ՝ յաղագս մուծանելոյ ի նոսա զտեսակ տեսակ լեզուս և զգիտութիւնս. եթէ Տեառն ողորմութեամբ ողջ եղէց զքանի մի ամս: . . . Գրեցի զի զամենայն կամս և զգիտաւորութիւնս իմ պարզապէս գիտացէք. և ըստ այսմ պատրաստեսջիք զձեզ օգնական լինել տկարութեան իմոյ . . . ի Մարրաս քաղաքոյն խնդրեցի ի պայծառ իշխան Շամիրամ աղայ հաւատարիմ բարեկամէն իմմէ, յանձն առնուլ զգործս զայս (իրեն փոխանորդն ըլլալու) ի պատիւ ազգին, զոր յոյժ սիրէ . . . ի Սուրաթ կարգեցի զազնիւ աղա Մկրտիչ—Մէլիքնազար խօճա Մինասենց՝ լինել հոգացող այսպիսեաց: Նոյնպէս և տէր Ստեփան անուամբ քահանայն մեր՝ ուր գնացեալ իցէ, յատկացուցեալ զոք՝ ինձ ընդունելի է, և հարկաւոր իսկ: Ի Պասրա կարգեալ եմ Բեթղահէմեան պարոն Յովհաննէսն, ի Ջուղա պարոն Կարապետն Գալստեան, և ի Ստամպօլ՝ Ջուղայեցի մահտեսի Գալըստեանն Թօմայեան: Եւ վասն որոյ հարկաւորիմ ծանուցանել ձեզ որ զնոսա ճանաչէք, մեզ հարազատք և գործարանոյս հոգաբարձուք, և զպատահեալ բանս նոքօք մեզ յառաջարկէք, և զգրեանն ձեր նոքօք մեզ հասուցանէք, որպէս և մեք առնեմք: Որովհետև Սաղմոս՝ շատ սակաւ գտանիւր, և յամենայն ուստեքէ խնդրէին, հրամայեցի այժմ . . . Սաղմոսն որ ի յիշատակ Հնդկաց ժողովրդեան տպեցուցանել՝ իբրու զնախախայծ պտուղ ողորմութեան ձերոյ ի նորահաստատ տպարանէս. զկնի ևս նոյնպէս յաջորդեն մի զկնի միւսոյն: Գրեցի ի բազում ուրեք՝ գտանել վասն մեր զգրչեայ գրեանս նախնեացն մերոց և զպատմութիւնս. ոչ ուստեք գտի զօգնութիւն, բայց ի Ջուղայու՝ որ վշտակիր եղբայրն իմ

Յակոբ աստուածաբան վարդապետն և պարոն Կարապետն Գալստեան՝ քանի մի գրեանս առաքեալ էին, զքանի մի ևս ունին ի պատրաստի . . . սակայն վասն ճանապարհացն փախման և բռնաւորացն բռնութեան՝ ոչ կարօղանան առաքել։ Ունիմք և բազում Թարգմանութիւն ի Ռուսաց լեզուէ ի մերս բարբառ. ի Ջուղայեցի հեզահոգի պարոն Յարութիւն Դաւիթ Թիլիմնեցէն՝ խրատ վարժարանի մանկանց. և զանազան կացութիւն և ամբողջ պատմութիւն Աղեկսանդր Մակեդոնացւոյ. զոր ամենայն պիտոյ է մեզ մի զկնի միոյ տպեցուցանել. այլ այժմ յառաջիկայ՝ յետ Սաղմոսին զՀայելի Աստուածաշունչն տպեցուցանել։ Դուք ևս՝ ով ոք ինչ կամիք, տպարանն մեր և ես՝ միշտ պատրաստ ի նմին կատարել յօժարութիւն ձեր »։

* * *

Արղութեանց Յովսէփ արքեպիսկոպոսէն ետքը հայկական տպարան մը բացուեցաւ ի Մոսկուա՝ Լազարեան կոչուած ճեմարանին մէջ։

Ծանօթ է ազգայնոց այդ մեծափառ տոհմին առատատուր նպաստիւք և պետութեան օգնականութեամբ և պաշտպանութեամբ կանգնուած ու յառաջացեալ եղած մեծ հիմնարկութիւնը. և թէ ինչպէս բաց ի ուրիշ ուսմանց՝ սահմանուած էին արևելեան լեզուք։

Այս առթիւ ճեմարանին շինութեանց մէջ մասնաւոր յիշատակութեան և մտադրութեան արժանաւոր է տպագրատունն, հաստատուած ի 1829, տէրութեան ներքին պաշտօնէին հրամանագրովն ու հաճութեամբ. յորում կը գտնուէին եւրոպական ամեն ազգաց և արևելեան գլխաւոր լեզուաց տառեր։

Մեր հարց մին, Հ. Եփրեմ Վ. Սեթեան՝ Ախլցխայէն գրած նամակաց միոյն մէջ, (1834), այսպէս կը գրուա-

տէ զվարժարանն. «քսանամենիւք յառաջ ի Մոսկով Եղիազարեանց ճեմարանն կանգնեալ՝ ոչ սակաւ մխիթարութիւն է Հայոց բնակելոց ի Ռուսիա, ուր ի ձեռն զանազան վարժապետաց՝ ուսուցանեն կարեւոր գիտութեանց զբովանդակութիւնն և զլեզուս պիտանիս»։

Տպարանին մէջ թէ՛ հայ և թէ ուրիշ լեզուաց տառեր՝ հին ոճով էին. բայց ետքը ստացուեցան, մանաւանդ մեր լեզուին համար, ի Մխիթարեանց որ ի Վիեննա, նոր և գեղեցկաձև տառեր, որոնցմով եղան վերջին տպագրութիւնք։ Առջի հրատարակութեանց մեծագոյն մասը, Սալլանթեան Միքայէլ վարդապետին՝ ճեմարանին առաջին հոգետեսչին, կամ իր աշակերտաց անուանքը կը կրեն, բայց ուրիշ հետաքննական գրուածներ ալ երևցած են այն տպարանէն. ինչպէս Կլինքայի ի ռուս լեզու՝ Հայոց ազգին և պատմութեան վերաբերեալ հին ու նոր ժամանակաց հաւաստչեայքը, յերիս հատորս, և Բառարան հայ—ռուս. Ալեքսանդրի Խուդաբաշեանի երկասիրութիւն, յերկուս հատորս, որուն տպագրութիւնը 40,000 ռուբլիի եղաւ Յովհաննէս աղայի Լազարեան, կ'ըսէ հայագէտն Տիւլորիէ, այդ ազնիւ տոհմին ընծայած գաղղիերէն մէկ գրութեանը մէջ։

Սալլանթեանէն ետքը, նոյն տպարանին վերայ խնամք ունեցաւ Մսերեան Մագիստրոսը և իր Զարմայր որդին։ Հօրը և որդւոյն կրօնական ու բանասիրական գրուածներն արդէն յայտնի են ընթերցողաց, և Մատենագիտութեան մէջ անոնց ցուցակը գրուած է։

Վրան ժամանակ անցաւ, և աւելի շահաւոր սեպուելով վարժարանին մէջ մասնաւոր տպարան չունենալը, օտարաց վաճառուեցան այն տառերը։ Արդէն Մկրտիչ Էմին՝ որ նոյն ճեմարանին մէջ հայերէն լեզուի ուսուցչապետն էր, իր գրքերէն շատը ուրիշ օտար տպարաններ տպել տուաւ, ինչպէս, 1850 թուականէն ի վեր Վ. Կոմիտէի քով իւր Վէպք հնոյն Հայաստանի գիրքը և ու-

Digitized by Google

րիշ գրուածներ, որուն հետեւեցան ուրիշներ թէ Մոսկուայի և թէ Փեթերպուրկի մէջ։ Այս երկու քաղաքներ ժամանակին զարգացման հետ, նաև հայ տպագրութիւնն շատ կատարելագործեցին, ինչպէս յայտնի է Արաքս վեցամսեայ պարբերականէն, Հանդէս գրականականէ և ուրիշ գրքերէ։

*
* *

Կը յիշեն ընթերցողք թէ Այվազովսքի վարդապետն՝ Խալիպեան ուսումնարանն հաստատեց ի Թէոդոսիա Ղրիմու, և ի Փարիզէ հոն փոխադրեց Մասեաց Աղաւնի լրագրին տպարանը։ Եւրոպայի առաջին և արուեստագէտ քաղաքներէն մէկէն՝ Ռուսիոյ չորրորդական համարուած քաղաք մը, տպարանին և լրագրին փոխադրուիլը՝ հարկաւ իր ազդեցութիւնը պիտի ունենար, գէթ արուեստի կողմանէ՝ ինչպէս ալ եղած է՝ բայց իր օգուտն մեծ, ազգին մէջ ծաւալելով գիտութիւնն այն քիչ տարիներուն մէջ, յորում այդ տպարանն, ինչպէս նաև դպրոցը՝ իրենց գոյութիւնն ունենալով, թէ հրատարակութիւններ և թէ աշակերտներ հանեցին։ Այվազովսքի՝ Գէորգ կաթուղիկոսէն նախ Էջմիածին կանչուեցաւ՝ տեսուչ համանուն ճեմարանին, և ապա առաջնորդ Տփղիսու, և այդ պաշտաման մէջ հանդիպեցաւ իր մահը։

Թէոդոսիա եղած ատենէն՝ տպարանին գործը և գրավաճառութիւնը յանձնած էր Տէր Աբրահամեան անունով անձի մը. երբ դպրոցէն և Պեսարապիոյ առաջնորդութենէ ստիպուեցաւ քաշուիլ Այվազովսքի և առանձնանալ, Տէր Աբրահամեան տէր եղաւ տպարանին ու փոխադրեց զայն ի Ռոստով կամ ի Նոր-Նախիջեւան, ուր ցայսօր կը գործէ հանդերձ գրավաճառութեամբ։

Այս քաղաքներէն զատ չենք յիշեր՝ որ ի Ռուսիա

ուրիշ տեղ մը հաստատուած ըլլայ հայկական տպարան, բաց ի մանրմունր հրատարակութիւններէն, որ թերեւս ուրիշ տեղ՝ ինչպէս ի Քիսիլ կամ այլուր եղած ըլլան։

Երիցեան Պր. Աղեքսանդր՝ Արձագանք լրագրին 1896 տարւոյ մէկ թուոյն մէջ կը յիշատակէ թէ՝ դարուս սկիզբն՝ հայ հոմեէականաց ձեռքով եւնէ եղած ըլլան Ցիռուսեանք, ազգային օրագիր մը հրատարակել յԱժտէրխան։ Մեզի անծանօթ է այս օրագրի գոյութիւնն և սկզբնաւորութիւնը։

Բայց պէտք է յիշեցնենք ընթերցողաց, թէ մեզմէ գրեթէ կէս դար յառաջ Կովկասեան գաւառաց՝ մանաւանդ Տփղիսու մէջ՝ հայերէն լեզու գրեթէ ամենեւին չկար, ու տիրող բարբառը՝ մանաւանդ ժողովրդականութեան մէջ՝ վրաց լեզուն էր. իսկ այսօր իւր բազմաթիւ պարբերականներով, լրագիրներով ու հրատարակած գրքերով կարեւոր դիրք մը բռնած է մեր արդի մատենագրութեան մէջ։ Ասոր պատճառն ոչ միայն երկրին կառավարութեան լուսամիտ քաղաքականութիւնն, այլ և ազգայնոց փոյթն և ջանքն և իրենց դպրոցներն են։

* * *

Կովկասեան գաւառաց մէջ, Ցոլսէփ վարդապետի մը արցախեցւոյ անուան կը հանդիպինք, որ հայկական բառգիրք մը տպագրած է ի Շուշի, բայց անկէ յառաջ է ժամանակաւ Ներսէս արքեպիսկոպոսն Աշտարակեցի, որ կարգեցի Ցովհաննէս արքեպիսկոպոսէն եւքը կաթողիկոսական աթոռը նստաւ։

Իր բազմարկածեան վարուց պատմութիւնը յայտնի է, և ոչ մեր գրուածքին կը պատկանի յիշատակել, ինչ որ գործեց յէջմիածին վարդապետութեան և գրագրութեան ժամանակ, ազգին և իրեն կուսակցաց բարւոյն դիտմամբ. յիշատակենք միայն որ նախ Տփղեաց և Պեսա-

րապիոյ առաջնորդ եղաւ։ Իր անունը անմահացնող եղաւ՝ Ներսիսեան վարժարանն ի Տփղիս՝ մինչ այդ քաղաքին առաջնորդն ու արքեպիսկոպոսն էր. ժամանակին ոչ լոկ ռուս՝ այլ և եւրոպացի ճանապարհորդք և գիտունք գովութեամբ կը խօսին թէ իր անձին և թէ գործոց վրայ։ Մեզ արդէն յայտնի է, որ Եւրոպիոյ զանազան կողմերէ վարպետներ բերել և հոն ամսականով հաստատելու ջանքն ըրաւ, որոց մէջ էր Ջրպետ Եղեսացի։

Մասնաւոր փոյթ ունէր նաև տպարան մը հաստատելու նոյն հիմնարկութեան կամ դպրոցին մէջ, և ազգին օգտակար այլ և այլ երկասիրութիւններէ զատ՝ օրագիր կամ յիշատակարան մը հրատարակել գրաբար լեզուով։

Իւր ազգասէր խորհրդոց համամիտ գտաւ զԳէորգ իշխան Արծրունի, և նորա գործունէութեամբ և օգնականութեամբ յԱմստերտամ ըրած ճանապարհորդութեան ատեն, Ոսկանեան տառերը կամ անոնցմէ ետքը Սիմէօն կաթողիկոսին յանձնարարութեամբ շինուածները բերաւ հետը ի Տփղիս, պարագերը հատուցանելով, որոց պատճառաւ գրաւի դրուած էին նոյն քաղաքին մէջ, հիմնեց հայկական առաջին տպարանն 1814ին, զոր ապա Ներսիսեան դպրոցին ընծայեց, ինչպէս նշանակուած է նախկին տպագրութեանց ճակատը։

Երկու տպարանք կային յԱմստերտամ, մէկը Ծարեցւոյն և Ոսկանի ձեռքով, իսկ միւսն՝ Վանանդեցի Թովմա արքեպիսկոպոսին և իւր եղբօրորդւոյն Նուրիճան Ղուկասու։ Ասոնցմէ մէկուն գրերը Մխիթար Աբբահայր գնոց առաւ Յարութիւն վաճառականին ձեռքով, ինչպէս առաջ տեսանք. իսկ միւսները ատեն անցնելէն ետքը, Գէորգայ Արծրունւոյ առատասէր տրիւք, Ներսիսեան դպրոցին ընծայուեցան։ Ինքն Գէորգ Արծրունին ալ երկասիրութեան մը հեղինակ է, Դարաստան խրատուց

Digitized by Google

գրոց, և այնպիսի ժամանակ մը, յորում գրող քիչ կը գտնուէին, և գիտութիւնն և լեզու հոգևորականաց առանձնայատկութիւն մը սեպուած էին։ Այսպիսի ատեն երևեցաւ Գէորգ Արծրունին։

* * *

Հարկ է անյիշատակ չթողուլ նաև Էնֆիաճեան եղբարք։

Երբ՝ Ներսէս Աշտարակեցին Քիշնեւլէն յէջմիածին փոխադրուելով, գիտութիւնք և ուսմունք սկսան բարգաւաճիլ Տփղիսու և բոլոր Կովկասու մէջ, Արևելեան պատերազմն ալ վրայ հասաւ, և Եւրոպա աւելի ծանօթացաւ Արևելից. հաղորդակցութիւնք դիւրացան և գրեթէ նախկին հեռաւորութիւնները չմնացին։

Այն ատենները երևցան Էնֆիաճեան եղբարք, Տէրմաղանեան Գալուստ, Երիցեան Աղեքսանդր և այլք իրենց հետ, որ ժամանակը և կառավարութիւնն իրենց օգնական գտնելով, բոլորովին ուզեցին կերպարանափոխ ընել Կովկասու Հայերը։ Առաջինները տպարան մը բացին ի Տփղիս, նոր և ընտիր տառերով, և բաց ի զանազան գրքերէն՝ զոր կը խոստանային տպագրել տալ հայերէն լեզուաւ, կը հրատարակէին նաև լրագիր մը Կռունկ աշխարհին Հայոց, հմուտ և հետաքննական նիւթերով և թարգմանութեամբք։ Ասոր վրայ գլխաւոր աշխատողն էր՝ Մարկոս Աղաբէգեան զմիւռնացի, իրեն գործակից ունենալով՝ այլևայլ անձինք. և եւրոպական յառաջադէմ ազգաց սովորութեամբ, յօրագրին կը տպագրուէին և գրամական հատուցմունք կը տրուէին թէ՛ սկզբնական գրուածոց և թէ թարգմանութեանց համար։

Իրաւ է որ Աղաբէկեանէն յառաջ կը հրատարակուէին ի Տփղիս Կովկաս և Արարատ լրագիրք, որոնք որչափ ալ ունէին իրենց յարգը՝ բայց ժամանակը յառաջ

գացած էր, և պահանջք առաւելագոյն։ Այս պահանջը լեցուց ատենին կռունկ ամսաթերթը. և իրեն մեծագոյն արդիւնքը այն եղաւ՝ որ ճամբայ բացաւ ուրիշ ընտիր հրատարակութեանց. ինչպէս են՝ Փորձ, Մշակ, Արձագանք, Նոր-Դար, Մուրճ, Աղբիւր, Տարազ, Լումայ, Ազգագրական հանդէս, և ուրիշ ամսօրեայ և կիսամեայ գրքեր և օրագրեր, յորոց բազումք ցայսօր կը հրատարակուին գոյութեամբ։

Բաց ի օրագիրներէն՝ յիշատակութեան արժանի է Հրատարակչական կոչուած ընկերութիւնն որ հարիւրէ աւելի հրատարակութիւններ և ուրիշ պատուական երկասիրութիւնք ի լոյս ընծայած է։

Երևան, Շուշի, Աղեքսանդրապոլ և ուրիշ քաղաքաց մէջ ալ հաստատուած են ազգային այլևայլ տպարաններ։ Մեզի ուրիշ բան չի մնար՝ բայց եթէ յաջողութիւն մաղթել ամենուն։

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ Ի ԹՐԵՍՏ ԵՒ Ի ՎԻԵՆՆԱ

Վիեննայի Մխիթարեան ուխտին տպարանն և տպագրութիւնք, որ այնչափ փայլ պիտի յաւելուին ժամանակաւ ազգային այս արուեստին, խիստ չափաւոր սկզբնաւորութիւն մը ունեցան ի Թրեստ։

Նոր մենաստան մը ի Թրեստ հաստատելու եռանդեամբ, հազիւ երկու տարի անցեր էր իրենց նոր հաստատուելուն վրայ, առանց լքանելու ո՛չ նիւթական միջոցաց պակասութենէ և ո՛չ իրաց և դիպուածոց ձախող պարագաներէ, փութացին իրենց համար մասնաւոր տպարան մը ունենալու աշխատութեան ետևէ ըլլալ, որուն արտօնութիւնն և կայսերական հրամանագիրն ընդու-

Digitized by Google

նելով յաւստրիական պետութենէ, երկու տեսակ գիր ձուլել տուին, նոր հայրերու և մարց վրայ, բոլորգիր և նոտր, իրենց ամէն կարեւոր պարագայիւք, գլխագիրներով և ծաղկագրօք, և սկսան տպագրութեան գործով զբաղիլ։

Առաջին հրատարակութիւնն՝ ոտանաւոր գրուած մ'է ի պատիւ՝ իրենց մեծապատնին օգնականութեան և պաշտպանող ձեռք կարկառող կայսեր, մեծագիր երես մը միայն։ Բուն առաջին երկասիրութիւնն, 1776ին եղած է, և խորագիր կը կրէ. "Ցորդորակ առ պաշտօնասիրութիւն սրբոյ Աստուածածնի,,։ Եւ ի յառաջաբանին կը ծանուցանեն երախտապարտ սրտիւ, թէ . . . "կամեցաք զի առաջին պտուղ տպարանիս լինիցի ի պատիւ սրբոյ Աստուածամօրն, իբր ցոյց երախտագիտութեան մերոյ առ նա վասն այցելութեանն, զոր հաւատամք միջնորդութեամբ նորա արարեալ մեզ Աստուծոյ,,։

Առաջին տարիներն բոլորովին տարրական և ամենանըշան տետրակներ հրատարակուեցան իրենց տպարանէն. և գտնուած դիրքերնուն մէջ կարելի չէր աւելի բան մը յուսալ. բայց 1783ին և հետեւորդ տարիներու մէջ աւելի կարեւոր և հետաքննական երկասիրութիւնք ալ կ'ընծայուէին, յորոց ոմանք միաբանից թարգմանութիւնք էին, և այլք աշխարհիկ ծանօթից և բարերարաց. ինչպէս Թուղթք զՉինաց, Քաղաքավարութեան գիրք ի 1783, և հետեւեալ տարւոյն մէջ Եզոբոսի առակք, Վիպասանութիւն Ամերիկոյ, Տեսութիւն մարդկային կենաց, և քիչ շատ գործունէութեամբ կը շարունակեն մինչեւ 1809, յորում Աւետարան մը միայն հրատարակուած կը գտնենք իրենց տպարանէն։

Թէ՛ Եւրոպիոյ քաղաքական դիրքէն և պատերազմներէն թերեւս քաղաքին ձեռքէ ձեռք անցնելէն, և թէ դրամական անձկութենէ կը բռնադատուին Մխիթարեանք ունեցածնին չունեցածնին թողուլ ու երթալ ապաստանիլ ի

Վիեննա մայրաքաղաք, կայսերական գերդաստանին անմիջական հովանաւորութեան տակ. կը ստանան վանք, բնակութիւն, հանդիստ դիւրակեցութեան միջոցներ ու տպարան. ու ինչպէս ի Թրեստ, հոն ալ սրբազան երախայրիք մը իրենց տպարանին կ՚ըլլայ Սրբոյ Կուսին Մարիամու, Մխիթարեան ուխտի մայրագութ պաշտպանին, վարուց պատմութիւնն (1812). որով և կը յաջողին ընդարձակել ու կարգաւորել իրենց բարոյական և նիւթական կեանքը և գործունէութիւնը։

Թէ իրենց և թէ նախընթացից փորձերէն խելամուտք՝ թէ մեր ազգին մէջ տպարանի գործը ո՛րչափ ապերախտ է, եթէ անոր մէջ միայն նիւթական շահագործութիւն նկատուի, ընդարձակութիւն ուզեցին տալ իրենց գործոյն՝ ազգային նեղ շրջանակի մէջ միայն չամփոփելով, այլ եւրոպական, մանաւանդ գերմաներէն լեզուով բազմատեսակ և բազմաթիւ հրատարակութիւններով՝ և կայսերական արտօնագրով եկեղեցական պաշտամանց վերաբերեալ գրոց տպագրութիւններն, բոլոր Աւստրիոյ տէրութեան մէջ՝ իրենց յատկացընելով. որոյ վրայ աւելցուցին ապա՝ Լոմպարտիոյ և Վենետկոյ տէրութեան մէջ, որ նոյն ատեն աւստրիական հպատակութեան ենթակայ էր, բոլոր դպրոցաց մէջ գործածուելիք գրոց տպագրութիւնն իրենց սեպհականելով։

Բայց ասոնց նման առանձնաշնորհութեանց վայելք չէին կրնար հաճոյ ըլլալ երկրին տպագրապետաց։ 1848ին հանդիպած յեղափոխութիւնն՝ Աւստրիոյ մէջ ալ ունեցաւ իր ազդեցութիւնը, և Փերդինանդ Ա. կայսր բռնադատուեցաւ հրաժարել իր թագէն՝ ի շնորհս իւր եղբօրը և եղբօրորդւոյն։ Ութեւտասնամեայ պատանեակ կայսրն՝ Փրանկիսկոս Յովսէփ Ա., Հաբսբուրգեան գահոյից վրայ բազմելով, և ժողովրդեան սպառնական թախանձանքէն բռնադատուելով՝ երկրին օրինաց նախկին ենթադրեալ խստութիւնները մեղմացընելու, ուրիշ զանազան ապա-

Digitized by Google

տութեանց հետ զոր կը խնդրէին, տպագրութեան ազատութիւն ևս շնորհեց, և այս նկատմամբ եղած և տրուած ամէն առանձնաշնորհութիւնները վերուց և ոչնչացուց։

Մխիթարեան տպարանն անկէ ետքը աւելի կերպով մտադրութիւնը դարձուց հայկական մասը բարւոքելու։ Արդէն 1840էն ի վեր սկսեր էին շահաւէտ և օգտակարագոյն հրատարակութիւններ ընծայել։ Հին և նոր օտար մատենագրութեանց այլ և այլ երկասիրութիւններ սկսեր էին թարգմանուիլ, եւրոպական լեզուաց ուսումը դիւրացընելու համար այլևայլ բառարանք և քերականութիւններ. 1845էն կը սկսէին հրատարակուիլ Արամեան մատենադարանի հատորք, համանուն ընկերութեան նպաստիւք, և 1849էն Եւրոպա շաբաթական լրագիրը։

Գրեթէ մի և նոյն միջոցին, ի Պարիս Գաղղիոյ հաստատուած Մխիթարեանց ձեռներեցութեամբ, կը մտածուէր հայկական գրերու, թէ գլխագիր՝ բոլորգիր և թէ նօտր տառից նոր փոփոխութիւն մը տալ աւելի եւրոպական ճաշակաւ և վայելուչ ձեւերով. ու անոնցմով կը սկսէին տպագրուիլ՝ նախ գաղղիացի տպագրապետաց քով, և ապա Արամեան կոչուած մասնաւոր հայ տպարանէն այլևայլ հրատարակութիւնք։ — Վիեննայի տպարանն ալ չուզեց ետ մնալ այդ նորութենէն. մանաւանդ թէ աւելի կերպով մը ճոխացընելու և աւելի աչքի հաճոյական կերպարանք տալու ջանքն ունեցաւ, ամէն տեսակ հայերէն տառից ընտիր գրոշմներ պատրաստելով և ձուլելով, ազգային և օտար տպարանաց ալ վաճառելով։

Եղաւ ատեն յորում ըսուեցաւ թէ տպարանին սեպհականութիւնն աւստրիացւոյ մը անցեր էր, և իր անունը սկսաւ դրուիլ նոյն իսկ հայերէն հրատարակութեանց վրայ. բայց քիչ տեւեց, և ներկայ ուսումնասէր և բազմահմուտ Առաջնորդին օրով կրկին Միաբանութեան դառնալով՝ աւելի բարգաւաճ վիճակ մը ստացաւ. այնպէս

Digitized by Google

որ ի մեծ պատիւ Մխիթարայ ուխտին և ազգիս ընդհանրութեան, կը վկայուի աննախանձ անձինքներէ, թէ ի Վիեննա՝ կայսերական տպարանէն ետքը՝ առաջին գործարանն է այլևայլ ազգաց յատուկ տառից ճոխութեամբ, տպագրութեան մաքրութեամբ, ճաշակի գեղով և ընտրութեամբ։ Ծանօթ են և ազգին մէջ տարածուած՝ Հանդէս Ամսօրեայ լրագիրն և այլ և այլ մատենագարաններն, Եւրոպիոյ զանազան մայրաքաղաքաց և Վիեննայի Մխիթարեանց գրատան մէջ գտուած հայ Ձեռագրաց ցուցակը։

ՏՊԱՐԱՆՔ Ց'ԵՐՈՒՍԱՂԷՄ Ց'ԱՐՄԱՇ Ի ՎԱՐԱԳ ԵՒ Ի ԳԼԱԿ

Պատրիարքական աթոռ և վանական միաբանութիւն մը, ինչպէս ունէր իւր դպրոցներն ու առաքելութիւնքն և ընդհանուր ազգին վերայ ազդեցութիւն իւր եկեղեցական դիրքով և ուխտական մեծարանաց այցելութեամբ, ունեցաւ և ունի իւր տպարանը, թէպէտև տպագրութեան գիւտին մեր ազգին մէջ մանելէն շատ վերջը։

Համառօտ գրուածքիս ընթացքին մէջ ալ տեսանք որ ընդհանրապէս մեր եկեղեցական պետք, երբ կ'ուզէին մերոնց մէջ մտցընել տպագրութեան բարերար ազդեցութիւնը, աւելի Եւրոպիոյ մէջ, քան թէ ուրիշ տեղ կը ջանային դրկել իրենց երեսփոխանները։ Հռովմ, Վենետիկ, Ամստերդամ, Մարսիլիա և Լիվոռնոյ հաստատարիմ հաւաստիք են մեր խօսքին։ Եւրոպա դիմելնուն ալ պատճառը յայտնի էր. այն ատեն արևմուտք որչափ որ այժմեան յառաջադիմութիւնն չունէր, սակայն արևելից հետ չէր կարելի բաղդատել։ Այս եղաւ պատճառ Ջուղայի և Էջմիածնի մէջ՝ ժամանակ անցնելէն յետոյ՝ մասնաւոր տպարանի բացման, թէպէտ իրենք եղան

տպագրութեան արուեստին ի Հայս զարգանալուն ջանադիր, և նոյն վախճանաւ այլ և այլ անձինք ղրկեցին յԵւրոպա՝ ինչպէս ծանօթ է ընթերցողաց ։

Մի և նոյն պատճառաւ ուշացած կը գտնենք Երուսաղեմի տպարանը ։ Բայց այսօր մեր դիմացը ու ձեռքին մէջ ունինք իր հրատարակութեանց ցուցակը. ասկէ կ'իմանանք թէ՝ առաջին գիրքը տպագրուեր է 1835 թուականին, որով տպարանին հիմնարկութեան թուականն այն կրնանք դնել ։ Վերնագիրն է, «Տետրակ աղօթամատոյց, վասն ջերմեռանդն աղօթասիրաց, որք կամ անձամբ կամ մտօք ներկայանան ի սուրբ Տնօրինական տեղիսն Քրիստոսի Աստուծոյ մերոյ» ։ Հաննա վարդապետին Տնօրինական ս. տեղեաց նկարագրութեան գիրքը, զանազան անգամ տպուած է՝ բայց միշտ ի Կ. Պոլիս ։ Կը յիշենք այլ և այլ գրքոյկներ Երուսաղեմի վրայ, բայց միշտ ուրիշ տեղ տպուած և մասնաւորաբար ի Պոլիս ։ Ասանկ կը հասնիմք մինչև դարուս կէսը, յորում ինչպէս բոլոր արևելք, Երուսաղէմ ալ նոր կերպարանք մ'առնըլով, իւր բազմաթիւ ուխտատեղիներով և ուխտաւորօք՝ եւրոպական ազգաց և ժողովրդոց մտադրութիւն իր վերայ կը դարձնէ, ոչ միայն կաթուղիկեայց, այլ նաև ռուս և բողոքական ժողովրդոց և հրէից. ուստի որչափ ալ ուխտատեղեաց գլխաւորք նոյն առաջի ազգաց ձեռք կը մնան, սակայն եկաւորք յԵւրոպիոյ և ուրիշ տեղերէ կը սկսին յաճախել, որով և կը կառուցուին հասարակաց և առանձին շինութիւնք, վանորայք, դպրոցք և հիւանդանոցք ։ Արևելեան պատերազմն անգամ 1854ին այս խնդրէս կը ծագի ։

Հայք բնականաբար անտարբեր և պարզ դիտող տեսողք չէին կրնար մնալ, պէտք էր որ ժամանակին հետ իրենք ալ շարժէին, մանաւանդ որ ի հնուց ի վեր պատրիարքական աթոռ ալ ունէին, և խաչակրաց ժամանակներէն յառաջ, Երուսաղէմը քրիստոնէութեան պահելու

Digitized by Google

ճգանց մէջ՝ չէին ուզած պակաս գտնուիլ ուրիշ ազգերէն ։

Ներկայ պատրիարք Յարութիւն վեհապետեան՝ աթոռոյն վրայ չբազմած, ինչպէս նաև Տէր Եսայի Սրբ. բաց ի լուսագրական արուեստէն՝ տեղեկացեր էին նաև թէ ի՛նչպէս և որպիսի՞ ճամբով կարելի է յառաջադիմել. և ուզեցին Երուսաղեմի վանքն ալ ժամանակին պահանջած կարգին և պայմանին մէջ դնել ։

Բարեբաստ գտնուեցան որ նախորդ վարդապետաց հետևողք ալ պակաս չեղան. այսօր Երուսաղեմի միաբանութիւնը ծաղկած վիճակի մէջ կրնայ համարուիլ՝ իր տպագրատամբ և լուսագիր գործարանաւ ։ — Նոր տպագրութեանց մէջ անուանի է Ս. Գրոց Համաբարբառ, Աստուածատուր եպիսկոպոս Տէր Յովհաննիսեանի շարագրած երկհատոր Երուսաղեմի պատմութիւնը ։ Երուսաղեմի Ս. Յակոբայ տպարանին մէջ կը հրատարակուէր Սիոն, ընտիր ամսագիր, ազգային բանասիրական գրագիտական, կրօնական և ժամանակագրական (1866—1877) ։ Փափաքելի է որ Մուրատեան սրբազանի և Սաւալանի օրերուն գործունէութիւնը նորոգուի, զոր կը սիրենք յուսալ թէ՛ ներկայ պատրիարքին ջանքէն և թէ Սահակ Խապայեան սրբազանի, և միանգամայն ամբողջ Միաբանութեան գործակցութենէն ։

* * *

Տպարան մ՚ալ հաստատուեցաւ դարուս կիսէն ետքը ի Ջարխափան վանս Աստուածածնի յԱրմաշ, Նիկոմիդիոյ վիճակին մէջ. դարուս սկիզբէն ի վեր կար և շինուած էր Արմաշի վանքը, բայց պարզապէս ուխտատեղի համարուած էր բարեպաշտից. 1850էն ետքը մտածուեցաւ նոր կերպարանք մը տալ ազգային այդ հաստատութեան, տպարան մ՚ալ հաստատելով հոն՝ ու Յոյս ամսագիրը հրատարակելով Խորէն վարդապետ Աշըգեանի ջանքով, որ վանահայր էր և տեսուչ նոյն ամսաթերթին ։

Բաւական գովելի կերպով ու հետաքննական յօդուածներով, մերթ ընկերելով ուրիշ գրուածներ ալ կը հրատարակուէին ամսաթերթէն քաղուած։ Բայց քանի մի տարիէն Յոյսը դադրեցաւ՝ անշուշտ վերատեսչին եպիսկոպոսական աստիճան բարձրանալուն և Պոլսոյ պատրիարքական աթոռը բազմելուն համար։ Այն դժուարին պաշտաման մէջ չի կրցաւ գլրութիւն ազգին զոհ ընել. կարծելով որ աւելի գործունեայ անձ մը կարող էր ազգին օգտակար ըլլալ, ուստի բռնադատեցաւ աթոռէն հրաժարիլ։ Իր սկզբանց և գործելու կերպին բովանդակութիւն և համառօտութիւն կրնայ սեպուիլ, գէթ ըստ մեր առանձին կարծեաց, Կենցաղ եկեղեցականաց գիրքը, զոր պատրիարքութեան ժամանակ հրատարակեց ի Պոլիս։

Արմաշու վանքը այսօր (1893) ընծայարան մ'է, և ազգին պատրիարքական իշխանութեան ենթակայ։ Ունի փոխ—առաջնորդ մը և ուսմանց տեսուչ, ընդհանրապէս գաւառներէն առնուած վարդապետ և քահանայացու պատանիք, որոնք տարիներով ուսման պարապելով, ատենին սրբազան կարգ կ'ընդունին, և ազգին մէջ կը շատնան՝ թէ՛ իրենց կոչման արժանաւոր և թէ ուսումնական եկեղեցականք։ Իրենց ուսման և հմտութեան երախայրիք մը կրնար սեպուիլ Մասիս կրօնական թերթը՝ որ միայն քանի մը ամիս տեւողականութիւն ունեցաւ, փոխ—առաջնորդին պատրիարքական աթոռը բարձրանալուն համար։

* * *

Վարագայ ու Գլակայ վանից հայր ու ետքը եպիսկոպոս ընտրուեցաւ Մկրտիչ վարդապետ Խրիմեան, որ այսօր Էջմիածնի հայրապետական աթոռը կը գրաւէ գովութեամբ։

Ինքը ծննդեամբ Վանեցի է, Հայաստանի խեղճութեանց և ականատես և տեղեակ, ուզած է գիտութիւնն

տարածել հայրենի աշխարհին մէջ, ու երկրագործութիւնը ծաղկեցընելով՝ պանդխտութեանց և անոնց տխուր հետևանքներու առաջն առնուլ։ Ազգայնոց որ ի Պոլիս, փափագն ու միտքը այն էր, որք հետը տեսնուեր ու ճանչցեր էին իր հայրենասիրութիւնը, ու իր և ընդհանուր հայրենեաց վիճակը բարւոքելու եռանդը։

Խրիմեանի կենսագիրք կ՚աւանդեն թէ շատ դժուարութեանց հանդիպած ըլլայ մտքի դրածը առաջ տանելու համար, բայց դժուարութեանց առջև կանգ առնող և դիւրաւ յուսահատող մարդ չէր բարեբախտաբար։

Իրեն հետ միաբանեց շատ աշակերտներ, իր մտքին և խորհրդոց համամիտ և հայրենանուէր անձինք և երիտասարդք, լի աշխուժիւ և գործունեայ եռանդեամբ, ու անոնց հետ առանձնացաւ Վարագայ վանքը, ու Եւրոպայէն այլևայլ երկրագործական գործիներ բերած ատեն, չի մոռցաւ բարերարաց արդեամբք նաև երկու մամուլ և տպագրական տառեր և կազմածք, նիւթական հողոյն հետ նաև մտքերն ուզելով մշակել։

Առաջին մամուլներն եղան ի Թուրքահայաստան, մեր հայրենեաց հողոյն վրայ իրենց բարերար ճռինչը արձակողք։

Տարակոյս չի կայ որ հայրենեաց ձայնը պիտի լսեցընէր Խրիմեան, և ազգայինք երախտապարտ պիտի ըլլային իրեն և աշակերտացը։ 1857ին սկսաւ հրատարակել Արծուի Վասպուրականի ամսագիրը, ու երբ մամուլն ու տառերը հասան Վարագ, ամէն կրած նեղութիւններ կարծես թէ մոռցաւ։

« Շարողները մեծ մասամբ իր աշակերտներն էին։ Պարապմունքերից ազատ ժամանակ՝ աշակերտները միանգամայն աշխատում էին տպարանում, — ոմանք շարում էին, ոմանք մամուլն էին կառավարում, ոմանք մուր էին տալիս, ոմանք թուղթ...

Աւելորդ չենք համարում ամսագրի մասին մի քանի մանրամասնութիւններ յառաջ բերել։

Digitized by Google

Արծուի Վասպուրական լոյս էր տեսնում ամիսը մի անգամ, իւրաքանչիւր համարը բաղկացած էր լինում մօտ 30 երեսից, մեծ դիրքով...

Ունէր երեք գլխաւոր բաժին.

1. Հանդէս աստուածապաշտութեան, որի մէջ արծարծւում էին քրիստոնէական բարձր գաղափարներ, գրվում էին նշանաւոր եկեղեցականների կենսագրութիւններ և գործերը։

2. Հանդիսարան հայրենասէր առաքինեաց, որի մէջ խօսվում էր նշանաւոր թագաւորների և իշխանների մասին և առ հասարակ մեծ անձնաւորութիւնների, աշխատելով պարզել, թէ ինչ մարդիկ էին դոքա և ինչ արեցին, նկարագրելով Հայոց պատմութեան բոլոր շրջաններին։

3. Տեսարանք հայրենեաց, որտեղ գրվում էին նշանաւոր հնութիւնների, վանքերի, քաղաքների և գիւղերի նկարագրութիւնները, ժողովրդի կենցաղավարութեան հետ միասին։ Դա երկրի ուսումնասիրութիւնն էր։

4. Թանգարան հայկական դպրութեանց, այդ մասին մէջ տպագրվում էին մանրամասն տեղեկութիւններ այն բոլոր հին և նոր ձեռագիրների և գրքերի մասին՝ որ Խրիմեան՝ ձեռք էր բերում Հայաստանի զանազան կողմերից։

Վարագի անունը հռչակվում էր։

Պատմական վանքը նոր ոգի, նոր կեանք էր ստացել։ Նախկին ամայութեան փոխարէն տիրում էր կեանք... վանքի բոլոր կողմերում... տնկվում էին ծաղիկ, այգիներ, պարտէզները...» (Կենս. *Խ. Մալումեանց*)

1861ին դարձաւ ի Պարսկահայոց ի Վարագ։

Բայց հետեւեալ տարին Խրիմեանի յանձնուեցաւ նաև Տարօնոյ ամբողջ գաւառը Գլակայ կամ սուրբ Կարապետի վանքովը, և առաջնորդ և վանահայր անուանելով եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ալ ընդունեցաւ նաև յԷջմիածին։

Digitized by Google

Այսպէս Վարագայ ու Գլակայ վանորայք իրեն խնամոց յանձնուեցան։ Իրեն հետ իւր աշակերտներն ևս քահանայական սուրբ կարգն ընդունելով, կրօնից հետ գիտութիւն և ուսումն սկսան ծաւալել այն պատմական վանքերէն։

Բայց Խրիմեանի ըրած նորութիւնքն, մանաւանդ իր գտնուած դիրքին մէջ, չէին կրնար ամենուն հաճոյանալ։ Բազմաթիւ էին բարեկամքը ազգին մէջ, բայց ունէր նաև հակառորդքը։

Այս դիրքին մէջ էր՝ երբ Պոլսոյ պատրիարքական աթոռը բազմելու կոչուեցաւ։

Չորս հինգ տարի պատրիարքական աթոռոյն վրայ բազմելով, բռնադատուեցաւ վերջապէս հրաժարիլ, և յաջորդ ընտրուեցաւ իրեն Ներսէս արքեպիսկոպոս, որ պատգամաւոր ղրկեց զՀայրիկ ի Վեհաժողովն Բերլինու։ Այս առթիւ Եւրոպիոյ բոլոր մայրաքաղաքները քալեց, և ազգին վիճակը ներկայացուց տէրութեանց արտաքին պաշտօնէից, որպէս զի ժողովոյն մէջ կարենան պէտք եղածը կարգադրել։

Վեհաժողովոյն աւարտելէն ետքը՝ դարձաւ ի Պոլիս և ի Հայաստան, ուր քիչ ատեն մնալով, միւսանգամ եկաւ ի Պոլիս և անտի յԵրուսաղէմ։

Հոն յէջմիածնէ լուր և պատուիրակ ընդունեցաւ, թէ ի՛նչպէս ազգին քուէիւք բարձրացեր էր ի կաթողիկոսական աթոռ։

Այս տողերը գրած ատեններս, նոյն բարձր պաշտաման մէջ է։

Digitized by Google

ՏՊԱՐԱՆՔ Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Զմիւռնիոյ մէջ Մարկոս անունով բանասէրն, մասնաւոր տպարան մը բացեր էր 1759ին, Նալեան Յակոբայ պատրիարքութեան ժամանակ։ Իր առաջին տպագրութիւնն եղաւ՝ Ժամակարգութեան մեկնութիւն մը. յաջորդ 1761 և 1782 տարիներու մէջ ալ Խորհրդատետր և Եզնիկ գրոց առաջին տպագրութիւնը։ Ոմանք կը համարին թէ Մաշտոց մ'ալ տպած ըլլայ, սակայն մենք տեսած չենք։

Էջմիածնի տպարանին և Սիմէոն կաթուղիկոսին վրայ խօսելու ատեն, Մարկոսի վրայ խօսեցանք, թէ ինչպէս կաթուղիկոսն կանչեց զինքը, և հոն հաստատել տուած տպարանը կ'ուզէր յանձնել իրեն, և ամէն բարոյական և նիւթական օգնութիւն կը խոստանար, պահանջելով միայն որ շինել տուած և յատուկ հայերէն տառերը հետը բերէ։ Մարկոս ի սկզբան ինքնզինքն հաճ և հաւան ցըցուց կաթողիկոսին առաջարկութեան, բայց ոչ զինքն և ոչ ալ տառերը փոխադրուած կը գտնենք յԷջմիածին։ Ուստի կը մակաբերենք, ինչպէս առաջ ալ ըսինք, թէ դժուարին եղած ըլլայ՝ կամ գլխովին անհնարին այդ տեղափոխութիւնն, թէ՛ հոն եղող ազգայնոց նկատմամբ և թէ շահագործութեան կարևորագոյն պատճառաւ։

Զմիւռնիա թէպէտ չունէր այն ժամանակ այժմեան ուսումնական դիրքը և հարստութիւնը, բայց ասիական Տաճկաստանի գրեթէ առաջին քաղաքը սեպուած էր միշտ իր վաճառականութեան պատճառաւ։

Դարուս երկրորդ քառորդին ազգայինք նոր կերպարանք մը կ'առնուն ի Զմիւռնիա, և եւրոպական գլխաւոր քա-

Digitized by Google

դաքաց մէջ արդէն վաճառականութեամբ հաստատուած Ապրոյեանք, Եուսուֆեանք, Աբելեանք և այլք, շահակից և օգնական գտնելով նաև քաղաքացեաց շատերը, իրենց մտադրութիւնը կը դարձնեն նաև քաղաքին մէջ գտնուող ազգայնոց ուսումնական յառաջադիմութեան ։ Մեծապէս նպաստաւոր կ'ըլլայ իրենց նաև Պօղոս Պէյ Եուսուֆեան, Եգիպտոսի առաջին պաշտօնեայն, իր բարձր դիրքով, ազգասիրութեամբ և հարստութեամբ ։ Եւ մինչդեռ Թանզիմաթի պատճառաւ արևելքի կառավարութիւնը նոր կերպարանք մը կ'առնու, կ. Պոլսոյ և Զմիւռնիոյ ազգայինք ալ, սկսան կերպով մը մրցանաց մէջ մտնել ազգային կրթութեան գործոյն ։ Հոն հաստատուեցան նաև Վիեննայի Մխիթարեանք իրենց ցորեկօթիկ և գիշերօթիկ դպրոցներով, և ամերիկեան Անգղիացի ընկերութիւնն, ի Մալթայէ հոն փոխադրելով իրենց տպարանը, ուր հայկական տառերով՝ բայց տաճիկ լեզուով այլ և այլ տետրակներ հրատարակած են ։

Զմիւռնիոյ մէջ հայք իրենց օրագիրն, դպրոցները և տպարանները սկսած էին ունենալ, և «Միւնեաց» կոչուած ընկերութիւն մը՝ որոյ անդամակիցք կրթական հաստատութեանց վրայ կը հսկէին ։ Անուանի էր նաև Մեսրոպեան վարժարանը, ունենալով առանձին տպարան մը ևս, ուր այլ և այլ գրքեր կը տպագրուէին ։ Արշալոյս արարատեան կոչուած լրագիրն այլ, միակ իւր տեսակին մէջ, շաբթէ շաբաթ վաճառականութեան ու առուտուրի տեղեկութիւններ և լուրեր կու տար ։ Ամերիկացիք ալ ոչ միայն իրենց դպրոցները, այլ նաև հայերէն տպարան ունէին, ուր բաց ի իրենց կարծեաց համաձայն գրքերէ, կը տպագրէին նաև Շտեմարան պիտանի գիտելեաց տետրակները ։

Վրայ հասաւ 1846ին մեծ հրդեհն ։ Դպրոց, տպարան, հիւանդանոց և ամենայն ինչ լափեց տարաւ, և իւր բարգաւաճանքը սիրող և անոր համար աշխատող

Digitized by Google

զմիւռնիացին աղքատութեան և գրեթէ յուսահատութեան վիճակի մէջ ձգեց ։

Բարեբաղդաբար երկար ատեն չմնացին, այլ չորս կողմն եղող ժողովրդոց և ազգաց հետևելով, և մասնաւորապէս Յունաց և Լատինաց, սկսան հրդեհի վնասուց առաջն առնուլ ։ Նախ երևցաւ Արշալոյս լրագիրն, կատարելապէս հրդեհէ մը փախած թերթ, որ իւր ընթերցողաց ներողամտութիւնը խնդրելով, կը սկսէր դարձեալ գործել, և մինչև խմբագրին ծերութիւնը և մահը շարունակեց, այն ատեն միայն գործելէ դադրելով, երբոր՝ անկարող ծերութենէն բռնադատուելով՝ ուրիշի յանձնեց լրագրին շարունակութիւնը ։ Նոյն ատեն երևցաւ նաև Մետէորա կոչուած ուսումնական թերթը, վեց ամիս անգամ մը, խմբագրութեամբ Մսերեանցի և առանձին տպարանի մէջ ։ Թերթին վրայ ըսելիք մը չունինք, որովհետև կարող անձերէ կը շարադրուէր, և անունը ուզեց արդարացնել սակաւամեայ երևմամբն և ապա իսպառ դադրելով ։

Աւելի տևական եղաւ Տէտէեան եղբարց տպարանական գործունէութիւնը ։ Զմիւռնիոյ ծովային դիրքէն և օրըստօրէ վաճառականական յառաջադիմութենէն օգտուելով, մասնաւոր տպարան բացին, և նախ Արփի արարատեանը հիմնելով, սկսան ապա այլ և այլ վիպասանական գրքերու տպագրութեամբ զբաղիլ, մասնաւորաբար գաղղիական լեզուէ թարգմանութեանց զբաղելով և զբաղեցնելով, գիտելով թէ այն համարուած է ազգին հաճոյ ։ Տարակոյս չկայ, ըստ մեր կարծեաց, թէ անոնց մէջ լաւ ընտրութիւն մը աւելի օգտակար կրնար ըլլալ ժողովրդեան և տևական. 1880էն յետոյ անոնց յիշատակը չենք գտներ ։

Այժմ ի Զմիւռնիա անուն և համբաւ ունի Մ. Մամուրեան Արևելեան մամուլ լրագրովն, զոր քսան և եօթն տարիէ ի վեր կը խմբագրէ, զանազան օգտակար գրքերէ

և դասագրեանցմէ զատ. ինքզինքն բոլորովին գրականութեան տուած, չը դադրիր պարծանք մ'ըլլալէն Զմիւռնիոյ, նման իր նախնեաց և ժամանակակցաց, Միրզայեանի, Փափազեան Անդրէի, Աղաբեգեանցի և նըմանեաց:

ՏՊԱՐԱՆՔ Ի Կ. ՊՈԼԻՍ

Կ. Պոլսոյ անցեալ դարուն մէջ երևցած ու քիչ շատ տպագրական գործունէութիւն ցուցած տպարանները նախկին հատուածով մը ուզեցինք յիշատակել. այս գլխոյս նպատակն է վերջին դարու մէջ հաստատուածներուն վրայ խօսիլ համառօտիւ: Գրուածքիս վերջը դրուած ցուցակը աչքէ անցնողը յայտնապէս պիտի տեսնէ, որ մինչև դարուս սկիզբները և անկէ այլ վերջը կը գործեն Աստուածատուր և իր որդիքն, Մատթէոս, Աբրահամ և այլք, իրենց նպատակ ունենալով՝ կէս մը ազգին կարօտութիւնը և պէտքը, քիչ մ'ալ՝ իրենց շահը: Աստուածատրոյ և իր որդւոց վերջին հրատարակութիւնքն եղած են՝ գէթ ըստ մեր ունեցած տեղեկութեան, 1808ին Նարեկ գիրքը, Էջմիածնի Ճերրող մը և Շնորհալւոյ Հրեշտակաց Ճերրողն, և այլն: Այնուհետև կարծես թէ այդ ասպարէզն կը թողուն Վենետիկոյ և Վիեննայի Մխիթարեան միաբանութեանց, որ իրենց միջոցաց համեմատ կը ջանան այս կողմանէ ալ ծառայել ազգին:

*
* *

Միջագիւղի մէջ հաստատեց իր տպարանն Արապեան Պօղոս, նախ իւր անուամբ, ապա որդւոց հետ միաբան,

ուր հրատարակուեցան եկեղեցւոյ մէջ գործածուելի զանազան մատեաններ, ինչպէս Շարականներ թէ ձայնքաղ և թէ առձեռն, Ժամագիրք առենի և թէ Տօնացոյցք, և այլն: Իրենց հրատարակութիւնք են բաց յայլոց Թովմայի Արծրունեաց պատմութեան գիրքն, Թանգարանին ծախքովը, Հանդիսարան և Բարի քրիստոնեայ Մատթէոս Պատրիարքի, փեշտիմալճեանի, Լուսաշաւիղն, և այլն: Արապեան տպարանէն ետքը երևցաւ Յովհաննէս Միւհէնտիսեանինը, որ արուեստը զարգացնելու մէջ յարեւելս առաջին կըլնայ ըսուիլ, ոչ միայն հայերէն, այլ նաև արևելեան և մանաւորապէս արաբական և տաճիկ տառեր ձուլել տալով:

Իւր տպարանը բացուած կը գտնենք 1846ի միջոցներն. Ինքն Միւհէնտիսեան Յովհաննէս տէրութեան փողերանոցին մէջ իւր գործը և պաշտօնն ունէր, և ի բնէ ճարտար ըլլալով, երբոր առանձինն փորագրութեան գործարան բանալու ետևէ եղաւ; հայկական տառից ձևերուն նորոգութիւն տալու ձեռք զարկաւ յատկապէս նոր և եւրոպական ձևով մանր տառեր փորեց, և անոնցմով իւր տպարանին յայտարարութիւնն և Ֆրանքլին ամերիկացի փիլիսոփային Հարստութեան ճամբայ գրքոյկը իբր նմոյշ մը հրատարակեց, և Վենետկոյ ու Վիեննայի հայ տառից նմանողութիւնն ու սրբագրութիւնն ընել ուզեց:

Օսմանեան պետութենէն ու ազգային պատրիարքարանէն օգնութիւն գտնելով, վերջնոյս գործոյն և բերանը սեպուող Հայաստան լրագիրն կամ շաբաթաթերթը հոն սկսաւ տպագրուիլ Յ. Տէրոյեանցի և Մ. Աղաթոնի տեսչութեամբ: Անոնցմէ զատ ուրիշ գրքեր ալ սկսաւ տպագրել, որով անունն և ճարտարութիւնն աւելի հռչակուեցան յազգին:

Արուեստին մէջ աւելի առաջ երթալու համար իւր Մարտիրոս որդին Պարիս ղրկեց՝ հմտանալու և գալ Կ. Պոլսոյ մէջ գործելու համար: Քարաշէն տպարան մ՚ալ

Digitized by Google

շինել տուաւ ի Ղալաթիա Լուսաւորչի եկեղեցւոյ մօտ, ուր սկսաւ գործել թէ իր կենդանութեան և թէ մահուանէն ետքը արժանաւոր յաջորդաց ձեռքով։ Պետութեան միճակն ալ, քաղաքին յառաջադիմութիւնն և ազգային գըպրոցաց յաճախութիւնն մեծապէս նպաստած էին իրեն և գործոյն։

*
* *

Բայց ինչ որ բազմաթիւ և բարգաւաճ ազգաց և ժողովըրդոց շատ անգամ յառաջադիմութեան համար ամբ մ'է նախանձաւորութիւնն, երբեմն ալ փնասակար կ'ըլլայ պզտիկ և նոր զարգանալ ուզող ժողովրդոց։

Մեր ազգին պատմութիւնն՝ մանաւանդ նոր ժամանակաց մէջ՝ կրնայ հաստատել սեպուիլ այս խօսքիս ճշմարտութեան։ Զի մինչդեռ կը կարծուի թէ Միւհէնտիսեանք զօրաւոր պատրիարքարանի և ազգի պաշտպանութեամբ, բարոյականին հետ կրնան նիւթական մեծ շահեր ալ ընել, Կ. Պոլսոյ մէջ ուրիշ Հայկական տպարան մ'ալ կը բացուի, ուր Նոյեան աղաւնոյ թերթերը կը սկսին հրատարակուիլ և ուրիշ գրքեր։ Պարիսու մէջ ալ Գաղղիացւոց անունով հայկական երկու տպարան կը հաստատուին, մին Շահնազարեան Կարապետ վարդապետի ձեռքով, ուր կը տպագրուին Թանգարան (Galerie) կամ Հայոց պատմագրաց հաւաքումն մի, և միւսն Մխիթարեանց Մուրատեան վարժարանի նոյն աշեննուան տեսչութենէն, ուր Միպուր եպիսկոպոսին Ցաղագս միաւորեան եկեղեցւոյ, հավաքականի հայ թարգմանութիւնը կը հրատարակուի։ Մխիթարեանց ձեռքով հոն կը հրատարակուի նաև Տատեան Ատլասի մեծ և փոքր տախտակներն, Գաղփայեան գեղագրութիւնը, Մասեաց աղաւնի. և արևելեան պատերազմին պատճառաւ զինուորաց գործածութեան համար այլ և այլ խօսակցութեան գրքեր, գաղղիերէն և տաճկերէն՝ բայց գաղղիական գրով։

*
* *

Այնուհետև Արամեան Ճանիկ Նիկոմիդացին ուզեց նոր նախանձորդ մի երևալ Միւհէնտիսեանի և ուրիշ ազգային տպարանաց ։

Պարիսու մէջ սկսելով գործել, այդ ոստանը շատ առաւելութիւններ ունէր ո՛չ լոկ երկրորդական, ապա նաև գլխաւոր ազգաց մայրաքաղաքաց վրայ. այն պատճառաւ Արամեանի տպագրութիւնք մաքուր էին և ճաշակաւորք. այլ և այլ գրքեր տպագրեց, մանաւանդ երբոր Կրեճլի վարժարանէն և յազգայնոց կը մատակարարէին իրեն գրուածք և դրամական օգնութիւն ։ Հրատարակեց նաև Եզնիկ, Նարեկ, Սաղմոս և վիպասանական գրքեր ։ Այն ատեն հանդիպեցաւ նաև Միւհէնտիսեան Յովհաննու մահը, և ապա իւր որդւոց տպարանական գործէ քաշուիլը, որով գրերն այլոց ձեռքն անցան ։

Արամեան Ճանիկ հարկ համարեց ի Մարսիլիա փոխադրել տպարանը, անշուշտ արևելից աւելի մօտաւոր սեպուելուն, կամ հին յիշատակներով՝ Ոսկան վարդապետին և իրեն յաջորդացն, կամ ազգային վաճառականաց հոն փոխադրուելուն և հաստատուելուն պատճառաւ ։ Հոն հրատարակած է նաև Միքայէլեան Թուաբանութեան մէկ մասը ։

Մարսիլիայէն ի Նիկոմիդիա իւր հայրենիքը փոխադրուեցաւ, և անկէ ալ ի Կ. Պօլիս, ուր նախ Դասարան մանկանցը հրատարակեց և ապա ուրիշ գրքեր ։ Մահուանէն ետքը Պաղտասարեան Գ. Էֆէնտիի անցան իւր տառերը և տպարանը, պահելով անունը և իրեն նման ծաղկեցնելով արուեստը ։

Հիմայ Արամեանի որդին տէր ըլլալով իւր հօր գործոյն և արուեստին, առանձին տպարան բացած է, և նախկին Արամեանն ալ որ Պաղտասարեանի ձեռքով կը

կառավարուէր, Մ. Մարըեանի անցած ։ Գէթ այսպէս նշանակուած կը գտնենք նոր հրատարակութեանց մէջ ։

Սիրելի է մեզ կրկին խոստովանել, որ թէ Արամեան և թէ յաջորդն ու շարունակող Գ. Պաղտատեան շատ կատարելագործեցին հայ տպագրութեան արուեստն ի Թուրքիա ։ Ասոնց հետ յիշատակութեան արժանաւոր կը սեպուին Ռուբէն Քիւրքճեան և Ցարութիւն Փափազեան և Նշան Պէրպէրեան տպագրապետք, իրենց մաքուր և ընտիր հրատարակութեամբք, և ուրիշներ՝ որոնց ամենուն յաջողութիւն և յարատևութիւն մաղթելով ու փափագելով, կը վերջացնեմք մեր համառօտ գրութիւնն, ամենուն ներողամտութիւնն և սրբագրութիւն խնդրելով։

Այս յիշատակուածներէն զատ կը մնան, թէ՛ Եւրոպայի և թէ Նոր աշխարհի այլ և այլ քաղաքաց մէջ հայագիր հրատարակութիւնք և փորձեր ։

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐԻՆ ՅԱՌԱՋԱԲԱՆ

1565–1883

Տպագրութեան մեծ և օգտակար գիւտին՝ հայկական տառից կերպարանքով նախկին ընծայումն կ'ակնարկէ առաջին տարէթիւն. իսկ երկրորդն, ինչպէս յայտնի է, անոր երեքհարիւր ութեւտասն տարիներու յարատեւ կեանքն ու գործունէութիւնն։ — Այդ կենաց և գործունեայ ազդեցութեան՝ այբուբենական պարզ ու անպաճոյճ ցուցակն է մեր այս հրատարակութիւնը։

Կը սիրենք ենթադրել, թէ ազգային բանասիրութեան համար՝ ոչ անհաճոյ պիտի ըլլայ մեր դուզնաքեայ, բայց իր տեսակին մէջ առաջին ու բաւական դժուարին երկասիրութիւնն։ Կը փափաքինք որ ըլլայ անարուեստ ու անտաշ արձան մը՝ յուշարար փառաց և արդեանց այն անզուգական անձին՝ որ մեծ ոգւով և անդուլ ճգամբք՝ ծանօթացուց յազգիս այս հրաշալի արուեստին գիւտը. — Աբգարու Եւդոկիացւոյ, — որուն անուան և յիշատակին կը նուիրենք այս գրուածքը, և կը համարինք թէ ախորժ հաճութեամբ պիտի ընդունի՝ դարերու մոռացութիւնը դարմանելու փափաքանօք և սրտով ընծայուած այս մեծարանաց յիշատակը, իր նախկին գործը՝ արտադրած արդեամբքը, իրեն նուիրելով. 1883 թուականին հայկական տպագրութեանց յառաջադիմութիւնն ու բարգաւաճանք՝ հարկ է որ արթնցընէ մեր սրտին մէջ՝ երախտագիտութեան իրաւացի զգացմունք մը. լսելի ընէ շնորհակալութեան ձայն մը Անոր՝ որ 1565ին Սաղմոսարան մը, — Թուականաւ և ժամանակաւ մեզի ծանօթ, — առաջին հայկական տպագրութիւնն ընծայեց։

Digitized by Google

Այդ պատուական ընծայն, ազնիւ սրտի ու ճարտար ձեռքի արդիւնք, հարկաւ կը դարձընէ մեր մտադրութիւնը զայն նուիրող անձին և իր ժամանակին վրայ։

* * *

Մեր ազգային պատմութեանց վերջին տխուր էջերուն վրայ ակնարկ մը եւեթ՝ բաւական է միայն հասկըցընելու թէ՝ այն աղետից և տգիտութեան դարերու մէջ որպիսի՛ էր և կրնար ըլլալ մեր հայրենեաց վիճակը։— Իշխանական գաւազանն ջախջախուած փշրուած, բռնութիւն և ոյժ՝ երկաթի ձեռքերով ծանրացած, հուր, սուր՝ աւերիչ և սպառիչ տարերք իրենց անդիմադարձ և անտեղիտալի ուժով՝ ամէն տեղ արեան գետեր կը վազցընէին. շէն բարգաւաճ քաղաքներ՝ հրատապ աճիւնով ծածկուած, ու արգասաբեր զուարթ դաշտերու վրայ մահուան արհաւիրք տարածուած։ Այս էր Հայաստանի վիճակը, զոր կը ներկայացընէ մեզ սուգախօս պատմութիւնն։

Ի՞նչ զարմանք՝ եթէ այդպիսի աւերման մը առջև, տագնապալից երկարատև ճգնաժամի մը ատեն՝ տապալին իյնան, մոռցուին ու անտես ըլլան, ու ինչուան նաև արհամարհուին դպրութիւնք։ Մանաւանդ թէ քանի՛ շնորհակալեաց արժանաւոր պէտք է սեպուին այն մեծանձն և վսեմախոհ մտքեր, որ համածաւալ վտանգի մը առջև՝ իրենց տկար ու անբաւական ջանքն ալ՝ անմոռանալի և օրինակ առնըլու անձնանուիրութեամբ ուզեցին գործածել ի փրկութիւն և ի պահպանութիւն մեզի համար պատուական ու ամենակարևոր դպրութեանց։ Բեկորք ևեթ մնացին իրենց պաշտպանող արիական ձեռաց մէջ. բայց վտանգին և սպառնալեաց մեծութեան առջև՝ ոչ միայն մեծ էր իրենց քաջութիւնը, այլ նաև այն պարգևը՝ զոր յաճախ իրենց արեան հետ խառնած՝ կը մատուցանէին ի վայելս և ի գիտութիւն յաջորդ սերնդոց։

Digitized by Google

***

Վանականութիւնը, — հարկ է խոստովանիլ, — մեր հայրենեաց համար բազմարդիւն և բարերար նախախնամութիւն մը եղած է միշտ. և ինչպէս հին՝ սոյնպէս ալ նոր մատենագրութեան մէջ՝ իրեն կարևոր և անհրաժեշտ տեղի բռնած բազմապատիկ արդեամբք։

Այդպիսի կրօնական մեծ հաստատութեան մը պարտական ենք՝ նաև տպագրութեան մեր մէջ երևնալուն պարգևը։

Հայաստանի հայրապետական աթոռոյն վրայ կը նստէր այն ատեններն Միքայէլ Դ կաթողիկոս։

Տպագրութեան արուեստին արդեանց և օգուտներուն լուրը՝ հեռաւոր Եւրոպայէն մինչև ի Հայաստան ժամաներ էր, դժուարին ու անանց կարծուած ճամբաներէ, ու ազգին բարւոյն սիրով տոչորող հայրապետին ականջը։ Սակայն որչափ գիտն և անոր արդիւնքն հրապուրիչ և փափաքելի էին, բայց զայն մինչև ի Հայաստան մտցընելու դժուարութեանն ալ անծանօթ չէր։

Հարկ էր ձեռներէց, ճարտար ու հանճարեղ անձ մը գտնել, ու անոր ձեռքով փորձել այդ սիրելի պարգևը իր հայրենեաց ընելու դիտաւորութեան հնարաւորութիւնը։

Բարեբաստ գտնուեցաւ Միքայէլ, այդպիսի անձի մը հանդիպելով. և էր, ինչպէս պատմութիւնը կ՚աւանդէ, Եւդոկիացին Աբգար։

***

Ո՞վ էր Աբգար։

Բանանք պատմութեանց էջերը, ու համառօտախօս քանի մը յիշատակարանք։ Դժբաղդաբար՝ ինչպէս ուրիշ շատ մեզի համար հետաքննական նիւթերու, հոս ալ խիստ թերակատար ու անբաւական կը գտնենք անոնց աւանդածը։

Digitized by Google

Պատմութիւնը երկու գլխաւոր բան կը յիշատակէ Աբգարու վերայ. նախ զինքը մեր Թագաւորական ցեղէ սերեալ, և յետոյ պատգամաւոր և դեսպան Հայրապետական ի Հռովմ։ Առաջինն իր տոհմին ազնուականութիւնն կը յայտնէ. իսկ երկրորդն՝ մտաց, սրտի և հանճարոյ ազնուագոյն յատկութիւններ ենթադրել կու տայ իրաւամբ, և արժանաւոր այնպիսի նուիրական անձի մը վստահութեան։ Ստեփաննոս Ռոշքեան իր Յիշատակարանաց մէջ կ'ըսէ. «Պարոն Սէֆէր Աբգարեանց, ի զարմէ Թագաւորացն Հայոց, եկեալ ի Հռոմ դեսպան Հայաստանեայց»։ Իսկ իր Սուլթանշահ որդին Մաղաքիա դպիր՝ իր ժամանակագրութեան մէջ թագազարմ կը կոչէ. և 1583 Թուականին ի Հռոմ գտնուող հայկազունք ալ «Մեր Հայոց իշխան արքաշաւիղն ի Հայկայ պարոն Սուլտանշահ». և քիչ մը ետքը արքայազուն մակդիրը կու տան անոր։

Այսպիսի նշանաւոր անձի մը, ու իր եկեղեցական մեծ դիրքով բարձրաստիճան հայրապետի մը յանձնարարութեամբ եղած պատգամաւորութիւն կամ դեսպանութիւն 'ի Հռովմ, պիտի ունենար հարկաւ իր մեծ կարևորութիւնն, թէպէտև պատմութիւնն խորհրդաւոր և խորհրդական լռութիւն մը ուզած է պահել անոր նկատմամբ։

* * *

Սակայն նոյն իսկ լռութիւնն ունի անշուշտ իր քաղաքագիտական նշանակութիւնն։

Ռուբինեան Թագաւորք՝ և իրենց անկմանէն ետքը՝ Հայրապետական աթոռոյն վրայ բազմող կաթողիկոսունք՝ վերահաս անկման մը սպառնալեաց և ստուգութեան առջև, ահարեկք անոր հետևանք յանհրաժեշտ և 'ի սրտատոչոր աղիտից, սովոր էին դարձընել իրենց արտասուալից աչքը, և հեռաւոր հառաչանաց ձայն մը լսելի

Digitized by Google

ընել քրիստոնեայ Եւրոպայի· սերունդէ սերունդ անցած աւանդութեամբ՝ հոն կը դառնային իրենց սրտից յոյս և իղձք, հոն՝ օգնականութիւն և ձեռնտուութիւն հայցող աղաչանաց թուղթեր կ'ուղղէին։

Միջին դարուց մէջ՝ Հռովմայ քահանայապետաց ձայնն ունէր իր զօրաւոր ազդեցութիւնն եւրոպական քրիստոնեայ արքունեաց վրայ. և կը վկայէ պատմութիւն՝ թէ ի՛նչպէս իրենց ձայնն ու կամքը՝ յաճախ մեծարուած հրաման մըն էր, ու մերթ նաև աստուածախրախոյս յաղթութեան առհաւատչեայ մը։

Մերք ալ շատ անգամ հոն դիմելու սովորութիւնն ունեցան՝ իրենց աղիտից ու տառապանաց մէջ։ Արդէն Ստեփանոս կաթուղիկոս քիչ տարի յառաջ գնացեր էր 'ի Հռովմ յուխտ սրբոյն Պետրոսի, և անշուշտ իր բուն գոյներովը ստորագրած Հայաստանի վիճակն ու ձեռընտուութեան կարօտութիւնը։ Իր յաջորդն Միքայէլ՝ նոյնպիսի դիտում մը ունեցած պիտի ըլլայ Արգարու դեսպանութեամբ։ Կու տար իր ձեռքը յանձնարարական և գովութեանց թղթեր, և Հռովմայ արքունեաց կ'իմացընէր թէ ինչպէս իր լիուլի վստահութեանն և համարման արժանաւոր անձն էր։

Հասաւ Արգար իր ուղեկցօքը. ու սիրալիր և մեծամեծար ընդունելութենէ մը ետքը՝ ներկայացուց ազգին քաղաքական ու եկեղեցական վիճակը։

Ոչ Միքայելի գորովով լի սիրտը և ոչ Արգար չկըրցան իրենց վախճանին և նպատակին հասնիլ։ Բայց պատգամաւոր դեսպանն՝ եթէ ոչ արևմտեան օգնականութեամբ, գէթ անոր ուսումնական յառաջադիմութեան մէկ տարերք ուզեց օժտել և ճոխացընել իր աղքատ ու կարօտեալ ազգը։ Ետևէ եղաւ, ինչպէս Միքայէլ կաթուղիկոսին ալ կամքն էր, տպագրութեան արուեստին հմտանալ և ծանօթացնել ազգին։ Գտաւ իրեն պաշտպաններ ու ձեռնտուք՝ նաև քահանայապետին ամենէն աւելի մերձաւոր ծիրանաւորաց մէջ. եկաւ 'ի

Digitized by Google

վէնետիկ, աշխատեցաւ, աղաչեց ու Թախանձեց, ու քաղաքին ամենաբարձր քաղաքական իշխանութենէն, տուժէն, հրաման և արտօնութիւն ընդունելով՝ 1565ին տպագրեց հոն Սաղմոսարան մը։

⁂

Աւելորդ կը սեպենք յերկարել մեր խօսքը՝ տպագրութեան ազգերնուս մէջ սկզբնաւորելուն և յառաջադիմութեան պատմութիւնն ընելով, որ արդէն ծանօթ է բանասիրաց այլ և այլ գրուածներով, և ուր կը խրկենք զխնդրողս և զփափաքողս*։ Միայն յառաջաբան տեղեկութենէս ետքը՝ կը ներկայացնենք 1565էն մինչև 'ի 1800 տպագրուած ու հրատարակուած ու մեզի ծանօթ գրոց ժամանակագրական համառօտ ցուցակ մը։ Տարակոյս չկայ որ ոչ այնչափ ճոխ և արգասալիր, ինչպէս կրնայ յուսալ կամ փափաքիլ բանասիրութիւնը, — թէ նիւթով և թէ թուով աղքատ ցուցակ մը. — բայց անոր հետ՝ հարկ է տեսնել ամենամեծ եռանդ մը ու յառաջադիմութեան գովելի փոյթ, զոր թերևս ուրիշ մեզմէ աւելի բազմաթիւ, հարուստ ու իրենց քաղաքական դիրքով բարգաւաճ ազգաց մէջ դժուարին ըլլայ գտնել՝ տպագրութեան նախնական և սկզբնական փորձերուն մէջ. մանաւանդ եթէ աչքի առջև ունենանք այն բազմաթիւ դժուարութիւններն՝ որոնք ելեր են դիմացնին, և որոց յաղթեր են արիաբար։ Իրաւամբք կը զարմացընեն զմեզ, և մեծ երախտագիտութեան պարտք մը կը դնեն վրանիս Աբգար մը, Սուլթանշահ, Տէրզնցի, Ոսկան, Ծարեցի, Վանանդեցի Մխիթար, Կոլոտ, Արղութեանց,

* Զամչեան, պատմ. Հայոց, Հատ. Գ, 656։
Ցուցիկք հայրենեաց, Հատ. Ա, 519։
Պատմ. հայերէն դպրութեանց, Հատ. Բ, 274։
Փորձ, գրականական հանդէս, 1881.

և իրենց նմանիքը․ և որոնց ամենուն վրայ հաւասար կը նկատենք մեծ ոգւոյ մը ամէն յատկութիւններն։

***

Այս դժուարութեանց մեծագոյնն՝ իրենց հայրենեաց քաղաքական վիճակին և դրից նուազութիւնն էր։ Յաճախ տեսնուեր են յաշխարհի՝ մեծ գործերու ձեռք զարնող և յաջողող անձինք։ Բայց իրենց զօրաւոր կամքին և ջանից իրականութիւն տուողը՝ մերթ արքունական գաւազանի մը նեցուկը, իշխանական ազդեցութեանց առատատուր ու քաջալերիչ վարձաւորութիւնն, և շատ անգամ իրենց վրայ զարմացող և զիրենք մեծարող ժողովուրդ մը եղած է։

Ո՛րչափ տարբեր էր Հայաստանի վիճակը․ և քանի՛ իրաւամբք այդ վերը յիշուած ամէն անձինք, պարտուց դժնդակ բեռան տակ ընկճուած ու հատուցանելու անկարող դիրքի մէջ, իրենցմէ՛ հազար և աւելի տարիներ յառաջագոյն՝ արտասուօք ու սրտի կքմամբ զուրցուած խօսքերը կրնային և կրցեր են դժբաղդաբար հառաչանօք երկրորդել․ « Ո՞վ յարգեսցէ զմեր ուսումն և զջան… ո՛վ 'ի ձէնջ թոշակս վասն մեր »։

***

Տպագրութեան գիւտին գլխաւոր շարժառիթը՝ նոյնն եղած է և առ մեզ, ինչ որ յառաջագոյն եւրոպական ազգաց քով։ Ձեռագիրք ժամանակաւ կը հիննային ու կը մաշէին, ու պատերազմաց՛ և աղիտից պատճառաւ կ'անհետանային․ արուեստագէտ գրիչք՝ ուսմանց և գրոց յարգը չգիտցողներուն և կամ իրենց դժուարին ու երկար աշխատանքը վարձատրողք չունենալուն կը թուլնային, ու ձեռագրաց փոխագրութեան հետ կը նուազէր նաև արուեստը։ Ասոնց ամենուն բնական հետևանք էր՝

գրչագրաց սակաւագիւտ ըլլալը, և անոնց գնոյն բարձրանալով՝ դժուարամատչելի դառնալը։

Սակայն գրչաց նուազութիւնն ու գրոց թանկութիւնն ա՛լ աւելի զգալի կ'ընէր անոնց պէտք։ Որչափ ալ բըռնադատուած ըլլային այդ ծանր հարկին համակերպիլ, սակայն վարդապետական և եկեղեցական գրոց կարևորութիւնն անհրաժեշտ էր եկեղեցեաց բարեկարգութեան և աստուածային պաշտամանց բարգաւաճանաց համար. որոց անչքութիւնը՝ ծանր ու ամենադառն էր ազգի մը համար, որ ստիպուած էր իր միակ մխիթարութիւնն այդ սրբավայրից մէջ փնտռել, և հոն թափած արցունքով սփոփուիլ՝ անկէ դուրս առատաբար թափուած արտասուաց և աղիտից մէջ։

Ասիկայ եղած է գլխաւորաբար, ինչպէս յԵւրոպա, ասանկ ալ մեր ազգին մէջ՝ տպագրութեան նախնական գիւտին և կիրառութեան պատճառը։ Սուրբ գիրք՝ Կութթէմպէրկի գիւտին առաջին արտադրութիւնը. Սաղմոսք՝ Աբգարու երկար և դժուարին ճգանց՝ երախայրիք։

* * *

Երկրորդական նպատակ մ'ալ շահադիտութիւնն էր, և որուն արգասիք՝ ինչպէս քիչ առաջ ըսինք, մեր առաջին տպագրողաց քով պակսեցաւ, և որ իրենց յաջորդացն ալ ընդհանրապէս տխուր ժառանգութիւն մը եղաւ։ Գրեթէ ամէնքն ալ պարտքի տակ ընկան և հեծեցին։ Սակայն կարծես թէ այդ անձինք՝ դժուարութեանց առջև չլքանելու ուխտ մը դրած էին. և իրենց վաստակոց արդիւնք զայն բարձրաձայն կը հռչակեն։ Ո՞վ է որ Ոսկանայ, Ծարեցւոյն, Վանանդեցւոյն հրատարակած տպագրութեանց վրայ նայած ատեն՝ չզարմանայ արուեստին կատարելութեան վրայ, յոր յաջողեցան հասնիլ։ Դեռ երկու տարի յառաջ՝ աշխարհագրական ժողովոյն պատճառաւ 'ի Վենետիկ գումարուող

Digitized by Google

ամէն ազգի իմաստունք և աշխարհագէտք՝ սքանչացան Համատարած աշխարհացոյց տախտակին վերայ, զոր 'ի 1695 հրատարակեց յԱմստերտամ Թովմաս Գողթնեաց եպիսկոպոսը. և չէին երկմտեր ըսել թէ նոյն ատեններն փորագրուող աշխարհացոյց տախտակաց մէջ ամենէն նշանաւորներէն մէկն կրնայ սեպուիլ։ Ո՞վ Համազասպեան Թադէի երիցու 'ի Վենետիկ հրատարակել տուած Ճաշոց գրքին տպագրութեան ազնուութեան և արուեստին վրայ չզարմանար, կամ Մխիթարայ աբբայի պատկերազարդ Աստուածաշունչ գրոց. և չսեպեր զայն ջանից յարատեւութեան, ճաշակի ընտրութեան և արուեստի կատարելութեան յաւերժական յիշատակ մը։

***

Ասոնք և իրենց նմանիք սկսան, կատարելագործեցին և ինչուան առ մեզ հասուցին տպագրութեան արուեստը։ Տարակոյս չկայ որ գտան իրենց արժանաւոր հետևողքն ալ, որով հայկական տպագրութիւնն հասաւ այն աստիճանի կատարելութեան՝ որ զանազան աշխարհահանդիսից մէջ 'ի Լոնտոն, 'ի Փարիզ, 'ի Վիէննա և այլուր՝ ոչ լոկ գովութեամբ մեծարուեցաւ, այլ ինչուան մրցանակի և արծաթի մետալաց արժանաւորք դատուեցան։ Մխիթարեան ուխտին կրկին տպարաններն 'ի Վենետիկ ու 'ի Վիէննա, Արամեանն 'ի Փարիզ, 'ի Մարսէյլ և 'ի Պոլիս, Միւհէնտիսեան, Քիւրքճեան, Պօյաճեան՝ նոյն քաղաքին մէջ, Լազարեան 'ի Մոսկուա, Խալիպեանն 'ի Թէոդոսիա, Մարտիրոսեան և ուրիշներ 'ի Թիֆլիզ՝ իրաւամբք արժանաւոր տեղի մը գրաւած են և պիտի գրաւեն հայկական տպագրութեանց պատմութեան մէջ։

Digitized by Google

***

Երկու խօսք ալ մեր այս գրուածին վրայ։

Մեզմէ շատ տարի յառաջ՝ ուսումնական արդեամբքն և եկեղեցական բարձր աստիճանաւ ազգին արդէն ծանօթ՝ սրբազան և պատկառելի անձ մը, Գեր. Իգնատիոս Փափազեան, մանր ու համբերող երկայնմտութեամբ հաւաքեր էր հայկական տպագրութեանց ցուցակ մը, հասցընելով մինչև դարուս սկիզբը։

Իր ձեռագիր երկասիրութեանց մէջ հանդիպելով այս օգտակար և հետաքննական հաւաքմանն, ուզեցինք կատարելագործել իր պակասը, և լրացընել՝ հասցընելով զայն մինչև մեր օրերը։

Մեր դիտած նպատակին հասնելու համար՝ քիչ չեղան դիմացնիս ելած դժուարութիւններն։ Որչափ ալ քովերնիս գտնուած հայկական տպագրութեանց հաւաքումը ճոխ, և թերևս գլխաւորներէն սեպուի ազգին մէջ, սակայն և այնպէս ունի շատ պակասներ, և որուն գլխաւոր պատճառը 'ի հայրենեաց հեռի ըլլալնիս է։

Մտադիր ընթերցողը պիտի տեսնէ թէ մեր կողմանէ բաւական ջանք եղած է՝ կարելի եղածին չափ կատարեալ երկասիրութիւն մը ընծայելու։ — Զենք կրնար հրապարակաւ չյայտնել մեր շնորհակալութիւնն այն հեռաւոր ազգայնոց որ ազնուութեամբ սրտի օժանդակեցին մեզ՝ 'ի դիւրել մեր աշխատանքը, և որով մեծապէս օգտուեցանք։ Բայց անով հանդերձ չենք քաշուիր անկեղծ խոստովանութիւն մ'ալ աւելցընել, որ յաճախ թերի կը մնայ այս երկասիրութիւնը, և զոր կը յուսանք կատարելագոյն կերպարանօք ընծայել ազգերնուս՝ երկրորդ և աւելի ճոխ տպագրութեամբ, եթէ մեր այս գործը ընդունելի և հաճոյ ըլլայ բանասիրաց։ Այս պատճառաւ ալ չուզեցինք Ցաւելուած մը ընել Նորագոյն Հրատարակութեանց, և կամ գրչէ ու քննութենէ վրիպող գրոց։

Digitized by Google

Այսպիսի ակամայ ու գրեթէ անհրաժեշտ զանցառութեանց համար՝ ընթերցողաց ներողամտութիւնը խընդրելնիս հիմակուընէ կը յայտնենք։

* * *

Ծանօթ է ազգային շատին՝ Մ. Մ. Միանսարեանց, ազգասէր և բանիբուն անձին, Bibliotheca Caucasica et Trancaucasica պատուական աշխատասիրութիւնը, որ հեղինակին տարաժամ մահուամբը անկատար մնացած է, և միայն առաջին հատորն հրատարակուած 'ի Փեթըրպուրկ (1874–76)։ Իր գործը՝ որչափ ալ հմուտ և հետաքննական, սակայն ինչպէս նպատակաւ՝ ասանկ ալ գործադրութեամբ մերինէն բոլորովին կը տարբերի։

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

1512-3 – 1565

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1512	Վենետիկ	—	Պարզատոմար, Ա։
1513	»	—	Պատարագատետր, Ա։
—	»	—	Ուրբաթագիրք։
—	»	—	Տաղարան, Ա։
—	»	—	Աղթարք։

1469–1540	Փաւիա	Թէսէոս Ամբ.
1510–1570	Փարիզ	Փոսթէլ։

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

1565–1700

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1565	Վենետիկ	Աբգար	Սաղմոս, Ա:
1567	Պոլիս	»	Փոքր քեր. կամ Այբբենարան, Ա:
—	»	»	Ժամագիրք, Ա:
—	»	»	Պատարագատետր, Բ:
—	»	»	Տօնացոյց, Ա:
—	—	»	Տաղարան, Բ:
1584		Սուլթանշահ և Տէրզնցի	Տոմար Գրիգորեան, Ա:
1587	Վենետիկ	Յ. Տէրզնցի	Սաղմոս, Բ:
1616	Իլվով	Քարմատան.	Սաղմոս, Գ:
1623	Հռովմ	Ս. Բաւլինեան (*)	Կոնդակ Նուզին, Գ:
—	»	Ուրբանեան (**)	Այբբենարան, Բ:

(*) Steph. Paulinus
(**) Եթէ Բաւլինեանի տեսչութեան չէր վերաբերէր նաև վարժարանին տպարանը:

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1624	Միլան	Ամբր. վրժրն	Քերական. Հոխվոլայ:
1630	Հռովմ	Ուրբանեան	Առաւել պարզաբան, Ա:
1633	Փարիզ	Արքունական	Բառգ. Հռվմ. հայ-լատ, Ա:
1634	Հռովմ	Ուրբանեան	Առաւել պարզաբանութիւնք, Բ:
1640	Ջուղա	Ամենափրկիչ	Հարանց վարք, Ա:
1642	Հռովմ	Ուրբանեան	Դաւան. հաւատ. Ա:
—	»	»	Խորհրդատետր, Գ (հայ և լատին):
—	Ջուղա	Ամենափրկիչ	Ժամագիրք ատենի, Ա:
—	Վենետիկ	Յ. Անկիւրացի	Սաղմոս, Դ:
1643	»	»	Յիսուս որդի, Ա:
—	Լիվոռնոյ	Յ. Վ. Ջուղ:	Սաղմոս, Ե:
1645	Հռովմ	Ուրբանեան	Քերակ. Գալանոսի:
1647	Ջուղա	Յ. Վ. Ջուղ.	Պարզատումար Ազարիայի:
1650	Հռովմ	Ուրբանեան	Պատմ. Գալանոսի, Ա:
1658	»	»	Գալանոսի, Ա մասն:
1660	Վենետիկ	Պոլիս	Յիսուս որդի, Բ:
—	Ամստերդամ	Մ. Ծարեցի	Յիսուս որդի, Գ:
1661	Հռովմ	Ուրբանեան	Գալանոս, մասն Բ:
—	Ամստերդամ	Աւետիս	Ժամագիրք համառօտ, Բ:
—	»	»	Սաղմոս, Զ:
1662	»	»	Ժամագիրք մեծ, Բ:
1664	»	Ոսկան	Շարական, Ա:

Digitized by Google

1666	Ամստերդամ	Կարապետ	Սաղմոս, Է:
—	»	Ոսկան	Այբբենարան և Քրիստոնէական, Ա « Բան հաւատոյ »:
—	»	Ոսկան	Աստուածաշունչ, Ա:
—	»	»	Սաղմոս, Ը:
—	»	»	Քերականութիւն:
—	»	»	Քրիստոնէական, Ա:
1667	»	»	Ժամագիրք մեծ, Գ:
—	»	»	Աղօթամատոյց և Ժամագիրք:
—	»	»	Մաշտոց, Ա:
—	»	»	Քրիստոնէակ. Բ. հայ–լատ:
—	»	»	Աղօթամատոյց:
1668	»	»	Աղուէսագ. և աշխ. խոր:
—	»	»	Նոր կտակարան, Ա:
—	»	»	Տօմար, Բ:
—	»	»	Այբբենարան և Քրիստ. վարդապ. Բ:
1669	»	»	Առաքել պատմիչ:
—	»	»	Ջայնքաղ, Ա:
1670	Լիվոռնոյ	Ոսկան, ապա Ջուղ. — Կարապետ	Պարտէզ, Ա:
—	»	»	Քրիստոնէական, Գ:
1671	Հռովմ	Ուրբանեան	Ձեռքածութիւն, Ա:
1672	Ամստերդամ	—	Սաղմոս, Թ:
1673	Մարսիլիա	Ոսկան	Գրքուկ կարևոր, Ա:

Digitized by Google

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1673	Մարսիլիա	Ոսկան	Ժամագիրք ատենի, Դ։
—	»	»	Նարեկ (անկատար), Ա։
1674	Հռովմ	Ուրբանեան	Գեմբացի, Ա։
—	»	»	Պօղոս Փիրոմալ։
—	»	»	Ջատութիւն հայկաբանութեան, Ա։
—	Մարսիլիա	տպ. յանուն Էջմիածնի	Ճարտասանութիւն, Ա։
1675	Հռովմ	Ուրբանեան	Նորագոյն ծաղիկ, Ա։
—	»	»	Ջատութիւն հայկաբ. Բ. Հայ–լատ։
—	»	»	Քերականութիւն հայ–լատ։
—	Մարսիլիա	Ոսկան	Այբբենարան, Գ։
—	»	»	Արհեստ համարողութեան։
—	»	»	Պարզատօմար, Բ։
—	»	»	Նարեկ փոքր, Բ։
—	»	»	Կանոնք զգուշութեամբ պահելոյ զանձն։
1676	»	Սողոմոն	Գրքուկ կարևոր, Բ։
—	»	Սողոմոն և ընկ։	Մաշտոց, Բ։
—	»	»	Նուագարան կուսին։
1677	Հռովմ	Ուրբանեան	Սպասաւորութիւն պատ. Ա։
—	»	»	Խորհրդատետր, Դ։
—	Մարսիլիա	Սողոմոն և ընկ.	Սաղմոս, Ժ։
—	Պօլիս	—	Երեմիա չէլէպի։

Digitized by Google

1678	Հռոմ	Ուրբանեան	Դաւանութիւն հաւատոյ, Բ։
—	Վենետիկ	—	Տօմար, Գ։
—	Պօլիս	—	Տնօրէնականք։
1680	Հռոմ	Ուրբանեան	Քրիստոնէական, Գ։
—	Վենետիկ	Պառայօն	Աւետարան, Ա։
—	»	»	Հայելի ճշմարտութեան։
—	Լիփսիա	—	Անդրէաս Աքօլութոս։
1681	Հռոմ	Ուրբանեան	Մանաւանդականք։
—	Վենետիկ	Պառայօն	Ժամագիրք համառօտեալ, Գ։
—	Ջուղա	Ամենափրկիչ	Գիրք ժողովածոյ, Ա։
1682	Վենետիկ	Պառայօն	Սաղմոս, ԺԱ։
1683	Մարսիլիա	Ոսկան	Ակն հոգեկան։
—	»	»	Պարտէզ Բ։
1684	Վենետիկ	—	Դպրութեան գիրք, Ա։
—	»	—	Սաղմոս, ԺԲ։
1685	»	Պառայօն	Աւետարան, Բ։
—	»	»	Բուրաստան, Ա։
—	»	»	Նորագոյն ծաղիկ, Բ։
—	»	»	Գիր Տօմարաց, Դ։
—	Ամստերդամ	Վանանդեցի	Շարական, Բ։
—	»	»	Խորենացւոյ Պատմ. և Աշխ., Ա։
1686	Վենետիկ	Թադէոս երէց	Խորհրդատետր, Ե։

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1686	Վենետիկ	Թադէոս Երեց	Ճաշոց, Ա։
—	Ամստերտամ	Վանանդեցի	Ժամագիրք մեծ, Ե։
—	Մարսիլիա	—	Ժամագիրք, Դ։
1687	Վենետիկ	Սահրատեան	Խոկումն քրիստոն. Ա։
—	»	Մուէթթի	Պատասխանատրութիւնք։
—	»	Նահապետ	Պարզաբանութիւն սաղմոսաց։
—	Ջուղա	Ամենափրկիչ	Աղեքսանդր վարդապետ։
1688	Ամստերտամ	Վանանդեցի	Ժամագիրք մեծ, Զ։
—	Ջուղա	Ամենափրկիչ	Մրքուզ, Ա։
1690	Հռովմ	Ուրբանեան	Պատմ. Գալանոսի, Բ։
—	»	»	Այլ տպ. լոկ հայերէն, Գ։
—	Վենետիկ	--	Դպրութեան գիրք, Բ։
—	»	Պառայօն	Խորհրդատետր, Զ։
—	Պատուա	Գառնուկ	Թուղթ դաշանց, Ա։
—	»	»	Հաւատով խոստովանիմ։
1691	Լիվոռնոյ	—	Քերականութիւն Խաչատրոյ։
1692	»	—	Շարական, Գ։
1695	Հռովմ	Ուրբանեան	Բառգիրք հայ-լատ, Բ։
—	Վենետիկ	Պօռթօլի	Դաշանց թուղթ, Բ։
—	»	»	Այլ տպ. հայ և իտալ, Գ։
—	Ամստերտամ	Թովմ. Վանանդ.	Խորենացւոյ Պատմ. Բ։
1696	Վենետիկ	Պօռթօլի	Տօմար, Ե։

Digitized by Google

1696	Ամստերդամ	Թովմ. Վանանդեցի	Բանալի համառաբած։
—	»	»	Գեմբացի, Բ։
—	Լիվոռնոյ	Թովմ. եպիսկոպոս։	Պատմ. փոնցիանոսի, Ա։
1698	Ամստերդամ ?	Վանանդեցի ?	Ժամագիրք (*), Ե
—	Ամստերդամ	Վանանդեցի	Նոր կտակարան, Բ։
—	»	»	Համաձայնութիւն։
—	»	»	Ջայնքաղ, Բ։
—	Պոլիս	—	Դպրութեան գիրք, Գ։
—	»	—	Գիրք խոստովանութեանց։
—	»	Գրիգորի	Տաղարան, Գ։
—	Լիվոռնոյ	—	Բառգիրք Երեմիայ Վ. Ա։
			Աշխարհագր. Խորենացւոյ, Բ։
			Աղուեսագիրք։
1699	Ամստերդամ	Թովմ. Վանանդեցի	Դուռն իմաստութեան։
—	»	»	Գանձ չափոյ։ Տօմար, Զ։
—	Պոլիս	—	Տօմար, Է։

(*) Տարակուսելով դրինք, զի պակասի հակասն։ Մինայն յէջ 620 կ'ընթեռնումք. «Թուին Հայոց ՌՃԽԶ. գիր տարւոյն Ա Է. տանուտէրն խոյն է»։

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

1700–1800

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1700	Ամստերդամ	—	Գործք առաքելոց, Ա։
—	Պոլիս	—	Մեկն. Երգոց երգոյն։
—	»	—	Մեկն. Յայտնութեան։
—	»	Աստուածատր.	Նարեկ, Գ։
—	»	Էջմիածնի	Այբբենարան, Գ։
—	»	(Մխիթ. Աբբ.)	Գեմբացի, Գ։
1701	Ամստերդամ	Էջմիածնի	Այբբենարան, Դ։
—	»	Աստուածատր.	Ժամագիրք մեծ, Է։
—	»	»	Խոստովանարան։
—	Լիվոռնոյ	»	Գործիք չարչարանաց։
—	Պոլիս	»	Տաղարան, Դ։
—	»	Սարգսի	Տօնացոյց, Բ։
—	»	»	Բանալի Ջերմեռանդակ. Ա։
—	»	—	Թէոփիլոս։

1702	Լիվոռնոյ	—	Պարզատումար Հռոմայեց։
—	Ամստերդամ	Թովմ. Վանանդեցի	Բնաքանութիւն։
—	Մարսիլիա	—	Շարական, Գ։
—	»	—	Հայելի վարուց, Ա։
—	Վենետիկ	Պօռթօլի	Դուռն ողորմութեան Աստուծ. Ա։
—	Մարսիլիա	—	Ցիսուս որդի, Գ։
1703	Պօլիս	Աստուածատուր.	Կտակգիրք, Ա։
—	»	»	Հայելի վարուց, Բ։
—	»	Սարգսի	Ժամագիրք մեծ, Ը։
1704	Ամստերդամ	Ղուկասու Վանանդեցի	Պաշտօն աստուածային։
—	»	»	Սահմանաց գիրք, Ա։
—	Վենետիկ	Պօռթօլի	Պարտէզ, Գ։
—	»	»	Քարոզգիրք, Ա։
—	Պօլիս	—	Երկրեմի ճառ, Ա։
—	»	տպ. Պէյօղլուի	Բուրաստան, Բ։
—	»	—	Լուսաշաւիղ։
—	»	Աստուածատուր.	Գործք առաքելոց, ստ։
1705	Հռոմ	Ուրբանեան	Գեմբացի, Գ։
—	Ամստերդամ	Վանանդեցւոյ	Ձեռքածութիւն, Բ։
—	Պօլիս	'ի տպ. Պէյօղլ.	Աստուածաշունչ, Բ։
—	»	—	Վարուց խոկումն, Ա։
—	Ամստերդամ	Վանանդեցիք	Համատարած աշխարհացոյց։
1706	Վենետիկ	Պօռթօլի	Ժամագ. Աստուածածն. Ա։

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1706	Վենետիկ	Պօռթօլի	Ժամագիրք Լուսաւորչի։
—	Պօլիս	Թրիգորի	Խորհրդատետր, Ե։
—	»	»	Յայսմաւուրք, Ա։
1707	Վենետիկ	Պօռթօլի	Բուրաստան, Գ։
1708	»	»	Ժամագ. Աստուած., Բ։
—	Մարսիլիա	—	Բանալի չերմեանց, Բ։
—	»	—	Ժամագիրք Աստուած. Գ։
—	Պօլիս	Գրիգորի	Ագաթանգեղոս։
—	»	Սարգսի	Ողնձէ քաղաք, Ա։
—	»	'ի տպ. Պէյօղլ.	Տօմար, Ը։
1709	Հռոմ	Ուրբանեան	Կրթութիւն քրիստոնէական. Ա։
—	Վենետիկ	—	Ժամագիրք Ննջեցելոց։
—	»	Պօռթօլի	Աստուածաբ. քարոյական։
1710	»	»	Աւետարան, Գ։
—	»	»	Լուցկիք հոգևորք։
—	»	»	Քարոզգիրք, Բ։
—	»	»	Նոր կտակարան, Գ։
—	»	»	Քրիստոնէական, Ե։
—	Մարսիլիա	—	Սաղմոս, ԺԳ։
—	Պօլիս	—	Ճառ Եփրեմի, Բ։
—	»	—	Ժողովածու գիրք, Բ։
—	»	—	Կտակգիրք, Բ։

1740	Պոլիս	Սարգսի	Աւետարան, Դ։
—	»	—	Շարական, Ե։
1741	Հռովմ	Ուրբանեան	Մեկն. ղաւան. Հաւատոյ։
—	Ամստերդամ	—	Գանձ պրամեան։
—	»	—	Քերական. Յովհ. Ջուղ.։
—	Վենետիկ	Պօռթօլի	Կրթութիւն համարելոյ։
—	»	»	Բովանդակութիւն ուսմանց։
1742	»	»	Սաղմոս, ԺԴ։
—	Պոլիս	Պէյօղլու	Մեծ ժամագիրք, կրկին, Թ։
—	»	Սարգսի	Այլ տպ. Ժ։
1743	Ամստերդամ	—	Հայ. աստուածաշունչ գր։
—	»	Վանանդեցւոյ	Սաղմոս, ԺԵ։
—	Վենետիկ	Պօռթօլի	Ճարտասանութիւն, Բ։
—	»	»	Պատմ. կաթուղ. և այլն։
—	Պոլիս	Գրիգորի	Մրքուզ, Բ։
—	»	Աստուածատր.	Մրքուզ, Գ. Մրկանոց։
1744	Հռովմ	Ուրբանեան	Բառգիրք լատին հայ։
—	»	»	Մեկնիչ սրբ. աւետարան։
—	»	»	Զօրք խոկմունք։
—	Ամստերդամ	Վանանդեցւոյն	Սաղմոս, ԺԶ։
—	Վենետիկ	Պօռթօլի	Պրէվիար։
—	Պոլիս	Աստուածատր.	Մաշտոց, Գ։
—	»	—	Օրհներգութիւն։

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
			Մեկն. աւետար. խորհրդ.:
1715	Վենետիկ	Պօլթօլի	Քրիստոնէական, Զ.:
—	»	»	Ալպերտ, Ա.:
1716	Ամստերտամ	Վանանդեցւոյն	Պատկերաւէր:
1717	»	»	Ժամ. կարճառօտ, Զ.:
—	Պօլիս	—	Համառ. հաւաքումն իրաց:
—	»	Սարգսեանց	Արճիշեցի, Ա.:
—	»	Գրիգորի	Ոսկեբերան:
—	»	Աստուածատուր.	Պարապմանց:
1718	Վենետիկ	Պօլթօլի	Կրթութիւն աղօթից, Ա.:
—	»	—	Ճշմարիտ իմաստութիւն:
			Շարական, Ե.:
—	Պօլիս	—	Գիրք տոմարաց, Թ.:
1719	Վենետիկ	Ճ. Պաշօլի	Խոկումն քրիստոնէակ. Բ.:
—	»	»	Պարտէզ, Դ.:
—	Պօլիս	Գրիգորի	Ջենոք:
—	»	—	Ժամագիրք առենի, ԺԱ.:
1720	Վենետիկ	Պօլթօլի	Մաղութեանց գիրք, Ա.:
—	»	»	Նոր կտակարան, Դ.:
1721	»	»	Առաքինութեանց գիրք, Ա.:
—	Պօլիս	Աստուածատուր.	Աղամգիրք:
—	»	»	Աղօթագիրք, Ա.:

Digitized by Google

1721	Պօլիս	Աստուածատր.	Եօթն իմաստասէրք, Ա:
—	»	»	Մեծ ժամագիրք, ԺԲ:
—	»	Սարգսի	Ժամագիրք, Է:
—	»	Աստուածատր.	Հարանց վարք, Բ:
—	»	»	Փոնցիանոսի պատմ. Բ:
1722	Վենետիկ	Պօղթօլի	Աղբիւր բարի:
—	Պօլիս	Աստուածատր.	Այբբենարան, Ե:
—	»	—	Կտակգիրք, Գ:
—	»	Սարգսեանց	Ճառընտիր համառօտ:
—	»	Աստուածատր.	Տօնացոյց, Գ:
—	»	Էջմիածին	Զբօսարան հոգւոր:
1723	Վենետիկ	Պօղթօլի	Հոգեւորական պատերազմ:
—	Պօլիս	Գրիգորի	Տօմար, Ժ:
1724	Վենետիկ	Պօղթօլի	Վարք Յօհ. Աստուծոյ:
—	»	»	Պատմագիրք հոգւոց:
—	Պօլիս	—	Արարածք:
—	»	Սարգսեանց	Հանելուկք:
—	»	Աստուածատր.	Ցիսուս որդի, Ե:
—	»	Սարգսեանց	Նորագոյն ծաղիկ, Գ:
—	»	—	Պատմ. Ֆառմ. մանուկի:
1725	Հռովմ	Ուրբանեան	Ցոբելեան:
—	»	»	Նորագոյն ուղեկցութիւն
—	Վենետիկ	Պօղթօլի	Քրիստ. Մխ. աբբ. գր:

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1725	Պօլիս	Աստուածատր․	Մեծ ժամագիրք, ԺԳ։
—	»	—	Տօմար, ԺԱ։
—	»	Աստուածատր․	Տօնացոյց, Գ։
—	»	Սարգսեանց	Քերակ․ Միմ․ Ջուղայեց։
1726	»	Գրիգորի	Նարեկ, Գ։
1727	Վենետիկ	Պօրթօլի	Դաշտիկ ծաղկալի։
—	»	»	Ժամք կարգի, և այլն։
—	»	»	Խթան զղջման։
—	»	»	Խրատք․ Ս․ Թովմայի։
—	»	»	Դուռն քերակ․ աշխ․ լեզ։
—	»	»	Քրիստ․ Մխիթ․ աշխ։
—	Պօլիս	Սարգսեանց	Կոչումն ընծայութեան։
—	»	Աստուածատր․	Շարական, Զ։
1728	Հռովմ	Ոսքրմանեան	Միսալ։
—	Վենետիկ	Պօրթօլի	Ակն հոգւոյ, Ա։
—	Պօլիս	—	Տրամաբ․ Միմ․ Ջուղ․ Ա։
—	»	—	Մեծ ժամագիրք, ԺԳ։
			Բազգիրք Երեմիայ, Բ։
—	»	Մուրատ	Վարդանայ աշխարհագրութիւն։
1729	Վենետիկ	Պօդթօլի	Տես․ Աստուածաբան․ Խաչ․ Վ․ Ա։
—	»	Ալպուիցի	Դրախտ հոգւոյ։
—	Պօլիս	—	Գիրք Հարցմանց։

1729	Պոլիս	Սարգսեանց	Մեծ ժամագիրք, ԺԵ։
1730	Վենետիկ	—	Հարցումն քերթողակ. Ա։
—	»	Ալպաւեցի	Քերակ. Մխիթ. աբբ. Ա։
—	Պոլիս	—	Բուզանդ։
—	»	Գրիգորի	Յայսմաւուրք, Բ։
—	»	—	Ժողովածու գիրք, Գ։
1731	Վենետիկ	Պօռթօլի	Յարացոյց։
—	»	—	Հանդերձեալ կենաց։
—	Պոլիս	Աստուածատուր.	Պղնձէ քաղաք, Բ։
—	»	—	Սահմանաց, Բ։
—	»	Աստուածատուր.	Աւետարան, Ե։
1732	Վենետիկ	Պօռթօլի	Աւետարան, Զ։
—	»	»	Խոկումն քր. Գ։
—	»	»	Քրիստ. Մխիթ. աբբ. Բ։
—	Պոլիս	Սարգսեանց	Ճաշոց, Բ։
1733	Վենետիկ	Պօռթօլի	Ներածումն առ քրիստ։
—	»	»	Աստուածաշունչ, Գ։
—	»	»	Առակաց գիրք։
—	»	»	Սաղմոս, ԺԷ։
—	»	»	Տօմար, ԺԲ։
—	Պոլիս	—	Վիճաբ. Մխլէյիմի, Ա։
—	»	—	Մեծ ժամագիրք, կրկին, ԺԶ։
—	»	Աստուածատուր.	Ա՛յլ տպ, ԺԷ։

Digitized by Google

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1733	Պօլիս	Աստուածատր.	Վէմ հաւատոյ:
1734	Վենետիկ	Պորթոլի	Աստուածաբ. Խաչ. Վ. Բ.
—	Պօլիս	Սարգսի	Եփրեմի աղօթք, Ա:
—	»	Աստուածատր.	Հաննա վարդապետ, Ա:
—	»	Գրիգորի	Ներբ. Լուս. յՈսկ:
—	»	—	Տաղարանք Պաղտ. Ա:
—	»	—	Տաղ. աշակ. Կոլոտի:
—	»	—	Պտուղ գրաջանութեան:
—	»	—	Աղօթք Վարդ. Մարաթ:
1735	Վենետիկ	—	Վարդարանի աղօթք, Ա:
—	Պօլիս	Աստուածատր.	Իգնատիոս:
—	»	»	Դրախտ ցանկալի:
—	»	—	Ազգաբան. Թագաւորաց:
—	»	—	Վիճաբ. Մխլէյիմի, Բ:
1736	Վենետիկ	Պորթոլի	Բովանդակ. աստուածաբ:
—	»	»	Մեկնութիւն Փողովողի:
—	Պօլիս	Բարսեղի	Էր ընդ եղբարսն:
—	»	»	Շարական, Է:
—	»	Աստուածատր.	Քերական. Պաղտ. Ա:
—	»	Բարսեղի	Խրատ Հոգեկան:
—	Լոնտրա	—	Խորենացի Հայ լատ:
1737	Վենետիկ	Պորթոլի	Անտոն Բոնուկեան:

1737	Վենետիկ	Պօռթօլի	Գեմբացի, Ե։
—	»	»	Մեկն. Մատթէի։
—	»	»	Ջերմեռանդ. առ Տէր։
—	»	»	Քրիստ. 'ի խաչ քաւարնի, Ա։
—	Պօլիս	Աստուածատր.	Երգարան Ղազարու։
—	»	Աբրահամու	Մեսրոպ երէց, Ա։
—	Պօլիս	Աստուածատր.	Ցաճախապատում։
—	»	»	Քրիստ. Նալեան, Ա։
1738	Վենետիկ	Պօռթօլի	Մարկոս Աւրեղիոս։
—	»	»	Պարտէզ, Ե։
—	Պօլիս	Աստուածատր.	Մեծ ժամագիրք, ԺԸ։
—	»	»	Սաղմոս, ԺԳ։
—	»	—	Դպրութեան գիրք, Գ։
1739	Վենետիկ	Պօռթօլի	Վարժումն կտակ։
—	Պօլիս	—	Գանձարան, Ա։
1740	Վենետիկ	Պօռթօլի	Քահ. համբակ։
—	»	»	Նոր կտակ. Ե։
—	Պօլիս	Աստուածատր.	Այբբենարան, Ջ։
—	»	—	Պատմ. Փոնցիան. Գ։
—	»	Աստուածատր.	Տաղարան, Ե։
—	»	»	Տօմար, ԺԳ։
—	»	»	Տօնացոյց, Ե։
—	»	Բարսեղ և Ցակոբ Սեբաստացիք	Աւետարան, Է։

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1741	Վենետիկ	Պօռթօլի	Բուրաստան, Գ։
—	»	»	Խորհրդատետր, Ը։
—	»	»	Ուտրիկվեց, Ա մասն։
—	Պօլիս	Աստուածատր.	Քարոզք Տաթեւ։
1742	Վենետիկ	Պօռթօլի	Փոքր ժամագիրք, Ը։
—	»	»	Ուտրիկվեց, մասն Բ և Գ։
—	»	»	Սաղմոս, ԺԴ։
—	Պօլիս	Աստուածատր.	Շարական, Ը։
—	»	»	Գ. Սկեւռացի։
1743	»	»	Ջայնքաղ, Գ։
—	»	»	Եօթն խմաստասէրք, Բ։
—	»	Աբրահամու	Սարգիս մեկնիչ։
1744	Վենետիկ	Պօռթօլի	Սկզբունք քրիստ. կենաց։
—	Պօլիս	Աբրահամու	Աստուածաղերս, Ա։
1745	»	Գաբրիելի	Մեկն. Նարեկի։
—	»	Աստուածատր.	Սաղմոս, ԺԵ։
1746	»	»	Հոգեչաշ։
—	»	Աբրահամու	Ոսկեփորիկ։
—	»	Աստուածատր.	Յիսուս որդի, Ջ։
—	»	—	Այլ տպ. Է։
—	»	—	Տաղք Մագիստրոսի։
1747	»	—	Աղօթագիրք հաւաք. Բ։

1747	Պօլիս		—	Եփրեմ, Բ։
—	»	Աստուածատուր.		Ժողովածու, Դ։
—	»	Սարգսի և Մէք.		Քրիստ. Նալեան, Բ։
1748	Վենետիկ	Պոռթօլի		Էջմիածնական, Ա։
—	»	»		Նախասահմանութիւն։
—	»	»		Ուղղեծուծ։
—	»	»		Սաղմոսացի։
—	»		—	Տօմար, ԺԴ։
—	»	Պոռթօլի		Ակն հոգւոյ, Բ։
—	»	»		Ներող. բարւոք մեռ։
—	»	»		Սաղմոս, ԺՁ։
—	Պօլիս	Սարգսեանց		Խորհրդատետր, Թ։
1749	Վենետիկ	Պոռթօլի		Մեկն. Թղթ. Յակ։
—	»	»		Բառգիրք, հատ. Ա։
—	»	»		Վարք Լուսաւորչի։
—	Պօլիս		—	Ատենաբ. Լամբ. Ա։
—	»		—	Վիճաբ. Մխլէյիմի, Գ։
1750	Վենետիկ	Պոռթօլի		Ճշմարտ. յաւիտ։
—	»	»		Օրինակաց և նման։
—	»	»		Ծառ կենաց, Ա։
—	»	Օրլանտեան		Կշիռ ժամանակի։
—	»	»		Քրիստ. Մխիթ. Գ։
—	Պօլիս	Պ. Սաեփ.		Գաւազան կրկնազօր։

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1750	Պօլիս	Աստուածատր.	Եւագր։
—	»	»	Կրթ. քրիստ. Բ։
—	»	—	Ճշմարիտ Նշ. կԹղ։
—	»	Աստուածատր.	Շահաւէտ։
1751	Վենետիկ	Պօռթօլի	Կրթ. ապաշխարողի։
—	»	»	Նոր կտակ. Զ։
—	»	—	Գործք առաքելոց, Բ։
—	»	Որլանտեան	Փիլիսոփ. Կոմզնոյ։
—	»	Պօռթօլի	Էջմիածնեան, Բ։
1752	»	—	Խորենացի, Գ։
—	»	»	Վարք Ոսկեբ։
—	»	Որլանտեան	Նոր կտակ. Է։
—	»	»	Պարտէզ, Զ։
—	»	»	Ժամագիրք փոքր, Թ։
—	Պօլիս	Աստուածատր.	Գրքուկ եռամասն։
—	»	»	Ժամագիրք մեծ, ԺԹ։
—	»	»	Դպրութեան գիրք, Ե։
—	»	Սարգսեանց	Երգարան։
—	»	Աստուածատր.	Ձեռնադրութեան գիրք, Ա։
—	»	—	Պօղոս Տարօնացի։
—	»	Մարտիրոսի	Տաղարան, Զ։
1753	Վենետիկ	Որլանտեան	Դժոխք բացեալ։

1753	Վենետիկ	Օրլանտեան	Խոկումն վարուց, Բ։
—	»	»	Ձայն Քրիստոսի։
—	»	»	Վարդարանի աղօթք, Բ։
—	Պոլիս	—	Ցանկզիրք։
1755	Հռովմ	Ուրբանեան	Բենեդիկտ. ԺԴ. Թուղթ։
—	Վենետիկ	Պօռթօլի	Սաղմոս, ԺԷ։
—	»	»	Տօմար, ԺԵ։
—	Պոլիս	Բարաղի	Լուծիչ տարակուսանաց։
—	»	Աստուածատուր.	Նարեկ, Ե։
—	»	»	Ստ. Ուռպելեանց։
1756	Հռովմ	Ուրբանեան	Յկ. Մծբնացի։
—	Պոլիս	Աստուածատուր.	Ճրագ ճշմարտութեան։
—	»	»	Սաղմոս, ԺԸ։
—	»	»	Տօմար, ԺԶ։
—	»	»	Երգարան Մանուէլի։
1757	»	»	Ջէն հոգևոր, Ա։
—	»	»	Վիճ. Լամբր. ընդ Յոյնս։
1758	»	»	Գանձարան ծանուցմանց։
1759	Վենետիկ	Պօռթօլի	Աղօթ. Ս. Յովսեփայ, Ա։
—	»	»	Աւետարան, Ը։
—	»	»	Հարցումն քերթողակ. Բ։
—	»	»	Մտած. չարչ. Քրիստ։

Digitized by Google

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1759	Վենետիկ	Պոլթօլի	Սաղմոս, ժթ։
—	Զմիւռնիա	Մարկոսի	Մեկն. ժամակարգութեան։
1760	Վենետիկ	Պոլթօլի	Արհեստ փրկութեան։
—	»	»	Կերակուր քահանայից։
—	Պոլիս	—	Ճառք Կիւրղի աղեքս։
—	»	Աստուածատուր	Հայց նեղելոց։
—	»	»	Աղօթ. Յակ. Նալեան։
—	»	»	Տօմար Կիւրղի։
—	»	»	Քերակ. Պաղտ, դպրի, Բ։
1761	Զմիւռնիա	Մարկոսի	Խորհրդատետր, ժ։
1762	Պոլիս	Աստուածատուր.	Մեծ ժամագիրք, Ի։
—	Զմիւռնիա	Մարկոսի	Եղնիկ։
1763	Վենետիկ	Որլանտեան	Նարեկ պատկ. Ա։
—	Պոլիս	Աստուածատուր.	Նարեկ, Զ։
1764	»	»	Եղիշէ, Ա։
1765	»	»	Սաղմոս, Ի։
1766	Վենետիկ	Պոլթօլի	Փոքր ժամագիրք, Ժ։
—	»	»	Նոր կտակարան, Ը։
1767	Պոլիս	Աստուածատուր.	Եփրեմ, Գ։
1768	Վենետիկ	Պոլթօլի	Ժամագիրք Աստուած. Դ։
—	»	»	Քրիստ. հայ. տեկ։
—	Պոլիս	—	Մեծ ժամագիրք, ԻԱ։

Digitized by Google

1768	Պօլիս	Աստուածատր.	Հաննա վարդապետ, Բ:
—	»	»	Շարական, Թ:
—	»	»	Տաղարան Պաղտասա, Բ:
1769	Վենետիկ	Պօռթօլի	Բառգիրք, հատոր Բ:
—	Պօլիս	Աստուածատր.	Ծաղկոցիկ:
—	»	»	Աւետարան, Թ:
1770	Վենետիկ	Վաղվաղեանց	Ակն հոգւոյ, Գ:
—	»	Պօռթօլի	Սաղմոս, ԻԱ:
—	»	»	Քերական. Մխիթ. Բ:
—	»	»	Քրիստ. աշխարհ. Ա:
1771	»	»	Խոկմունք քրիստ. Գ:
—	»	»	Քրիստ. Մխիթ. աշխ. Գ:
—	»	»	Սաղմոս և Տօմար, Ա:
—	Պօլիս	Ստեփանոսի	Գործք առաքելոց, Գ:
—	»	Աստուածատր.	Երգարան Պետր. Ղափանցւոյ, Ա:
1772	Վենետիկ	Պօռթօլի	Էֆիմէրտէ, Գ:
—	»	Թէոդոսեանց	Առաքինութեանց, Բ:
—	»	»	Կրթութիւն աղօթից, Բ:
—	»	»	Հրաշից գիրք:
—	»	—	Ներող. հոգեվարաց:
—	»	—	Պարտէզ, Է:
—	Պօլիս	Աստուածատր.	Երգարան Ղափանց. Բ:
—	Մատրաս	Շահմիրեան	Նոր տետրակ:

Digitized by Google

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1773	Վենետիկ	—	Մոլութեանց, Բ:
—	Մատրաս	Շահմիրեան	Որոգայթ փառաց:
1774	Վենետիկ	Պօւթօլի	Քերակ. խտալ. Ա:
—	Պօլիս	Աստուածատր.	Նարեկ, Է:
—	Վաղարշապ.	Էջմիածին	Տօնաց. Սիմոն կաթղ. Ա:
1775	Հռովմ	Ուրբանեան	Հանգամ. ուխտ. զեկեղ:
—	Վենետիկ	Դեմետրեայ	Խորհուրդ աստուածապ:
—	»	»	Հիւանդ բարեք:
—	»	»	Ճարտասանութիւն, Գ:
—	»	»	Քրիստ. 'ի խաղ քաւ. Բ:
—	Մատրաս	Շահմիրեան	Մեսրովպ երէց, Բ:
1776	Վենետիկ	Թէոդոսենց	Նոր կտակ. Թ.
—	Թրեստ	Մխիթ.	Ցորդորակ:
—	»	»	Քրիստ. աշխ. Բ:
—	»	»	Այբբենարան, Է:
1777	Վենետիկ	Դեմետրեայ	Ժամագիրք փոքր, ԺԱ:
—	Վաղարշապ.	Էջմիածին	Տաղ. Սիմ. կթղ. Ա.
—	»	»	Կարգ թաղմ. քահ.:
1778	Թրեստ	Մխիթ.	Տօնացոյց, Զ:
1779	Վենետիկ	Դեմետրեայ	Խրատ կատարելութեան:
—	»	»	Քերակ. Ջամչեան:
—	Պօլիս	Աստուածատր.	Եփրեմ: Դ:

1779	Վաղարշապ.	Էջմիածին	Պարտավճար։
1780	Պօլիս	—	Ակնոց աչաց։
—	Լոնտրա	('ի մի տպ.)	Դաւանութիւն։ Հաւատով։
—	Մատրաս	Շահմիրեան	Պատմ. Դահճմաղի
1781	Վենետիկ	Դեմետրեայ	Աղօթ. Ս. Յովսեփայ, Բ։
—	»	»	Թուաբանութիւն գր։
—	»	»	Ծառ կենաց, Բ։
—	»	»	Վարդարանի աղօթք, Գ։
—	»	»	Քարոզգիրք, Գ։
—	Թրեստ	Մխիթ.	Այբբենարան, Ը։
—	Մատրաս	Շահմիրեան	Նամակ շնորհաց։
1782	Վենետիկ	Դեմետրեայ	Պարզատօմար, Գ։
—	»	»	Տօնացոյց Է։
—	Պօլիս	Ստեփանոսի	Ակն լուսատու։
—	»	»	Կրթ. քրիստ. Գ։
—	»	Աստուածատր.	Հաննա, Գ։
—	»	»	Նարեկ, Ը։
1783	»	»	Հիմ ստուգութեան։
—	Թրեստ	Մխիթ.	Թուղթք գՁինաց։
—	»	»	Քաղաքավար. գիրք. Ա։
—	Փեթրպուրկ	Խալդարենց	Ժամագիրք մեծ, ԻԲ։
1784	Հռովմ	Ուրբանեան	Այբբենարան, Թ։
—	Վենետիկ	Վաղվաղեան	Պատմ. Հայոց. Հատ. Ա։

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1784	Պօլիս	Պետր. Սահփ.	Շարական, Ժ։
—	Թրեստ	Մխիթ.	Եղբօրս առակք։
—	»	»	Ժամագիրք, ԺԲ։
—	»	»	Պատր. պատարագի։
—	»	»	Վիպասան Ամերիկ. Հ. Ա։
—	»	»	Տնօրէն. մարդ. կենաց։
1785	Վենետիկ	Վաղվաղեան	Պատմ. Հայոց. Հատ. Բ։
—	»	»	Պարտէզ, Ը։
—	»	»	Սպաս. պատարագի, Բ։
—	»	»	Օդապարիկ։
—	»	»	Ակն հոգւոյ, Դ։
—	Պօլիս	Աստուածատր.	Խորհրդատետր, ԺԱ։
—	»	»	Մաշտոց, Դ։
—	Փեթրպուրկ	Խալդարեանց	Յիսուս որդի, Ը։
—	»	»	Պատմ. սուրբ գրոց։
1786	Վենետիկ	Փիացեան	Գեմբացի, Զ։
—	»	—	Մեկն. պատկ. Ս. Գրիգ։
—	»	Փիացեան	Պատմ. Հայոց, Հատ. Գ։
—	»	»	Սաղմոս և Տօմար, Բ։
—	Պօլիս	Աստուածատր.	Ժամագիրք ատենի, ԻԳ։
—	»	»	Ժամագիրք մեծ, ԻԴ։
—	»	»	Աւետարան, Ժ։

Digitized by Google

1786	Թրեստ	Մխիթ.	Սպաս. պատարագի, Գ:
—	»	»	Վիպասան. Ամեր. Հ. Բ:
—	»	»	Քաղաքավարութիւն, Բ:
—	Փեթրպուրկ	Խալդարենց	Աստուածաղերս, Բ:
—	»	»	Աւետ. ճաշու:
—	»	»	Վէմ գայթակղութեան:
1787	Վենետիկ	Փիացեան	Լամբր. ատենաբ. Բ:
—	Պօլիս	Աստուածատր.	Վիճաբ. Մխլէյիմի. Դ:
—	»	»	Քաղաքավարութիւն, Գ:
—	»	Յովհ. և Պօղոսի	Ձէն Հոգեւոր, Բ:
—	Թրեստ	Մխիթ.	Ձեռնադրութեան գիրք, Բ:
—	»	»	Պարտէզ, Թ:
—	»	»	Սաղմոս, ԻԲ:
—	»	»	Վարդարանի աղօթք, Դ:
—	Փեթրպուրկ	Խալդարենց	Ժամագիրք կարճ, ԺԳ:
—	Վաղարշապ.	Էջմիածին	Յովսեպոս:
1788	Վենետիկ	Փիացեան	Թուաբան. աշխ:
—	Պօլիս	—	Գանձարան, Բ:
—	»	Աստուածատր.	Գործք առաքելոց, Դ:
—	»	»	Եփրեմ, Ե:
—	»	Սահփ. Պետր.	Տաղարան, Է:
—	»	»	Օրինակք բարեւագրոց:
—	Թրեստ	Մխիթ.	Այբբենարան, Ժ:

Digitized by Google

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1788	Թրեստ	Մխիթ.	Պատմ. Ճէնկիզի։
—	»	»	Ակն Հոգւոյ, Ե։
—	Փեթրպուրկ	Արղութեանց	Ընդհան. Շնորհ։
—	»	»	Նարեկ. մեկն. Երգոց։
—	»	»	Նարեկ, Թ։
—	»	»	Նոր կտակ. Ժ։
1789	Վենետիկ	Մխիթ.	Սաղմոս և Տօմար, Գ։
—	Պօլիս	Ստեփ. Պետր.	Տօմար, ԺԷ։
—	Մատրաս	Շիրազեցւոյ	Մարիանեայ վարք։
1790	Վենետիկ	Մխիթ.	Մխիթ. Գոշ։
—	Պօլիս	Դպրատան	Նարեկ, Ժ։
—	»	Աստուածատր.	Շարական, ԺԱ։
—	Նախիջեւան	Արղութեանց	Ողբ և Հառաչանք։
—	»	»	Առաջին կանոն Սաղմ։
—	»	»	Գանձարան ուխտական։
1791	Վենետիկ	Մխիթ.	Աշխարհագր. Համ։
—	Թրեստ	»	Հաքերտ, Բ։
—	Նախիջեւան	Արղութեանց	Ժամագիրք, ԺԴ։
—	—	»	Սաղմոս, ԻԳ։
—	Մատրաս	Շիրազեցւոյ	Եօթն իմաստասէրք, Գ։
—	»	Շմաւոնեանց	Տաղարան Սիմ. կաթ. Բ։
1792	Վենետիկ	Պօլթօլի	Քեր. իտալ. Բ։

1792	Պօլիս	Դպրատան	Ցուպ քահանայից։
—	Նախիջեւան	Արշուեթեանց	Դուռն ողորմ. Բ։
—	»	»	Վիպ. զերկ. մարմնոց։
—	Մատրաս	Շիրազեցւոյ	Ցիսուս որդի, Թ։
—	Պօլիս	Յովհ. և Պօղոսի	Եօթն իմաստասէրք, Դ։
1793	Վենետիկ	Մխիթ.	Աշոթ. 'ի լեզու Թրանսիլվ։
—	»	»	Ժամագիրք, ԺԵ։
—	»	»	Իմաստ. Թեսաւրոսի։
—	»	»	Փարպեցի։
—	»	»	Սաղմոս, ԻԴ։
—	Պօլիս	Դպրատան	Ճառ ծննդեան։
—	»	»	Ճաշոց, Գ։
—	Նախիջեւան	Արշուեթեանց	Բժշկարան։
—	»	»	Թելամաք։
1794	Վենետիկ	Մխիթ.	Ամարանոց։
—	»	»	Երկրաչափութիւն։
—	»	»	Նարեկ, ԺԱ։
—	»	»	Պաակ կուսի։
—	»	»	Վարք Ս. Անտոնի։
—	Պօլիս	Դպրատան	Նուագարան։
—	»	Մատթէոս դպիր	Ժամագիրք, ԺԶ։
—	»	Յովհ. և Պօղոսի	Տրամաբ. Ջուղայեցւոյն, Բ։

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	ՄԱՏԵԱՆՔ
1794	Նախիջեւան	Արղութեանց։	Խորհրդատետր, ԺԲ։
—	Նոր Նախիջեւան	Արղութեանց	Տետրակ համառօտ բառասութեան։
1796	Վենետիկ	Մխիթ.	Էֆիմէրտէ, Դ։
—	»	»	Պիտոյից։
—	Կալկաթա	—	Աբրահամ Գ. Կրետացի։
—	Աժտէրխան	Արղութեանց	Ատենաբ. Յ. Արղութ։
1797	Թրեստ	Մխիթ.	Նախապ. պատ. Ա։
—	»	»	Պատմ. դարձի Յովս։
—	Աժտէրխան	Արղութեանց	Մեկն. Սաղմոսաց։
—	Մատրաս	—	Գիրք Սահմանաց, Գ։
1798	Թրեստ	Մխիթ.	Վարք եր. Կոմիտ. քահ.։
1799	Պօլիս	Մատթէի	Արճիշեցի Յովհ. Բ։
—	»	Աստուածատր.	Տօնաց. Սիմ. կաթղ. Բ։
—	»	Յովհ. և Պօղոսի	Ժամագիրք, ԺԷ։
—	Թրեստ	Մխիթ.	Վարք Ս. Լուսիա։
1800	Վենետիկ	»	Ծաղիկ վարուց տօնել։
—	»	»	Յաւել. վարուց Ս. Անտ։
—	»	»	Պատմ. Պիոսի Զ։
—	Պօլիս	Մատթէի	Սաղմ. Հյ. և տճ։
—	»	»	Օրօլօկիօն։

Digitized by Google

ԾԱՆ. — Տպարանաց սիւնակին մէջ (—) կը նշանակէ անծանօթ: — Գրոց առջեւը դրուած այբու-
բենի տառք՝ առաջին, երկրորդ ... տպագրութիւններն: — Վենետիկոյ Մխիթարեանց տպագրու-
թիւնք 1716 թուականէն կը սկսին՝ քաղաքին տպարանաց մէջ. իսկ ի 1789 ի կղզւոյ սրբոյն
Ղազարու:

Digitized by Google

ՑԱՆԿ

Հայ տպագրութեանց ծանօթ սկզբնաւորութենէն մինչև ցԱբգար 8
Պարզատումար 14
Պատարագատետր 17
Ուրբաթագիրք 22
Տաղարան 28
Աղթարք 29
Եւդոկիացի Աբգարէն մինչև անցեալ դարու սկիզբը 37
Ժամագիրք 49
Տօնացոյց 51
Տաղարան 53
Սուլղանշահ 55
Քարմատանենց Ժամագիրք յՈւլվով. տպագրութիւնք ի Փարիզ և ի Հռովմ 63
Տպագրութիւնք ի Նոր Ջուղա 72
Տպագրութիւնք յայլ և այլ քաղաքս Եւրոպիոյ . 85
Տպագրութիւնք ի ձեռն Ոսկան վարդապետի . . 105
Ոսկան վարդապետ ի Մարսիլիա Գաղղիոյ . . 114
1700 թուականէն մինչև առ մեզ. — Մխիթար Աբբ. . 153
Թովմաս եգիպտոսի օգնականները . . . 170
Տպարան յԷջմիածին 178
Հայ տպագրութիւնք ի Հնդիկս 196
Հայ տպարանք ի Ռուսիա և ի Կովկաս . . . 209
Մխիթարեան տպարան ի Թրեստ և ի Վիեննա . 222
Տպարանք յ'Երուսաղէմ, յ'Արմաշ, ի Վարագ և ի Գլակ 226
Տպարանք ի Զմիւռնիա 233
Տպարանք ի Կ. Պոլիս 236
Առաջին տպագրին յառաջաբան 1565–1883 . . 241

Digitized by Google

Digitized by Google



Digitized by Google

Digitized by Google

This book should be returned to the Library on or before the last date stamped below.

A fine of five cents a day is incurred by retaining it beyond the specified time.

Please return promptly.

MAR - 5 '57 H

Digitized by Google

This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.

+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.

+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.

+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/